

ՆԻԹԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒՄՆԵՐՈՒ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ (1912-1913)

Նամակներ Արշակ Զօպանեանէն

**Յատակացումներ Կիլիկեան
Ինքնապաշտպանական Փորձի Մասին**

Դոկտ. Վաչէ Ղազարեան

**Փորթսմուլթ - Ոոտ Այլընտ
2024**



ՆԻԺԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒՄՆԵՐՈՒ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ
(1912-1913)

ԴՈԿՏ. ՎԱԶԷՆ ԴԱԶԱՐԵԱՆ

**ՆԻԻԹԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ
ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒՄՆԵՐՈՒ
ՎԵՐԱԲԵՐԵԱԼ
(1912-1913)**

**Հայկական Բարենորոգումներու Շրջանին Առնչուած
Նամակներ Արշակ Զօպանեանէն**

**Յատակացումներ Կիլիկեան Ինքնապաշտպանական
Փորձի Մասին**

Փորթամուր, Ռոստ Այլընտ
2024

Library of Congress Control Number: 2024918170

Compiler and annotator: Vatche Ghazarian, PhD

Title: *Materials Related to the Armenian Reforms (1912–1913)*
[Niwť'er Haygagan Parenorokumneru Verapereal (1912–1913)]

Language: Armenian

Subjects:

- Armenian Defense Committee
- Armenian National Delegation
- Armenian Question
- Armenian Reforms
- Arshag Tchobanian
- Cilicia

Copyright © 2024 by Vatche Ghazarian
All Rights reserved under International and Pan-American Copyright Conventions.

Printed in the United States of America

ISBN: 978-1-931834-55-1
Mayreni Publishing, 2024

Բովանդակություն

Օգտագործուած յայտարարումներ	6
Մուտք	9
Հայկական Բարենորոգումներու Շրջանին Առնչուած Նամակներ Արշակ Զօպանեանէն	21
Յատակացումներ Կիլիկեան Ինքնապաշտպանական Փորձի Մասին	49
Ինչո՞ւ այս ուսումնասիրութիւնը	51
Աղբիւրները	52
Ընդհանուր մթնոլորտը	53
Ազգային Պաշտպանութեան Քոմիթէն	59
Ապստամբութիւնը վիժեցնող քայլեր՝ յարակից մանրամասնութիւններով	78
Ապստամբութեան ծրագիրն ըստ Տեփոյեանի աշխատութեան	96
Ապստամբութեան ծրագիրն ըստ Մուշեղ Սերոբեանի	102
1932-ին հրատարակուած «Դիտումներ...»-ու բաժինը (էջ 76–84)	103
1943-ին լոյս տեսած «Մեր Պայքարը...» հատորին բաժինը (էջ 221–223)	107
Անտիպ Ինքնակենսագրութեան բաժինը	108
Յատակացումներ երկու այլ աղբիւրներու մասին	154
Ապստամբութեան փորձին ձախողանքէն ետք	157
Եզրակացնելու համար	171

Օգտագործուած յապաւումներ

ԶՆՀՀՄ = Զանազան Նամակագրութիւններ Հայկ[ական] Հարցի Մասին (Արամ Անտոնեանի ձեռագրով հայերէն վաւերագրերու արտագրութեամբ, ֆրանսերէն փաստաթուղթերու թարգմանութեամբ եւ քանի մը ֆրանսերէն մեքենագրեալ նիւթերու ընդգրկումով կազմուած տետրերու շարք մը, պահպանուած՝ Փարիզի Նուպարեան Մատենադարանին մէջ):

ՀԱԱ = Հայաստանի Ազգային Արխիւ

ՀՍՌԿ = Հայ Սահմանադրական-Ռամկավար Կուսակցութիւն

ՊՏԴ = Պոլսոյ Տեղեկատու Դիւան, որուն միջոցաւ հաւաքուած վաւերագրերը կը պահպանուին Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց Միաբանութեան վանքին մէջ:

ՓՆՄ = Փարիզի Նուպարեան Մատենադարան

[Պոլսոյ անգլիական] դեսպանը կը հարցնէ թէ Հայերը ի՞նչ կ'ուզեն:
 Պատրիարքարանի պատուիրակները կը պատասխանեն.
 «Միայն կեանքի, պատուի եւ ինչքի ապահովութիւն. Հայոց ուզածը
 ըէֆօրմներ են, բայց որպէսզի գործադրութեան դրուին, Եւրոպական
 երաշխաւորութիւն մը պէտք է:»
 Դեսպանը կ'ըսէ.
 «Դժբախտաբար բրիտանական մարտանաւերը չեն կրնար Վան եւ
 Մուշ այցելել»:
 Պատրիարքարանի պատուիրակը.- Եթէ Եւրոպա այս անգամ ալ իր
 դրական պաշտպանութիւնը չընծայէ, թերեւս Հայերը պիտի
 պարտաւորուին Ռուսիոյ դիմելու:
 Դեսպանը.- Խորունկ ծովը նետուիլ, սատանայէն խուսափելու
 համար:
 Պատուիրակը.- Թերեւս նախընտրելի է ծովուն խորութեան մէջ
 նետուիլ ու խեղդուիլ՝ քան մշտնջենապէս տառապիլ սատանային
 ձեռքը:
 6 Յունուար 1913
 ՓՆՄ, ՉՆՀՀՄ

... Պէտք չէ, որ հայերը իրենց ուշադրութեան կենտրոնական
 առարկան ընեն բարենորոգումներուն շուրջ կատարուած
 դիւանագիտական բանակցութիւնները...: ... ո՛չ ոք, ո՛չ իսկ Ռուսիան
 իրենց վրայ չի նայիր իբրեւ հայերու...: Հայերը ռուսներու համար ...
 դէպի հարաւ էջքի գործիքներ են միայն: ...Հիմա հայերը ... կը
 գտնուին երկսայրի վտանգի մը առջեւ, այն է կոտորածը յամենայն
 դէպս, այնքան բարենորոգումներու ներմուծման, որքան զինման
 պարագային: ... պէտք է հայերը կազմակերպեն իրենց
 ինքնապաշտպանութիւնը, եւ այդ պէտք է ըլլայ իրենց այսօրուայ
 մեծագոյն, առաջնագոյն մտահոգութիւնը:
Վիքթոր Պերար (հայասէր եւ միանգամայն թրքասէր՝ իր բառերով)
 «Նիւյօներ Հ՛. Յ. Դաշնակցութեան Պատմութեան Համար», խմբ.՝ Երուանդ
 Փամպուքեան, հատոր ԺԱ., Պէյրուզ, 2015, 39

Մ ՈՒՏՔ

Այս հատորին մէջ մէկտեղուած երկու նիւթերն ունին զանոնք իրարու առնչող ընդհանուր յայտարար մը՝ Առաջին Համաշխարհային Պատերազմի նախօրեակին, 1912–1914 տարիներուն, վերաբացուած Հայկական Բարենորոգումներու ծրագիրը: Առաջինին նախօրինակը պատրաստուած էր Երեւանի մէջ 16 Սեպտեմբեր 2022-ին «Աղթամար» եւ «Ծաղիկ» հանդէսներու կազմակերպութեամբ Արշակ Չօպանեանի ծննդեան 150-ամեակին նուիրուած գիտաժողովին համար, նպատակ ունենալով նորայայտ նիւթերու վրայ հիմնուելով ներկայացումը կարգ մը անձանօթ տեղեկութիւններու. իսկ երկրորդինը լոյս տեսած էր «Հայկազեան Հայագիտական Հանդէսի» ԼԸ. համարին մէջ, 2019-ին, դարձեալ նպատակադրելով ներկայացումը նորայայտ նիւթերու:

Այս հրատարակութեան մէջ նորայայտ աղբիւրներով եւ անհրաժեշտ հալումներով ընդարձակած ենք զանոնք, նոյնութեամբ պահպանելով յատուկ անուններու տարբերակները: Ուղիղ փակագիծերով պարփակուած ընդմիջարկութիւնները, եթէ չեն աւարտիր հեղինակային սկզբնատառերով, կատարուած են մեր կողմէ:

* * *

Օսմանեան կեղծ Սահմանադրութեան (1908) հռչակումէն եւ անոր վաղորդայնին գործադրուած Ատանայի կրկնակի կոտորածներէն (Ապրիլ 1909) ետք, օսմանեան տիրապետութեան ներքեւ գտնուող երբեմնի հայապատկան եւ տակաւին հայահոծ շրջաններու մէջ հետզհետէ բազմացած ու սաստկացած էին հայոց դէմ կիրարկուող կեղեքումներն ու սպանութիւնները՝ ազգային պատասխանատու մարմինները դնելով անապահով կացութեան հիմնական լուծում գտնելու հրամայականին առջեւ:

Լուծումներէն մին էր, բնականաբար, ինքնապաշտպանութեան միջոցներ գոյացնելը. ուրիշ մըն էր՝ միջազգային վերաբժարծումը Հայկական Հարցին:

1878-ին Սան Սթեֆանոյի եւ Պերլինի դաշնագրերու բարենորոգչական սեղմ բանաձեւումներէն 17 տարիներ ետք, սուլթան Ապտուլ Համիտ Բ.ի գահակալութեան շրջանին, այդ հարցը անգամ մը եւս եւրոպական դիւանագիտութեան սեղանին դրուելով, 1895-ին յանգեցուցած էր հռչակումին Մայիսեան Բարենորոգումներու ընդարձակ ծրագրին, որ մնացած էր արիւնլուայ թուղթի կտոր:

8 Հոկտեմբեր 1912-ին սկիզբ առած Պալքանեան Պատերազմը կրկին եւրոպական մեծ տէրութիւններու քննարկումին նիւթ դարձուցած էր Արեւելեան Հարցը: Մօտալուտ լուծման մը հաւանականութիւնը խանդավառած էր հայ անհատներ¹ ու գործի մղած՝

¹ Օրինակ, մելայուռնաբնակ Յարութիւն Կ. Պալազեան, իր 26 Յունուար 1913 թուակիր

կազմակերպություններ², դիւանագիտական ձեռնարկներով օգտուելու «բացառիկ» եւ «հազուադէպ» պատեհութեան: Կատարուած էին նոյնիսկ գաղութային մակարդակով համախմբման ձեռնարկներ³:

նամակով, Թուրքիոյ Հայոց Պատրիարք Յովհաննէս Արք. Արշարունիի կը գրէր. «...հայրենիքի բարեկաւոյթեանը եւ կեանքի, պատուոյ եւ ինչքի ապահովութեանը համար, ամենայն հեռատեսութեամբ եւ խոհեմութեամբ, եւ ազգային տարբեր կուսակցութեանց վստահելի անձերու հետ համերաշխութեամբ գործել ... վտանգի մէջ եղող ազգային գոյութիւնը փրկելու եւ մեր ֆիզիքական, բարոյական եւ նիւթական յառաջդիմութիւնը կասեցնող ամէն արգելքները միանգամընդմիշտ ոչնչացնելու համար ... կարելի եղածին չափ լաւ վարուիլ ռուսական կառավարութեան հետ, բայց ամէն միջոց ի գործ դնել, անոր Թրքահայաստանը կլանելու պատմական նպատակէն դիւանագիտորէն խուսափելու համար» (ՊՏԴ, Ծ51):

² Իր կեդրոնը Նիւ Եորքը հաստատած Հայ Յառաջդիմական Ընդհանուր Ընկերակցութեան նախագահը՝ Մ. Սմբատ Գաբրիէլեան, 1 Նոյեմբեր 1912-ին, մեծ տէրութիւններու դեսպանաժողովի գումարման նախօրեակին, կը գրէ. «... արտասահմանեան հայ գաղութներն ալ այս պահուս բնականօրէն կ'ըղձան սատար հանդիսանալ հայկական բարեկարգութեանց ի նպաստ կատարուելու ազգային ճիգին, եւ սակայն ... Ընկերակցութիւնս կը զգայ եւ կը ջանայ զգացնել թէ ոչ ոք իրաւունք ունի այս փափուկ խնդիրներուն միջամուխ ըլլալ եւ դիւանագիտական դիմումներ ընել ազգային իշխանութիւններէն անկախաբար: Կը հասկնանք միանգամայն ... թէ գուցէ կեդրոնական իշխանութիւններն պատշաճ համարին արտասահմանի ծանօթ ազգայիններու միջոցաւ բան մ'ընել» եւ կը յայտնէ թէ Ընկերակցութիւնը պատրաստ է ընծայելու իր աջակցութիւնը «եթէ որեւէ կերպով կրնայ սատարել դիւանագիտական ջանքերու պատշաճաւոր գործադրութեանը» (ՊՏԴ, Ծ255): Ընկերակցութիւնն իր պատուոյ փոխ-նախագահներուն մէջ ընդգրկած էր Ամերիկեան Մեթոտականներու ընդհանուր քարտուղար Հերի Ֆրետերիք Ուորտը (Harry Frederick Ward) եւ յայտնի միսիոնար Սայրըս Համլինի որդին՝ Ալֆրէտ Տուայթ Ֆոսթըր Համլին (Alfred Dwight Foster Hamlin), որ նարտարագիտութիւն կը դասաւանդէր Նիւ Եորքի Քոլումպիա Համալսարանին մէջ եւ որ 1923-ին Լոզանի Դաշնագրի կնքումէն ետք պիտի ըլլէր թէ ան «Անարժէք դաշնագրի մըն էր և թուրքերն ալ՝ անվստահելի»: Գաբրիէլեան բարենորոգման ի խնդիր իր աշխատակցութիւնը տրամադրելու համար պիտի մեկնէր Լոնտոն եւ Փարիզ, Եւրոպայէն ալ նամակներ ուղարկելով Պոլիս, պատրիարքարան: «Բիւզանդիոն» իր 3/16 Յունուար 1913-ի համարով այդ առթիւ պիտի գրէր. «Տօքո. Սմբատ Գաբրիէլեան, «Հայկական Ճգնաժամը»ին ծանօթ հեղինակը, Ուստրի համաժողովէն պատգամաւոր ընտրուելով, Լոնտոն մեկնած է Բարենորոգմանց գործին աշխատելու»:

³ 22–24 Նոյեմբեր 1912-ին Ուստրի մէջ գումարուած համաժողովի մը կը մասնակցէին ԱՄՆ-ի եւ Քանատայի 50-է աւելի քաղաքներէ մէկտեղուած 114 ձայնով 98 աշխարհիկ թէ եկեղեցական պատգամաւորներ, որոնք կ'ընտրէին կեդրոնական յանձնախումբ մը, «պաշտօն տալով անոր Ամերիկահայ Գաղութին անունով, նիւթապէս եւ բարոյապէս օժանդակել եւ աջակցիլ Հայկական Հարցին բարուր լուծման համար Ազգ. իշխանութեանց ընելիք ջանքերուն եւ ձեռնարկներուն», Առաջնորդ Վեհունի վարդապետն ունենալով որպէս նախագահ, Ա. Այվազեանն իբրեւ առնանապետ եւ Մ. Ս. Գաբրիէլեանը՝ առննադպիր (ՊՏԴ, Ծ59 եւ Ծ65): Պուկկարահայութիւնն իր հերթին 24–28 Նոյեմբեր 1912-ին կը գումարէր Պուկկարիոյ տաս հայաշատ վայրերու պատգամաւորներով խորհրդակցական ժողով մը եւ կ'առաջարկէր յարմար դատուելու պարագային դիմել «Պալքանեան ներկայ Դաշնակցութեան կարեւորագոյն տարրը» հանդիսացող Պուկկարիոյ «զալիք քաղաքական

Ընդառաջելով Թուրքիոյ Հայոց Պատրիարքութենէն եւ արեւմտահայ ու արեւելահայ շահագրգիռ կողմերէ ստացուած դիմումներու, Գէորգ Ե. Սուրենեանց, Էջմիածնի Մայր Աթոռի գահակալ ընտրուած 1911-ի Դեկտեմբերին, 15 Հոկտեմբեր 1912-ին կը դիմէ 1905-ին Չարական Ռուսիոյ Կովկասի փոխարքայ նշանակուած եւ արեւելահայերու նկատմամբ իր նախորդին վարած խուժուժ քաղաքականութիւնը մեղմացուցած Վորոնցով-Տաշքովի, նելով թէ կեղեքուող արեւմտահայութիւնը «պաշտպանութիւն եւ հովանաւորութիւն» կը սպասէ Չարէն, նաեւ յայտնելով թէ պատուիրակութիւն մը կը դրկէ Փեթերսպուրկ, արեւմտահայոց վիճակին մասին անհրաժեշտ լուսաբանութիւնները տալու համար⁴:

Այս առաջին քայլը պիտի առաջնորդէր Ռուսական Կայսրութեան շահերուն համար նպաստաւոր դարձուածքով Հայկական Հարցի վերաբացումին եւ 8 Փետրուար 1914-ին պիտի յանգեցնէր Հայկական Բարենորոգումներ անունով ծանօթ *Ռուս-Թրքական*

խնդրոց լուծման մէջ ... հեղինակաւորագոյն ձայն» ունենալիք ձարին եւ ի հարկին անոր ներկայացնել պատրիարքարանին կողմէ առաքելի ներկայացուցիչ մը (ՊՏԴ, Շ69-Շ70):

⁴ *Վաւերագրեր Հայ Եկեղեցու Պատմութեան, Գիրք ԺԳ, Գէորգ Ե Վշտալի Սուրենեանց Կաթողիկոս Ամենայն Հայոց (1847–1930). Փաստաթղթերի եւ նիւթերի ժողովածու*, կազմող՝ Սանդրո Բէիբուղեան, Հայաստանի Հանրապետութեան Ազգային Արխիւ, Երեւան, 2005, 95–96: Բէիբուղեանի ժողովածուին մէջ նշուած է 2 Հոկտեմբեր 1912 հին տոմարով: Այլուր, սակայն, յղում կատարելով Հայաստանի Հանրապետութեան Ազգային Արխիւի վաւերագրերուն, որոնք հիմք կազմած են Բէիբուղեանի ժողովածուին, Գէորգ Ե.ի դիմումին համար կը նշուի 12 Հոկտեմբերը՝ փոխանակ 2-ի (Պօղոսեան Սամուէլ, *Պօղոս Նուբար Փաշա Ազգային Գործիչը*, «Սփիւռք» Գիտաուսումնական Կենտրոն, Երեւան, 2004, 38): Գրաշարական սխալ մը թերեւս՝ այս մէկը, որուն հետեւանքով 2-ն դարձած է 12: Այս ենթադրութիւնը կը նկատենք հաւանական, որովհետեւ նոր տոմարով 15 Հոկտեմբեր 1912 թուականը ցոյց կը տրուի նոյն վաւերագրին համար հետեւեալ աշխատութեան մէջ.՝ *Հայոց Պատմություն. Հատոր III. Նոր ժամանակաշրջան (XVII դարի երկրորդ կես–1918 թ.)*, Գիրք երկրորդ, հրատարակութիւն ՀՀ Գիտութիւններու Ակադեմիայի Պատմութեան Հիմնարկի, Զանգակ Հրատարակչութիւն, Երեւան, 2015, 134: Մայր Աթոռի պաշտօնաթերթին մէջ կը տեղեկագրուի թէ երբ պարբերական մամուլն սկսաւ 1912-ի Օգոստոսին հաղորդել Արեւմտահայաստանի մէջ եւ յատկապէս Վանի շրջակայքը ծագած անկարգութիւնները, Գէորգ Ե. Կաթողիկոս Արշարունի Պատրիարքին ուղղեց 28 Օգոստոս թուակիր հեռագիր մը, թելադրելով անմիջապէս մանրամասնութիւններ դրկել անոնց մասին եւ «այս հեռագիրն եղաւ սկիզբն *հայկական հարցի ներկայ շրջանի*», որովհետեւ ամէն կողմէ այնուհետեւ Մայր Աթոռ ուղարկուած տեղեկագրեր եւ բողոքի ու խնդրանքի արտայայտութիւններ հիմք պիտի ծառայէին ստեղծուած կացութիւնը ձարին ուշադրութեան յանձնելու («Արարատ» պաշտօնական ամսագիր Հայրապետական Աթոռոյ Ս. Էջմիածնի, ԽԸ. տարի, Յունուար 1914, 30): Պոլիս, Ազգային Ժողովի երեսփոխանները յոտնկայս կ'ունկնդրեն Գէորգ Ե.ի հեռագիրը, ուր կ'ըսուէր. «Յաւալի լուրեր ենք խում Վանի շրջակայքի հայերի դրութեան մասին. շուտով հեռագրով յայտնեցէք եւ նամակով մանրամասնութիւնք [ուղարկեցէք]: Գէորգ Կաթողիկոս Ամենայն Հայոց» (*Ատենագրութիւնք Ազգային Ժողովոյ. Վերաբացում 1912–13 Շրջանի Երեսփոխանական Վերակազմութենէն ետքը*, Նիստ Ժ. 7 Սեպտեմբեր 1912, Պաշտօնական Հրատարակութիւնք Ազգային Պատրիարքարանի, տպագր. Ռ. Սազաեան, Կ. Պօլիս, 191[2], 128):

Համաձայնագրի կնքման, տրամադրելով Արեւմտահայաստանի նահանգներուն երկու հատուածի բաժանումն ու անոնց վրայ օսմանեան կառավարութեան կողմէ եւրոպական մեծ տէրութիւններու հաւանութեամբ նշանակումը երկու եւրոպացի ընդհանուր քննիչներու՝ բարենորոգումներու գործադրութեամբ զբաղելու համար: Ուրիշ հարց որ վերահաս Առաջին Աշխարհամարտը առիթ պիտի չթողուր բարենորոգումներու իրականացման:

Միջանկեալ շրջանին, Սուրենեանց Կաթողիկոսն անհրաժեշտ նկատած էր 10 Նոյեմբեր 1912 թուակիր կոնդակով մը Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան Փարիզ գտնուող հիմնադիր նախագահ Պօղոս Նուպարը նշանակել անձնական ներկայացուցիչ՝ եւրոպական դահլիճներու մօտ համապատասխան աշխատանք տանելու համար Հայկական Հարցի բարեյաջող լուծման ի խնդիր⁵, իսկ 4 Յունուար 1913 թուակիր կոնդակներով պաշտօնականացուցած էր կազմութիւնը Պօղոս Նուպարի նախագահութեամբ Հայ Ազգային Պատուիրակութեան, այդպիսով անոր անդամ հաստատելով Եւրոպայի Առաջնորդ Գէորգ Եպիսկոպոս Իւթիւնեանը, Հ.Բ.Ը.Մ.-ի

⁵ Վահան Մալեգեան, որ պիտի կոչուէր Ազգային Պատուիրակութեան քարտուղարութիւնը վարելու, այդ մարմնին ծագման պատմութեան մասին գրելով կը յայտնէ թէ խումբ մը գահիրէաբնակ հայեր, իրենց գաղափարակից աղեքսանդրիաբնակ հայերու հետ խորհրդակցաբար, պահը հասած նկատելով բարենորոգումներու պահանջ բարձրացնելու մեծ տէրութիւններու առջեւ, 17 եւ 19 Հոկտեմբեր 1912-ին խորհրդապահական նամակներ յղած էին Պօղոս Նուպարի, Արշարունի Պատրիարքին, Յարութիւն Մօստիչեանի, վիեննական միսիոնարեան միաբան եւ բանասէր Գաբրիէլ Վ. Մէնելիշեանի եւ այլոց, որպէսզի դիմումներ կատարեն իրենց բնական վայրերուն մէջ: Իսկ 23 Հոկտեմբեր թուակիրով մը ՀԲԸՄ-ի փոխնախագահ Երուանդ Աղաթօնի, Մկրտիչ Անդրանիկեանի եւ առաջնորդական փոխանորդ Շաղոյեան քահանային հետ միացեալ ստորագրութեամբ «թելադրական խնդրագիր մը» յղած էին Գէորգ Ե.ի, «միւս կողմէ, անուղղակիօրէն առաջարկ[ելով] ... Հայկական դատին հետապնդումը վստահ[իլ] Պօղոս Նուպար Փաշայի հեղինակաւոր նախաձեռնութեան» (Մալեգեան Վահան, *Ճամբուս Ճայրը*, Բ. հատոր, Փարիզ, 1955, 215–221): Այստեղ կարիքը կը ծագի ճշդումի մը, որովհետեւ Ս. Պօղոսեան Մալեգեանի յուշերուն վրայ հիմնուելով կը գրէ. «Հոկտեմբերի 23-ին Եգիպտոսի հայ համայնքի ղեկավարները դիմեցին Կաթողիկոսին՝ առաջարկելով պատուիրակութիւն ուղարկել Եւրոպա եւ դրա ղեկավար նշանակել Պ. Նուբարին» (Պօղոսեան, 38): Մալեգեանի յուշերուն մէջ ներկայացուած Հոկտեմբերի 23 թուակիրը կը թուի ըլլալ սեւագրութեան մը վերաբնակութիւնը, որովհետեւ Գէորգ Ե.ի ուղղում օրինակը, որ բաղդատաբար կը պարզէ փոքր տարբերութիւններ, կը կրէ 3 Նոյեմբեր 1912 թուականը եւ կը թուի ստորագրուած ըլլալ միայն Աղաթօնի եւ Շաղոյեանի կողմէ (Բեիբուդեան, 99–100): Ապա, Նուպարը պատուիրակութեան մը գլուխ նշանակելու առաջարկը կատարուած չէ 23 Հոկտեմբերին կամ 3 Նոյեմբերին, եւ կատարուած է «անուղղակի» կերպով, առանց մասնաւորելու դիմող ու թուական: Մալեգեան հաւանաբար շփոթի մը հետեւանքով նոյն տեղը կը նշէ թէ Գէորգ Ե. 12 Նոյեմբեր 1912 թուակիր կոնդակով Պօղոս Նուպարին տուած է ներկայացուցչական պաշտօնը, մինչդեռ Բեիբուդեանի եւ Պօղոսեանի նշումը հատորներուն համաձայն (համապատասխանաբար՝ էջ 105 եւ 39), կոնդակը ճշգրտապէս կը կրէր 10 Նոյեմբեր թուականը: Նոյնը կը հաստատուի ՊՏԴ-ի մէջ պահպանուող պատճենով, ինչպէս նաեւ Էմմա Հովսեփյանի կազմած «Պօղոս Նուբար Փաշա. Վավերագրեր» հատորով (Երեւան, 2021, 5):

հիմնադիր փոխ-նախագահ եգիպտաբնակ Յակոբ Արթին Չրաքեանը (ծանօթ նաեւ որպէս Եագուպ Արթին), 1878-ին Պերլինի Համաժողովին մասնակցած հայկական պատուիրակութեան քարտուղար ֆրանսաբնակ Մինաս Չերազը⁶, եւ անգլիաբնակ Յարութին Մօստիչեանը՝ իրաւաբան եւ նախկին տնօրէն Պոլսոյ յայտնի Կեդրոնական Վարժարանին⁷:

Չերազ արդէն Փարիզ կը գտնուէր: Եագուպ Արթին Պատուիրակութեան անդամակցելու իր հաւանութիւնը յայտնած ըլլալով Նուպարի, 1 Յունուար 1913-ին Նուպար կը գրէր անոր թէ արդէն հեռագրով մը յայտնած է թէ անհամբեր կը սպասէ իր գործակցին Փարիզ ժամանման, բայց անապարելու կարիք չկայ՝ պատմելով Փարիզի ռուս դեսպան Իզվոլսքիի հետ ունեցած հանդիպման մասին: Այդ տեսակցութենէն Նուպար հետեւցուցած էր թէ, թէեւ Գէորգ Ե. պատուիրակութիւնը կեանքի կոչած էր հայկական խնդիրը պատուիրակութեան անդամներով խմբովին Լոնտոնի դեսպանաժողովին ներկայացնելու ստիպողականութեամբ, սակայն Ռուսիա պատեհ չէր նկատեր հայկական հարցին արծարծումը այդ ժողովին մօտ տուեալ պահուն⁸:

Գէորգ Ե. եւ Նուպար փափաքած էին որ Յովհաննէս խան Մասէհեան, որ Պարսկաստանի դեսպանն էր Իրանի մէջ, անդամակցէր Պատուիրակութեան, բայց ան յայտնած էր թէ իր դիրքը չէր թոյլատրէր ընդառաջ երթալ առաջարկին, որով Նուպար իր 9 Դեկտեմբեր 1912 թուակիրով իր ցաւը յայտնելով Մասէհեանի, միաժամանակ կը յուսայ որ ան չզլանայ իր խորհուրդներուն եւ փորձառութեան օժանդակութիւնը՝ երբ իրեն դիմուի առաջին առիթով: Յիրաւի, երբ Նուպար,- ըստ երեւոյթին մտմտալով Պերլին այցելելու մասին՝ տեղեկանալէ ետք թէ Ռուսիա կանխահաս կը նկատէր հայկական խնդիրը դեսպանաժողովին ներկայացնելը,- կը փափաքէ իմանալ Մասէհեանի տեսակէտը գերմանական տրամադրութեան եւ բարենորոգումներու հարցին նկատմամբ: Մասէհեան 16 Յունուար 1913-ին կը գրէ.

⁶ Չերազ 6 Մայիս 1913 թուակիրով մը՝ ուղղուած Գէորգ Ե.ի, պիտի հրաժարէր Պատուիրակութեան անդամակցութենէն՝ պատճառաբանելով անձնական տկարութիւն եւ ըսելով. «Պատուիրակութեան միւս չորս յարգելի անդամները լիովին կը բաւեն իրենց պաշտօնին համար, քանի որ Պերլինի Վեհաժողովին դիմող պատուիրակութիւնն ալ չորս անդամէ կը բաղկանար»: Ան յոյս կը յայտնէր որ «Ռուսիոյ խաչագլուխ սուրը գէթ այս անգամ խզէ հայկական խնդրի Կորդեան Հանգոյցը» (ՓՆՄ, ՉՆՀՀՄ):

⁷ Բէիքուդեան, 124: Դիտել տանք թէ արձակագիր Տիգրան Կամսարական Մօստիչեանը որպէս Պատուիրակութեան անդամ յանձնարարելու համար Ադրբայճանի յայտն 31 Դեկտեմբեր 1912 թուակիրով Նուպարի կը գրէր. «Ինծի պարտականութիւն կը նկատեմ, Վսեմաշուք Տէր, Ձեզի մատնանիշ ընել մարդ մը, թանկագին աջակից մը, անգոյց, որ կրնայ աւելնալ անոնց որոնք կ'աշխատին Ձեր բարձր նախաձեռնութեան տակ», նաեւ նշելով թէ ան եղած էր խորհրդական Իզմիրեան պատրիարքի 1896-ին եւ է «քանիմաց հայրենասէր, շատ զարգացած միտք, կատարեալ ճէնթմէն ... գերազանց անձնաւորութիւն» (ՓՆՄ, ՉՆՀՀՄ): Նուպար պիտի յայտնէր թէ արդէն նկատի ունեցած էր ընդգրկած էր զայն Պատուիրակութեան կազմին մէջ (նոյն):

⁸ ՓՆՄ, ՉՆՀՀՄ:

Ներեցէք որ ուշ կը մնամ Ձեզի պատասխանելու. կը յուսայի առիթ մը ունենալ գերման դիւանագետներու հետ խօսելու... Բայց նորընտիր արտաքին գործոց նախարարը դեռ Պէրլին չհասաւ...:

... Իմ համոզումս այն է թէ, եւրոպական դահլիճներու մօտ, լոկ Ռուսիոյ նախաձեռնութիւնը կրնայ քիչ շատ կարելորութիւն ընծայել Հայկական խնդրին, եւ թէ այդ պարագային Անգլիա, Ֆրանսա եւ Իտալիա անոր պիտի միանան, եւ Գերմանիա ու Աւստրիա ալ ընդդիմութիւն չպիտի ընեն. միւս կողմէ, նոյն իսկ այն պարագային ուր կարելի չըլլայ անմիջական յաջողութիւն մը ձեռք բերել, Ռուսիոյ բարեացակամ ընթացքը Հայոց մասին՝ թուրքերը պիտի վախցնէ: Գաղափարներու այս կարգին մէջ, կը կարծեմ թէ բոլորովին անհրաժեշտ է որ Հայերը *անկեղծ եւ հաւատարիմ* վերաբերում մը տան դէպի ռուսերը: Եթէ ռուսերը կը կարծեն թէ ժամանակը չէ եկած Հայկական խնդիրը սեղանի վրայ հանելու, աւելի լաւ է իրենց համակերպիլ: Ռուսական նկարագիրը եւ իրենց դիւանագետներուն դիւրագգաժութիւնը ճանչնալուս համար, այն կարծիքը ունիմ թէ պետք չէ ո՛չ մէկ բանի ձեռնարկել առանց իրենց հաճութեան: Այն պարագային ուր պետք տեսնեն որ դիմէք զանազան դահլիճներու, փափաքելի պիտի ըլլար որ ռուսական դեսպանատունները իրենք անձամբ դահլիճներուն ներկայացնեն Հայկական Պատուիրակութիւնը: Ասիկա իսկոյն տարբեր կարելորութիւն մը պիտի տար անոր...⁹:

Մասէիւն անգամ մը եւս Նուպարի խնդրանքին ընդառաջելով անոր պիտի

⁹ ՓՆՄ, ՉՆՀՀՄ: Նուպար իր 26 Յունուար 1913 թուակիրով համամտութիւն յայտնելէ ետք, պիտի գրէր թէ հայոց քուէները բարենորոգումներու բոլորէն ընդունելի ծրագրի մը վրայ կեդրոնացնելը դիւրին գործ չէր նկատւեր՝ նկատի առնելով անոնց «իրերամարտ գաղափարները», քանի որ կան տակաւին անկախութիւն կամ առնուազն ինքնավարութիւն երազողներ, որոնք «կ'ուզեն բարենորոգումներու պատրուակին տակ ծրագրին մէջ մտցնել այն տեսակ յօդուածներ, որոնք տարակոյս չկայ թէ չպիտի ընդունուին ո՛չ տէրութեանց, ո՛չ ալ Թուրքիոյ կողմէ, որովհետեւ քօղարկուած ինքնավարութեան մը համարժէք պիտի ըլլան»: Կ'աւելցնէ թէ կը ջանայ զանոնք համոզել, յաջողութեան յոյս ունենալու համար, հիմնուիլ Պէրլինի Դաշնագրին 61-րդ յօդուածին եւ 1895-ի վեց տէրութիւններու յուշագրին վրայ, պահանջելով լուրջ եւ դրական բարենորոգումներ «մէկ կամ բազմաթիւ պետութեանց հակակշռին տակ», որպէսզի Հայաստան ունենայ ապահովութիւն եւ արդարութիւն, եւ անոնցմով իսկ՝ բարօրութիւն: Կ'ընդգծէ. «Այս պետք է ըլլայ մեր ամբողջ պահանջելիքը, նոյն ինքն Հայոց շահուն համար: Արդէն ասոնք են նաեւ հրահանգները Կաթողիկոսին, որուն հետ համախորհուրդ կ'ընթանամ: Յուսանք թէ մեր հայրենակիցները պիտի հասկնան ասիկա» (ՓՆՄ, ՉՆՀՀՄ): Անիրագործելի բաղձանքներու մասին ակնարկութիւնը կը վերաբերէր նաեւ Պոլսոյ պատրիարքարանի շրջանակին, որովհետեւ, ինչպէս կը պարզուի Արշարունի պատրիարքին յօդած իր 18 Յունուար 1913 թուակիրէն, «հայրենակից մը» իրեն յանձնած էր, անպաշտօն կերպով, պատրիարքարանին կողմէ պատրաստուած ծրագրի մը պատճենը, որուն մասին 22 Յունուարին իր դժգոհութիւնը պիտի յայտնէր Գէորգ Ե.-ի, ի միջի այլոց նշելով. «Պատրիարքարանի ծրագիրը հիմնուած է տեսակ մը ինքնավարութեան սկզբունքի վրայ, որ մեզի ո՛չ պատեհ, ոչ ալ գործնական կը թուի» (նոյն):

յայտներ իր կարծիքը Գերմանիոյ հակումներուն մասին, բանաձեւուած՝ 16 Ապրիլ 1913 թուակիրով մը.

... Անհերքելի է թէ բարենորոգումներուն նպաստաւոր եղող քիչ շատ փոփոխութիւն առաջ եկած է հոս, բայց թուրքերու մասին սնուցուած համակրութիւնները շատ զօրաւոր են որպէս զի Գերմանիա մտնէ իր բարեկամներուն անհաճոյ ճամբու մը մէջ: Գերմանները աւելի՛ կը դրուատեն հաշտարար քաղաքականութիւն մը թուրքերուն եւ Հայոց միջեւ, այս վերջիններուն խորհուրդ տալով որ հրաժարին եւրոպական հակակշռէն, ու խոստանալով, այդ պարագային, Գերմանիոյ բարոյական աջակցութիւնը բարենորոգումներու գործադրութեան համար: Այս քաղաքականութեան պատճառն է այն երկիւղը թէ Ռուսիա ո՛ր եւ է պատրուակով իրեն կը կցէ Հայաստանի մէկ մասը: Միւս կողմէ այստեղ կը հաւատան, կամ հաւատալ ցոյց կու տան Թուրքիոյ վերածնութեան, իբր *սախական* տէրութիւն, ընդունելով նոյն ատեն որ իր դերը վերջացած է Եւրոպայի մէջ¹⁰:

Գալով Իւթիւճեան Եպիսկոպոսի, Նուպար փափաքած էր անոր փոխարէն վարչագլխի համբաւ վայելող Թուրքիոյ Հայոց երբեմնի Պատրիարք (1896–1908) Մաղաքիա Արք. Օրմանեանը հրաւիրել իբրեւ եկեղեցական անդամ Պատուիրակութեան, նկատի ունենալով Օրմանեանի ընտրութեան «հաճելի ըլլալը ի Կովկաս», ինչպէս կը տեղեկանանք Ազգային Երեսփոխանական Ժողովի անդամ, տուեալ պահուն Փարիզ գտնուող Գէորգ Ալանեանի 14/27 Դեկտեմբեր 1912 թուակիրէն՝ ուղղուած Արշարունիի¹¹:

Օրմանեանի վերաբերեալ Նուպարի փափաքին մէջ կրնար դեր մը ունեցած ըլլալ Մալեգեան, որ կը գրէ թէ անձնական նամակով մը փորձած էր ապահովել Օրմանեանի գործակցութիւնը Նուպարին¹²:

Գէորգ Ե.ի խնդրանքով Փարիզ մեկնած Համբարձում Առաքելեան 6 Յունուար 1913-ին կը յայտներ թէ բարեկարգումներու նոր ծրագրին հիմ պիտի բռնուէր 1895-ի Մայիսեան Բարենորոգումներու Ծրագիրը՝ պատշաճ բարեփոխումներով, եւ կ'աւելցնէր. «... պէտք է կազմակերպել պատգամաւորութիւնը, որ առ այժմ ունի միայն մի պաշտօնական գլուխ, Պօղոս Նուպար փաշան, իսկ մնացած անդամները դեռ ընտրուած կամ նշանակուած չեն: ... թէ Կ. Պոլսում ազգային շրջանակների մէջ եւ թէ ինքն Պօղոս Նուպար փաշան միտք են յղացել, որ պատգամաւորութեան եկեղեցական անդամը լինի Օրմանեան սրբազանը, որ ... միակ ձեռնհաս անձն է նկատուում այդպիսի մի փափուկ պաշտօնի համար, շնորհիւ իր լեզուագիտութեան, դիպլոմատիկական հմտութեան եւ փորձառութեան»: Առաքելեան նաեւ կը յայտներ թէ Նուպար ուզած է իմանալ Օրմանեանի կարծիքը, որպէսզի ըստ այնմ դիմէ Գէորգ Ե.ին, բայց Օրմանեան պայման դրած է որ նախ Ազգային Երեսփոխանական Ժողովն աւարտէ ամբաստանու-

¹⁰ ՓՆՄ, ՁՆՀՀՄ:

¹¹ ՊՏԴ, Շ84–Շ85:

¹² Մալեգեան, *Ճամբու Ճայրը*, Բ., 222:

թիւներու պատճառաւ իր դէմ բացուած դատին քննութիւնը¹³:

Ասով հանդերձ, ազգային կարգ մը շրջանակներ իբրեւ կատարուած իրողութիւն կը վերաբերէին Օրմանեանի մասնակցութեան: Օրինակ՝ «Մշակ»-ի նոյն թիւին մէջ Շառայլ գրչանունով թերթին աշխատակցող Արշակ Ալպոյանեան, «Վոսփորի Ափերէն. Հայկական Խնդիրը Վիժած (!!!)» խորագրով թղթակցութեան մը մէջ կը գրէր թէ ազգին ցաւերով տուայտողներ «... պէտք է յիշեն ... պատուիրակութեան մը կարգուիլը Պօղոս փաշա Նուպարի նախագահութեամբ եւ Օրմանեան արքեպիսկոպոսի մասնակցութեամբ...»: Ազգային Երեսփոխանական Ժողովն իր 21 Դեկտեմբեր 1912-ի նիստով արդէն անպարտ արձակած էր Օրմանեանը:

Օրմանեանի վերաբերեալ հարկ է նշել նաեւ Վահապ կեղծանունամբ կամ Արշակ Վռամեան անունամբ ծանօթ դաշնակցական գործիչ Օննիկ Դերձակեանի Երեսնէն գրած 18/31 Դեկտեմբեր 1912 թուակիրին հետեւեալ տողերը. «Կաթ[ողիկոսը] մտածեր է իր պատուիրակութեան (եւրոպական) միացնել Նուբարի հետ նաեւ Դուրեան եպիսկոպոսը: Բոլորովին սուտ ու սխալ է թէ Օրմանեանի վրայ մնացած է ընտրութիւնը...: Կաթ[ողիկոսը] եւ իր շրջապատը ի սպառ հակառակ է այդպիսի փափուկ պաշտօնի մը կոչել Օրմ[անեանի] պէս թեթեւսողիկ մը եւ համիտեան քաղաքականութեան հանդուրժող անձ մը»¹⁴:

Օրմանեանի պատուիրակ ըլլալու մասին հակասական լուրեր պատճառ դարձած էին որ Մայր Աթոռի դիւանապետ Բագրատ վարդապետ 17/30 Դեկտեմբեր 1912-ին հեռագրով մը յայտարարէր թէ Օրմանեան ոչ մէկ պաշտօն ստացած է Ամենայն Հայոց Կաթողիկոսէն «Թիւրքահայոց հարցի վերաբերմամբ»¹⁵:

Հակառակ ասոր, Չօպանեան պիտի ջանար Օրմանեանը տեսնել Պատուիրակութեան կազմին մէջ: Նուպարի ուղղուած 7 Յունուար 1913 թուակիրով Չօպանեան նախ կը յայտնէր թէ, ազգային երեսփոխանի մը հաւաստումին համաձայն, Օրմանեանի ի պաշտպանութիւն իր գրած նամակը դեր մը խաղացած է Ազգային Ժողովին մէջ Օրմանեանի արդարացումը «ստուար մեծամասնութեամբ» քուէարկողներու մօտ, ապա նշելով հանդերձ թէ Օրմանեան «կատաղի անձնական հակառակորդներ ունի Էջմիածնի մէջ, եւ նոյն ինքն Կաթողիկոսը զինք շատ չի սիրեր», կ'աւելցնէր. «Այն պարագային ուր Օրմանեան Սրբազան միշտ հաստատ է գալու որոշման մէջ, թերեւս լաւ պիտի ընէ եթէ նախ Էջմիածին երթայ, անձամբ տեսնէ Կաթողիկոսը եւ գայ կոնդակով մը»¹⁶:

8 Յունուար 1913-ին Արշարունի Պօղոս Նուպարի պիտի գրէր. «... Պատճառներ կան կարծելու որ նախկին Պատրիարքի մը նման հանրաժանօթ եւ ուշագրաւ անձնաւորութեան մը ներկայիս մայրաքաղաքէս արտասահման մեկնումը, վնասական կրնայ լինիլ ազգային մեր դատին, քանի որ Ազգ. Պատրիարքարանս Բ. Դրան հետ իր բարուր

¹³ «Մշակ», 4 Յունուար 1913:

¹⁴ Նիւթեր Հ.Յ. Դաշնակցութեան Պատմութեան Համար, Ժ. հատոր, խմբագիր՝ Երուանդ Փամպուքեան, Պէյրութ, 2014, 152:

¹⁵ ՓՆՄ, ՁՆՀՀՄ:

¹⁶ Նոյն:

յարաբերությանց մէջ չ'ուզեր ու չկրնար թերանալ»¹⁷: Ճկուն ձեւ մըն էր այս յայտնի դարձնելու թէ Նուպար պետք չէ յոյս դնէ Օրմանեանի աշխատակցութեան վրայ: Պատրիարքարանի դիտաւորութեան հաստատումը կը կատարեն Օրմանեանի 27 Դեկտեմբեր թուակիրը՝ ազգային երեսփոխան եւ Երուանդ Օտեանի մօրեղբայր Գեորգ Ասլանեանի, ինչպէս նաեւ 10 Յունուար 1913 թուակիրը՝ Նուպարի: Առաջինով կը յայտնէ. «Ինծի կ'իմացնեն թէ Պատրիարք Արշարունի Սրբազան Կաթողիկոսին գրելով յայտնէր է թէ Օրմանեանի առաքումը օգտակար չէ», իսկ երկրորդով կը գրէ. «Հակառակ բոլոր փափաքներուս առջիս գոցուած կը տեսնամ Ձեզի մօտ գալու եւ Ձեզի գործակցելու ճանապարհները: Ամբաստանութեան խնդիրը չգոցուած, Պատրիարքարանը ձեռք առաւ արգիլելու միջոցները, եւ Ձեր Վսեմութեան եւ Վեհ. Կաթողիկոսին նամակներով, շատ մը մտացածին պատճառանքներ մէջտեղ հանեց...»¹⁸:

Կը թուի թէ Նուպար այս նամակն ստանալէ ետք է որ կազմած է «բացարձակապէս թրքահպատակ անձնաւորութիւններով» վերջնական անուանացանկը, զոր իր 14 Յունուար 1913-ի հեռագրով ներկայացուցած է Գեորգ Ե.ի, որուն վաւերացումն ստացած է յաջորդ օրն իսկ:

Մինչ այդ, Ազգային Ընդհանուր Ժողովի 21 Դեկտեմբեր 1912-ի նիստի ընթացքին արտայայտուած վստահութենէն քաջալերուած՝ Ազգային Կեդրոնական Վարչութիւնը նշանակած էր հարստահարութիւններու բարձման եւ բարենորոգումներու հարցով զբաղելու սահմանուած Ապահովութեան Յանձնաժողով մը, որուն, ինչպէս նաեւ Գեորգ Ե.ի նախաձեռնութեան եւ Նուպարի գործունէութեան հակազդելու նպատակով թրքական կառավարութիւնն արդէն սկսած էր քայլեր առնել եւ առ այդ բարենորոգումներու հարցին քննարկման համար 1912-ի Դեկտեմբերին հրաւիրել երեւելի նկատուած հայեր:

Ապահովութեան Յանձնաժողովի գործավար Փափագեան հրաւիրեալներուն մասին կը գրէ. «... Օրմանեանը, «Սապահ»ի խմբագիր Տ. Զէլէկեանը, կարծեմ Տոքթ. Տաղաւարեանը եւ ծերակուտականներ Ագարեանը, Երամեանը եւ ուրիշ քանի մը հոգի», որոնց թրքական կողմը ներկայացուցած էր հապճեպով պատրաստուած բարենորոգչական ծրագիր մը, որուն նկատմամբ, ըստ Փափագեանի, «մերինները վերապահ էին գտնուեր»¹⁹:

¹⁷ Նոյն:

¹⁸ Նոյն:

¹⁹ Վահան Փափագեան, *Իմ Յուշերդ*, Բ. հատոր, տպ. Համազգային Ընկերութեան, Պէյրութ, 1952, 200: Այդ հրաւերին երեւելիներու ընդառաջումը դատապարտութեան ալիք բարձրացուցած էր անոնց դէմ, ինչպէս նշուած է զանազան աղբիւրներու մէջ, ուր նաեւ յիշատակուած է անոնց վերապահ գտնուած ըլլալը: Երեք վաւերագրեր, սակայն, կը ծառայեն ճշդումի մը: Նախ Օրմանեան Գեորգ Ասլանեանի ուղղուած իր 27 Դեկտեմբեր թուակիրով կը յայտնէ թէ Պատրիկ Կիւլպէնկեանի, Տիրան Զէլէկեանի եւ տոքթ. [Նազարէթ] Տաղաւարեանի հետ Բ. Դումէն հրաւիրուած է երկու գումարումներու վարչապետին եւ երկու նախարարներու հետ՝ թրքական ծրագրին քննարկման համար: Կ'ըսէ. «Մասնաւոր կերպով շեշտեցինք ծրագրին անբաւականութիւնը եւ եւրոպական հակակշիռն օգտակարութիւնը: Եւ արդէն ըսինք իրենց որ եթէ կ'ուզեն ազգին պահանջումները ճշդօրէն

Ապահովության Յանձնաժողովը 27 Դեկտեմբերին կազմած էր հետևեալ հրահանգը, որպէս ուղեցոյց պատրիարքարանին բռնելիք ընթացքին բարենորոգումներու խնդրին կապակցութեամբ:

Թուրքիաբնակ Հայ ժողովուրդը՝ հիմնուելով անցեալի փորձառութեանց եւ Օսմանեան Կառավարութեան մէկ քանի տասնեակ տարիներու ընթացքին հայկական նահանգները բարեկարգելու բազմիցս շռայլած խոստումներուն, եւ ստորագրած յանձնառութեանց [վրայ], որոնք չգործադրելէ զատ, ունեցան բացասական եւ եղերական վախճան, դժբախտաբար եկած է այն խոր համոզման, որ Օսմանեան Կառավարութիւնը ոչ միայն երբեք բարեկամեցողութիւն չունի, այլեւ բացարձակապէս անընդունակ է բարեկարգելու թէ երկիրը եւ թէ մասնաւորապէս հայաբնակ նահանգները:

Թուրքիաբնակ Հայ ժողովուրդը Օսմանեան Կառավարութեան ներկայիս ցոյց տուած փութկոտութիւնը եւ այն՝ Հայկական նահանգներու մէկ մասին միայն բարեկարգելու վերաբերմամբ՝ կը նկատէ ասիական դիւստադիտական խաղ մը, եւրոպական մեծ տէրութիւնները այս անգամ եւս մոլորեցնելու եւ որ եւ է լուրջ ձեռնարկէ խուսափելու նպատակով:

Հայ ժողովուրդը աներկբայ է որ իր վիճակը ապագային ա՛լ աւելի անհանդուրժելի պիտի դառնայ, այն պատճառով, որ գրեթէ միակ քրիստոնէայ ժողովուրդը կը մնայ ինք Արեւելեան նահանգաց մէջ, շրջապատուած մահմէտականներով:

Ուստի թուրքիաբնակ Հայ ժողովուրդը, իր գոյութեան հարցովը մտահոգ,

հասկնալ, պէտք է բանակցին պատրիարքարանի հետ: Հակառակ ասոր, պատրիարքարանը դժգոհութիւն յայտնեց մեր մասին»: Ապա, Մալեգեան 22 Դեկտեմբեր 1912-ին իր Պոլիս այցելութեան մասին Նուպարի ուղարկած տեղեկագրին մէջ տալով Օրմանեանի նշած նոյն անունները երեւելիներու մասին, կը գրէ. «Պ. Բէլէկեան քաջութիւնը ունեցած է ըսելու կարգ մը ճշմարտութիւններ որոնք շատ դառն են իրենց անկեղծութեան մէջ, եւ հասկցուցած է թէ բոլոր ծրագիրներն ալ ոչինչ պիտի արժեն, ցորչափ չբարեփոխուի թրքական մտայնութիւնը դէպի քրիստոնէաները: Պ. Բէլէկեան այս միջոցիս կը պատրաստէ հակա-ծրագիր մը, եւրոպական երաշխաւորութեանց հիման վրայ, եւ անոր մէկ պատճենը պիտի դրկէ Ձեզի»: Վերջապէս, Նուպար իր 3 Յունուար 1913 թուակիրով Մալեգեանի կը գրէ. «Բ. Դրան Բարենորոգմանց Յանձնաժողովին նիստերուն նկատմամբ արդէն տեղեկութիւն ստացած էի նոյն ինքն Բէլէկեանէն որ սքանչելապէս խօսած է եւ ըսած է թէ ոչինչ կարելի է ընել առանց միջազգային հակակշռի»: Նուպար նոյն նամակին մէջ աւելցուցած է. «Ծիշդ նոյն բանը յայտարարած էի այստեղ [դեսպան] Բիֆաթ փաշայի, երբ ինծի հարցուց թէ արդեօք կարելի չէ՞ որ այս բարենորոգումները իրականացնէինք ընտանեօք, առանց անոնց խառնելու օտար տէրութիւնները: Իրեն պատասխանեցի թէ իմ հայրենակիցներուս պահանջումներով զբաղելու հաւանութիւն յայտնեցի ա՛յն պայմանաւ միայն որ անոնք հաստատ եւ անվկանդ հիման մը յենուն, այն իրաւունքներուն վրայ որոնք ձեռք բերուած են ո՛չ միայն Թուրքիոյ, այլ նոյն ատեն տէրութեանց յանձնառութիւններուն համաձայն» (ՓՆՄ, ՉՆՀՀՄ): Բէլէկեան Մալեգեանի ուղղուած 2 Յունուար 1913 թուակիր նամակով ընդարձակ նկարագրականը ըրած է վարչապետին հետ տեղի ունեցած երկրորդ հանդիպման (Մալեգեան, *Ճամբուս ծայրը*, 42–47):

ստիպուած է դարձեալ դիմելու եւրոպական մեծ տէրութեանց, յանուն քրիստոնէութեան եւ մարդասիրութեան, եւ անոնց յիշեցնելով հայաբնակ նահանգները բարեկարգելու մասին իրենց քանիցս ստանձնած պաշտօնական յանձնառութիւնները, որոնք անգործադրելի մնացած են դժբախտաբար ցարդ, խնդրելով որ այս անգամ վճռապէս ձեռք առնեն հայաբնակ նահանգները արմատապէս բարեկարգելու հարցը:

Ազգային պաշտօնական մարմինները պիտի դեկլարուին հետեւեալ ուղեգիծով.

Ա.- Թ[ո]ւրքիաբնակ Հայ ժողովուրդը կը դիմէ եւրոպական մեծ տէրութեանց եւ յիշեցնելով անոնց քանիցս ստանձնած յանձնառութիւնները ի մասին հայաբնակ նահանգներու բարեկարգութեան, կը խնդրէ ընդունիլ Հայ ժողովուրդի ազգային գոյութիւնը եւ քաղաքական ու քաղաքացիական իրաւունքները ապահովող բարենորոգման ծրագիր մը, որ ի մօտոյ պիտի պատրաստուի եւ մատուցուի առ որս անկ է, եւ որուն իրականացումը նոյն պետութիւնները հաւաքաբար երաշխաւորելով, գործադրութիւնը յանձնեն դրացի եւ շահագրգռ[ու]ող Ռուս Կայսերական Պետութեան:

Բ.- Թուրքիաբնակ Հայ ժողովուրդը ներկայացնող Կ. Պոլսոյ Ազգ. Պատրիարքարանը անհրաժեշտ կը նկատէ ըստ առաջնոյն շարունակել իր պաշտօնական յարաբերութիւնները Օսմանեան Կառավարութեան հետ, Ազգիս Վեհափառ Ընդհանրական Սրբազան Հայրապետին յանձնելով թրքահայ ժողովուրդի դատի պաշտպանութեան համար հարկ եղած ձեռնարկները²⁰:

Կը բաւարարուինք այս նախաձեռնութեամբ՝ բարենորոգումներու ծրագրին նուիրած ըլլալով առանձին աշխատութիւն մը *Հայկական Բարենորոգումներուն Առնչուող Նիւթեր (1912–1914)* խորագրով (Փորթսմութ, 2024):

²⁰ ՓՆՄ, ԶՆՀՀՄ:

**Հայկական Բարենորոգումներու
Շրջանին Առնչուած Նամակներ
Արշակ Զօպանեանէն**

Արշակ Չոպանեան (1872–1954), ատենին հռչակուած՝ «Հայ Մշակոյթի Դեսպան» մասնաւորապէս Ֆրանսայի եւ ընդհանրապէս Եւրոպայի մէջ, Էր նաեւ *քաղաքական դեսպան*՝ Հայկական Հարցի գծով իր կատարած քարոզչական աշխատանքով, ստանձնած ազգային ներկայացուցչական դերերով, Լոզանի Դաշնագրի կնքումէն ետք հայ գաղթականներու տեղաւորման խնդիրներով զբաղելով եւ շրջան մը Ռամկավար Ազատական Կուսակցութեան Կեդրոնական Վարչութեան անդամի հանգամանքով:

Կարլեն Դալլաքեան (1929–2008) մենագրութեան մը մէջ ծաւալուն կերպով յիշատակած է Չոպանեանի հասարակական եւ քաղաքական գործունէութիւնը²¹, որուն մեզ հետաքրքրող ժամանակահատուածին վերաբերեալ յարաբերաբար հակիրճ բաժինը կ'իյնայ «Քաղաքական գործունէութեան նոր փուլը» խորագրեալ ԺԴ. գլխուն տակ: Հոն Դալլաքեան Չոպանեանի գործունէութիւնը կը բնորոշէ որպէս «զգացական մղումներէ սնած խանդավառութեամբ, քան քաղաքական ծանրակշիռ ու խոհուն հաշուենկատութեամբ» իրականացուած ճիգ, ապա կը ներկայացնէ Չոպանեանի շփումները արեւելահայ, ռուս եւ ֆրանսացի անձնաւորութիւններու հետ: Իր այդ յարաբերութիւններով Չոպանեան արեւմտահայութեան վիճակին բարոյքումը կը կապէ Ռուսիոյ հետ, միաժամանակ յուշելով թէ Կիլիկիան անտես պէտք չէ առնուի Արեւմտահայաստանի նահանգներու անապահովութեան եւ հարստահարութեանց դարման գտնելու աշխատանքներու ընթացքին²²:

Չոպանեանի այստեղ ներկայացուող ուղղակի իրմէ ստորագրեալ թէ մէջբերեալ նամակներուն պատճենները, որոնց բնագրերուն հանդիպած ենք Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց Միաբանութեան մօտ պահպանուող դիւանաթուղթերու մէջ,- ատենին մէկտեղուած՝ արեւմտահայոց Ազգային Երեսփոխանական Ժողովին հովանիով կազմուած Պոլսոյ Տեղեկատու Դիւանին (ՊՏԴ) կողմէ,- լոյս կը սփռեն ո՛չ միայն Չոպանեանի տուեալ շրջանի գործունէութեան եւ կեցուածքներուն, այլ նաեւ Հայ Ազգային Պատուիրակութեան կազմութեան, Պօղոս Նուպարի սկզբնական քայլերուն, հայկական պահանջներու մշակման եւ յարակից այլ հարցերու վրայ՝ որպէս արժեքաւոր սկզբնաղբիւր: Անոնց կու գան միանալ Փարիզի Նուպարեան Մատենադարանին (ՓՆՄ) մէջ պահպանուող եւ այլուր գտնուող անտիպ վաւերագրեր ալ:

Նիւթին հետ իր անմիջական աղերսին համար յարմար դատած ենք նաեւ միջանկեալ ընդգրկել Պօղոս Նուպարի սերտ գործակից, Պատուիրակութեան ընդհանուր քարտուղար, Հ.Բ.Ը.Մ.-ի Կեդրոնական Վարչական Ժողովի ատենադպիր եւ ապա Միութեան երկարամեայ ընդհանուր տնօրէն, իրաւաբան եւ գրող Վահան Մալեգեանի (1871–1966) մէկ նամակը, որ նոյն այդ աղերսին պատճառով պահպանուած է վաւե-

²¹ Դալլաքեան Կարլեն, *Արշակ Չոպանեան*, «Սովետական Գրող», Երեւան, 1987:

²² Նոյն, 321–323:

րագրերու միեւնոյն տրցակին մէջ:

Ձեռագրական վերլուծութիւն մը մեզ մղած է ենթադրելու թէ անանուն անձը, որուն հետ թղթակցած է Չօպանեան, էր դաշնակցական գործիչ Վահան Փափագեանը (1876–1973), որ ատենադպիրն էր Ազգային Երեսփոխանական Ժողովէն ընտրուած Զաղաքական Ժողովին եւ գործավարը՝ Ապահովութեան Յանձնաժողովին:

[Անթուակիր]²³

*Չորանեանի նամակէն
(մասնաւոր մարդու մը)*

«Ուրախ եմ, որ Դաշնակցութիւնն ալ նոյն հայ[ե]ացքը ունի հայկական խնդրոյն վերաբերմամբ, ինչ որ մենք²⁴. ան ալ կարելորդ ոյժ մըն է»:

²³ ՊՏԴ, Շ96: Այս նամակը, նիւթէն դատելով, կրնայ ըլլալ Վահան Փափագեանին ուղղուած առաջինը:

²⁴ «Մենք»ն այստեղ շատ հաւանաբար կը նշանակէ Փարիզի Հայկական Մասնախումբը, որուն ատենագրութիւններուն համաձայն, առաջին նիստը տեղի ունեցած էր 5 Փետրուար 1913-ին: Այդ նիստին նախորդած հիմնադիր հանդիպման անթուակիր արձանագրութիւնը կը նշէր. «Կազմուեցաւ մարմին մը, «Փարիզի Հայկական Մասնախումբ» անունով, որ իրեն նպատակ պիտի ունենայ հայոց դատին ի նպաստ փրոփականտ ընել Փարիզի մէջ եւ յարաբերութեան մտնել ուրիշ հայ գաղութներու նոյն նպատակով կազմուած հայկական մասնախումբերու հետ՝ միեւնոյն քաղաքական ծրագրով հայկական փրոփականտը ամէն տեղ համախոհաբար վարելու համար»: Կ'աւելցուէր թէ մարմինը «պիտի գործէ Հայկական Պատգամաւորութեան [իմա՝ Պօղոս Նուպարի գլխաւորած Հայ Ազգային Պատուիրակութեան հետ մշտական համաձայնութեամբ, ըստ այն վարչական ծրագրին գոր որդեգրած են ամենայն հայոց Հայրապետը, Պոլսոյ Հայոց Պատրիարքարանը եւ Հայկական Պատգամաւորութիւնը եւ պարբերաբար տեղեկութիւն պիտի տայ Հայկական Պատգամաւորութեան՝ իր գործունէութեան մասին»:

Որպէս անդամ կը յիշատակուին՝ Ա. Ահարոնեան, Ա. Էզնայեան, Պ. Էսմէրեան, Ե. Թնկեր, Յ. Իսկենտէր, Չ. Իսանգատեան, Խաչիկ Հինքեարալէյէնտեան, Ռ. Մարկոսեան, [Վ.] Մալեգեան, Հ. Մարմարեան, Առաքել պէյ Նուպար, Չարեհ պէյ Նուպար, Էտկար Ծահին, Ա. Չ[օ]պանեան, Գրիգոր Սարգիսեան, Ս. Սվաճեան եւ Տիգրան խան Բելեկեան: Առաջին նիստին դիւանի ատենադպիր կ'ընտրուի Արշակ Չօպանեան եւ ատենապետ՝ Առաքել Նուպար, որ յաջորդ նիստին կը հրաժարի ըսելով թէ այդ դերը անյարմար կը նկատէ որպէս որդի Հայկական Պատգամաւորութեան նախագահին, որով ատենապետական արժողը կը յանձնուի Հինքեարալէյէնտեանի (ՀԱԱ, ֆ282, ց1, գ41):

Հարկ է նշել թէ Մասնախումբը սկզբնապէս գործած էր որպէս Պատուիրակութեան դիւան՝ Նուպարի նախագահութեան ներքեւ: Պատուիրակութեան 27 Յունուար 1913 թուակիր շրջաբերականով յայտարարուած էր կազմութիւնն անոր՝ դիւրացնելու կապը զանազան գաղութներու հետ եւ թղթակցութիւններով ստանալու հայ դատը հետաքրքրող տեղեկութիւններ: Սակայն Նուպար-Ահարոնեան տեսակցութենէ մը ետք, տեղեկանալով հանդիպման մանրամասնութեան, 1 Փետրուարին դիւանը Նուպարի հաւանութեան ներկայացուցած էր իր հետեւեալ որոշումը. ««Փարիզի Հայոց Քօմիթէ» [կամ Մասնախումբ] անունը

«Հայկական Հարցը շատ լաւ կացութեան մէջ է. պիտի լուծուի...

Ռուսը պիտի դնէ հարցը Պալքանեան Հարցին լուծումէն անմիջապէս ետքը. սա վճռուած է. շատ վստահ աղբիւրէ գիտեմ այս, եթէ միայն չը խանգարենք (էֆէնտիներ)»:

«Որոշուած է Վիեննայի Միփթարեաններէն Մենելիշ[եան]ը²⁵ կամ նոյնիսկ Արբա-
հայրը²⁶ հրաւիրել պատուիրակութեան անդամ»:

առնել, որպէսզի ո՛ր եւ է չափով խնդրոյ առարկայ չդարձնէ Պատուիրակութեան պատաս-
խանատուութիւնը, հաւատարիմ մնալով սակայն անոր ուղղութեան, պահելով իր կանո-
նաւոր, մշտակայ ու մտերմական յարաբերութիւնները Պատուիրակութեան, եւ մասնաւո-
րաբար անոր նախագահին հետ, եւ միշտ հետեւելով Պատուիրակութեան ընդունած
քաղաքական ծրագրին», իր պաշտօնը նկատելով քարոզչական եւ ազգային դատի
պետքերուն անհրաժեշտ դրամահաւաքի աշխատանք կատարել: Որոշումն ստորագրած
էին Ահարոնեան, Հիւնքեարպէլեանեան, Սվաճեան, Չօպանեան, Սարգիսեան, Էսմէրեան,
Թընկլըր եւ Մալեգեան: Նուպար որպէս «Փարիզի Բօքսականտի Քօմիթէ» այս մարմնին
ուղղելով իր 3 Փետրուար թուակիրը, իր հաւանութիւնը յայտնելով, դիտել տուած էր թէ
հարկ է տուեալ պահուն ետ կանգնիլ ամէն քարոզչութենէ՝ վտանգի չենթարկելու համար
քրիստոնէայ բնակչութիւններ՝ պալքանեան պատերազմին վերսկսման հետեւանքով, ապա
նաեւ ընդգծած էր թէ դրամահաւաքը պէտք է կատարուի միայն «Ըօմիթէին պետքերուն
համար, այսինքն ազգային խնդրին ի նպաստ ըլլալիք բօքսականտին ծախքերը գոցելու
համար» (ՓՆՄ, ՉՆՀՄ):

Պոլիս հրատարակուող «Բիւզանդիոն»-ի մէջ թիւրիմացաբար մասնախումբին վերագ-
րուած է տարիներէ ի վեր բարենորոգմանց դատին ի նպաստ աշխատութիւն («Բիւ-
զանդիոն», 18 Փետրուար 1913): Դարձեալ թիւրիմացաբար նշուած է թէ Մասնախումբը
օժանդակ մարմիններ ունէր Լոնտոն, Պերլին եւ Փեթերսպուրկ («Բիւզանդիոն, 12 Մարտ
1913), մինչդեռ անոնք անկախաբար հիմնուած եւ համագործակցող մարմիններ էին:

²⁵ Պատմաբանասիրական աշխատութիւններու եւ դասագիրքերու հեղինակ Հայր Գաբրիէլ
Մէնելիշեան (1864–1936) ունի Մալեգեանին ուղղուած 4 Յունուար 1913 թուակիր հետա-
քրքրական նամակ մը (հատորին մէջ 1913-ը դարձած 1943՝ գրաշարական վրէպով): Ան կը
գտնէր թէ այս անգամ ալ հայերը յուսախաբ դուրս պիտի գային բարենորոգումներու
բանակցութիւններէն, ինչպէս եղած էր 1878-ին, քանի որ նախ զանազան տէրութիւններու
վրայ յոյս կը դրուէր փոխանակ մէկի. ապա՝ որովհետեւ, իր բառերով, «մենք ալ չենք գիտեր
մեր ուզածը, որոշ ծրագիր մը չունինք ... ի՞նչ է ազգին ուզածը: Անկախութի՛ւն, ինքնա-
վարութի՛ւն, պաշտպանութի՛ւն». եւ վերջապէս՝ քանի որ «չենք պատրաստուած»: Նամա-
կագիրը, որ հրաւերներ ստացած էր բանակցութիւններու համար զանազան մայրաքա-
ղաքներ այցելելու, իրաւունք ունէր իր պատճառաբանութիւններուն մէջ գէթ այդ օրերուն,
երբ թէական դեսպանաժողովի մը մօտ Հայկական Հարցը արծարծելու խօսք կ'ըլլար եւ
Պոլիս ու Փարիզ տակաւին չունէին բարեկարգութիւններու համաձայնեցում, միացեալ
նախագիծ: Ան կ'եզրակացնէր. «... 60 տարիէ աւելի միշտ գրուած ու խօսուած է թէ՛ մեր
բախտը Թուրքիոյ հետ կապուած է. բայց արդեօք «բախտ» բառով՝ կորուստ, ապակա-
նութիւն, ջնջո՞ւմ կը հասկնան: Այսչափ տարի փորձեցինք մեր «բախտը», քիչ մըն ալ
Ռուսիոյ մէջ փորձենք» (Մալեգեան, *Ճամբուս Վրայ (Յուշաքստ)*, Փարիզ, 1950, 310–314):

²⁶ Վիեննայի Միփթարեան Միաբանութեան Արբահայրն էր 1909-ին այդ պաշտօնն ստանձ-
նած Գրիգոր Վարդապետ Գովրիկեանը (1840–1931), որուն հրատարակած գործերէն մին
նուիրուած է իր ծննդավայր Կեռլային, Ռումանիա: Գովրիկեան իր միաբանակցին՝

«Օրմանեանի հոս ըլլալը օգտակար կրնար ըլլալ, եթէ միայն թրքամոլ ձեւեր չառնէ»:

19/XII/ 912

Չօքանեանէ՝ անձի մը գրուած նամակէ

Պ. Փռանքարէի²⁷ խօսքեր Պօղոս փաշային II տեսակցութենէն²⁸.

«Հայոց համակիր եմ. ջարդերու առաջքն առնելու համար ամէն կրցածս ըրի եւ պէտք է ընեմ. բայց Պաքանեան պատերազմով բացուած phase-ին [= փուլին] մէջ՝ միաժամանակ անհնար է Հայոց Հարցն եւս լուծել. եթէ conférence [համաժողով] մը տեղի ունենայ, անոր օրակարգին մէջ նիւթապէս անհնար է մտցնել Հայոց Հարցը: Այս étape-էն [= հանգրուանէն] յետոյ ուրիշ étape մը պիտի գայ, այն ատեն պիտի զբաղինք Հայոց Հարցով» (Étape- այն է որ Լիբանանի հարցը²⁹ ապա Հայոց Հարցը կ'ուզէ ձեռք առնել):

Գրիգորիս Ծ.Վ. Գալէմքեարեանի հետ 3 Դեկտեմբեր 1912-ին հանդիպում ունեցած էր Աւստրո-Հունգարիոյ արտաքին գործերու նախարար Պերիսթոլտի հետ՝ Թուրքիոյ հայոց կացութիւնը ներկայացնելով անոնց ի նպաստ միջամտութիւն խնդրելու: Գալէմքեարեան կ'ըսէ թէ Գեորգ Ե. փափաք յայտնած է որ դեսպանաժողովին ղրկուելիք պատուիրակութեան մաս կազմէ նաեւ արբահայրը եւ թէ հայերը պիտի պահանջեն մէկ կամ բազմաթիւ տէրութիւններու պաշտպանութիւնը հայոց կեանքի, պատուի եւ ինչքի ապահովութեան համար՝ ըստ Պերլինի Դաշնագրի 61-րդ յօդուածին: Նախարարը կը հասկցնէ թէ դեսպանաժողովը չի կրնար ծառայել հայոց նպատակին: Երբ Գալէմքեարեան կ'ըսէ թէ հայերն իրաւամբ որեւէ վստահութիւն չունին Բ. Դրան վրայ, նախարարը կը պատասխանէ. Comme ils promettent toujours!... [= Ինչպէս միշտ կը խոստանան...] (ՓՆՄ, ՉՆՀՀՄ):

²⁷ Փրանսայի վարչապետ Փռանքարէ (Raymond Poincaré) 1913-ի Փետրուարին պիտի դառնար Փրանսայի նախագահ:

²⁸ Նուպարի Բ. տեսակցութիւնը տեղի ունեցած էր 2 Դեկտեմբերին: Նուպար յանուն Արշարունիի շնորհակալութիւն յայտնած էր քրիստոնեաներու ի նպաստ միջամտութեան մը համար Մերսին եւ Իսքենտերուն ֆրանսական մարտանաւ մը ղրկելուն համար, ապա շեշտած էր թէ բաւարար չէ նոր յանձնառութիւն մը ստանձնել տալ Թուրքիոյ, այլ՝ անհրաժեշտ են [ւերոպական] երաշխաւորութիւն եւ պատժամիջոցներ: Անտոնեան այս ուղղութեամբ արձանագրութիւնը թուղթին յանձնելէ ետք, իր կողմէ նշած է թէ Փրանսա մարտանաւը «Միջերկրականի ջուրերը ղրկած էր ոչ այնքան հայկական կոտորածները արգիլելու համար, որոնք շատ չէին հետաքրքրէր զինքը, այլ Կիլիկիոյ կոտորածին ընծայած պատենհութենէն օգտուելով, իր ազդեցութիւնը՝ զօրացնող ցոյց մը ընելու համար Սուրիոյ, մասնաւորաբար Լիբանանի աչքին: Յայտնի են իր միտումները այդ շրջաններուն նկատմամբ: Նոյն բանը ըրած էր նաեւ 1860ին, Սուրիոյ դէպքերուն առթիւ»։ Նաեւ աւելցուցած է. «Արդէն Լիբանանի յեֆօրմներու խնդիր մը կար մէջտեղ ... եւ տարակոյս չկայ թէ այդ մասին տեղի ունենալիք բանակցութեանց մէջ Փրանսա ոյժ պիտի տար Լիբանանի ժողովուրդին պահանջմանց» (ՓՆՄ, ՉՆՀՀՄ):

²⁹ Լիբանանցի ազգայնականները, որոնք կը փափաքէին եւրոպական ազդեցութեան միջոցով աւելի լայն ինքնավարութիւն ձեռք ձգել օսմանեան իշխանութիւններէն, արդէն 1912-ի Մայիսին յուշագիր մը ներկայացուցած էին վարչապետ Փռանքարէի եւ 21 Դեկտեմբեր 1912-ին մասնակի գոհացում պիտի ստանային անոնց ձգտումները:

Պ. Փռանքարէի այս որոշումը փոխել տալու համար ֆրանսացի բարեկամներու դիմումած է:

* * *

Լօնտօնի գործակից բարեկամները անգլ[իացի] անձերու միջոցաւ նմանօրինակ դիմում ըրած են Լօրտ Գրէյի³⁰:

Լօրտ Գրէյը աւելի սիրուն ընթացք մը բռնեց. բանակցութեան մտաւ ռուս կառավարութեան հետ:

* * *

«Շատերու դիմելով փափաք յայտնեցի որ Ֆրանսան մինակ կամ Անգղիոյ հետ իր հովանաւորութեան տակ առնէ Կիլիկիան. դժբախտաբար այս ֆրանսիացի անձնաւորութիւններէն շատերը իրենք իսկ ըսին ինձի թէ «Գերմանիան է որ պիտի տիրանայ Կիլիկիոյ եւ թէ Ֆրանսա չի կրնար ատոր առաջքն առնել»:

«Եթէ ռուս կառավարութիւնը ինիցիատիւր [= նախաձեռնութիւնը] առնէ մեր հարցը կօնֆէրանսին [= խորհրդաժողովին] օրակարգը անցնելու, Անգլիա պիտի աջակցի եւ Ֆրանսան ալ անշուշտ պիտի հետեւի:

Էականը միշտ Ռուսիոյ կամք ընելն է եւ ան կ'երեւայ թէ որոշած է»:

* * *

Փարիզաբնակ քանի մը վաճառականներ առաջարկեցին որ նոյն ատեն թիւրք կառավարութեան խնդրագիր մը դրկենք Փարիզի հայոց անունով, եւ ուժգնապէս հակառակեցայ. այն պահուն երբ Եւրոպայի կը դիմենք, թիւրք կառավարութեանը ինքնաբերաբար ռէֆօրմ [= բարենորոգում] երբէք չըզորձադրելիքը գիտնալով եւ խնդրելով Եւրոպային [որ] իր ձեռքով իրականացնէ ռէֆօրմը, արսիւրտ [= անհեթեթ] է եւ վտանգաւոր թիւրքին դիմել եւ «խնդրել», վստահութիւն ցոյց տալ, յոյս յայտնել: Դժբաղդաբար Պօղոս փաշան ալ անոնց կողմը բռնեց եւ մեծամասնութիւնով քուէարկեցին: Փաշան ու Չերազը նստեր գրեր են Քեամիլ փաշային³¹ ուղղեալ խնդրագիր մը, վերջին ծայր յարգալից եւ լուսայլիստ [= օրինապահ] ձեւով մը:

Անկարգապահութիւն մ'է այս. Կաթողիկոսը ատանկ բան չէ ըսած իր կոնդակին մէջ. միւս գաղութներ վստահ եմ, որ այդպէս բան պիտի չընեն. մեր քահանան գրեց Կաթողիկոսին եւ հրահանգ ուզեց, բայց կը վախնամ, որ դեռ պատասխանին չապասելով դրկեն այդ խնդրագիրը»:

* * *

Ատոր շնորհիւ իմ յարաբերութիւնները փաշային հետ ցրտացան, եւ փաշան որ ցարդ ճիշտ մեր ուզած ուղղութեան մէջ կը գործակցէր կոր «ինչ որ ընենք միշտ թիւրքին ալ մէնածէ ընելու է³²» կ'ըսէ կոր:

* * *

³⁰ Լորտ Էտուարտ Կրէյ (Edward Gray) տուեալ շրջանին կը վարէր Մեծն Բրիտանիոյ արտաքին գործոց նախարարութիւնը:

³¹ Մեհմէտ Քեամիլ Օսմանեան Կայսրութեան Մեծ Վեզիրը կամ վարչապետն էր մինչեւ 1913-ի Յունուարը:

³² Ֆրանսէրէն «մէնածէ» բառը կրնայ գործածուած ըլլալ թուրքը չվատաբանելու կամ թուրքին խոհեմաբար մօտենալու իմաստով:

Այսօր փաշան տեսակցություն ունեցեր է Ր[ի]ֆայթ փաշայի³³ հետ եւ տեսակ մը բանակցութեան սկսեր են անոր հետ. աչքը յոյս Փարիզի վանառականներուն, ուզածնին եղաւ: Այսպիսով Քեամիլ փաշային խնդրագիրը դրկելը անխուսափելի դարձուցին:

«Ուրիշ տէրութեանց ուղղուելիք մեր խնդրագիրը տեղը չհասած, ի՞նչ խելքով երթալ թիւրքին ատիկա իմացնել եւ է՛ն առաջ թիւրքին դիմած ըլլալ, անոր վրայ յոյս եւ վստահութիւն ունենալու ձեւն առնել: Չէ՞ որ հիմա Րիֆայթ փաշա արդէն հեռագրած է թէ՛ Պօլիս եւ թէ՛ Եւրոպակ[ան] մայրաքաղաքներու օսմ[անեան] դեսպաններուն եւ անոնք ամէն բան պիտի ընեն մեր խնդրագիրներու տպաւորութիւն[ը] չեզոքացնելու համար: Փաշային ըսի. հոն կրկնէ որ «կողմնակից է միայն ռէֆօրմներ եւ սիքիւռիթ [= ապահովութիւն] պահանջելու եւ ուրիշ ոչինչ. 61-րդ յօդ[ուածի]»³⁴ գործադրութիւնը եւ միայն այդ եւ թէ՛ թիւրքին եւ թէ՛ Եւրոպայի դիմէ»:

«Ու մտածել որ երկու շաբաթ առաջ բոլորովին համաձայն էր ինձի...: Չեմ գիտեր ո՞ւր պիտի երթայ գործը այս ճամփով»³⁵:

Օրմանեան սրբազան կը յուսամ երբ հոս հասնի բարերար ազդեցութիւն մը կ'ունենայ փաշային վրայ:³⁶

Նորին Ամենապատուութիւն Տ. Յովհաննէս Արքեպ. Արշարունի

Պատրիարք Թուրքիոյ Հայոց

Կ. Պոլիս

Ամենապատիւ Ս. Պատրիարք Հայր,

Ստացանք Ձեր նամակը, եւ կը փութանք մեր խորին շնորհակալութիւնները յայտ-

³³ Մեհմէտ Ռիֆա'աթ 1911-ին դադրելով վարելէ Օսմանեան Կայսրութեան արտաքին գործոց նախարարութիւնը, նշանակուած էր դեսպան Փարիզի:

³⁴ Ակնարկութիւնը կը վերաբերի Պերլինի Դաշնագրի 61-րդ յօդուածին, որ կը տրամադրէր հայաբնակ վայրերու մէջ բարեկարգութիւններու մուծումն ու հայոց պաշտպանութիւնը չերթէզներէ եւ քիւրտերէ, իր ձեռնարկած քայլերուն մասին տեղեակ պահելով դաշնագիրն ստորագրած տէրութիւնները:

³⁵ Չօպանեանի տարակարծիք ըլլալը Նուպարի հետ իր արձագանգը ունեցած է Ապահովութեան Խորհուրդէն դուրս ալ: Տիրան Քէլէկեան իր 2 Յունուար 1913 թուակիրին մէջ Մալեգեանի կը գրէր. «Լսեցի որ գաղափարի տարբերութիւն կայ եղեր Պօղոս փաշայի եւ Չօպանեանի եւ այլնի մէջ. իմ կարծիքովս Փաշային տեսակէտը շիտակ է. այս խնդիրը վերջապէս Թուրքերուն ալ յօժարութիւնովը պիտի լուծուի. Ռուսիա չի կրնար ֆէրման մը հրատարակել Հայոց համար, ֆէրմանը նոյն Թուրքերը պիտի հրատարակեն» (Մալեգեան, *Ճամբու Ճայրը*, 47): Քեամիլի եւ Ռիֆա'աթի հետ կատարուած հանդիպումներուն համար Չօպանեան իր դժգոհութիւնը պիտի յայտնէր նաեւ այլ առիթով, նոյնիսկ թրքական կառավարութեան կողմէ շտապողաբար կազմուած ծրագրին համար պատասխանատու նկատելով Նուպարի ընթացքը (ՓՆՄ, Մուշեղ Մերոբեանի անտիպ ինքնակենսագրութիւն, տետր Գ., 614):

³⁶ ՊՏԴ, Շ88–Շ89:

նել ձեր օրհնութեանց ու նուիրական ազնիւ խօսքերուն համար:

Ձեր Ամենապատուութիւնը կրնայ վստահ ըլլալ թէ մենք, ձեռք ձեռքի տուած, պիտի շարունակենք կատարել մեր պարտքը հանդէպ ազգային դատին եւ կը յուսանք որ Ձեր Ամենապատուութիւնը պիտի հաճի միշտ մեզ շնորհել իր աջակցութիւնն ու իր բարձր քաջալերանքը:

Հանեցէք ընդունիլ, Ամենապատիւ Ս. Պատրիարք Հայր, մեր խորին յարգանքները:
Փարիզ, 3 Յունուար 1913

Մինաս Չերազ
Ա[ւետիս] Ահարոնեան
Ա[րշակ] Չօպանեան

Յ.Գ.- Շնորհակալութեամբ ստացանք Ձեր դրկած երկու ծրարները³⁷:

Փարիզ, 22 Յունվար 1913
(Խորհրդապահաբար)
պատասխանուած 30/12 Փետ. 913

Ամենապատիւ

Ամեն. Տ. Յովհաննէս Արքեպ. Արշարունի

Պատրիարք Հայոց

Կ. Պոլիս

Ամենապատիւ Տէր,

Կ'աճապարեմ իմացնելու Ձեզի թէ երկու օրէ ի վեր Բարիզ կը գտնուիմ եւ Վսեմ. Պօղոս փաշա Նուպարի կ'աշխատակցիմ: Ազգային Պատուիրակութիւնը պիտի ունենայ հոս Կեդրոնական Դիւան մը, զոր վարելու պաշտօն պիտի ունենամ իբրեւ Պատուիրակութեան ընդհանուր քարտուղար: Ահագին աշխատութիւններ կան, եւ հետզհետէ պատիւ պիտի ունենամ տեղեկութիւններ տալու Ձեր Ամենապատուութեան: Բայց անհրաժեշտ է որ աւելի մտերիմ եւ կանոնաւոր հաղորդակցութիւն մը գոյութիւն ունենայ Ազգ. Պատրիարքարանիդ եւ Ազգ. Պատուիրակութեան միջեւ: Վերջնագոյն դէպքերը վճռական հանգամանք ունին. եւ թերեւս մէկ օրէն միւսը Պատուիրակութիւնը հարկ տեսնէ պաշտօնական նոր եւ վերջնական դիմումները ընելու պետութեանց մօտ: Այս պայմաններուն մէջ, կորսնցնելիք ժամանակ չիկայ: Ազգային գերագոյն շահերը կը պահանջեն որ ձեւականութիւնները մէկդի ձգուին այլեւս: Դժուար է Էջմիածնի հետ

³⁷ ՊՏԴ, Շ97: Կը թուի թէ Չօպանեան որպէս Փարիզի Հայկական Կոմիտէի կամ Մասնախումբի քարտուղար Չերազի եւ Աւետիս Ահարոնեանի գործակցութեամբ յանձն առած էր պատրիարքարանին կողմէ առաքուած քարոզական նիւթերու տարածումով Հայկական Հարցի վերաբերեալ աշխատանք տանիլ եւրոպացի դիւանագէտներու եւ անուանի քաղաքական-մշակութային գործիչներու մօտ՝ հայանպաստ հանրային կարծիք ստեղծելու միտումով:

բանակցիլ. վնասաբեր յապաղումներ յառաջ կուզան: Օրինակի համար, ցաւ զգացինք որ Ապահովութեան Յանձնախումբին³⁸ պատրաստած Ծրագիրը ուղղակի Էջմիածին դրկուած է, եւ անոր մէկ պատճէնը մեր ձեռքը հոս հասաւ գրեթէ դիպուածաւ. եւ սակայն խօսք տրուած էր ինծի անմիջապէս մէկ պատճէնը հոս Վսեմ. Պօղոս փաշային դրկել էւ մէկ օրինակն ալ ինծի Գահիրէ: Հարկ տեսնուեցաւ երէկ հեռագրել Վեհ. Կաթողիկոսին որ, սպասելով Պատուիրակութեան վերջնական Ծրագրին, ունէ՛ ձեւով չի գործածէ Ազգ. Պատրիարքարանի ծրագիրը: Կրնաք մտածել թէ տարբեր տարբեր ծրագիրներ մէջտեղ հանուելով ո՛րքան մեծ վնաս կրնայ գոյանալ ազգային դատին: Այս պահուս հեռագիր մը ստացանք Էջմիածնէն զոր գրեթէ չիկրցանք հասկնալ: Վե՛րջը: Ձեր ծրագիրը բնաւ չի համապատասխաներ, իր մեծ գիծերուն մէջ, Պատուիրակութեան նախագծած ուրուագրին գլխաւոր տրամադրութեանց: Ձերը *autonomie*-ի [= ինքնավարութեան] կը ձգտի, եւ ընդհանրապէս անգործնական կը թուի: Այս պահուս կը պատրաստեմ *tableau synoptique* [= համատեսական աղիւսակ] մը, ուր դէմառդէմ պիտի երեւան 5-6 կարելորագոյն ծրագիրներու գլխաւոր կէտերը. տարբերութիւնները հիմ բռնելով, պիտի վերաքննուի Պատուիրակութեան ուրուագրած ծրագիրը, որ քիչ օրէն վերջնական ձեւ մը պիտի զգենու: Անմիջապէս մէկ օրինակը պիտի դրկեմ Ձեր Ամենապատուութեան եւ մէկ օրինակն ալ Հայրապետին: Պատրաստելու վրայ եմ նաեւ Շրջաբերական մը, զոր Պատուիրակութիւնը պիտի ուղղէ Արտասահմանի գաղութներուն եւ կուսակցութեանց. մէկ պատճէնը, տեղեկութեան համար, պիտի ուղարկեմ նաեւ Ձեր Ամենապատուութեան:

Առայժմ այսքան: Դիւանը քիչ վերջ իր առաջին նիստը կը գումարէ մեր եկեղեցիին մէջ. պէտք է փութամ:

Կրնաք (եւ կ'աղաչեմ որ ընէք) Ձեր թելադրութիւնները եւ տեղեկագրութիւնները ուղղել կանոնաւորապէս Վսեմ. փաշային կամ իմ անուանս (*Grand Hôtel*-ի հասցեով): Կը կրկնեմ, պէտք չէ որ անուղղակի յարաբերութիւններով ժամանակ կորսուի:

Ատենի մը համար ստիպուած եմ հոս մնալ:

Ամենախորին յարգանքով

Վ[ահան] Մալեգեան

Ազգ. Պատուիրակութեան անդամներն են՝ Վսեմ. Պօղոս փաշա (ատենապետ), Գեր. Իւթիւնեան Եպիսկ., Վսեմ. Եագուպ փաշա Արթին³⁹, Տեաք Մինաս Չերազ եւ

³⁸ Պոլսոյ Ազգային Երեսփոխանական Ժողովը բարենորոգումներու խնդրին վերաբացման առիթով ստեղծած էր Հարստահարական Խորհրդարանական Յանձնաժողով մը, որուն իբրեւ գործակից կեանքի կոչուած էր նաեւ Կրօնական Ժողովի ատենապետ Եղիշէ Արքեպիսկոպոս Դուրեանի նախագահութեան ներքեւ գործող Ապահովութեան Յանձնաժողովը (կամ Յանձնախումբը), որուն մէջ ընդգրկուած էին Քաղաքական Ժողովէն կարգ մը անդամներ եւ Կրօնական Ժողովէն Գրիգորիս Ծ. Վ. Պալաքեանը (հետագային եպիսկոպոս եւ հեղինակ *Հայ Գողգոթան* երկհատոր գործին):

³⁹ Իրողութիւնը՝ թէ Նուպար, Արթին եւ Մալեգեան կապ ունէին Հայ Ազգային Պատուիրակութեան հետ, կը թուի Հ.Բ.Ը.Մ.-ի դէմ յառաջացուցած ըլլալ ամբաստանութիւն մը՝ բարեսիրական կազմակերպութիւն ըլլալով հանդերձ քաղաքականութեամբ զբաղելու վերաբերեալ, Միութիւնը մղելով զեկոյցով մը յայտարարելու. «Ազգ. Պատգամաւորու-

Յար[ութիւն] Մոստիչեան:

Վ.Մ.⁴⁰

Փարիզ 12 Յունվ. 1913

Արշ[ակ] Չօբանեանէ գրուած մասնաւոր անհատի մը. քաղուածներ

Փաշայի հետ գտնուած է եղեր, սակայն վերջերս նամակ մը գրեր է Չօբանեանը փաշային: Պօղոս փաշային առաջարկած է ինքը հայ գաղութներու համագումար մը կազմել. փաշան ընդունած չէ⁴¹: Պրոպագանտի [= քարոզչութեան] կոմիտէ կազմելու իր

թիւնը, որ կազմուած է Ամենայն Հայոց Վեհ. Կաթողիկոսի կարգադրութեամբ, եւ որուն պաշտօնն է ազգային դատը ներկայացնել Մեծ Պետութեանց, բոլորովին անկախ է Հ.Բ.Ը. Միութեան կազմէն եւ նպատակէն, եւ կամ ուրիշ վարիչ-անդամներու մասնակցութիւնը այդ Պատգամաւորութեան՝ տեղի կ'ունենայ սոսկ անհատական պատասխանատւութեամբ», թելադրելով. «... հաւատք չընծայել երբեք անպատասխանատու անձերու կողմէ այս կամ այն նպատակաւ հրապարակուած գրոյցներուն» («Միութիւն» պաշտօնաթերթ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան, Գահիրէ, Բ. տարի, Մարտ 1913, թիւ 15, 45):

⁴⁰ ՊՏԴ, Շ98:

⁴¹ Իր 7 Յունուար 1913 թուակիրով Չօպանեան Նուպարի գրած էր թէ չորս ամիս առաջ Գահիրէի «Լուսաբեր-Արեւ»ին մէջ առաջարկուեր է գաղութներու ներկայացուցիչներու խորհրդակցական հաւաքով մը քարոզչութեան կազմակերպ մեքենականութիւն մը ստեղծել, ինչ որ կրնայ իրականանալ Փարիզ, Նուպարի նախագահութեան տակ: Ամերիկայի հայերու ընտրեալ ներկայացուցիչ Գաբրիէլեանն արդէն Լոնտոն է, Աղաթօն կրնայ ներկայացնել եգիպտահայութիւնը, պուլկարահայ ներկայացուցիչներ պատրաստ են մասնակցիլ Փարիզ գումարելի հաւաքի մը, լաւ պիտի ըլլար որ իբրեւ Սուչավայի հայկական գաղութի ներկայացուցիչ Ասպետ Վարդերես Բրունքուլի ալ Փարիզ գար, լոնտոնէն Փրոֆ. Թումայեան ալ կ'առաջարկէ գաղութներէ ներկայացուցիչներ գումարման մը հրաւիրել: Վստահութիւն կը յայտնէ թէ թուական մը որոշուելու պարագային կարելի կ'ըլլայ ներկայացուցիչներ հրաւիրել Լոնտոնէն, Մանչեսթրէն, Վիեննայէն, Վենետիկէն, Հռոմէն, Պերլինէն, Պուքրէշէն եւ այլ քաղաքներէ, փափաքելի գտնելով որ Նուպար ստանձնէ նախաձեռնութիւնը: Կ'աւելցնէ թէ մինչ այդ նաեւ. «... կրնանք Փարիզի Հայոց փոքրիկ գումարում մը սարքել, կազմելու համար բրօքականտի Քօմիթէ մը, Տեղեկատու Պիւրօ մը, եւ գոյացնելու համար հիմնադրամ մը...» (ՓՆՄ, ՉՆՀՀՄ): Նուպար 8 Յունուարին կը պատասխանէ թէ գաղափարը լաւ կը գտնէ «պայմանաւ որ յանձնաժողովին իրաւասութիւնները լաւ ճշդուած ըլլան, ոչ մէկ ամթիւ ոտնձգութիւն կատարեն Կաթողիկոսական Պատուիրակութեան իրաւասութեանց մէջ, եւ ընդդիմադիր բոյն մը ստեղծելով չջատեն գործունէութիւնը Պատուիրակութեան, որ միշտ պէտք է իր ձեռքը պահէ Հայկական խնդրին բացարձակ ուղղութիւնը» (նոյն): Չօպանեան 9 Յունուար 1913 թուակիր իր պատասխանով իր համամիտ ըլլալը կը յայտնէ Նուպարի պայմաններուն, կ'ըսէ թէ Պատուիրակութեան անդամ Չերազ հսկողութիւն պիտի ընէ քարոզչական յանձնաժողովին, եւ կը նշէ թէ «գումարումը պէտք է տեղի ունենայ որպէս զի կարելի ըլլայ համաձայ-

առաջարկը ընդունուած է ինչպէս նաեւ հանգանակութիւն ընել:

Փաշան տեսակցութիւն է նշանակել: «Հրաւիրուած էին նաեւ գաղութին աղաներէն մի քանիսը- Չերազը, Առաքելեանը⁴², Աղաթօնը⁴³, Իսկէնտէր:

«Փաշան ըսաւ թէ Կաթողիկոսէն որոշ հրահանգ ստացած է, այն է ոչինչ ընել Ռուսին հակառակ, մեր գլխաւոր յոյսը դնել ռուսին աջակցութեան վրայ եւ այլն եւ այլն: (ուրեմն Կաթողիկոսն ալ, Պատրիարքին պէս ու նոյն ոգով հրահանգ է դրկել իրեն, եւ գիտեմ թէ ինչու) Շատ լաւ ըրին երկուքն ալ. ազդեցութիւնը եղած է բացարձակ: Հիմա փաշան բոլորովին նորէն մտեր է այն ճամբուն մէջ որմէ ելլել ուզելուն համար էր, որ հետը վեճ ունեցայ: Յետոյ պատմեց իր տեսակցութիւնները Իզվոլսքիի⁴⁴ եւ Փուանքարէի հետ, որոնք նոյն բանը ըսած են. այսինքն թէ՛ Հայոց Հարցը պէտք չէ ներկայացնել դեսպանաց ժողովին⁴⁵, այլ Պալքանեան Հարցը բոլորովին լուծուելէն յետոյ, երբ յարմար ըստէն գայ, ռուսը, ինքն իսկ, համաձայնութեամբ Ֆրանսայի եւ Անգլիոյ, պիտի յարուցանէ գայն»:

* * *

նիլ միակ ծրագրի մը մասին գոր պիտի հայթայթէ նոյն ինքն Պատուիրակութիւնը, որպէս զի կատարեալ ներդաշնակութիւն մը գոյութիւն ունենայ բոլոր Հայոց գործունէութեան մէջ...» (նոյն): Ի դէպ, Այս փոխանակումներէն կը հետեւցուի թէ Նուպար ընդունած է Չօպանեանի առաջարկը: Հետեւաբար, եթէ բնագրային չէ-ն սխալ չէ, պէտք է ենթադրել թէ այս փոխանակումներուն հիման վրայ Նուպարի հրաւիրած հանդիպման ընթացքին մերժուած է ներկայացուցչական հաւաքի առաջարկը:

⁴² Ակնարկեալ անձն է Թիֆլիսի «Մշակ» լրագրի խմբագիր եւ հասարակական գործիչ Համբարձում Առաքելեանը, որ Սուրբենեանց Կաթողիկոսին կողմէ ուղարկուած էր Փարիզ՝ խորհրդակցութիւններ ունենալու համար Պօղոս Նուպարի հետ անոր վստահուած առաքելութեան շուրջ և որ հետագային իր ազգային-քաղաքական տեսակէտներուն համար զոհ պիտի դառնար եղբայրասպանութեան:

⁴³ Հոգազէտ Երուանդ Գ. Աղաթօն, Եագուպ Արթինի նման, հիմնադիր փոխ-նախագահն էր Հ.Բ.Ը.Մ.-ի եւ հիմնական դերակատարութիւն ունեցած է Միութեան գաղափարին ձեւաւորման ու տարածման ուղղութեամբ: Աղաթօնի 1931-ին Չուիցերիա լոյս տեսած եւ 2019-ին Գահիրէ վերահրատարակուած *Պոլսոյ 1860-ի Եւ Գահիրէի 1906-ի Բարեգործականներուն Ծնունդը Եւ Պատմութիւնը* գրքոյն յստակօրէն ցոյց կու տայ այդ հիմնական դերակատարութիւնը: Դիւանաթողութեան մաս կազմող գրութիւններէ կը հետեւցուի թէ Աղաթօն ժրնելէն հետեւած է Նուպարի գործունէութեան եւ թղթակցած՝ անոր հետ, հայկական խնդրին կապակցութեամբ: Օրինակ, 26 Յունուար 1913 թուակիրով մը ան կը գրէր. «... Իմ խոնարհ կարծիքովս, ... Ձեր Վսեմութիւնը շատ լաւ պիտի ընէ ընթացք տալով Ռուսիոյ հետ ուղղակի յարաբերութիւն հաստատելու իր ծրագրին, երթալով Ս. Բեյթերսփուրկ: Պ. Սագոնօֆ ռուսական քաղաքականութեան հոգին է: Նայելով Կ. Պոլսոյ յուրերուն, Ժէօն-թիւրքերու հետ պիտի վերսկսի հալածանքի նոր թուական մը...: Երանի՛ թէ Ժէօն-թիւրքերը իրենց սխալներով փութացնեն ռուսերու վայրէջքը դէպի Հայաստան...» (ՓՆՄ, ՉՆՀՀՄ):

⁴⁴ Փարիզի մէջ դեսպան Ջարական Ռուսաստանի 1910–1917 տարիներուն, նախապէս վարած ըլլալէ ետք արտաքին գործերու նախարարութիւնը:

⁴⁵ Դեսպանաց Համաժողովը, որ նաեւ ծանօթ է Լոնտոնի Խաղաղութեան Համաժողով անունով, գումարուիլ սկսած է 1912-ի Դեկտեմբերին Պալքանեան Պատերազմին հետեւանքով, մասնակից ունենալով եւրոպական վեց մեծ տէրութիւններու՝ Մեծն Բրիտանիոյ, Ֆրանսայի, Գերմանիոյ, Ռուսաստանի, Իտալիոյ եւ Աւստրո-Հունգարիոյ, դեսպանները:

«Ուրբաթ առտու Bérard-ը⁴⁶ գացի տեսայ: Երկու ժամ վիճեցանք: Միշտ հակառուս է- կ'ուզէ որ Ռուսիան ռեւէ գերակշռութիւն չունենայ Հայոց Հարցին մէջ, այլ Ֆրանսա, Անգլիա եւ Ռուսիա միասին, հաւասարապէս controle-ի [= հակակշռի, հսկողութեան] տակ առնեն վեց նահանգները, gendarmerie [= պահակազօրք] կազմակերպեն, իսկ ընդհ. կառավարիչն ըլլայ օսմանեան հպատակ մը, մերթ քրիստոնեայ, մերթ մահմետական (իշխան Սապահետտիըն⁴⁷ ընդհ. կառավարիչ ընենք կ'ըսէ... եւ այլն): Յաւալին այն է որ թերթ մը ունի ձեռնի (Pour les peuples d'Orient) որի մէջ պիտի արծարծէ այդ միտքը⁴⁸. կ'ուզէ [որ] միթինկներ [= հրապարակային ժողովներ] սարքուին Լոնտոն՝ այդ

⁴⁶ Վիքթոր Պերար (Victor Bérard) Հայկական Հարցին նկատմամբ բարեացակամ տրամադրութիւն դրսևորող ֆրանսացի դիւանագետ եւ քաղաքական գործիչ մըն էր, որ ծանօթ էր նաեւ որպէս հեղինակետ:

⁴⁷ Ապտուլմենհիտ Բ. սուլթանի թոռ, ընկերաբան իշխան Մեհմէտ Սապահատտիւն իր քաղաքական հայեացքներուն եւ Օսմանի գերդաստանի իշխանութեան ընդդիմանալուն համար արքորուած էր Եւրոպա:

⁴⁸ Պերարի եւ հայերու համակիր ծերակուտական Փրեսանսէի (Francis de Pressensé) հրատարակած «Արեւելքի Ժողովուրդներուն Համար» երկշաբաթաթերթին մասին պիտի հաղորդուէր թէ թերթը նպատակ ըրած է «Օսմանեան կայսրութեան մէջ ապրող ժողովուրդների վիճակն ու նրանց ծանր դրութեան բարելաւումը, ասիական ծանր խաւարի ու բռնութեան մէջ ապրող այդ ցեղերի կացութեան նկարագիրը», բարեխղճութեամբ հաւաքելով ամենաթարմ տեղեկութիւններ եւ լուսաբանութիւններ, ըլլալով «ամենամեծ չափով նուիրուած» Հայկական Դատին («Արարատ» պաշտօնական ամսագիր Հայրապետական Աթոռոյ Ս. Էջմիածնի, ԽԷ. տարի, Փետրուար-Մարտ 1913, 272): Ընդհանրապէս դրական եւ խանդավառ գնահատականներու կողքին, կը հանդիպինք Համբարձում Առաքելեանի զգաստ եւ վերապահ արժեւորումին: Ան ըսելէ ետք թէ Փարիզի մէջ, խումբ մը անձնաւորութիւններ աշխատած են վերստեղծել *Pro Armeniis* թերթը, նուիրուած Հայոց հարցին, թէւ այս անգամ այլ անունով, կ'աւելցնէ թէ այդպիսի թերթ մը «կարող չէ բնաւ ըլլալ այն բրօքականտիստը, այն օրկանը, որ պետք է պատրաստէ, կոէ, կոփէ նպաստաւոր հասարակական կարծիք: Եւ միանգամայն նիւթական ու բարոյական միջոցներու վատնում պետք է համարիլ այդ թերթին ստեղծումը», որովհետեւ դիւանագետներ ու պետական գործիչներ չեն կարդար նման թերթեր: Առաքելեանը վերապահութեան մղող գործօն մըն ալ կը թուի ըլլալ թերթին հակառուսական ուղղութիւնը («Բիւզանդիոն», 4/17 Յունուար, 1913): Յիշեալներէն առաջ, սակայն, տակաւին 26 Յունուար 1913-ին, Չօպանեան Նուպարի գրած էր. «... կ'ուզեմ Ձեզի խօսիլ «Pour les peuples d'Orient» թերթին հակառուս պայքարին նկատմամբ. Պէնարի հետ ունեցած բոլոր վիճաբանութիւններս ալ բանի մը չծառայեցին. կը շարունակէ իր պայքարը, որ ոչ մէկ կերպով կը համաձայնի Կաթողիկոսին, Պատրիարքին, Պատուիրակութեան, ինչպէս մեր բովանդակ ազգին քաղաքական ծրագրին: ... «Pour les peuples d'Orient» երկրորդ խորագիր մը ունի, «Օռկան Հայկական Պահանջմանց», եւ ինքզինքը կը ներկայացնէ իբր Հայ ժողովուրդին ձայնը: ... Լաւ պիտի ըլլար եթէ գէթ վերցնէին երկրորդ խորագիրը, «Օռկան Հայկական Պահանջմանց»ը, եւ այդ թերթին տային նկարագիրը օռկանի մը որ կը ներկայացնէ մէկ քանի եւրոպացի հայաստներու զաղափարները» (ՓՆՄ, ԶՆՀՀՄ):

Արամ Անտոնեան 10 Դեկտեմբեր 1912 թուակիր արձանագրութեամբ մը կը տեղեկագրէր թերթին այդ օր հրապարակ ելած ըլլալը եւ կը նշէր թէ տնօրէններն էին տը Բրեսանսէ եւ

գաղափարները արտայայտելու համար: ... Պերարը չ'ուզեր ասիական Թուրքիոյ *démembrement*-ը [= անդամահատումը]։ կ'ուզէ իր մտքով թէ՛ թիւրքին եւ թէ՛ հայուն ծառայութիւն մատուցանել, ինչ որ անհնար է⁴⁹։ Ու երբ գիտէ, որ փաշան, Աղաթօնը, Չերազը նստեր են նոր *projet de réforme* [= բարենորոգումներու նախագիծ] կը խմբագրեն 1895-ի Մայիսեան Ծրագրին վրայ հիմնուելով...։ Անշուշտ, այդ *projet*-ն չը պիտի ներկայացուցուի նոյնութեամբ, արդէն փաշան իմացեր է, որ պատրիարքարանն ալ *projet* մը կը պատրաստէ, Քէլէկեանն⁵⁰ ալ։ Փաշան կ'ըսէ թէ այդ բոլորը *fusionner* պիտի ընեն [= պիտի համաձուլեն] ետքէն։ Լաւ կ'ըլլար, որ պատրիարքարանի *projet*-ն շուտ հասնէր հոս. անհրաժեշտ է որ եւրոպացի ընդհ. կառավարիչ պահանջենք... Գէշ մենք այդ ուզելու ենք. եթէ աւելի քիչն ստանանք ուրիշ խնդիր. քիչ ուզելով բնաւ բան մը չենք ստանար։

Հաստատ աղբիւրէ գիտեմ, որ ռուսը մտադիր չէ Թրքահայաստանը գրաւելու. Բօթովցէֆն⁵¹ ինքն իսկ յայտարարած է դեռ 15–20 օր առաջ Պետերբուրգի հայերու

Պէռար՝ խմբագրութեան քարտուղար ունենալով Ժան Լօնկէ. թէ՛ ան կը հրատարակուէր ֆրանսերէն եւ անգլերէն ամէն ամսու 10-ին եւ 25-ին՝ Պատուիրակութենէն դրամական օժանդակութիւն ստանալով. թէ՛ մինչեւ 25 Նոյեմբեր 24 թիւ հրատարակուելէ ետք, Պատուիրակութեան պահանջմամբ 10 Դեկտեմբեր 1913-էն սկսեալ պիտի առնէր *Pro Armenia* անունը՝ շարունակուելով մինչեւ 10 Յուլիս 1914 եւ վերջին շրջանին խմբագրութեան քարտուղար ունենալով Միքայէլ Վարանդեանը (նոյն)։

⁴⁹ Տեղին է մէջբերում մը կատարել Մ. Ս. Գաբրիէլեանի 24 Փետրուար 1913 թուակիրէն, ուղղուած՝ Արշարունի պատրիարքին, Պերարի մէկ բանախօսութեան ներկայ ըլլալէ ետք Փարիզի մէջ. «... Մարդը թրքասէր է կամ կը ձեւանայ։ ... Որքան ալ լաւ ու ծառայասէր մարդ ըլլայ..., չեմ կարծեր թէ մեծ բարեբաղդութիւն մ'է մեզի համար որ մեր դատին ախոյեանն ըլլայ այժմ եւ տնօրէնը *P[our] les P[eoples] d'Orient* թերթին, քանի որ ռուսաստեաց մ'է» (ԴՏԳ, Ծ101)։ Պերար ինք իր բերնով հարցազրոյցի մը ընթացքին 1914-ի Յունուարին պիտի յայտարարէր. «Ես ո՛չ միայն հայասէր եմ, այլ եւ թրքասէր ... անոր համար որ Ֆրանսայի շահը կը պահանջէ օսմանեան կայսրութեան պահպանումն ու ամրապնդումը» (*Նիւլթեր* Հ.Յ. Դաշնակցութեան Պատմութեան Համար, ԺԱ. հատոր, խմբագիր՝ Երուսանդ Փամպուքեան, Պէյրութ, 2015, 39)։

⁵⁰ 1862-ին ծնած լրագրապետ եւ դասախօս Տիրան Քէլէկեան, որ պիտի նահատակուէր 1915-ին, մանաւանդ «Սապահ» թրքալեզու թերթի իբր խմբագիր հեղինակաւոր ձայն մը ունէր օսմանեան քաղաքական շրջանակներու մէջ։

⁵¹ Կոմս Վլատիմիր Նիքոլայեւիչ Բոքովցով կամ Բոքովցեւ Զարական Ռուսաստանի վարչապետն էր 1911-ի Սեպտեմբերէն մինչեւ 1914-ի Յունուար ամիսը։ Բոքովցովի եւ արտաքին գործոց նախարար Սազոնովի միացեալ ջանքերուն կը վերագրուի պերիինեան բանակցութիւններու շնորհիւ Գերմանիոյ հակումը դէպի հայկական բարենորոգումներու նախագիծին պաշտպանութիւնը («Արարատ» պաշտօնական ամսագիր Հայրապետական Աթոռոյ Ս. Էջմիածնի, ԽԸ. տարի, Յունուար 1914, 31)։ Մինչ այդ, ինչպէս կը վկայէր Փարիզէն «Մշակ»ի խմբագիրը՝ Համբարձում Առաքելեան, գերմանական մամուլն ու հասարակական կարծիքը, - բնականաբար հետեւելով պետական ուղղութեան, - «նպաստաւոր չէին» Հայկական Հարցին նկատմամբ եւ պերիինաբնակ հայոց ջանքերն ապարդիւն անցած էին մամուլի մէջ Հայկական Հարցը արծարծելու առնչութեամբ, («Բիւզանդիոն», 4/17 Յունուար 1913)։ «Արարատ»ի մէջ կատարուած հաստատման կողքին, պէտք է նշել թէ Պատուիրակութեան անդամ Եագուպ Արթին 3 Հոկտեմբեր 1913 թուակիր նամակով մը Մալեգեանին կը գրէր.

պատգամաւորութեան թէ, իր ուզածն է *réforme*-ներ կամ տեսակ մը *autonomie* իր հովանաւորութեան տակ. ասոկից լաւ ինչ կրնանք երագել. ուրեմն մեր *projet de réforme*-ն ըստ այնմ պէտք է խմբագրենք»:

* * *

«Իզվոյսքի եւ Փռւանքարէն ըսած են թէ պէտք չէ որ դատը յանձնէք Դեսպանաց Ժողովին, թէ անոր ցրուելէն յետոյ՝ այդ հարցը իրենք պիտի յարուցանեն, դահլիճէ դահլիճ բանակցութիւններով: «Ֆրանսան, ըսած է Փռւանքարէ, պիտի հետեւի իր դաշնակցին»: Լոնտոնի արտ[աքին] գործ[ոց] նախարարութենէն կ'ըսեն, որ այս միջոցին բան մը չընեն. յօդուած իսկ չիրատարակեն, միթինկ չընեն, աղմուկ չհանեն բնաւ Հայոց Հարցին շուրջ: Այս պայմաններուն մէջ, մինչեւ 2–3 ամիս պատգամաւորութիւնը բան մը չունի ընելիք»:

«Իսկ երբ թոպէն գայ (եւ երբ գայ՝ ռուսերը խոստացած են յայտնել պատգամաւորութեան, որպէս զի *mémoire*-ը [= յիշատակագիրը կամ յուշագիրը] այն ատեն ուղղէ մեծ պետութեանց) պատգամաւորութիւնը այն ատեն պիտի անձամբ երթայ հինգ քաղաքներն⁵² ալ»:

* * *

Անհրաժեշտ է [որ] եկեղեցական ազդեցիկ պատգամաւոր մը գտնուի փաշային հետ եւ միասին դեկլավարէ ամէն բան»:

* * *

«Կաթողիկոսը փաշային ուղղած կոնդակին մէջ ըսած է, որ զինքը պատգամաւոր կ'անուանէ, որպէսզի «ուրիշ եկեղեցական եւ աշխարհական անձնաւորութեանց» հետ Հայոց Հարցը ներկայացնէ Եւրոպային: Արդ, մինչեւ ցարդ փաշան միակ պատգամաւորն է. կայ Չերազն ալ, բայց կոնդակ չէ ստացած, ու ոչ մէկ նախարարի կամ դեսպանի փաշան գայն իր հետը չէ տարած»:⁵³

«Գիտէք թէ Կ. Պոլսի մէջ Գերմանացիները կատաղի ընդդիմութիւն մը ցոյց տուին Եւրոպական Քոնթրոլին մասին: Ուրախ եմ ձեզի իմացնելու թէ Պօղոս Փաշայի Պերլին կատարած ուղեւորութեան ատեն, այս կէտը ընդունած են» (Մալեգեան, *Ճամբու Ճայրը*, Բ., 113–114):

⁵² Շատ հաւանաբար՝ Փեթերսպուրկ, Լոնտոն, Պերլին, Հռոմ եւ Վիեննա:

⁵³ ՊՏԴ, Շ86: Վ. Փափագեան Պօղոս Նուպարի ինքնագլուխ գործելու եղանակը նշելէ ետք, կը գրէ թէ Չօպանեան ալ դժգոհ էր Նուպարի այդ ընթացքէն ու հասուն հայ քաղաքական ուժերն անտեսելէն եւ պաշտպան էր այն տեսակետին թէ պատրիարքարանը ինք տէր պէտք է կանգնի գործին (Փափագեան, 224–225): Նուպարի եւ Չօպանեանի ես-երոյ բախումը պիտի վերերելէր նաեւ Հայ Ազգային Պատուիրակութեան գործունէութեան երկրորդ հանգրուանին՝ Ա. Աշխարհամարտի օրերուն: Նուպար Պատուիրակութեան անդամ Սօս-տիչեանի ուղղած 3 Օգոստոս 1915 թուակիրին մէջ Չօպանեանը իբր գրագետ արժէքաւոր անձ նկատելով հանդերձ, գայն պիտի ներկայացնէր իբրեւ մեքենայող, դժուարահան նկարագրի տէր, անսրբագրելի նախանձոտ, իր դէմ ատելալատ ընդդիմութիւն տածող, ամբարտաւան անձ մը, գոր երբեք պիտի չկրնայ ընդունիլ որպէս անդամ Պատուիրակութեան (*Ազգային Պատուիրակութեան Գործունէութիւնը 1915–1916. (Վաւերագրեր)*), ներածական եւ ծանօթագրութիւններ Դոկտ. Վաչէ Ղազարեանի, հրատարակութիւն Հ.Բ.Ը. Միութեան Վահրամ Ապտալեան Մշակութային Հիմնադրամի, տպ. Շիրակ,

*Նոյն անձին մասնաւոր նոյն անհատին գրուած նամակէն
(առաջին նամակէն քանի մ'օր (15 Յունւլ.) վերջը ստացուած)*

«<...>ին մէջ լուր մը կար, որ[ուն] համեմատ որպէս թէ փաշան նեղանալով Եգիպտոս մեկնելու է: Բացարձակապէս անհիմն է այդ լուրը:⁵⁴ Ատոր վրայ Ս. Պատրիարքն ալ իսկոյն նամակ է գրել փաշային խնդրելով, որ չ'հրաժարի պաշտօնէն: Գիտցէք, որ փաշան ոչ մէկուն դէմ չ'է նեղացած եւ մեկնելու մասին մտածած իսկ չ'է»:

Կը գրէ bureau-ի⁵⁵ մասին. «Ահարոնեանը սաստիկ նեղացած է⁵⁶. անդառնալի կեր-

Պէյրուք, 2017, 205): Այս առթիւ տեղին է նշել նաեւ Մալեգեանի վկայութիւնը. «... մեծ եղաւ զարմանքս որ Ազգ. Պատուիրակութեան կողքին Պօղոս Նուպար կը պնդէր իս ունենալ իբրեւ անմիջական օգնական, մինչդեռ Բարիզ կը գտնուէր Չօպանեանի նման կարող գրագետ մը եւ ազգային գործիչ մը, որ ազգային դատով կը զբաղէր տարիներէ ի վեր, եւ յարմարագոյն քարտուղարը ինք իսկ ըլլալ կը թուէր: ... Փաշան չ'էր համակրած Չօպանեան բարեկամիս եւ չ'էր հանդուրժեր անոր «փնքնագովութիւնները եւ միջամտութիւնները», ու յայտնապէս իր ջիղերուն կը դպէր՝ ամէն անգամ որ Չօպանեան իրեն կ'այցելէր եւ ինքզինք կը հարկադրէր...» (Մալեգեան, *Ճամբու Ճայրը*, Բ., 250): Մալեգեան կ'աւելցնէ թէ իր միջամտութեան շնորհիւ Նուպար ընդունած է կազմել քարոզչական յանձնախումբ մը, որ Չօպանեանի համար եղած է թոշակաւոր պաշտօն: Չօպանեան, սակայն, ըստ Մալեգեանի, գոհ չ'է մնացած եւ գանգատած է թէ «... իր իրաւունքն էր եւ իր բո՛ւն տեղը Ազգ. Պատուիրակութեան մէջ իսկ, իբրեւ անդամակից, եւ ոչ թէ այս կամ այն Յանձնախումբին մէջ՝ իբրեւ օժանդակ» (նոյն, 251): Չօպանեան հետագային իբրեւ Ազգային Պատուիրակութեան անդամ պիտի գործակցէր Նուպարի եւ անոր ուռուցիկ ես-ին մօտէն ծանօթ Թէքէեան իր «Ակռամանեակ» երգիծախաղով պիտի զգացներ Չօպանեանի նկարագրային այդ գիծը (Թէքէեան Վահան, *Ակռամանեակ. Տրամախառն Քօմէտի Երեք Արարուածով*, խմբագրեց եւ ծանօթագրեց Վալէ Ղազարեան, Մայրենի Հրատարակչատուն, Ուոլթիմ, 2000):

⁵⁴ Գէորգ Ապանեան 15 Նոյեմբեր 1912 թուակիր նամակով Արշարունի պատրիարքին կը յայտնէր թէ Պօղոս Նուպար «Եգիպտոս պիտի մեկնի ամսոյս վերջերը»: Նուպարի Եգիպտոս մեկնումը, եթէ իրապէս կատարուած է, կը թուի թէ արդէն ծրագրուած էր առանց զինք նեղացուցած միջադէպի մը:

⁵⁵ Կը թուի թէ «Բիւրօ» բառին տակ պէտք է հասկնալ նախապէս նշուած Փարիզի Հայկական Կոմիտէն:

⁵⁶ Աւետիս Ահարոնեան, որ Հայաստանի Ա. Հանրապետութեան օրով պիտի գլխաւորէր Հայաստանի Հանրապետութեան Պատուիրակութիւնը Փարիզի մէջ՝ իբրեւ մրցակից Նուպարի գլխաւորած Ազգային Պատուիրակութեան, վշտացած պէտք է ըլլար իրեն հանդէպ Նուպարի կեցուածքէն, որովհետեւ ան ընդհանրապէս «վնասակար եւ անթոյլատրելի» կը համարէր Հայ Յեղափոխական Դաշնակցութեան ոեւէ անդամի ընդգրկումը պատուիրակութեան կազմին մէջ եւ մասնաւորապէս անընդունելի կը նկատէր «Ահարոնեանի պէս փախստական անձի մասնակցութիւնը» (Պօղոսեան, 41): Նուպար Ահարոնեանը փախստական կը կոչէր Զարական Ռուսիոյ դէմ Դաշնակցութեան ընթացքին հետեւանքով բացուած դատին պատճառով եւ բնականաբար անոր ներկայութիւնը իր գլխաւորած կազմին մէջ կը դիտէր իբրեւ հակառուսական քայլ, բայց կրնար դեր մը ունեցած ըլլալ նաեւ Ահարոնեանի նկարագրին շուրջ Նուպարի կազմած կարծիքը: Մալեգեան կը վկայէ թէ իր կեանքի վախճանին արդէն անկողնոյ ծառայող Նուպար առիթով մը ըսած է. «Ամէնուն ներեցի, բացի Ահարոնեանէն»: Ապա իր կողմէ կ'աւելցնէ. «Արդարեւ, հայ տառապանքի

պով. որոշած է Լօզան երթալ իր ընտանիքի[ն] քով եւ հոն մնալ: Փաշան չ'ուզեր որ Չերազը մեզի հետ ըլլայ» ... «մտադիր եմ առաջարկել որ Վարանդեանը⁵⁷ ինծի հետ ըլլայ Ահարոնեանին տեղ եւ նորէն պիտի պնդեմ որ Չերազն ալ գոնէ մեր զործակցի մեզի, որպէս զի բիւրօն շնորհքով բան մ'ըլլայ եւ Ս. պատրիարքին փափաքած մեր զործակցութիւնը իրականանայ»:

«Կայ աւելի կարելոր հարց: Փաշան որոշեր է, որ պատգամաւորութիւնը պիտի կազմուի հետեւեալ անձերէն՝ Եագուլ Արթին փաշա, Մոստիշեան, Չերազ, Իւթիւնեան Եպիսկոպոս: Օրմանեանէն նամակ է ստացեր, որով ան կը յայտնէ թէ իրեն դէմ հակառակորդներ կան, որ այդ պաշտօն ընդունիլ իրեն անհնար է: Փաշան իսկոյն հեռագրեր է Կաթողիկոսին խնդրելով, որ հեռագրով իր հաւանութիւնը տայ: Արդ, Իւթիւնեանը ըռորովին անկարող է այդ ծանր պաշտօնը կատարելու: ... Նկատեցէք որ Վիեննայի Միխիթարեան] Աբբահայրն ալ մէկդի դրուած է. մինչ այդ պատկառելի անձնաւորութիւնը սկզբամբ ընդունած էր»: ... «Զանի որ Օրմանեան սրբազանը չպիտի գայ, ինչո՞ւ Դուրեանը⁵⁸ չգայ. փաշան գայն չ'պիտի հրաւիրէ, բայց ատոր հարկ չկայ: Եթէ Ս[րբազան] Պատրիարքը] համաձայն է, կարելի է իսկոյն ճամբայ հանել Էջմիածին ուրիշ ոեւէ պատճառ մը ցոյց տալով:

«Այս նամակս կը խնդրեմ, որ ցոյց տաք Ս. Պատրիարքին, գայն արդէն գրած եմ գլխաւորապէս իրեն համար. բայց ձեզի ուղղած եմ, վախճալով որ իր անուան նամակ մը չելլէ բացուի եւ կառավարութիւնը իմանայ այս մանրամասնութիւնները»:

«Փաշան անկեղծօրէն կ'ուզէ օգտակար ըլլալ. կը գնահատեմ իր բարի կամեցողութիւնը. բայց մեր հարց[ը] չի գիտեր մանրամասնօրէն. զինքը սխալ ճամբու առաջնորդողներ կան. անհրաժեշտ է, որ իր քով գտնուի հմուտ եւ ազդեցիկ եկեղեցական գործակից մը»:

«Նամակս գրելէ վերջ տեսայ Հ. Առաքելեանը. ինքն ալ համաձայն է Դուրեանի մասին եւ կարծեմ պիտի գրէ Ս. Պատրիարքին: Բայց կ'ըսէ թէ կայ մեծ դժուարութիւն մը, այն է թէ Կովկասի փոխարքան համոզուած է եղեր որ Դուրեանը հակառուս է եւ դաշնակցական է! Այնպէս որ եթէ Կաթողիկոս ընտրուէր⁵⁹, չը պիտի վաւերացնեն եղեր զինքը...»

տխրահնչակ երգիչը եւ հայ քաղաքականութեան տխրահռչակ գործիչը, ստորերկրեայ աշխարհի մեքենայութիւններ գործած էր ... որ բնաւ զարմանալի չէ թէ վեհանձնութեան տիպար մեր հայրենասէրը չի կրցաւ Ահարոնեանի ներել, նոյն իսկ իր մահուան անկողին մէջ» (Մալգեան Վահան, *Ճամբու Ճայրը*, Ա. հատոր, Փարիզ, 1954, 299):

⁵⁷ Դաշնակցական գործիչ եւ հեղինակ Միքայէլ Վարանդեան Եւրոպայի մէջ կը սատարէր Հայկական Հարցի քարոզչութեան եւ կապեր ունէր թէ՛ Փիեռ Բիշեարի խմբագրած *Pro Armenia* եւ թէ՛ Փրեսանսէ-Պերար զոյգին հրատարակած *Pour les peuples d'Orient* պարբերականներուն հետ:

⁵⁸ Եղիշէ Արքեպիսկոպոս Դուրեան, որ կարճ պահ մը եղած էր Պատրիարք Թուրքիոյ Հայոց, տունէալ շրջանին ատենապետն էր Ազգային Կեդրոնական Վարչութեան Կրօնական Ժողովին եւ նախագահը՝ Ապահովական Յանձնաժողովին:

⁵⁹ Դուրեան 1911-ին թեկնածու ներկայացուած էր Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան եւ մէկ քուէի տարբերութեամբ կորսնցուցած էր ՄայրԱթոռին գահակալը դառնալու առիթը:

* * *

«Իսկ եթե այլ եւ այլ պատճառներով անհնար ըլլայ Դուրեան սրբազանի այստեղ գալն, գոնէ Ս. Պատրիարքը հարկ եղածը թող բարեհաճի ընել Գնել Ծ. Վարդապետը⁶⁰ ըլլայ պատգամաւոր, Գեր. Իւթիւնեանէն հազար անգամ պերճախօս է»:

* * *

«Քէլէկեան, Նորատունկեան⁶¹ գրած են փաշային եւ կը ջանան զայն պաղեցնել ռուսէն, կ'ուզեն մղել թիւրքին հետ համաձայնելու: Կը կրկնեն, կ'երեքկնեն, անհրաժեշտ է, որ ազդեցիկ եւ հմուտ եկեղեցական մը զայ հոս»:⁶²

Ամենապատիւ Ս. Պատրիարք Հայր,

Անհրաժեշտ պէտք ունիմ մանրամասն ու ճշգրիտ տեղեկութեանց՝ Օսմանեան պետութեան մէջ իբրեւ առեւտրական եւ արդիւնաբերող տարր հայոց բռնած դիրքին վրայ: Թէ՛ այստեղ ֆրանսացի անձնաւորութեանց մօտ եղած դիմումներու մէջ, թէ՛ յօդուածներու մէջ, այդ մանրամասնութիւնները պէտք են: Երբ ստանամ, պիտի հաղորդեմ նաեւ ուրիշ գաղութներու մասնախումբներուն, որոնց հետ մեր մասնախումբը թղթակցութեան մէջ է, որպէսզի անոնք ալ օգտագործեն այդ տեղեկութիւնները, կը դիմեմ ձեր Ամենապատուութեան եւ կը խնդրեմ որ բարեհաճիք պատուիրել որո՞ւ որ հարկ է՝ որպէսզի պատրաստէ այդ տեղեկագիրը, կարելի եղածին չափ մանրամասն եւ documenté [= վաւերագրուած]: Թերեւս Օսմանեան Պանքային վարիչները կարենան կատարել այդ գործը: Ինձ ըսին թէ Պ. Ernest Giraud, Պոլսոյ ֆրանսական Chambre du Commerceի [= Առեւտուրի պալատի] պաշտօնաթերթին խմբագրապետը, կարող է այդ մասին մեծապէս աջակցիլ: Լաւ կ'ըլլար որ ձեր կողմէ իրեն ալ դիմէին:

Վերջին ծայր շնորհակալ պիտի ըլլայի ձեր Ամենապատուութեան եթէ հաճէիք կարելին ընել որպէսզի այդ տեղեկագիրը կարելի եղածին չափ շուտ ձեռքս հասնէր:

Միշտ կը ստանամ հարստահարութեանց մասին տեղեկութիւններ, եւ կ'օգտագործեմ զանոնք⁶³: Ստացած եմ նաեւ երկու brochureներ [= գրքոյկներ]⁶⁴, որ թարգմաններ [=

⁶⁰ Արմաշի Դպրեվանքի առաջին հունձքին պատկանող Գնել Ծ.Վ. Գալմբեարեան, շրջան մը եղած էր այցելու հովիւ Ռումանիոյ հայոց, իսկ 1922-ին, իր արմաշական դասընկեր Չաւէն Արք. Տէր Եղիայեանի պատրիարքութեան օրով, պիտի վարէր Պատրիարքական Փոխանորդի պաշտօնը:

⁶¹ Գաբրիէլ Նորատունկեան, որուն Օսմանեան Կայսրութեան արտաքին գործոց նախարարի շուրջ վեցամսեայ պաշտօնը վերջ գտած էր 1913-ի Յունուարին, ատենապետն էր Ազգային Երեսփոխանական Ժողովին:

⁶² ՊՏԴ, Շ87:

⁶³ Ակնարկութիւն պատրիարքարանին հրատարակած ֆրանսերէն տեղեկատու պարբերականին, որ 15 օրը անգամ մը հարստահարութիւններու եւ ապօրինութիւններու ամփոփումը կը ներկայացնէր «եւրոպական կառավարութիւններուն, դեսպաններուն եւ խորհրդարանական ու հանրային առաջաւոր անձերու» (Փափագեան, 188):

բողոքագրեր] կը պարունակեն, եւ յանձնած եմ կարելոր անձնաւորութեանց:

Նոր statistiqueը [= վիճակագրութիւնը], զոր այս օրերս ստացայ, հոյակապ է, նպատակայարմար եւ մեծապէս օգտակար պիտի ըլլայ:

Փարիզի Հայկական Մասնախումբը պիտի գրէ ձեր Ամենապատուութեան, իր գործունէութեան մասին տեղեկութիւն տալու համար:

Կը խնդրեմ Ձեր Ամենապատուութենէն որ բարեհաճի ընդունիլ խորին յարգանացս հաւաստիքը:

Ա. Զօպանեան

Փարիզ, 3 Մարտ 1913⁶⁵

Սիրելի Պ. [Վահան] Փափագեան,

Ցաւեցայ որ չկրցայ ձեզ տեսնել ձեր մեկնելէն առաջ:

Գիտէք որ Ս. Պատրիարքին գրած եմ երկու ամիս առաջ՝ խնդրելով որ Տանկաստանի մէջ հայոց իբր վաճառական տարր գրաւած տեղի մասին մանրամասն տեղեկութիւններ որկուին ինծի: Դեռ պատասխան մ'իսկ չեմ ստացած: Նոյնպէս մինչեւ այսօր չեմ ստացած այն brochureները որոնց անմիջական պէտք ունենալս ձեզի գրած էի վերջերս: Շատ քիչ օրէն պիտի սկսինք conférenceներ [= բանախօսութիւններ] սարքել հայոց հարցի մասին: Այսօր տեսայ Gaston Deschampsը⁶⁶ որ սիրով յանձն առաւ բանախօսութիւն մ'արտասանել: Յանձն առին նաեւ մեր քոմիթէին դիմումով René Pinon⁶⁷ եւ L[udovic] de Contenson⁶⁸: Անհրաժեշտ պէտք ունիմ այդ տեղեկութեանց brochureներուն:

⁶⁴ Ապահովութեան Յանձնաժողովը հրատարակութեան յանձնած էր հայերու, ինչպէս նաեւ Արեւելեան Անատոլոյի կացութիւնները ներկայացնող ֆրանսերէն գրքոյկներու երկու շարք՝ ա) La situation des Arméniens en Turquie, exposée par des documents 1908–1912 եւ բ) La situation actuelle dans les provinces de l'Anatolie Orientale habitée par les Arméniens, անոնց մէջ պարփակելով թարգմանութիւնները պատրիարքարանին կողմէ հայկական հարստահարութիւններու եւ հայկական շահերու վնասող զանազան օրէնքներու վերաբերեալ օսմանեան պետութեան ներկայացուած ծանօթագրերու եւ այլ վաւերագրերու:

⁶⁵ ՊՏԴ, Շ103–Շ104:

⁶⁶ Փրանսացի գրող եւ հնագէտ:

⁶⁷ Փրանսացի պատմաբան, քաղաքական լրագրող, արտաքին գործոց նախարարութեան դիւանագիտական խորհրդական: Իր հեղինակած գիրքերէն մի քանին նիւթ ունին Օսմանեան Կայսրութիւնն ու Եւրոպան (1909), Երիտթուրքերը (1911), հայոց վրայ գործադրուած ճնշումները (1916): Փինոնի 1916-ին հրատարակած La suppression des Arméniens : méthode allemande, travail turc (Հայերու ճնշումը՝ գերմանական գործելակերպ, թրքական գործ) գրքոյկը թարգմանուած է հայերէնի:

⁶⁸ Փրանսացի աշխարհագրագէտ եւ պատմաբան Լուտովիք տը Բոնթանսոն 1901-ին հրատարակած էր Chrétiens et musulmans : voyages et études (Քրիստոնէաներ եւ Իսլամներ. ճամբորդութիւններ եւ ուսումնասիրութիւններ) խորագրեալ հատորը, ուր նկարագրած էր, ի միջի այլոց, իր անցքը Արեւմտեան Հայաստանէն եւ Կիլիկիայէն, գլուխներէն մին խորագրելով «Հայաստանի Մէջ՝ Ջարդերու Վաղորդայնին» եւ անդրադառնալով Ուրֆայի,

Խնդրեմ, հարկ եղածը հանեցեք ընել որպեսզի շուտ դրկուի: Ուզածս երեք brochureներն են (La situation des Arméniens en Turquie⁶⁹, D/i [= սղագիր] նոյնպես եւ machine à écrireով [= գրամեքենայով] նօթերը՝ սկիզբէն մինչեւ վերջ, իւրաքանչիւրէն 20ական օրինակ, ինչքան շուտ դրկեք, այնքան շնորհակալ կ'ըլլամ:

Սիրով ձերոյ

Ա. Զօպանեան

Փարիզ, 28 Ապրիլ 1913⁷⁰

Փարիզ, 6 Մայիս 1913

Սիրելի Պ. Փափագեան,

Երէկ Պօղոս փաշան մեր քոմիթէի նիստին եկաւ ներկայ գտնուեցաւ: Պատմեց անհամաձայնութիւնը որ գոյութիւն ունի Պատրիարքարանի եւ իր միջեւ: Դուք ինծի ըսած էիք որ յաջողած էիք երկու ծրագիրները ի մի ձուլել եւ ամէն կէտի վրայ համաձայնութիւն գոյացնել՝ բացի մէկ կէտէ մը, եւ յոյս ունէիք որ Պոլիս երթալով ան ալ կը կարգադրուէր: Ի՞նչպէս եղեր է որ պատգամաւորութեան ու պատրիարքարանին միջեւ բանակցութիւնները դեռ չվերջացած, պատրիարքարանը իր նախկին ծրագիրը⁷¹ յանձներ է ռուս դեսպանատան: Եթէ ձեր հոս գալէն առաջ, պատրիարքարանը այդ բանն ըրած ըլլար, մարդ դիտողութիւն չպիտի ընէր. բայց քանի որ պատրիարքարանը պատուիրակ մը դրկեց հոս՝ պատգամաւորութեան հետ համաձայնելու համար, ի՞նչ միտք ունի միեւնոյն ատեն՝ իր ծրագիրը նոյնութեամբ ներկայացնել ռուս դեսպանին, մանաւանդ որ այդ միջոցին (ինչպէս կ'ըսէ փաշան) պատրիարքարանը ի ձեռին ունի եղեր ձեր եւ պատգամաւորութեան բանակցութեանց արդիւնքը եղող transactionnelle

Այնթապի, Մարաշի եւ Զէյթունի կոտորածներուն, Ասիական Թուրքիոյ մէջ հայոց վիճակագրական տուեալներուն, եւայլն: Իսկ 1913-ին յոյսին տուած էր Les réformes en Turquie d'Asie : la question arménienne, la question syrienne (Բարենորոգումները Ասիական Թուրքիոյ Մէջ. Հայկական հարցը, Սուրիական Հարցը) խորագրեալ գործը, որ հիմք կազմած է Պոլիս լոյս տեսած Հայկական Հարցին Վերջին Փուլերը գրքոյկին՝ Լ. տը Բօնթանսօն հեղինակային անունով: Հեղինակը յաւելուած բաժնին մէջ ընդգրկած է Հայկական Հարցը վերլուծող եւ հայկական պահանջները ներկայացնող երեք յուշագիր Պօղոս Նուպարէն, ինչպէս նաեւ բրիտանական Համայնքներու Պալատի 8 Մայիս 1913-ի նիստի ընթացքին Հայկական Հարցին վերաբերեալ ելոյթները:

⁶⁹ Ակնարկեալն է 52 էջերէ բաղկացեալ La situation des Arméniens en Turquie: exposée par des documents, 1908-1912 (Հայոց Վիճակը Թուրքիոյ Մէջ. Բացայայտուած՝ փաստաթուղթերով, 1908-1912) գրքոյկին Ա. պրակը, որ կը պարունակէ Արշարունի պատրիարքին ստորագրութեամբ Բարձր Դրան կամ վարչապետարանին ներկայացուած տեղեկագիրը հայոց վիճակին մասին՝ այլ վաւերագրերով եւ Ազգային Երեսփոխանական Ժողովին իր ներկայացուցած հրաժարագրով մէկտեղ:

⁷⁰ ՊՏԴ, Շ105-Շ106:

⁷¹ Ակնարկուած ծրագրին պատճենը տեսնել Վահան Փափագեանի վերոնշեալ յուշագրական հատորին մէջ, 543-583:

[= իրաւախոհական] ծրագիրը: Փաշան պատմեց նաեւ թէ Պ. տը Կիրս⁷² ինչ դիտողութիւններ ըրեր է պատրիարքարանի ծրագրի մասին, դիտողութիւններ որ այդ մէկ քանի կէտերու վրայ՝ պատգամաւորութեան տեսութեանց իրաւունք կուտան: Կ'երեւայ թէ այս բոլորը իմացուեր է նաեւ ֆրանսական եւ անգլիական կառավարական շրջանակներու մէջ, եւ գէշ ազդեցութիւն է ըրեր, անոնց վրայ այն տպաւորութիւնը ձգելով թէ հայերը ինչպէս միշտ՝ անկարգապահ են եւ անմիաբան: Կը խնդրեմ որ կարելին ընէք դարմանելու համար այս չարիքը: Քանի որ ձեր հոս գալէն առաջ՝ պատրիարքարանը իր ծրագիրը չէր ներկայացուցած, պէտք էր անշուշտ որ սպասէր պատգամաւորութեան հետ վերջնական համաձայնութիւն մը գոյանալուն, եւ միմիակ ծրագիր մը ներկայացուէր դեսպանատուն՝ իբր ծրագիրը պատրիարքարանին, պատգամաւորութեան եւ ազգին: Քանի որ այդ քայլն առնուած է, այժմ կարելի է գոնէ սրբագրել զայն: Ձեզի կը թողում գտնել միջոցն ու ձեւը. դուք հոդ էք, պայմաններն աւելի լաւ կը ճանչնաք, եւ կրնաք գտնել այդ ձեւն ու միջոցը: Միայն թէ՝ անհրաժեշտ է բան մը ընել պատրիարքարանի եւ պատգամաւորութեան միջեւ բացարձակ համաձայնութեան հասնելու համար եւ դեսպաններուն ցոյց տալու համար այդ համաձայնութեան գոյացած ըլլալը: Քանի որ տը Կիրս ինքն իսկ խորհուրդ տուեր է ջնջել պատրիարքարանի ծրագրին վերջին *clausure* [= կէտը] (գործադրութիւնը յանձնել մէկ տէրութեան), եւ քանի որ այդ կէտն էր միայն որու վրայ համաձայնութիւն չէիք կրցած գոյացնել⁷³, այժմ ինձ կը թուի թէ ոեւէ պատճառ չկայ որ պատրիարքարանը չներկայացնէ ռուս դեսպանին եւ միւսներուն ձեր այստեղ պատրաստած *transactionnel* ծրագիրը իբր ազգին ծրագիրը, մեր վերջնական ծրագիրը, եւ արտօնել պատգամաւորութիւնն ալ որ զայն ներկայացնէ ամէն տեղ, եւ զայն պաշտպանէ: Անհրաժեշտ է այս պառակտումին վերջ դնել: Կը խնդրեմ որ այս նամակս հանիք կարդալ Ս. Պատրիարքին եւ Դուրեան սրբազանին, ինչպէս եւ ձեր միւս ընկերներուն: Վայրկեանը մօտեցած կը թուի ուր հայոց հարցը այս կամ այն կերպով, այս կամ այն չափով՝ նկատողութեան պիտի առնուի. անհրաժեշտ է որ Եւրոպայի առջեւ ներկայանանք միաբան, համերաշխ, միակ ծրագիր մ'ի ձեռին:

Ընդունեցէք սիրալիք բարեւներս:

Ա. Զօպանեան

Յ.Գ.- Դուք ինձ կ'ըսէիք թէ ետքէն, թերեւս նորէն պատրիարքարանի կողմէն մէկը գար հոս, երբ մեր հարցը նկատողութեան առնուելու րոպէն հասնէր, եւ պատգամաւոր-

⁷² Միխայիլ Նիքոլայեւիչ տը Կիրս 1912-ին Պոլսոյ մօտ Զարական Ռուսաստանի դեսպան նշանակուելէ առաջ շուրջ տասնամեակ մը դեսպանի պաշտօն վարած էր Ռումանիա:

⁷³ Այդ վերջին՝ ԻԱ. Յօդուածը կը տրամադրէր. «Եւրոպական Պետութիւնները հաւաքաբար կը ստանձնեն ներկայ նախագիծի պարունակած հիմնական տրամադրութիւններու իրագործումին հոգը, եւ այս բարենորոգումներու կատարման անմիջական հսկողութիւնը կը յանձնեն անոր, որուն ամենէն ատակը կը համարեն զայն յանձն առնելու համար» (Փափագեան, 579): Փափագեան իր յուշերուն մէջ կ'ենթադրէ թէ անգլիական արտաքին գործոց նախարարութեան թելադրութեամբ Նուպար պնդած էր բարենորոգումներու խնդրով զբաղող «վեց պետութիւններու ուղղակի կամ անուղղակի վերահսկողութեան վրայ» (նոյն, 226): Վեց պետութիւններն էին՝ Ռուսաստան, Անգլիա, Ֆրանսա, Գերմանիա, Աւստրո-Հունգարիա եւ Իտալիա:

րութեան ու պատրիարքարանի միջեւ մշտական կապ ըլլալով՝ գործակցել պատգամաւորութեան: Չեմ կրնար ըսել այդ թուպէն եկած է արդէն, բայց թերեւս մօտ է, կրնան պարագաներն այնպէս բերել որ այդ թուպէն յանկարծ գայ, լաւ կ'ըլլայ ուրեմն որ դուք նորէն գաք հոս, եւ մնաք մինչեւ վերջը, ու ջանաք որ այսուհետեւ պատրիարքարան ու պատգամաւորութիւն միշտ համաձայն ընթանան: Անգամ մը եւս կը կրկնեմ, անհրաժեշտ է որ Եւրոպայի առջեւ մենք համերաշխ ներկայանանք. կ'աղաչեմ որ ամէն ջանք ընէք որ ռուս դեսպանատան ինչպէս եւ միւս դեսպանատանց մօտ մեզ անհամերաշխ ցոյց տուող այդ միջադէպին տպաւորութիւնը դարմանուի:⁷⁴

⁷⁴ ՊՏԴ, Շ107–Շ110: Նշելի է թէ, օգտուելով ազգային երեսփոխան Գեորգ Ասլանեանի Փարիզէն Պոլիս վերադարձէն, Նուպար անոր յանձնած է 26 Մայիս 1913 թուակիր գրութիւն մը, ուր կը թուարկուէին Պատրիարքարանին եւ Պատուիրակութեան միջեւ գոյացած տարակարծութիւններու վերացման համար հետեւեալ պայմանները, - որոնք, դատելով Ա. Լէւոն, կը թուի թէ բանաւոր ներկայացուած էին Ապահովութեան Յանձնաժողովի անդամ Լեւոն Տէմիրճիպաշեանի, որ Փարիզի մէջ ծրագրին մշակման գծով աշխատած էր Նուպարի հետ, - որպէսզի կարելի ըլլայ շարունակել երկու մարմիններուն գործակցութիւնը.

1° Պատրիարքարանը պիտի գրէ այն նամակը զոր իրեն թելադրած է Լեւոն Էֆէնտի Տէմիրճիպաշեան, եւ որուն մէջ պիտի յայտարարէ թէ՝

ա/. Ն. Ս. Օծութիւն Կաթողիկոսին կողմէ անուանուած Պատուիրակութիւնը միայն Օսմանեան Կայսրութենէն դուրս գտնուող Հայերը չի ներկայացնել, այլ թէ՛ Թուրքիոյ մէջ եւ թէ՛ արտասահման բնակող Հայերը:

բ/. Պատրիարքարանը ոչ մէկ յանձնառութիւն պիտի ստանձնէ եւ ոչ մէկ բանակցութեան պիտի ձեռնարկէ Կ. Պոլսոյ մէջ, առանց նախապէս Պատուիրակութեան հետ համաձայնած ըլլալու:

2° Վերոյիշեալ նամակը գրուելու պարագային, եւ վերջ տալու համար ներկայի դժուարութեանց որոնք ստեղծուած են Պատրիարքարանի կողմէ բարենորոգումներու ծրագրին Պ. տը Կիրսի տրուելէն, Պատուիրակութիւնը կ'ընդունի այդ ծրագիրը, ռուսական դեսպանատունէն թելադրուած բարեփոխութիւններով եւ փոփոխութիւններով, եւ յանձն կ'առնէ զայն ներկայացնել տէրութեանց:

3° Մինչեւ որ Պ. տը Կիրսի հետ բարենորոգումներու այդ ծրագրին վերջնական ձեւին նկատմամբ համաձայնութիւն մը գոյացուի, Պատրիարքարանը, բացառաբար, պիտի շարունակէ բանակցիլ Կ. Պոլսոյ ռուսական դեսպանատան հետ, հարկ չկայ ըսելու թէ Պատուիրակութիւնը տեղեակ պահելով, եւ էական կէտերու մասին յանձնառութիւն մը ստանձնելէ առաջ անոր խորհուրդ հարցնելով:

Բայց այն օրէն՝ ուր այդ համաձայնութիւնը պիտի գոյանայ Պ. տը Կիրսի հետ, վերջնական ծրագիրը պիտի դրկուի Պատուիրակութեան, որպէս զի յետագայ բանակցութիւնները անոր կողմէ կանոնաւորապէս վարուին Փարիզի եւ միւս մայրաքաղաքներուն մէջ:

4° Պիտի խնդրուի Պ. տը Կիրսէ որ միջնորդէ իր կառավարութեան մօտ, որպէս զի այս վերջինը բարեհաճի հրահանգներ տալ Փարիզի իր դեսպանին, անոր պաշտօն յանձնելով իր աջակցութիւնը ընծայել՝ ծրագիրը տէրութիւններուն ընդունիլ տալու համար (ՓՆՄ, ՉՆՀՀՄ: Ֆրանսերէն բնագրէն թարգմանուած Անտոնեանի կողմէ):

Փարիզ, 14 Յունիս 1913

Միրելի Պ. Փափագեան,

Ձեր նամակը շատոնց ստացած եմ, եւ ձեզի ընդարձակօրէն պիտի գրեմ քանի մը օրէն: Թէ՛ տկար եմ առողջութեամբ, եւ թէ՛ չափազանց զբաղած: Անոր համար չկրցայ աւելի շուտ գրել:

Գրքոյկին⁷⁵ տպագրութիւնը վերջացաւ: Այսօր 42 օրինակ դրկեցի փօսթով, *recommandé* [= յանձնարարեալ], *poste restante française*⁷⁶, ձեր նշանակած հասցէին, որպէսզի շուտ հասնի: Իսկ 258 օրինակ կը դրկեմ այսօր *colis postal*ով [= ծրարով], դարձեալ նոյն հասցէին. այդ ծրարն ալ կը ստանաք քանի մը օրէն:

Ռուսիան արդէն մեր հարցը դրաւ պաշտօնապէս պետութեանց առջեւ: Անոր լուծումը այլեւս ապահով է: Աչքերնիս լոյս:

Միրով ձերդ

Ա. Զօպանեան⁷⁷

Միրելի Պ. Փափագեան,

Ձեր brochure-ներուն թիւ 5րդը ստացայ այսօր, ինչպէս եւ ձեր նամակը:

Քանի մը օրէն ընդարձակ նամակ մը պիտի գրեմ ձեզ:

Այսօր կը փութամ սաչափն ըսել ձեզ որ Marcel Léartի⁷⁸ գրքոյկէն (*La question arménienne* եւայլն) 42 օրինակ փօսթով՝ յանձնարարեալ՝ դրկած եմ Պատրիարքին հասցէին՝ *poste restante française*՝ 9–10 օր առաջ, անշուշտ մինչեւ ցարդ ստացած էք: Դրկած եմ նաեւ *colis postal*ով, *grande vitesse* [= մեծ արագութեամբ], նոյն հասցէին, 258 օրինակ, նոյնպէս 7–8 օր առաջ, որով 300 օրինակ դրկած եմ: Երբ ստանաք, իմացուցէք, իսկ 200 օրինակ եւս այսօր կամ վաղը պիտի դրկուի նոյն հասցէին, *colis postal*ով կամ փօսթով [= (սովորական) թղթատարով]: Որով 500 օրինակ պիտի ստանաք:

Միւս 500 օրինակը հոս իմ քովս է ձեր տրամադրութեանը:

Ընդունեցէք սիրալիր բարեւներս:

Ա. Զօպանեան⁷⁹

Փարիզ, 27 Յունիս 1913

⁷⁵ Յաջորդ նամակէն յայտնի կը դառնայ թէ խնդրոյ առարկան է Գրիգոր Զօհրապի Հայկական Հարցը շոշափող աշխատութեան ֆրանսերէն օրինակը:

⁷⁶ Պոլսոյ Ֆրանսական նամակատան մէջ ստացող կողմին սպասող նամակ կամ ծրար:

⁷⁷ ՊՏԴ, Շ91–Շ92:

⁷⁸ Գրիգոր Զօհրապի «Հայկական Հարցը Փաստաթուղթերու Լոյսին Տակ» աշխատութեան ֆրանսերէն օրինակը լոյս տեսած էր Մարսէլ Լէար ծածկանունով եւ *La Question arménienne à la lumière des documents* խորագրով 1913-ին (գործը 2015-ին թրքերէնով Ռենան Աքմանի թարգմանութեամբ լոյս տեսած է *Belgelerin Işığında Ermeni Meselesi* խորագրով):

⁷⁹ ՊՏԴ, Շ93–Շ94:

Միրելի Պ. Փափագեան,

Հաճեցէք ինձ որկել, խնդրեմ, ինչքան կարելի է շուտ, հետեւեալ տեղեկութիւնը:

Որոնք են Հայաստանի եւ Կիլիկիոյ այն մասերը (նահանգ, քաղաք, գիւղ) որ ամենէն աւելի վտանգուած են, ուր ամենէն աւելի կոտորածի երկիւղ կայ, ուր ամենէն աւելի ժողովուրդ պէտք ունի ինքնապաշտպանութեան պատրաստուելու:

Պատրիարքարանին շատոնց ի վեր ստացած նամակներէն կրնաք անշուշտ քաղել այս տեղեկութիւնը եւ որկել ինձ ցուցակը զոր կ'ուզեմ ունենալ: Ինչքան շուտ որկէք, այնքան շնորհակալ կ'ըլլամ: Անմիջական պէտք ունինք:

Միրով ձերդ

Ա. Չօպանեան

Փարիզ, 17 Rue la Bruyère

9 Յուլիս 1913⁸⁰

Այս նիւթը տեղին պիտի ըլլայ փակել Չօպանեանի՝ Կիլիկիոյ հարցին մասին Նուպարի ուղղած նամակով, որուն Նուպար 25 Մարտ 1913-ին պիտի պատասխանէր պարզապէս ըսելով. «Այն գաղափարը զոր կը յայտնէք Ձեր նամակին մէջ, արդէն իսկ զբաղեցուցած էր մեզ: Պատուիրակութիւնը իր ծրագրին մէջ մտցուցած է մասնաւոր յօդուած մը որ նկատի ունի, Ձեր մատնանշած ուղղութեամբ, ո՛չ միայն Չէյթունը, այլ նաեւ Հաճընը եւ Կիլիկիոյ միւս հայկական կեդրոնները»:

Փարիզ, 20 Մարտ 1913

Վսեմաշուք Տէր,

Բարենորոգումներու ծրագրին մէջ Կիլիկիոյ մասին յատուկ տրամադրութեան մը խնդիրը շատ մտահոգ կ'ընէ զիս: Հարկ չկայ անշուշտ ըսելու թէ կարելի չէ Կիլիկիան կցել վեց վիլայէթներուն, առանց մեծ չափով նուազեցնելու հայկական մեծամասնութիւնը: Միւս կողմէ, մեզի համար ամենամեծ կարեւորութիւն ունեցող այս նահանգին համար, չի բաւեր որ պարզապէս բարենորոգումներ պահանջենք, առանց զանոնք ճշդորոշելու:

Կը խորհիմ լուծման մը վրայ զոր քանի մը ամիս առաջ արդէն թելադրած էի Ժիւլ Ռօշի, իրեն հետ ունեցած մէկ տեսակցութեանս ընթացքին: Թերեւս կարելի է բարենորոգումներու ծրագրին մէջ մասնաւոր յօդուածի մը վերածել զայն, վերջնական եւ մանրամասնուած ձեւով մը: Ահա թէ ի՛նչ է.- 1895ին, Չէյթունի Հայկական շարժումէն ետք, հիւպատոսները միջամտեցին եւ Չէյթունի համար կարգ մը առանձնաշնորհումներ ձեռք բերին Բ. Դռնէն (տեսնել Դեղին Գիրքերը). այդ առանձնաշնորհումներէն ամենէն կարեւորը սա էր թէ Չէյթուն պէտք է ունենայ քրիստոնէայ կառավարիչ մը: Բ. Դուռը յարգեց այս պայմանը, մինչեւ որ իշխանութեան գլուխ անցան Ժօն-թիւրքերը,

⁸⁰ ՊՏԴ, Շ90 եւ Շ95:

որոնք քրիստոնեայ կառավարչին տեղ իսկամ մը դրին: Այդ միջազգային համաձայնության վրայ հիմնուելով, կրնայինք պահանջել որ այսուհետեւ Ձեյթունի կառավարիչը միշտ քրիստոնեայ մը ըլլայ. նկատելով որ այն ատենէն ի վեր Կիլիկիոյ մէջ կացութիւնը փոխուած է, եւ դէպի գէշը, թէ զարհուրելի կոտորածներ տեղի ունեցած են Ատանայի վիլայէթին մէջ, կրնայինք պահանջել որ այդ կառավարչին անուանումը տեղի ունենայ պետութեանց հաւանութեամբ եւ կառավարիչը իրաւասու ըլլայ, տէրութեանց անունով, հսկելու բարենորոգումներու գործադրութեան վրայ, բովանդակ Կիլիկիոյ մէջ: Այս կառավարիչը իրեն օժանդակ պիտի ունենայ եւրոպացիներ, որոնց պաշտօնը պիտի ըլլայ կազմակերպել ոստիկան-զինուորութիւնը, արդարութիւնը, ելեւմուտքը, եւայլն: Կառավարիչը, կարելոր պարագաներու մէջ, խորհուրդ պիտի հարցնէ հայկական վեց վիլայէթներուն գլուխը գտնուող Բարձր-Զօմիսէրին:

Երախտապարտ պիտի մնամ Ձեր Վսեմութեան եթէ բարեհաճի այս առաջարկութիւնս ներկայացնել Պատուիրակութեան, եւ ընդունիլ իմ յարգալիր զգացումներուս հաւաստիքը:

(Ստ.) Ա. Չօպանեան
(Բնագիրը ֆրանսերէն)

Բացի այն պատմական (թերեւս աւելի լաւ պիտի ըլլայ ըսել՝
աշխարհագրական) սխալէն զոր գործեցինք ազգովին 1878ին եւ զոր
 նոյնութեամբ կը կրկնենք այսօր ... ներկայիս գործելու վրայ ենք ուրիշ սխալ
 մըն ալ, որ կը կայանայ մեր միամիտ ու հեղձ լաւատեսութեանը մէջ որով՝
 ձեռնաձալ նստած՝ յուսալից կը սպասենք մեր ազգային դատին մօտալուտ
 նպաստաւոր կարգադրութեանը:

... Մենք կը սպասենք որ բաղդին մէկ ծիծաղովը, ուրիշներուն
 մարդասիրական մէկ ժէպովը կամ ուրիշներու հակընդդէմ շահերուն մէկ
 բարեպատեհ բաղիտումին ճակատագրական արգասիքովը, օրին մէկը պիտի
 ազատագրուինք:

... Արդարեւ, քանի՞նէ՞ր կան մեր մէջ որոնք զգացած ըլլան Հայրենիքի
 համար երկարաշունչ աշխատութեանց, յարատեւ ու յամառ ջանքերու եւ
 մանաւանդ խնամքով ծրագրուած նպատակայարմար գործելակերպի մը
 պէտքը:

Մեր իբրեւ թէ ազգովին ծրագրուած բարենորոգմանց պահանջներն իսկ,
 զորս մեր ազգային պաշտօնական մարմինները եւ հեղինակաւոր
 անձնաւորութիւնները ներկայացուցած են աշխարհի բաղդը
 տնօրինողներուն նկատառութեանը, ... ոչ մէկ կերպով կարելի է երաշխաւորել
 թէ իրապէս կը ներկայացնեն ազգին շահերուն թելադրած բուն պահանջները:

... Քսան տարիէ ի վեր ամբողջ Հայութիւնը մշտատեւ կոտորածի
 մղձաւանջը կ'ապրի. մեր Թուրքիաբնակ ժողովուրդը կարծես հրավառ
 նիւթերով լեցուն տակաւի մը վրայ նստած է, հրաբուխի մը վրայ՝ որ մէկ
 վայրկեանէն միւսը կը սպառնայ պայթիլ: Ի՞նչ ըրինք կամ ի՞նչ կ'ընենք այս
 ահաւոր պատահականութեանց դիմագրաւելու վիճակին մէջ դնելու համար
 մեր հարազատ ժողովուրդը: Ոչի՞նչ, բայց դարձեալ ոգեւորուած ենք, ու կը
 յուսանք:

... Վերահաս փոթորիկներուն հանդէպ բոլորովին անպատրաստ՝ մեր այս
 ողորմելի ժողովուրդը կը յուսայ սակայն որ իր ազգային գոյութեան խարխուլ
 լաստափայտը անսայթաք եւ անվտանգ պիտի կրնայ առաջնորդել եւ
 խարսխել փրկութեան նաւահանգիստը:

1878ը մեզ անգիտակից եւ անպատրաստ գտաւ...: Կէս դարու
 յեղափոխականութենէ մը վերջը, Պալքանեան պատերազմը մեզ դարձեալ
 անպատրաստ գտաւ...:

... Կ'ուզե՞նք ինքզինքնիս չխաբել,- պէ՛տք է թօթափենք այս անձայրածիր
 լաւատեսութիւնը, որ բնաւ չ'արդարանար, մանաւանդ ցորչափ մեր դատին
 լուծումը տարամերժօրէն ուրիշներէ՛ն, արտաքին ազդակներէ կը սպասենք:
 Ուրիշ ազգեր իրենց ազատագրութիւնը պարտադրեցի՛ն եւ ո՛չ թէ խնդրեցին:

անոնք առի՛ն եւ ո՛չ թէ ուրիշներէ ստացան...:

Միհրան Տամատեան

«Մեր Լաւատեսութիւնը», *Եզիպտահայ Տարեցոյցը*, Ա. տարի, 1914, Գահիրէ,
100–105

**Յատակացումներ Կիլիկեան
Ինքնապաշտպանական
Փորձի Մասին**

Ինչո՞ւ այս ուսումնասիրությունը

Երբ 1912-ի Հոկտեմբերին, Պալքանեան Ա. Պատերազմի շղթայագերծումն անմիջապես ետք, աշխարհատարած հայությունը փարեցաւ եւրոպական հակակշռի միջոցով իրագործելի բարենորոգումներով օսմանեան տիրապետութեան ներքեւ հեծող հայկական նահանգներու հարստահարուող եւ կոտորուող հայոց կեանքի, ինչքի եւ պատիւի ապահովման գաղափարին, ազգային մարմինները յաջողութեան հաւանականությունը բարձրացնող ազդակ նկատեցին իրենց մշակած ծրագրին հիմնումը Օսմանեան Թուրքիոյ անցեալին ստանձնած յանձնառություններուն վրայ, որոնք նախատեսուած էին գլխաւորաբար 1878-ին ստորագրուած Պերլինի Դաշնագրին 61-րդ յօդուածով եւ 1895-ին սուլթան Ապտուլ Համիտ Բ.ի ներկայացուած բարենորոգումներու յուշագրին տրամադրություններով:

Գործնական էր այս մօտեցումը: Նորամոյժ ընդարձակ եւ արմատական պահանջներ կրնային աւելի բարդացնել խնդիր մը, որ բարդ էր արդէն:

Մէկ կողմէ խնդրոյ առարկայ մեծ պետությունները,- հաւասարապէս շահագրգռուած հայերը կեղեքող երկրին հողային ամբողջականութեան պահպանմամբ,- բաժնուած էին երկու հակամարտ խմբաւորումներու՝ Անգլիա, Ֆրանսա, Ռուսիա Երրեակ Համաձայնությունը եւ Գերմանիա, Աւստրո-Հունգարիա, Իտալիա Երրեակ Չինակցությունը, իսկ միւս կողմէ բարենորոգումներու ծրագրէն դուրս մնացած էր Կիլիկիան, որ ո՛չ միայն բաժնեկից էր հայկական միւս նահանգներուն մէջ տիրող դաժան պայմաններուն, ո՛չ միայն 1909-ի Ապրիլին թրքական եաթաղանին զոհ տուած էր աւելի քան 30,000 հայ եւ կը մնար շրջապատուած զինեալ այլացեղ տարրերով ու անոնց կեղեքումներու, ջարդերու սպառնալիքներուն տակ, այլեւ նոյն 1909-ին Չորք-Մարգպանի (Չորք-Մարգուան, Տէօրթ-Եօ) մէջ կրցած էր կարելի նուազագոյն զոհերով հերոսաբար պաշտպանուիլ մինչեւ մահացու վտանգին բարձումը¹ եւ տակաւին վառ կը մնար յիշատակը գէլթունցիներու ապստամբութեան ու հերոսական մարտնչումին շնորհիւ Ուլնիոյ (Չէթուն) համար ձեռք բերուած առանձնայատուկ դրութեան մը 1895-ին:

Հետեւանքը պիտի ըլլար այն, որ գտնուէին անհատներ կամ կազմուէին մարմիններ, որոնք շեղէին կացութեան դարմանը խաղաղ բանակցություններու ճամբով ապահո-

¹ Մինաս Խապրիկ, *Եթէ Չորք-Մարգպանը Ինձի Հետ Խօսէր...*, հրտ. Չորք-Մարգպանի Հայրենակցական Միութեան, տպ. Կ. Տօնիկեան եւ Որդիք, Պէյրութ, 1983, 59-90 եւ Դոկտ. Մինաս Գոնայեան, *Պատմություն Չորք-Մարգպանի (Տէօրթ-Եոյ)*. *Գիտաբաղադ Մը Կիլիկիոյ Մէջ*, հրտ. Լոս Անճելըսի Չորք-Մարգպանի Հայրենակցական Միութեան, Լոս Անճելըս, 2006, 68-91:

վելու ընդհանուր տրամադրությունեն՝ գերիվեր դասելով գենքի ուժը:

Եւ որովհետեւ տուեալ շրջանի իրադարձութիւնները շօշափած գրականութեան մէջ հանդիպած ենք քննութեան կարօտ տեղեկութիւններու, ծագած է այս հակիրճ ուսումնասիրութեամբ եւ անտիպ վաւերագրերու լոյսով ճշգրտումներ եւ յստակացումներ կատարելու անհրաժեշտութիւնը՝ մեր աչքէ անցուցած նիւթերու սահմաններուն մէջ եւ անոնց ներած չափով:

Այդ գրականութեան մէջ մեզ յուզող հարցին յղում եղած է որպէս «ապստամբութիւն», «ինքնապաշտպանութիւն», «ազատագրական եւ վրէժխնդրական յեղափոխութիւն» եւ նոյնիսկ «ինքնապաշտպանութեան բնոյթը ունեցող ապստամբութիւն»: Մենք խորագրին մէջ ընտրած ենք «ինքնապաշտպանութիւն» բառը: Նախ՝ որովհետեւ ծրագիրը մշակող մարմինն ինքզինք կոչած էր «Ազգային Պաշտպանութեան Կոմիտէ» եւ իր յայտագրին մէջ խօսած՝ միայն ինքնապաշտպանութեան մասին, հոգ չէ թէ ան ի սկզբանէ նպատակադրած ըլլար ապստամբութեան միջոցով ապահովումը Կիլիկիոյ հայոց կեանքի, ինչքի եւ պատիւի անվտանգութեան: Այս պահի որ Քոմիտէն ինքնապաշտպանութեան առանցքային նշանակութիւն տալով է որ հակած էր դէպի «ինքնապաշտպանութեան բնոյթը ունեցող ապստամբութիւն»²: Վերջապէս, գործադրեալ կոտորածներու եւ հարստահարութիւններու, ինչպէս նաեւ ընթացիկ հարստահարութիւններու եւ ապագայ կոտորածներու տեսական սպառնալիքին ներքեւ ապրող ազգերու եւ հաւաքականութիւններու համար հիմնաւորուած ապստամբութիւն մը կարելի չէ չդիտել որպէս կանխարգելիչ ինքնապաշտպանութիւն:

Աղբիւրները

Ներկայ ուսումնասիրութեան նիւթը կազմող ինքնապաշտպանական փորձին յստակացումներուն համար նկատի առած ենք սկզբնաղբիւրային արժէք ներկայացնող հետեւեալ գործերը.

1. Մանուկ Գ. Ծիզմէճեան, *Պատմութիւն Ամերիկահայ Քաղաքական Կուսակցութեանց 1890–1925*, տպգր. «Նոր Օր»ի, Ֆրէզնո, 1930, 186–189:
2. Մ[ուշեղ] Սերոբեան, *Դիտումներ Եւ Դատումներ (Էջեր Օրագրէս)*, տպ. Ազդակ, Պէյրութ, 1932, 76-84:
3. Մուշեղ Սերոբեան, *Մեր Պայքարը Հայ Ազատագրութեան Ուղիով – Վերլուծումներ Հայկական Հարցին Շուրջ*, տպ. «Նոր Աստղ», Գահիրէ, 1948, 221–222:
4. Մուշեղ Սերոբեանի անտիպ *Ինքնակենսագրութիւնը*, ի պահ դրուած Փարիզի Նուպարեան մատենադարանին մէջ:
5. Վահան Մալեգեան, *Ճամբու Ճայրը*, Բ. Հատոր, տպ. «Արաքս», Փարիզ, 1955, 227–228:

² Ծիզմէճեան, 189:

6. Է[օժեն] Բաբագեան, *Ինքնակենսագրություն եւ Յուշեր (Ազգային Գործերու Յանակցությունը)*, հրտ. Հայ Ազգային Հիմնադրամի, թիւ 25, Գահիրէ, 1960, 28–35:
 7. Պետրոս Յ. Տեփոյեան, *Միկրան Տամատեան (1863–1945)*, «Զարթոնք»ի թերթօն, թիւ 52 [Արտատպուած «Արեւ» օրաթերթին մէջ 1956-ին լոյս տեսած նոյնանուն թերթօնէն], Պէյրութ, 128–129:
- Յարակցաբար ուշադրութեան առարկայ դարձուցած ենք հետեւեալ աշխատութիւններուն մէջ խնդրոյ առարկայ նիւթին վերաբերող բաժինները.
8. Աւետիս Եափուճեան, *Հայ Ժողովուրդին Անկախութեան Պայքարը Կիլիկիոյ Մէջ 1919–1921 ԹԹ.*, Մատենաշար Հայ Ազգային Հիմնադրամի, Գահիրէ, 1977, 89–95:
 9. Հովհ. Խ. Թոփուզյան, *Եգիպտոսի Հայկական Գաղութի Պատմություն (1805–1952)*, Հայկական ՍՍՀ Գիտութիւններու Ակադեմիայի Արեւելագիտութեան Ինստիտուտ, Հայկական ՍՍՀ ԳԱ Հրատարակչութիւն, Երեւան, 1978, 161–166:
 10. Հրաչիկ Սիմոնյան, *Ազատագրական Պայքարի Ուղիներում, Գիրք V*, Երեւանի Պետական Համալսարանի եւ ՀՀ ԳԱԱ Պատմութեան Ինստիտուտի համատեղ հրատարակչութիւն, Երեւան, 2013, 301–317:

Ընդհանուր մթնոլորտը

Վահան Մալեգեան, որ բարենորոգումներու խնդրով յատուկ առաքելութեամբ Պոլիս այցելած էր 1912-ի Դեկտեմբեր 17-ին, իր առաքելութեան աւարտին, 22 Դեկտեմբերին, Պօղոս Նուպարի որկած էր համարատուական բնոյթի ընդարձակ ֆրանսերէն նամակ մը, որուն հայացեալ ամփոփումը կատարած է Արամ Անտոնեան՝ տեղ-տեղ ուղղակի մէջբերումներով: Հոն կը կարդանք.

Առաջին հաստատուած բանը սա է թէ ամէն մարդ, անխտիր, հակառակ է զինեալ յեղափոխութեան մը, այդ փափուկ ժամանակուան մէջ:

«... Ասիկա իր աւագ կարեւորութիւնը ունի ինձի համար, որովհետեւ տեղեակ եմ այն դաւադրական խորհուրդներուն զորս կը սնուցանեն հայկական կարգ մը խմբակցութիւններ, թէ Եգիպտոսի եւ թէ Ամերիկայի մէջ: Արդարեւ, շատ լաւ գիտեմ որ մեր ծայրայեղները,– նախկին յեղափոխականներ եւ կրակ ու բոց երիտասարդներ,– շարժման մէջ են եւ, ինքնապաշտպանութեան պատրուակին տակ, Չէյթունի մէջ ապստամբութիւն մը կը պատրաստեն. գաղտնի սուրհանդակներ կը դրկ[են] հոն, եւ անկէ ալ գաղտնի սուրհանդակներ կու գան իրենց, եւայլն: Այս բոլոր ջանքերը, թէ՛ անձերու եւ թէ՛ թղթակցութեան միջոցաւ, անպտուղ մնացած են»:

Այն խորհրդակցութեանց ընթացքին զորս Պ. Մալեգեան ունեցած է Պոլսոյ

մէջ, որոշուէր է գրել Էջմիածին, կաթողիկոսին, որպէս զի մտերմական շրջա-
բերականով մը յորդորէ տաքգլուխները:

«... Մնաց որ, պարտք կը զգամ Ձեր Վսեմութեան հաղորդելու թէ Կովկասի
փոխարքան նախագգուշացուցած է կաթողիկոսը որ Հայոց կողմէ թուրքերու
դէմ գործուած թշնամական շարժում մը կրնայ չարաղէտ արդիւնքի մը յանգիլ,
նկատելով որ պիտի կարծուի թէ Ռուսիա դրդած է այդ շարժումը, եւ անմիջա-
կան հետեւանքն ալ պիտի ըլլայ բացարձակապէս անօգուտ արիւնահեղութիւն
մը»:

Նոյն խորհուրդը տուէր է նաեւ Կ. Պոլսոյ ժուսական դեսպանը պատրի-
արքին: Կուսակցութեանց լիտըրները [= ղեկավարները] խոստացեր են այդ
մտքով հրահանգել արտասահմանի եւ գաւառներու իրենց ընկերները³:

Մալեգեան շարժման մասին տեղեակ ըլլալն ու շատ լաւ գիտնալը կը նշէր, որով-
հետեւ անձամբ ծանօթ էր Գահիրէ եւ Ադրեսանդրիա կատարուող խմորումներուն,
բայց նաեւ հաւանաբար ստացած էր Լեւոն Մկրտիչեանի 19 Դեկտեմբեր 1912 թուակի-
րը, որմէ անհրաժեշտօրէն կը կատարենք հետեւեալ մէջբերումները:

Անշուշտ [Երուսանդ] Աղաթօնէն իմացար թէ Տամատ[եան]ը ո՛չ թէ Պոլիս
գացած է՝ այլ Աթէնք:

³ ՓՆՄ, ՉՆՀՀՄ, հայացեալ՝ ֆրանսերէնէ: Նախընտրեցինք փոխանակ մէջբերելու Մալեգ-
եանի հրատարակած թարգմանութիւնը, իր ընդմիջարկումներուն համար ներկայացնել
Անտոնեանի տարբերակը, զայն գտնելով աւելի յստակ: Փափաքողը կրնայ բաղդատականն
ընել իւրովի: Անտոնեանի առաջին երկու պարբերութիւններուն դիմաց ան հոն պիտի գտնէ
հետեւեալը. «Հայը շուտ կը խանդավառուի, բուն հայրենասիրութենէ մղուած...: Առնենք
Գահիրէն, ուր եղաւ վայրկեան մը՝ որ ա՛յնքան ծրագիրներու կամ գործողութիւններու
առջեւ գտանք ինքզինքնիս, որքան հայրենասէր գործիչներ կային մեր գաղութին մէջ: Մին
հակաթուրք ցոյցերու կողմնակից էր, ուրիշ մը դիւանագիտական դիմումներուն հաւատ
կ'ընծայէր, երրորդ մըն ալ Չէթունի մէջ զինեալ ըմբոստութիւն կ'երագէր, եւ այդպէս: Երբ
հարցն ըլլար միայն Եգիպտոսի համար եւ խօսքերով միայն, վրդովուելու լուրջ պատճառ
պիտի չունենայինք. սակայն Մայր-Հայրենիքի մեր եղբայրներուն կեանքը, նաեւ Հայկական
Դատը ծանրօրէն վտանգելու բնոյթ ունեցող արարքներու հանդէպ, որ համաճարակի նման
ուրիշ գաղութներու եւ աւելի մասնաւորաբար Միացեալ Նահանգներու մէջ ալ կը
տարածուէր, չէինք կրնար անտարբեր մնալ:

... Արդ, գոհունակութեամբ հաստատեցի որ Թուրքիոյ մեր բոլոր հայրենակիցները, առանց
դաւանական, կուսակցական եւ այլ խտրութեան, հակառակ են զինեալ ապստամբութեան
մը՝ ներկայ անդոռալից շրջանին: Այդ բանը, ըստ իս, աւագ կարեւորութիւն ունի, քանզի
տեղեակ եմ այն գաղտնի խորհրդակցութեանց գոր անշուշտ բարեացակամօրէն կը
կատարեն կարգ մը հայրենանուէր խումբեր, Եգիպտոսի մէջ թէ Ամերիկայի: Արդարեւ,
տեղեկութիւն ունիմ որ նախկին յեղափոխականներ եւ բոցավառ երիտասարդներ,
հետամուտ են Չէթունի մէջ զինեալ ապստամբութիւն մը կազմակերպելու, ազգային
ինքնապաշտպանութեան պատրուակին տակ, եւ արդէն կ'ուղարկեն եւ կ'ընդունին
պատուիրակներ...» (Մալեգեան, *Ճամբու Ճայրը*, 227–228):

Բան մը զոր տակաւին չես գիտեր՝ այն ալ սա՛ է թէ այս պարոնները⁴ Կովկաս ալ մարդ խրկեր են, Գասպարիկ Իփեքեանը, «նախկին» դաշնակցական գործիչ եւ ժամանակաւ Կովկաս դերասանութիւն ըրած... իսկ այժմ նորընծայ փաստաբան. ու *Համբարձում Առաքելեանին յանուն [Սահմանադրական-Ռամկավար] կուսակցութեան յանձնարարական նամակ գրե[ր] են, առանց տեղական Ակումբի նախագահին գիտութեան ու հաւանութեան...: [Բարագեան] Էօժէնը շուարեցաւ, ներողութիւն խնդրեց...*⁵:

... Տամատեանէն նամակ կայ: Յունաստանի Արտաքին Գործոց Նախարարին ներկայացեր եւ նախ զէնք խնդրեր է: Նախարարը պատասխաներ է որ պատերազմը վերջանալու վրայ է, հիմա՛յ խելքերնուդ փչեց, եւ բացէ ի բաց մերժեր է, առարկելով թէ զէնք չունին եւ իրենք ալ անոր սովը կը կրեն կոր...: *Մեր տիրացուն իշացեր է. ասոր վրայ մարդը իբրեւ տէֆի պէլա [= ճամբու դրուելիք փորձանք] պատասխաներ է որ յառաջիկային թերեւս բան մը կը կարգադրեն...*

Յետոյ Տամատեան խօսեր է թրքահայոց համար բարենորոգում գործադրելու մասին: Այդ առթիւ տուած պատասխանը շատ լաւ է. նախարարը *բացէ ի բաց* յայտարարած է թէ Անատոլիոյ հանուր քրիստոնէից մասին պիտի աշխատուի...:

Իր նամակին մէջ հեզնօրէն կը հարցնէ որ Մալեգեանի, Սկրտիչեանի, եւլն. Գօմիթէն ի՞նչ կ'ընէ կոր: Արդեօք քանի մը դիմում [կատարելով] եւ քանի մը ոսկի հաւաքելով ազգասիրական պարտականութիւննին կատարա՞ծ կը համարին:

Ինքը կը պնդէ որ անմիջապէս առանց ժամանակ կորսնցնելու Կիլիկիան ապստամբեցնել պէտք է (թէւս չ'ըսեր թէ ինչո՞ւ) ու կը յանձնարարէ փութով Կիլիկիա խրկել Ապահը: *Աստուած շատ քաշել չի տայ ասանկ ցաւագարներէն...*

Պիտի աշխատի եղեր Վէնիզելօսն ալ տեսնել...: «Կարելի է որ, ինչ որ արտաքին գործոց նախարարը մերժեց (զէնքերը) Վէնիզելօս չի մերժէ...»:

Չեմ գիտեր թէ Ապահը երկիր խրկեցի՞ն թէ ոչ: Բայց այդ տեսակէտով բնաւ մտահոգութիւն չունիմ: Չէյթունցիք այնպիսի դիւանագետ մարդիկ են որ հաւանօրէն իրենք ալ ժամանակը անյարմար նկատեն եւ այդ պարագային դուրսէն ոեւէ խորհուրդի կամ թելադրութեան չեն անսար: ...⁶

Իսկ 1/14 Փետրուար 1913-ին, Կիլիկիոյ հրաժարեալ կաթողիկոս Սահակ Բ. Խապայեան կը գրէ Նուպարի.

... Ընդհանուր ազգը ոգեւորող պատմական մեծ ձեռնարկին [= բարենորոգումներու խնդրին] հանդէպ եթէ Կիլիկիան յուսոյ եւ սփոփանքի ցայտուն

⁴ Ակնարկութիւն ինքնապաշտպանական-ապստամբական ծրագրին հետամուտ անձերու: Անտոնեան իր արտագրութեան ընթացքին *պարոնները* դարձուցած է *միւսները*:

⁵ Մալեգեան նամակը որոշապէս հրատարակած է յապաւումով: Ինչպէս այս, այնպէս ալ յաջորդ շեղագրեալ հատուածները, որոնք դուրս ձգուած են Մալեգեանի հրատարակեալ գործին մէջ, կ'ընդգրկենք օգտուելով Անտոնեանի արտագրութենէն (ՓՆՄ, ՉՆՀՀՄ):

⁶ Մալեգեան, *Ճամբու ծայրը*, 62–64 եւ ՓՆՄ, ՉՆՀՀՄ:

արտայայտությունն մը կը զգուշանայ, միակ պատճառն այն է, որ Հայաստանի դարաւոր տառապանքին եղբայրաբար ժառանգակից ըլլալով հանդերձ, մանաւանդ միակ ու վերջին գոհը՝ ո՛չ թէ Միապետական այլ Սահմանադրական կառավարութեան, իր անունը չը յիշուիր բարենորոգմանց խնդրոյն մէջ:

Օսմանեան կառավարութիւնը կեղծ ու խաբեպատիր դիւանագիտութեան մէջ վաստկած համբաւը, ինչպէս միշտ, այս անգամ ալ արդարացնելու փորձեր կ'ընէ, «Արեւելեան Նահանգները» կամ «ընդհանուր Թուրքիան բարեկարգելու» թղթեայ ծրագիրներ մշակելով: Եւ այս խաղը կրկին նպատակ ունի. առաջին՝ Եւրոպայի հասարակաց կարծիքը ի նպաստ իրեն վաստկելու. երկրորդ՝ իր հովանիին տակ ապրող Հայերուն «հաւասար արդարութիւն, կեանքի, ինչքի եւ պատուոյ ապահովութիւն» պահանջող ձայնը խեղդելու, «անջատողական» անգոյ գաղափարի գոյն եւ ձեւ տալով:

Իրաց այս ճգնաժամային վիճակին մէջ ո՛չ միայն պարտաւորութիւն մը կատարելու, այլ արտասահմանի Հայութիւնը իր իրաւանց մէջ զօրացնելու եւ երկրին մէջ ապրողները «անջատողական» տխրանուն ամբաստանութենէն զերծ պահելու համար, գիտակից համոզումով որոշեցինք, Պատրիարքարանի ընդգրկած ուղղութեամբ, Օսմանեան կառավարութեան դիմել, եւ պարզելով Կիլիկիոյ նիւթական ցաւերն ու պէտքերը, բարենորոգութիւն խնդրել, գոնէ 1895ի Մայիսեան ծրագրի ընդունած սկզբունքներով:

Եթէ այս ճանապարհաւ ակնկալուած յոյսերուն չարժանանամք, գոնէ զիրար գլող դահլիճներուն՝ երկիրը բարեկարգելու կեղծ դիմակը վար առնուած կ'ըլլայ⁷, եւ հայկական խնդրոյն համակիր օտար մամլոյն եւ հասարակութեան կարծիքը արդարացած՝ դիւանագիտութեան վրայ աւելի ուժեղ կերպով կը ծանրանայ:

... Երկրի խառնակ եւ անկերպարան կացութիւնը թոյլ չտար մեզ ապագայն վարդագոյն տեսնելու. մօտաւոր անցեալի արձանագրած երկիւղը, փորձառութիւնը եւ մօտէն ծանօթ ժողովուրդի հոգեկան վիճակը եւ անկայուն նկարագիրը, մանաւանդ թուրք տարրին դիւրաբորբոք մոլեռանդութիւնն ու մտայնութիւնը կը բռնադատեն մեզ ըլլալ, կամ ձեւանալ, ինչ որ չենք իսկապէս:⁸

⁷ Ակնարկութիւն յետ-սահմանադրական շրջանի օսմանեան իրերայաջորդ կարճակեաց դահլիճներուն եւ անոնց խաբեպատիր խոստումներուն, ինչպէս նաեւ օտար հանրային կարծիքը ապակողմնորոշելու ծառայող ցուցադրական որոշումներուն ու սնամէջ քայլերուն:

⁸ Նիւթին վերաբերող գրականութիւնն ու այս նամակը, ինչպէս նաեւ հետագայ էջերով ներկայացուելիք նիւթերը ընթերցողը բնականաբար պիտի մղեն եզրակացնելու թէ Կիլիկիոյ Աթոռի Սահակ Բ. Խապայեան կաթողիկոսը բանիւ եւ գործով դէմ կանգնած է Ազգային Պաշտպանութեան Քոմիթէի ծրագրին, մինչեւ իսկ դիմելով անէծքի ուժին: Հարկ է, սակայն, Սահակ Բ.ի մասին առարկայական վճիռ արձակելու համար, առանձին ուշադրութիւն դարձնել այն նախադասութեան, ուր ան յտակօրէն կ'ըսէ թէ պայմաններու հարկադրանքով ինք կ'ըլլայ կամ կը ձեւանայ ըլլալ «ինչ որ չէ իսկապէս»: Այլ խօսքով, ինք սկզբունքային հակառակութիւն չունի ինքնապաշտպանական նպատակով զենքի

Կասկած առթող աննշան ակնարկ մը, կամ անմեղ համարձակութիւն մը, անխուսափելի կորուստ մի է Կիլիկիոյ Հայութեան: Մեր այս համակերպութիւնը եւ ի սեր ժողովրդեան պահպանողական ուղղութիւնը թերեւս խստութեամբ դատողներ գտնուին, մանաւանդ հաւանական ամէն վտանգէ զերծ, ազատ երկրի մէջ ապրող մերիններէն, որոնք քաջալերուած Մակեդոնիոյ եւ Ալպանիոյ ստանալիք վիճակէն, ո՛ր գիտէ, թերեւս ըմբոստացումի ծրագիրներու մէջ տեսնեն Հայութեան ազատագրութիւնը: Դժբախտաբար, մեր տեսութեանց եւ համոզմանց գիտակ ըլլալով հանդերձ, կը լսենք թէ Ադեքսանդրիոյ եւ Գահիրէի մէջ ալ կը գտնուին խորհողներ նման ծրագիրներով՝ օգտուիլ ժամանակի պատեհութենէն:

Եթէ Կիլիկիան Մակեդոնիոյ նման ունենար համացեղ եւ համակրօն սահմանակից տէրութիւն մը, եթէ Ալպանիոյ նման ապրած ըլլար դարերէ ի վեր զենքի եւ դաշոյնի անբաժանելի ընկերակցութեամբ, եւ մանաւանդ եթէ Աւստրիոյ եւ Իտալիոյ նման շահակից տէրութեանց աջակցութիւնները վայելէր, մենք ալ Գահիրէի եւ Ադեքսանդրիոյ ազգասէրներուն համամիտ եւ համակիր, առանց խղճի որեւէ ստգտանքի, պիտի ըսէինք. «Համակերպութիւնը ստրկութիւն է, իսկ ընդվզումը փրկութիւն»: Սակայն դժբախտաբար Կիլիկիան տարացեղ եւ տարակրօն տարերաց ծովին մէջ անթի եւ անառագաստ նաւակ մի է, որ չէ՛ թէ հզօր մրրիկներէ, այլ թեթեւաշունչ հովէ մի ալ խարակներու զարնուելու եւ փշրուելու վտանգին մէջ է, ահաւոր վտանգ մը, զոր հեռաւորներէ աւելի մենք կը տեսնենք, քանի որ գիտակ ենք աննախընթաց կոտորածէն վերապրողներու բարոյական, տնտեսական եւ հոգեկան վիճակին, ուր ամէն օր կը տեսնենք, որ Կիլիկիոյ այս օրուայ Հայութիւնը կազմող կարեւոր մաս մը կը բաղկանայ այրիներու լեզէռներէ, կիսամերկ բիւրաւոր որբերէ եւ օրական հացի կարօտ մաշուած անկար ծերերէ:

Իրաց այս ճշգրիտ վիճակին մէջ խիզախ խորհուրդներ եւ արիւնոտ ծրագիրներ սարսափով կը լեցնեն զմեզ եւ պատմութեան անիծից շանթերը կը կուտակեն մեր գլխուն, եթէ լուռ ու անտարբեր մնանք: Մենք կը լսենք տակաւին հազարաւոր նահատակներու մահամերձի հռնդիւնները, զոր Կիլիկիոյ լեռները

գործածութեան նկատմամբ, պայմանաւ, սակայն, որ ծրագիրն ըլլայ լաւ կշռադատուած: Արդէն Մերոքեան ալ դիտել տուած է թէ նամակներու մէջ յայտնաբերուած Սահակ Բ.ի «ազգային-քաղաքական ըմբռնումը ներկայացնելով հանդերձ», ինք կը կարծէ թէ «Կաթողիկոսը ինքն ալ համամիտ չէ իր որդեգրել ուզած տեսութիւններուն»: Եւ ինչպէս Մերոքեան նշած է, նոյնը կը հաստատէ իր երբեմնի քարտուղար Քերովլէ Փափագեանի 29 Դեկտ. 1912 թուակիրը, ուր Սահակ Բ.ի մասին կ'ըսուի. «... հակառակ չէ որեւէ ծրագրի, ըլլայ վրէժխնդրական, ըլլայ յաջողութեան մը համար, օրինակ ոյժ տալ Հայկական խնդրոյ կարգադրութեան ... սակայն ապահովուիլ կ'ուզէ»: Հարկ է նաեւ ուշադրութիւն դարձնել Ինքնակենսագրութեան բաժնով ներկայացուած Սահակ Բ.ի 23 Դեկտեմբեր 1912 թուակիրին սա արտայայտութեան. «... ամէն կերպով, անցեալի, ներկայի, եթէ տարօրինակ չէ, ըսենք նաեւ ապագայի փորձառութեամբ հակառակ ենք այն գաղափարին, թէ նահատակ ազգը օր ու արեւ պիտի տեսնէ շնորհիւ դիւանագիտութեան...»:

կ'արձագանգեն, մենք կը խմենք տակաւին ա'յն ջուրը եւ կը շնչենք ա'յն օդը, որոնք բիւրաւոր մարտիրոսաց արեամբ ներկուած եւ արեան ջերմաջերմ բուրումներով լեցուած են: Պէտք ունի Կիլիկիան երկար տարիներու անդորրութեան, որ կարողանայ եթէ ո'չ լաւագոյն, գոնէ նախկին վիճակը ձեռք բերելու եւ արհաւիրքի մղձաւանջէն չարչրկուող սերունդներ կազմելու:

Մենք, եւ մեզի հետ բովանդակ ժողովուրդը, որ անշան պատահարներէ, նոյն իսկ ծառերու սօսափինէն խուճապի կը մատնուի, եւ հագիւ ի նորոյ կազմած օճախն ու բոյնը լքելով դէպի ծովեզերք կը դիմէ, իբրեւ անքոյթ ապաստանարան, չենք կարող համամիտ եւ համակիր գտնուիլ որեւէ ձախող մտքի եւ յանդուգն քայլի, դատապարտելով իբրեւ անձնասպանութիւն:

Չենք հաւատար, որ Ձեր Բարձրութիւնը իր փորձառութեամբ եւ իմաստուն խոհականութեամբ նոր սպանդներու մէջ տեսնէ Ազգին փրկութիւնը. եւ չենք հաւատար որ Եգիպտոսի մէջ կազմուած ծրագիրներուն գիտակ ըլլայ Ձեր Բարձրութիւնը:

Ազգասէր Տէր,

Չցամբած աչքերնիս ի նորոյ աղբիւրացնելու վտանգներ կը նշմարենք, արիւնաներկ Կիլիկիայի ողջակիզման համար նոր սեղաններու պատրաստութիւններ կը կանխագուշակենք. թո'ղ խնայուի այդ խաչը, որ իսպառսպ[ուռ] կորսուելու եւ անէանալու խաչն է: Կ'աղաչենք յանուն բիւրաւորներու, հանցեղք Ձեր բովանդակ հեղինակութեամբ կասեցնել վերահաս փորձութեան հոսանքը, որ Հայկական արդար դատին եւ Ձեր ստանձնած սուրբ պարտաւորութեան կը սպառնայ...⁹:

Կ'անցնինք քննութեանը ուշադրութեան կարօտ կէտերու՝ վերի մէջբերումները նկատելով նախամուտ մը, որ իր ընդհանուր գիծերով կը բնութագրէ Ամենայն Հայոց եւ Կիլիկիոյ Կաթողիկոսութիւններուն, Թուրքիոյ Հայոց Պատրիարքութեան, Հայ Ազգային Պատուիրակութեան եւ հայ քաղաքական կուսակցութիւններու գերագոյն մարմիններուն՝ բանակցութիւններու ճամբով բարենորոգում ապահովելու համար տուեալ շրջանին ապստամբական նախաձեռնութիւններ խափանելու ընդհանուր տրամադրութիւնը:

Այդ ընդհանուր տրամադրութիւնը կրնար առաւելաբար ձեւաւորուած ըլլալ բարենորոգումներու հարցին նկատմամբ հետաքրքրութիւն ցոյց տուող տէրութիւններու կողմէ տրուած խորհուրդներով, բայց նաեւ մասամբ հետեւեանքն ըլլալ այն լուրջ մտավախութեան, թէ ապստամբական, խռովարարական որեւէ փորձ օսմանեան կեդրոնական թէ տեղական իշխանութիւններուն կողմէ կրնար օգտագործուիլ որպէս Կիլիկիոյ հայերը կոտորելու պատրուակ, ինչպէս ցայտուն կերպով երեւան կը բերէին իրողութիւններ ու վկայութիւններ¹⁰:

⁹ ՓՆՄ, ՉՆՀՀՄ:

¹⁰ Տեսնել, օրինակի համար, Բիւզանդ Եղիայեանի աշխատասիրած *Առանայի Հայոց Պատմութիւն* ծաւալուն աշխատութեան «Կիլիկիոյ Աղէտը – 1909» խորագրեալ Ը. գլուխը (Հրա-

Ազգային Պաշտպանության Քոմիթեն

Հայ Սահմանադրական-Ռամկավար Կուսակցության (ՀՍՌԿ) հիմնադիրներէն Միհրան Տամատեանի յուշերուն վրայ հիմնուած իր աշխատութեան մէջ Տեփոյեան կը յայտնէ թէ կուսակցութիւնը 1911-ին իր անդրանիկ պատգամաւորական ժողովէն ետք բացառիկ նիստով մը որոշած էր «ամէն հնարաւոր միջոց ձեռք առնել ներքին գաւառներու հայութիւնը զինելու ապագայ ինքնապաշտպանութեան հաւանական պատահականութեան համար»: Ուստի, կուսակցութեան Ամերիկայի շրջանակը կարելոյր գումարներ տրամադրած է «Տանկահայաստանի արեւելեան նահանգներու, ի մասնաւորի Վասպուրականի հայերը զինելու համար», իսկ Եգիպտոսի շրջանակը յանձն առած է ըստ կարելոյն զինել Կիլիկիոյ եւ Փոքր Հայքի հայութիւնը¹¹:

Տեփոյեան կ'աւելցնէ թէ Եգիպտոսի մէջ, ուր ռամկավարներն ու հին հնչակեանները կը գործակցէին Կիլիկիոյ ինքնապաշտպանութեան համար¹², Պալքանեան պատերազ-

տարակութիւն Ատանայի Հայրենակցական Միութեան, Տպարան Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, Անթիլիաս-Լիբանան, 1940, 211–272):

¹¹ Տեփոյեան, *Տամատեան*, 128: Դիտել տանք թէ Ծաւարշ Հովիւեան, որ հեղինակն է Ճիզմէճեանի աշխատութեան մէջ ընդգրկուած ծաւալուն հատուածի մը, անտես առնելով Կիլիկիոյ ուղղութեամբ տարուելիք աշխատանքը, յիշատակած է միայն ներքին գաւառներու ինքնապաշտպանութեան վերաբերող որոշումն ու քայլերը, ընդգծելով թէ նախապատուութիւնը տրուած է Վասպուրականի՝ նկատի ունենալով անոր ունեցած աշխարհագրական առաւելութիւնները Ռուսաստանի եւ Պարսկաստանի մերձաւորութեամբ, ինչպէս նաեւ Արմենականներու օրով կուտակուած հարուստ փորձը այդ շրջանին մէջ, Վասպուրականէն ետք նկատի առնելու համար Տարօնն ու այլ գաւառներ (Ճիզմէճեան, 226-7):

¹² Ինքնապաշտպանութիւնը համերաշխաբար կամ համագործակցաբար իրագործելու նախապատմութիւն մը կար արդէն, սկիզբ առնելով Պոլսէն, ուր «Համերաշխութեան Ժողով»ներէն մէկուն ընթացքին, գումարուած՝ 26 Ապրիլ 1910-ին, երեք կուսակցութիւններու ներկայացուցիչներ յանգած էին ինքնապաշտպանութեան գործը միասնաբար վարելու համաձայնութեան՝ ինքնապաշտպան մարմինները անկուսակցական հողի վրայ կազմակերպելու դիտաւորութեամբ (*Նիւթեր Հ. Յ. Դաշնակցութեան Պատմութեան Համար*, Ժ. հոր., խմբ.՝ Երուանդ Փամպուքեան, Պէյրութ, 2014, 104): Այդ ժողովին չէին մասնակցած ՀՍՌԿ-ի ներկայացուցիչները, որոնք, սակայն, մասնակից էին Համերաշխական Ժողովներու առաջինին՝ 30 Հոկտեմբեր 1909-ին (Նոյն, 100): Թերեւս ալ այդ շրջանին եկեղեցիներու բեմերէն քարոզչական աշխատանք կատարելու գծով ստեղծուած եւ «բացի ու գոցի» խնդիր անունով ծանօթ կացութեան բերումով սահմանադրական-ռամկավարներու մօտ այդ ժողովներուն նկատմամբ զարգացած էր վերապահութիւն մը, որ ցայտուն պիտի դառնար 24 Մարտ 1912-ի գումարման ընթացքին, ուր Վահան Թէքէեան իր ներկայացուցած կուսակցութեան ձեռնպահութիւնը յայտնելէ ետք, պիտի հեռանար ժողովէն՝ նախքան օրակարգի հարցերու քննարկումը: Այս ձեռնպահութիւնը իր ազդեցութիւնը պիտի ունենար Ազգային Ժողովի Կեդրոնի Խմբակցութեան վրայ, որ իր հերթին շաբաթ մը ետք պաշտօնապէս պիտի դադրէր մասնակցելէ համերաշխական ժողովներուն (Նոյն, 109 եւ 112): 1913-ի Հոկտեմբերին չորս կուսակցութիւններու վարիչ մարմինները կրկին նստելով բանակցութեան սեղանի շուրջ, համերաշխական յայտարարագրով մը հանրու-

մը վրայ հասնելէ անմիջապէս ետք կը կազմուի Ազգային Պաշտպանութեան Կոմիտէ անունով մարմին մը՝ ստեղծուած «ռամկավար, հնչակեան, վերակազմեալ եւ դաշնակցական ընկերներ»¹³ Բաղկացած խումբի մը կողմէ: Կոմիտէին ստեղծման որպէս դրդապատճառ նշելով Կիլիկիոյ մէջ ապստամբական շարժում յառաջացնելու ձգտումը, կ'ըսուի թէ Կոմիտէն Հոկտեմբերին ազգային շրջանակներու մէջ տարածեց գաղտնի յայտարարութիւն մը՝ պարզելու Կիլիկիոյ կացութիւնն ու հիմնաւորելու ինքնապաշտպանական շարժման անհրաժեշտութիւնը¹³:

Այլ աղբիւրի մը մէջ, ուր Ազգային Պաշտպանութեան Կոմիտէն կոչուած է «Եգիպտոսի Ինքնապաշտպանութեան Զօմիթէ», կ'ըսուի թէ Տամատեան Հայ Սահմանադիր Ռամկավար] Կուսակցութեան Ամերիկայի Նահանգային Վարչութեան ուղղած իր 20 Հոկտեմբեր 1912 թուակիր նամակին մէջ ունէր ներփակեալ յայտագիր մը, ինչպէս նաեւ նամակ մը հասցեագրուած Մուշեղ Արք. Մերոբեանին: Նաեւ կ'ըսուի թէ այդ նամակէն քիչ ետք, յիշեալ վարչութիւնը կը ստանայ Եգիպտոսի հայ գաղութին ուղղուած յայտարարութեան մը պատճէնը, զոր ստորագրած էին «Դաշնակցական Ենթակոմիտէները, Ս. Դ. Հնչակեան Սասնաճիւղերը, Սահմանադրական Ռամկավար Ակումբները»: Ապա կը ներկայացուին հատուածներ նշեալ յայտարարութենէն, ինչպէս նաեւ յիշեալ վարչութեան ուղղուած նամակին Մերոբեանի վերաբերող բաժնէն, ուր կ'ըսուի. «... Երկրին մէջ իր ներկայութիւնը հրաշագործ ազդեցութիւն կը գործէ, ինք, օրինակի համար, եթէ

թեան պիտի ծանուցէին հայկական բարենորոգումներու իրականացման համար միասնաբար գործելու, ազգային ներկայացուցչական մարմիններու մէջ համաձայնաբար շարժելու եւ օսմանեան երեսփոխանական ընտրութիւններուն թէ խորհրդարանական խնդիրներու մէջ համերաշխօրէն ընթանալու պատրաստակամութիւնը, յուսալով որ այս քայլը նոր զարկ մը կրնայ տալ Երկրի եւ գաղութներու համերաշխական մասնակի ձեռնարկներուն, զորս հասարակութիւնը ողջունած էր ամիսներ առաջ (Նոյն, 115–6):

- ¹³ Տեփոյեան, *Տամատեան*, 129: Օսմանեան սահմանադրութեան հռչակումով թէեւ հայկական կուսակցութիւնները նպատակայարմար նկատած էին վերջ տալ իրենց ընդատակեայ գործունէութեան կամ չափաւորել զայն, բայց Երիտասարդ Թուրքերու կասկածելի դիտաւորութիւններն ու հայաբնակ շրջաններու մէջ հայոց դէմ շարունակուող հարստահարութիւնները եւ ոճիրները անհրաժեշտաբար վերաբնացուցած էին հայութիւնը ինքնապաշտպանական նպատակով զինելու գաղափարը: ՀՍՌԿ-ի ժողովէն ետք, երբ Դաշնակցութիւնը կը գումարէր իր 7-րդ Ընդհանուր Ժողովը, Գ. եւ Դ. նիստերու համատեղ արձանագրութեան մէջ կը նշուէր թէ Պալքանեան Պատերազմի ծագումէն ետք, Դաշնակցութեան Խորհուրդի ժողովը կ'որոշէր Թուրքիոյ մէջ «լոյս դիրք» բռնելով հանդերձ, «դիմել ինքնապաշտպանութեան եւ ժողովրդի խիստ ու արագ զինման» (Փամպուքեան, 12): Իսկ նոյն Ընդհանուր Ժողովի 8-րդ նիստին, 20 Օգոստոս 1913-ին, կը պարզուի թէ փոքրամասնութիւն մը ապստամբութեան մասին մտածելը վաղաժամ դատելով հանդերձ, մեծամասնութիւնը կը գտնէ թէ Դաշնակցութիւնը «անպատճառ պետք է դիմէ յեղափոխական միջոցների աւելի կշիռ տալու [համար] սկսուած դիւանագիտական աշխատանքներին» (Նոյն, 25-26): 1912-ի Սեպտեմբերին Դաշնակցութեան Խորհուրդի արտակարգ ժողովը, գումարուած Պոլիս, որոշած էր Պոլսոյ մէջ կազմել Ինքնապաշտպանութեան Ղեկավար Մարմին եւ առ այդ շրջաբերական նամակ մը դրկած էր կազմակերպական մարմիններուն (Նոյն, 69-70 եւ 74-5):

Հանրն գտնուի Ձեյթունի ապստամբության վայրկեանին, շարժումը ամենայն դիրքում պնդում էր, որ ծայր կուտայ ու կը ծաւալի ամէն կողմ...»¹⁴:

Ճիգմէնեան եւ Տեփոյեան ներկայացուցած են ակնարկուած յայտագրէն հատուածներ նոյն հերթականութեամբ եւ նոյն բովանդակութեամբ: Պարբերութիւններէն մէկուն մէջ թուրքերու եւ քիւրտերու քինախնդիր ոգիին կապակցութեամբ կ'ըսուի թէ ան «... այս պահուս աւելի կը շեշտուի բարենորոգմանց խնդրին մէջ հայերու կողմէ եւրոպական քոնթրոլ պահանջելու պարագայէն...»¹⁵:

Կը տարուի նոյն մտածելու թէ Տեփոյեան Ճիգմէնեանի հատորէն ներմուծած է զանոնք իր աշխատութեան մէջ եւ, սակայն, հարկ տեսած է իր կողմէ աւելցնել մեկնաբանութիւն մը, գրելով. «... հայերու կողմէ եւրոպական քոնթրոլի պահանջը բարենորոգմանց խնդրոյն մէջ ակնարկութիւն մըն է բարեյիշատակ Պօղոս Նուպար փաշայի այդ միջոցին իբրեւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի լիազօր ներկայացուցիչը եւ իբրեւ նախագահ Ազգային Պատուիրակութեան մեծ պետութեանց մօտ կատարած դիմումներուն...»¹⁶:

Քանի որ Նուպար 1912-ի Հոկտեմբերին տակաւին չէր անուանուած Գեորգ Ե.ի լիազօր ներկայացուցիչ եւ Պատուիրակութեան նախագահ,- այդ նշանակումը պիտի կատարուէր 10 Նոյեմբեր 1912 թուակիր կոնդակովը Գեորգ Ե.-ի եւ եւրոպական հակակշռի պաշտօնական պահանջը պիտի բանաձեւուէր այդ թուականէն ետք,- կը մնայ ենթադրել թէ Յայտագրին հեղինակները հայկական շրջանակներու մէջ խմորուող ընդհանուր տրամադրութիւնները նկատի ունենալով արտայայտուած էին եւրոպական հակակշռի մասին եւ Տեփոյեան անուշադրաբար հոկտեմբերեան յայտագրին այդ տրամադրութեան մէջ կարծած էր տեսնել Նուպարի դիմումներուն ստուերը:

Ճիգմէնեանի եւ Տեփոյեանի ներկայացուցած հատուածները նոյնութեամբ բայց տարբեր հերթականութեամբ մաս կը կազմեն 14 Յունուար 1913 թուակիր ընդարձակ «Յայտագիր»ի մը, որուն ներքեւ ստորագրած են Ապահ Պետրոսեան, Ատոմ Ասլանեան եւ Միհրան Տամատեան¹⁷:

Ահաւասիկ բովանդակութիւնն անոր, որուն այստեղ ներկայացումը ընթերցողին կու տայ զայն իր ուրոյն քննական մօտեցումով արժեւորելու առաւելութիւնը.-

¹⁴ Ճիգմէնեան, 186–188: Նշենք թէ անորոշ «քիչ ետք» արտայայտութեամբ Ճիգմէնեանի ակնարկած յայտարարութիւնը «Ինքնապաշտպանութեան Միջկուսակցական Խառն Մարմին Եզիպտոսի» անուան ներքեւ կազմուած խմբաւորման կողմէ հրապարակուած էր 1913-ի Մայիսին (Փամպուքեան, 119–120) եւ կապ չունի Ազգ. Պաշտպանութեան Քոմիթէին հետ: Նշենք նաեւ թէ Մերոբեան այդ շրջանին «ցնոր տնօրինութիւն» դադրեցուցած էր իր գործունէութիւնն իբրեւ անդամ ՀՍՌԿ-ի (Մերոբեան, *Դիտումներ*, 76):

¹⁵ Ճիգմէնեան, 186–187. Տեփոյեան, *Տամատեան*, 129:

¹⁶ Տեփոյեան, *Տամատեան*, 130:

¹⁷ Պետրոս Տեփոյեան, *Ատոմ Ասլանեան*, խմբ.՝ Դոկտ. Վաչէ Ղազարեան, հրտ. Թէքէեան Մշակութային Միութեան Մ. Նահանգներու Եւ Գանատայի Կեդրոնական Վարչութեան, տպ. Ալթափրէս, 1988, 129–34: Յայտագիրը յիշեալ հատորին մէջ աւելցուցած էինք օգտուելով ՌԱԿ-ի Կեդրոնական Արխիւէն: Ատոմի մականունը աղբիւրներու մէջ կը հանդիպի Ասլանեան եւ Արսլանեան տարբերակներով:

Օսմանեան Սահմանադրութեան հռչակումին յաջորդող չորս տարուան ընթացքին Հայ Ազգին կրած խոշոր յուսախաբութիւնը ամբողջ երկրին մէջ ու մանաւանդ կիլիկեան ջարդերով, միացած Պալքանեան պատերազմով ստեղծուած նոր կացութեան հետ, Հայ ժողովուրդը անգամ մըն ալ կը դնեն բացառիկ կացութեան մը մէջ, ուրիշ խօսքով՝ անգամ մըն ալ երեւան կը բերեն Հայկական Հարցը իր ամբողջութեամբ եւ իր բոլոր ստիպողականութեամբ:

Այս հարցը Երկու հանգամանքով կը ներկայանայ, որոնց առաջինը կը կազմեն դիւանագիտական ճամբով բարեկարգութեանց գործադրութեան հասնելու ձեռնարկները եւ երկրորդը՝ ու աւելի կենսականը՝ անձնապաշտպանութեան միջոցներու հայթայթումը երկրին մէջ, որպէսզի Հայը ի վիճակի ըլլայ իր կենաց, ընչից եւ պատուոյն պաշտպանութիւնը ապահովել իր իսկ ձեռքով:

Ուրախ ենք որ դիւանագիտական աշխատութեանց խնդիրը ընդհանուր Ազգին կողմէ համերաշխաբար յառաջ կը տարուի:

Նկատելով սակայն որ անձնապաշտպանութեան գործը, հակառակ մարդկայնապէս ամենաօրինական գործը ըլլալուն, կարելի չէ զայն ստանձնուած տեսնել պաշտօնական մարմիններու կողմէ. այդ պաշտօնական շրջանակէ դուրս ձգուած թերին լրացնելու համար է որ կազմուած «Ազգային Ինքնապաշտպանութեան Քոմիթէն» որ նպատակ ունի այս միեւնոյն ճամբուն մէջ անցեալին գործուած սխալները աչքի առջեւ ունենալով իր լաւագոյնը ընել՝ կուսակցական նեղմիտ մտածումներէն բարձր գետնի մը վրայ ամէն խաւերու համերաշխութեան ստեղծումով մը՝ իրականացնելու ազգային ինքնապաշտպանութեան գործը եւ կարելի միջոցներով ոչ միայն դիմագրաւելու ոեւէ դժնդակ պատահականութիւններու, այլ եւ նոյնիսկ աշխատիլ ձեռք բերելու ինքնավարութիւն մը – եթէ կարելի ըլլայ — իսկ առնուազն՝ Հայաստանի եւ Կիլիկիոյ մէջ իրական ու տեւական բարենորոգումներ գործադրել տալու Եւրոպական Մեծ Պետութեանց կամ անոնցմէ մէկուն հակակշիռ տակ:

Այս պայմաններով ըմբռնուած անձնապաշտպանութեան գործը այս պահուս ամենաանհրաժեշտն է Թուրքիոյ պէս վարչական եւ զինուորական փտութիւններով շաղախուած եւ թալանի ու ջարդի մոլեռանդ բնագոյններով տոգորուած գերութեան մը մէջ:

Երկրի Հայութեան կացութիւնը այսօր աւելի քան երբեք տագնապալի է: Կոտորածի մշտական երկիւղը, պատերազմի գացող զինուորներու անընդհատ անցքը, վաղը՝ պարտեալ, սովալլուկ եւ վրէժխնդրութեամբ ուռած զինուորներու վերադարձին անբաժան՝ անխուսափելի աւարառութիւնները եւ վայրագութիւնները, Ռումէլիի իսլամ գաղթականներուն Հայաբնակ Նահանգները գետնորուելուն ամենավտանգաւոր պարագան, միացած՝ արդէն իսկ գոյութիւն ունեցող օրըստօրէական թուրքական եւ քուրտական խժոժութիւններուն եւ ասպատակութիւններուն եւ այն քինախնդիր ոգիին, որ այս պահուս աւելի կը շեշտուի Բարենորոգմանց խնդրոյն մէջ Հայերուն կողմէն Եւրոպական քոնթրօլ պահանջելու պարագային, երկրին Հայ բնակչութիւնը ծայրայեղ մտահոգութեան եւ մղձաւանջի մատնած են:

Մասնաւորելով մեր Խօսքը Կիլիկիոյ վրայ, ուր արդէն իսկ Ձէյթունի, Հա-
ճընի եւ Չօք Մարգուանի կողմերը վտանգաւոր վիճակ մը կը տիրէ եւ ուր կարգ
մը բացառիկ պարագաները մասնաւորապէս մտահոգիչ մթնոլորտ մը ստեղծած
են, ժողովրդական անձկութեան եւ ապագայ արիւնոտ պատահականութեանց
գոյութիւնը շեշտուած պիտի մնայ այն տեղ թէ՛ իսկ դիւանագիտական դիմում-
ները յաջողապէս պսակուին Հայաստանի բարենորոգմանց մասին իրենց
հետապնդած յոյսերուն մէջ, քանի որ Կիլիկիան բարենորոգութեանց շրջագծէն
բացարձակապէս դուրս պիտի մնայ եւ ատով իսկ նշաւակը պիտի ըլլայ
կուտակուած եւ զսպուած վրէժխնդրութիւններ[ու]: Չենք կրնար նաեւ լռելեայն
անցնել սա պարագան որ, տրուած ըլլալով բուն Հայաստանի Նահանգներուն
այսօրուան անապահով եւ խռովեալ վիճակը, այդ նահանգներուն մէջ
պատահող ո՛րէն խառնաշփոթութիւն չի կրնար իր հակահարուածը չունենալ
Կիլիկիոյ Նահանգին մէջ: Այս ամէն բացառիկ հանգամանքները միանգամ ընդ
միշտ կը շեշտեն գլխաւորապէս Կիլիկիոյ մէջ իրագործելու Ազգային ինքնա-
պաշտպանութեան բացառիկ միջոցներ՝ կարենալ վստահօրէն դիմագրաւելու
փորձանքը որ կրնայ առաջ գալ նոյն իսկ մօտաւոր ապագայի մէջ:

*

Այսօր Կիլիկիոյ այն զանազան կէտերուն վրայ, ուր Հայ բնակչութիւնը
ջարդի տագնապալից օրերուն կրցած է քիչ շատ անձնապաշտպանութեան
գործը յաջողութեամբ արդիւնաւորել, թուրք կառավարութիւնը, առանց երբեք
նկատի առնելու երկրին գոյութեան սպառնացող վտանգները, ամենախիստ
միջոցներով կարծես Խաղալ կ'ուզէ ժողովուրդին համբերատարութեանը հետ
եւ եթէ երբեք կառավարական այս միջոցները շարունակեն իրենց սաստկու-
թիւնը կամ աւելի խստանան, թերեւս ժողովուրդը իր կեանքի ու գոյութեան
բաղդը պիտի ուզէ փորձել իր զենքին ոյժովը եւ այդ պարագային՝ մեր «Ազգային
Պաշտպանութեան Քոմիթէն» իր նուիրական պարտքը պիտի սեպէ ո՛չ միայն
օժանդակել հարկադրուած շարժումի մը մէջ մղուած կռիւի մը այլ եւ առաջ-
նորդել զիրենք իրենց ձերբազատումին գործին յաջողութեանը համար: Այդ
տեսակ շարժում մը մենք կը հաւատանք թէ արուեստական միջոցներով կարելի
չէ ստեղծել. անիկա կրնայ ծագում առնել եւ քաջալերուիլ մեր Քոմիթէին կողմէ
երբ

- 1.— Երկրին կացութիւնը ստիպողական եւ անհրաժեշտ դարձնէ զայն.
- 2.— Ժողովուրդին հաւաքական ու ամբողջ տրամադրութիւնը պատրաս-
տուած ըլլայ.
- 3.— Քաղաքական հանգամանքները նպաստաւոր ըլլան.
- 4.— Դիւանագիտութիւնը յոյսեր ներշնչէ զայն արդիւնաւորելու.
- 5.— Ժողովրդեան պաշտպանութեան միջոցները լիապէս գոհացուած
ըլլան:

Ա.— *Երկրին կացութիւնը.*— Այս մասին արդէն վերեւ պարզեցինք մեր տես-
ութիւնը, եւ այս կացութիւնը դժբաղդաբար պիտի տեսնէ այնչափ ատեն որ այդ

երկրին մէջ իրական բարենորոգումներ տեղի չունենան: Թէպէտ այս պահուս իբր թէ Չէյթունի մէջ տիրող յուզումը հանդարտած կ'երեւի առերեւոյթ կերպով՝ կայսերական ներումին հետեւանքովը, բայց մենք ստոյգ տեղեկութիւններ ունինք թէ Թուրք կառավարութիւնը կ'ուզէ քայքայել այդ լեռնական ժողովուրդին բացառիկ դիրքը, մի անգամ ընդ միշտ ապահովուելու համար ապագայ խլրտումներու վտանգէն:

Վիճակը միեւնոյնն է Հանընի եւ Չօք Մարգուանի համար, որոնք այլ եւս Կիլիկիոյ դաշտին մէջ Հայկական անձնապաշտպանութեան ոգին կը մարմնացնեն իրենց մէջ:

Բ.— Ժողովուրդին տրամադրութիւնը.— Վերոյիշեալ տեղերու բացառիկ կացութիւնը թէպէտ ժողովրդեան մէջ ստեղծած է ճակատագրական բռնկն վայրկեան մը առաջ փութացնելու տրամադրութիւնը, այսու հանդերձ իրենց նպատակին յաջողութիւնը կախում ունի նաեւ իրենց դրացի գիւղերու եւ քաղաքներու համագործակցութենէն: Այս համագործակցութիւնը այն ատեն միայն կրնայ արդիւնաւորութիւն խոստանալ երբ նմանօրինակ քաղաքական հանգամանքներ գիրենք ալ մղեն այն միեւնոյն դիրքին ուր կը գտնուին այս պահուս վերոյիշեալ կեդրոնները: Եւ կարգ մը իրողութիւններ, միացած այսօրուան երկրին կացութիւնը կազմող պայմաններուն հետ, մեզի այն մտածումը կու տան թէ այդ մտայնութեան ստեղծումը պարզապէս շաբաթներու եւ ամիսներու խնդիր մըն է միայն:

Գ.— Քաղաքական հանգամանք.— Վերոյիշեալ երկու վիճակներուն գոյութիւնը անշուշտ բաւական պիտի չլլար արդիւնաւորելու ուելիցէ ժողովրդական հարկադրուած շարժում, եթէ քաղաքական որոշ հանգամանքներ յաջողութեան կարելիութիւն չստեղծէին:

Անուրանալի իրողութիւն մըն է թէ իտալական ու Պալքանեան պատերազմներու պահուն՝ Հայ ժողովուրդը ազգային դատին ի նպաստ ամենէն թանկագին պատեհութիւնները կորսնցուց շնորհիւ իր անտարբերութեան: Բայց Թուրքիա անակնկալներու եւ բացառիկ պատեհութիւններու թատերաբեմը պիտի մնայ դեռ երկար ատեն: Պալքաններու պատերազմը Թուրքիոյ տուաւ ջախջախիչ հարուածը եւ անոր քաղաքական եւ զինուորական կազմը քայքայումի ենթարկեց: Այսօր երկրին մէկ ծայրէն միւսը կը տիրապետէ կատարեալ կազմալուծում ու անիշխանութիւն եւ բացայայտ է որ այս քառսային դրութիւնը պիտի շարունակուի եւ թերեւս Թուրքիա դեռ ինքզինքը չի գտած՝ իր առջեւ պիտի ցցուին քաղաքական նոր բարդութիւններ եւ ազգայնականութեան, անջողականութեան հարցեր ու հողային գրաւումի ճակատագրական պատահականութիւններ պիտի փոխադրուին Փոքր Ասիոյ եւ Արաբիոյ կողմերը: Միալած չենք ըլլար եթէ ըսենք որ այսօրինակ քաղաքական հանգամանքներու զուգադիպող հայկական լաւ կազմակերպուած եւ լաւ առաջնորդուած շարժում մը պիտի կրնայ օգտակարապէս ծառայել Հայկական Դատին նպաստաւոր վախճանին:

Դ.— *Դիւանագիտական պայմաններ.*— Եւրոպայի շահախնդրութիւնը օրէ օր կը յառաջանայ ընդլայնելով իր տնտեսական տիրապետութեան շրջանակները դէպի Թուրքիոյ խորերը: Դիւանագիտութեան երկու հակահոսանքները, որոնք աշխարհի բաղդը կը վարեն այսօր, դիւրաւ պիտի չի կրնան հաշտուիլ Միջերկրականի ամփոնքներուն վրայ երկարաձգուող Կիլիկեան աշխարհի մը այս կամ այն Պետութեան կողմէ գրաւումին հետ, որչափ ալ մասնակի կառավարութեան մը տնտեսական շահերը գերազօր նկատուելու պարագան գոյութիւն ունենայ: Որովհետեւ այդօրինակ գրաւում մը պիտի նշանակէր ո՛չ միայն Արեւելեան Միջերկրականի տիրապետութիւնը, այլ եւ Ռուսիոյ հանդէպ ծովերու փակում մը՝ նեղուցներու խնդիրը կարգադրուելէ առաջ: Երբեակ Համաձայնութիւնը՝ առաջնորդուած Ռուսիա[յ]էն՝ պիտի կրնա[՞]ր կրաւորական համակերպումի դերին մէջ մնալ՝ խանգարելով Եւրոպական ոյժերու հաւասարակշռութիւնը ի նպաստ միակ Տերութեան մը (Գերմանիոյ): Կարելի է նաեւ դիտել տալ թէ, երբ Արեւելեան Խնդիրը ամբողջ դար մը զբաղեցուց Եւրոպան, առանց որ կարենայ Եւրոպական Թուրքիոյ բաժանումը վճռել եւ նախկին հպատակ ցեղերն էին դարձեալ որ զէն ի ձեռին յաջողեցան ի վերջոյ իրենց մէջ բաժնել զայն, ի՞նչպէս կարելի է հաւատալ որ Ասիական Թուրքիոյ մեծ Պետութեանց միջեւ անմիջական բաժանում մը կարելի է, երբ այնքան մրցակցութիւններ իրարու դէմ կը լարեն զանոնք: Եւ որովհետեւ Թուրքիոյ եւ Պալքաններու Խնդիրներուն լուծումէն վերջ այլ եւս մեծ մասամբ փարատած կրնան ըլլալ Եւրոպական Ընդհանուր Պատերազմի մը երկիւղները, այդ տեսակ համեմատաբար խաղաղ ժամանակամիջոցի մը զուգադիպող եւ վերոյիշեալ պայմաններով նպաստաւորուած Հայկական շարժում մը Կիլիկիոյ մէջ կրնայ լաւագոյն պատճառ մը ըլլալ Հայկական Բարենորոգմանց ծրագիրը իրագործելու Հայաստանի ու Կիլիկիոյ մէջ՝ եթէ դժբաղդաբար վիժումի դատապարտուին այսօրուան Հայկական դիմումները եւ կամ եթէ դիմումները արդիւնքի մը յանգին՝ Կիլիկիան ալ մասնակից ընելու միւս Վեց Նահանգներու մէջ ի գործ դրուելիք բարենորոգումներու բարիքին:

Ե.— *Երկրին կացութիւնը* իր անողոր պայմաններով եւ եւրոպական դիւանագիտութիւնը իր ցուցադրելիք հաւանականութիւններով մասամբ պարզելէ վերջ, պէտք է ըսել թէ Ազգային ինքնապաշտպանութեան ո՛չ մէկ շարժում կարելի է սպասել ու արդիւնաւոր ընել առանց վտանգի երկիւղներով պաշարուած ժողովուրդին պաշտպանութեան միջոցներ ստեղծելու: Թէեւ Հայ ժողովուրդը այսօր քիչ մը աւելի գիտակից իր մարդկայնական կոչումին, տրամադիր չ'երեւար ոչխարի պէս մորթուելու, ինչպէս երբեմն Համիտի օրով, բայց այդ պատրաստութիւններն անգամ ինքնապաշտպանութեան տեսակէտով պիտի չկարենան իրական օգուտ մը յառաջ բերել, երբ նկատի առնենք Եւրոպական Թուրքիոյ կորուստով թուրք զինուորական ոյժերու մօտալուտ ամփոփումը եւ կեդրոնացումը Փոքր Ասիոյ մէջ [եւ] իսկամ գաղթականներու փոխադրութիւնը դէպի Հայկական Գաւառները:

Մեր կատարած քննությունները մեզի այն եզրակացության կը բերեն թե երկրին Հայ բնակչությունը իր նիւթական միջոցներուն ներածին չափ զոհողություններ ըրած է զինուելու համար հաւանական վտանգին առջեւ: Բայց տրուած ըլլալով երկրին տնտեսական կեանքին փնացումը ջարդերով, թալանով եւ անգործութեամբ, Արտասահմանի Հայութեան վրայ կը ծանրանայ պարտքը ազգային ինքնապաշտպանութեան տեսակէտով տեսնուած թերին լրացնելու: Հո՛ւն է որ Ազգ. Պաշտպանութեան մեր Քոմիթէն ձեռնարկած է այդ կենսական պակասը լրացնելու հոգը ստանձնել, մէկ կողմէն համագործակցութեան եւ գաղափարակցութեան կապեր շինելով զանազան կուսակցութիւններու միջեւ եւ միւս կողմէն կոչում ընելով Հայ ժողովուրդին ամէն դասակարգերուն ազգային զգացումներուն եւ զոհողութեան ոգիին, զանոնք նկատելով ամենէն կենսական ոյժը ինքնապաշտպանութեան ճամբուն մէջ: Մէկ կողմէն դիւանագիտական յարաբերութեանց ոյժ տալու ազգային համագործակցութեան շաւղին մէջ ծառայութեան մեր բաժինը ի սպաս դրած ժամանակնիս, միւս կողմէն խաղաղ եւ լին միջոցներով հանգանակութիւնները շարունակելու անհրաժեշտ պէտքը կը զգանք, մեր յոյսը դրած մի միայն Հայ ժողովուրդին վրայ:

Աւելորդ չենք համարեր անգամ մըն ալ շեշտել որ Հայ ժողովուրդը ինքնապաշտպանութեան վիճակի մէջ դնելու հարցը անյետաձգելի ստիպողականութիւն ունի այժմ եւ թէ այս ուղղութեամբ լուրջ եւ ընդարձակ գործունէութեան պէտք է ձեռնարկուի անմիջապէս, ո՛րեւէ պատահականութեան հանդէպ պատրաստ գտնուելու համար, մանաւանդ երբ բացայայտ կը տեսնենք թէ Թուրքիոյ միջապայրը աւելի քան երբեք պաշարուած է նորանոր ծանր բարդութիւններու ներքին եւ արտաքին վտանգներով եւ սպառնալիքներով որոնց ամենուն հակահարուածը կրելու դատապարտուած է անխուսափելիօրէն Հայաստանի եւ Կիլիկիոյ Հայ բնակչութիւնը:

Մեր հայեացքները եւ մեր նպատակը ըստ վերնոյն պարզելէ վերջ, կը մնայ մեզ ըսել թէ Ազգային Պաշտպանութեան Գոմիթէն պատասխանատուութիւն կ'ստանձնէ իր բոլոր գործառնութեանց հաշիւը ներկայացնելու Հայ ժողովուրդին պատեհ ժամանակի մը մէջ:

ԱՊԱՀ, ԱՏՈՄ ԱՐՍԼԱՆԵԱՆ, Մ. ՏԱՄԱՏԵԱՆ Ադեքս[անդրիա] 1/14
Յունվար 1913

Յորչափ Ամերիկա ուղարկուած «Յայտագիր»ին բնօրինակը կը մնայ անյայտ, թոյլատրելի է ենթադրել թէ վերը ներկայացուած յայտագիրը կրնայ տարբեր ըլլալ կամ չըլլալ գաղտնի յայտարարութենէն, կամ տարբեր ըլլալով հանդերձ՝ անկէ հատուածներ ընդգրկած բառացիօրէն: Անառարկելիին այն է, թէ մեր հրատարակութեան յանձնած բնագիրը ստորագրուած է 14 Յունուար 1913-ին:

Նշելի է թէ Սերոբեան, որ 28 Յունուար 1913-ին պիտի հեռանար Ադեքսանդրիայէն, իր Ինքնակենսագրութեան մէջ,- ինչպէս պիտի տեսնենք աւելի ուշ,- ունի տողեր, ուր կ'ըսէ թէ իր ստացած տեղեկութիւններէն հետեւցնելով որ պահն աննպաստ էր

ապստամբության մը համար, Քոմիթէի անդամները համոզած էր հրաժարիլ ձեռնարկուելիք ապստամբութենէն, որ պիտի ըլլար «արուստական յեղափոխութիւն», եւ կեդրոնանալ ինքնապաշտպանութեան վրայ, ապստամբութիւնը յետաձգելով մինչև այն պահը, ուր յաջողութեան համար ամբողջացած ըլլային պայմաններ: Եւ կը թուարկէ հինգ պայմաններ, որոնք առկայ են Յայտագիրին մէջ:

Եթէ պահ մը ենթադրենք թէ 14 Յունուար 1913-ի Յայտագիրը կրնար խմբագրուած եւ հրապարակ հանուած ըլլալ Սերոբեանի նախաձեռնած քննարկումէն ետք, դա՛րձեալ մենք մեզ կը գտնենք հետաքրքրական պարագայի մը դիմաց: Սերոբեան հինգ պայմանները թուարկելէ առաջ կ'ըսէ.

«... շատ դժուարութիւն չքաշեցի Քոմիթէի անդամները համոզելու, քանի որ իրենք ալ տեսան, թէ ձեռնարկուելիքը *արուստական յեղափոխութիւն* մը պիտի ըլլար, եւ քանի որ իրենք ալ իրենց շրջաբերականին մէջ կը յայտարարէին թէ «այս տեսակ շարժում մը մենք կը հաւատանք, թէ *արուստական միջոցներով կարելի չէ ստեղծել*»: Երկուստեք հիմնուած մեր համախոհ ըմբռնումին վրայ, մէկ կողմ կը դնենք անմիջական յեղափոխութեան անգործադրելի ծրագիրը, եւ կը ծրագրենք ինքնապաշտպանութեան անյետաձգելի պէտքը, պատրաստ գտնուելու համար ամէն հաւանականութեան առջեւ, եւ դէկավարելու ապստամբական շարժում մը, երբ...»:

Տրամաբանութիւնը կը յուշէ, ուրեմն, թէ Քոմիթէի անդամները հետամուտ չէին *արուստական յեղափոխութեան* եւ գիտակից էին թէ շարժումը կարելի չէր ստեղծել *արուստական միջոցներով*: Պարագան հարցականներ կը յառաջացնէ Սերոբեանի Ինքնակենսագրութեան այս հատուածին կարգ մը մանրամասնութիւններուն շուրջ:

* * *

Տեփոյեան առանց թուական մասնաւորելու կը նշէ թէ Տամատեան Կոմիտէին անուամբ Յունաստան երթալով ներկայացած է վարչապետ Վենիզելոսի եւ յաջողած՝ անկէ առնել խոստում մը «Կիլիկեան շարժումի մը համար տրամադրելու մեծաքանակ գէնք եւ փամփուշտ»¹⁸:

Ինչպէս կը հետեւցուի Լեւոն Մկրտիչեանի նախապէս ներկայացուած 19 Դեկտեմբեր 1912 թուակիր նամակէն, Տամատեան Աթէնք գտնուած է Դեկտեմբերին: Նաեւ կը հետեւցուի թէ արտաքին գործերու նախարարին մերժողական կեցուածքէն ետք, Յունաստանի վարչապետը դրապէս վերաբերած է Տամատեանի խնդրանքին՝ հայերը գէնքերով օժտելու մասին:

Այլ աղբիւրէ կը տեղեկանանք թէ Տամատեանի խնդրանքը չէ սահմանափակուած միայն գէնքերով: Ան Յունաստան մեկնելով նպատակադրած է ապահովել հաւանութիւն կիլիկեան ցամաքահանումի ծրագրի մը եւ հայ գերիներու զինուորագրութեան համար, ի շարս այլ հարցերու¹⁹:

¹⁸ Տեփոյեան, *Տամատեան*, 130:

¹⁹ Բարազեան, 29:

* * *

Քոմիթեն, ըստ երեւոյթին, չէ բաւականացած միայն Յունաստանի օժանդակութեան դիմելով: Ծրագիրը նաեւ նախատեսած է օգտուիլ Պուլկարիայէն, նկատի ունենալով որ Չօրավար Անդրանիկ արդէն Մակեդոնիոյ մէջ «կը կռուէր պուլկարական ուժերու կողքին»: Առ այդ, մտածուած է Պուլկարիոյ վարչապետին հրամանն ապահովել, «Անդրանիկն իր ջոկատներով Կիլիկիա դրկել կարենալու համար»: Պուլկար իշխանութիւններուն մօտ տարուելիք աշխատանքին համար Քոմիթեն նկատի առած էր Էօծէն Բաբազեանը, որ, սակայն, յունական Փիրէա նաւահանգիստին մէջ Կիլիկիա փոխադրուելիք ռազմանիւթերու բեռնաւորման աշխատանքն աւարտելէ ետք միայն պիտի կարենար ուղղուիլ Պուլկարիոյ մայրաքաղաքը՝ Սոֆիա, երբ արդէն պուլկարեսերպական ուժերու կողմէ Ադրիանուպոլսոյ կամ Էտիրնէի առումովը 26 Մարտ 1913-ին, ազդանշանը տրուած պիտի ըլլար Պալքանեան Ա. Պատերազմի աւարտին: Բաբազեան Պուլկարիայէն որպէս վերջին հանգրուան պիտի անցնէր Պոլիս՝ «ապահովել ջանալու համար դաշնակներու գոնէ բարոյական գործակցութիւնը»²⁰:

* * *

Սերոբեան գրած ըլլալով՝ «... Ամերիկայի Ռամկ[ավար] Վարչութիւնը ինծի կը բերէր Մ. Տամատեանի մէկ նամակն ու հեռագիրը, որ կը հաղորդէր թէ Կիլիկիոյ ամբողջ ժողովուրդը կազմ ու պատրաստ է ազատագրական եւ վրէժխնդրական յեղափոխութեան մը, օգտուելով Պալքանեան պատերազմէն, եւ անհամբեր ինծի կը սպասէ ապստամբութեան դրօշը պարզելու համար» ապա նաեւ նշած ըլլալով թէ իր Կիլիկիա ներկայութենէն «հրաշագործ ազդեցութիւն» ակնկալող Տամատեանի նամակը կը կրէր 20 Հոկտ. թուականը²¹, մակաբերաբար թելադրած կ'ըլլայ թէ խնդրոյ առարկայ Ազգային Պաշտպանութեան Կոմիտէն կազմուած է Հոկտեմբեր 8-էն ետք, բայց 20-էն առաջ, քանի որ Կոմիտէն կազմուած էր Պալքանեան Ա. Պատերազմի հոչակումէն ետք:

²⁰ Նոյն, 30 եւ 32: Բաբազեանի տեղեկութենէն կը հետեւցուի թէ Սերոբեան չէր միակ անձը, որուն պարտականութիւն տրուած էր Դաշնակցութիւնն այս կամ այն չափով ներգրաւելու ապստամբութեան ծրագրին մէջ: Կը թուի նաեւ թէ Բաբազեան չէր առաջին ու միակ անձը, որ կը բաղիւրէր պուլկարներու դուռը: Իրմէ առաջ եգիպտահայ ճարտարապետ Կարօ Պալեան, ըստ Մալեզեանի ուղղուած իր 8 Փետրուար 1913 թուակիրին, տեսակցած էր երկրին նախկին վարչապետներէն Ռատոպալովոֆի եւ Մալինոֆի, ինչպէս նաեւ գործող վարչապետին հետ՝ ապահովելով պուլկար ազգին համակրութիւնը հայկական դատին հանդէպ: Պալեան Մալեզեանի հաղորդած էր Պուլկարիոյ ճարին՝ հայոց դատը պաշտպանելու համար ամէն միջոցի դիմելու պատրաստականութիւնը, անաղմուկ գործելու եւ խաղաղ միջոցներով ազգային դատը քաղաքակիրթ աշխարհին սիրցնելու թելադրանքով: Նոյնով Պալեան դժգոհած էր հայ մամուլի թուրքերանութենէն, որ ունէր նպաստաւոր յարաբերութիւններ եւ շահեր վտանգելու բնոյթ (Մալեզեան, *Ճամբու Ճայլը*, 129–130):

²¹ Սերոբեան, *Դիտումներ*, 76: 20 Հոկտեմբերը կը համընկնի Ճիզմէճեանի հաղորդած թուականին:

Սերոբեան նոյնը կը հաստատէ այլուր, երբ կ'ըսէ. «Պալքանեան պատերազմի օրերուն էր, որ Եգիպտոսի մէջ կը կազմուի բոլոր Հայ կուսակցութիւններու համամտութեամբ ոչ-կուսակցական «Ազգ. Պաշտպանութեան Զօմիթ» մը»²²

Սերոբեանի այս հաստատումին մէջ, սակայն, կայ առարկելի բան մը, որ կը վերաբերի «բոլոր հայ կուսակցութիւններու համամտութեան»: Այս աշխատութեան մէջ ներկայացուած այլ աղբիւրներու մէջ կը խօսուի համախոհ կուսակցականներու, բայց ո՛չ կուսակցութիւններու համամտութեան մասին: Եւ արդէն, երբ Սերոբեան Հ. Յ. Դաշնակցութեան համագործակցութիւնն ապահովելու նպատակով ճամբայ կ'ելլէ դէպի Կովկաս, ինք իսկ հաստատած կ'ըլլայ թէ Դաշնակցութիւնը պաշտօնապէս համամիտ չէր Ազգային Պաշտպանութեան Զօմիթի յայտագրին. իսկ երբ Տամատեան իր յուշերուն մէջ կը գրէ թէ Սերոբեանի Կովկաս այցելութենէն ետք «Եգիպտոսի դաշնակցականներն ալ կը բաժնուին» կոմիտէին²³, ա՛յդ ալ չի նշանակեր թէ կուսակցութիւնը մինչեւ տուեալ պահը պաշտօնապէս մասնակից էր կոմիտէին, որովհետեւ, ինչպէս Էօծէն Բաբազեան նշած էր իր յուշերուն մէջ, ինք, ի շարս այլ բաներու, ունէր Դաշնակցութեան «գէթ բարոյական» աջակցութիւնն ապահովելու առաքելութիւնը: Կը թուի թէ աւելի հաւանականն այն է, թէ կոմիտէին մասնակից եգիպտաբնակ դաշնակցականներուն ալ հրահանգուած էր մաս չկազմել²⁴, ինչպէս նման հրահանգ տրուած էր Թիֆլիսի դաշնակցական ներկայացուցիչներ Աղբալեանի եւ Ջամալեանի, երբ Սերոբեան փորձած էր բանակցիլ անոնց հետ:

* * *

Պատմաբան Հրաչիկ Միմոնեան, որ կիլիկեան ապստամբութեան փորձը ներկայացնելու համար յղումներ կատարած է Սերոբեանի հատորներուն, կը գրէ թէ ապստամբութիւնը ծրագրուած էր Եգիպտոսի մէջ սահմանադիր ռամկավար «առանձին ղեկավարներու մօտ», որոնք իրենց անձը չէին արատաւորած թուրք իշխանութիւններու հետ գործարքներով, ապա կ'աւելցնէ թէ 1912-ի կէսերուն Եգիպտոսի մէջ կեանքի կոչուած էր «Ազգային պաշտպանութեան քոմիթէ» անուանումով գաղտնի մարմին մը, որուն հիմնադիրն ու ղեկավարն էր Տամատեան²⁵:

Հարց է թէ, եթէ իրապէս գոյութիւն ունէր 1912-ի կէսերուն կազմուած կոմիտէ մը,

²² Սերոբեան, *Մեր Պայքարը*, 221:

²³ Տեփոյեան, *Տամատեան*, 132:

²⁴ «Դաշնակները միայն՝ սկզբունքով համաձայն ըլլալով հանդերձ, պէտք տեսան իրենց Կ. Պոլսոյ մարմիններուն հաճութեան դիմելու» (Բաբազեան, 29):

²⁵ Միմոնեան, 301–302: Պատմաբանին ազգային ազատագրական պայքարին նուիրուած շահեկան հնգհատորեակի «Ապստամբութեան Փորձ Կիլիկիայում: Բարենորոգումների Ջանքերը Վտանգի Տակ» խորագրով ծաւալուն բաժնին մէջ սողոսկած են կարգ մը սխալներ, ինչպէս՝ օրինակ՝ հետեւեալ նախադասութեան մէջ. «... 1913 թ. Փետրուարի 8-ին, Միհրան Տամադեանը եւ նրա գինակից Բարսիլ Օհանեանը...» եւայլն (Միմոնեան, 309): Ինչպէս կը տեսնուի, *Տամատեանը* դարձած է *Տամադեան*, իսկ Պերճ Օհանեանի փոխարէն նշուած է անունը Բարսեղ Օհանեանի՝ *Բարսեղը* ներկայացուելով որպէս *Բարսիլ*:

ինչո՞ւ նոյն տարուան Հոկտեմբերին պէտք պիտի ըլլար ստեղծել նոյնանուն նոր մարմին մը, որուն որպէս ղեկավար կը նշուի, դարձեալ, Տամատեանի անունը: Կը բաւարարուինք ըսելով թէ, եթէ նոյնիսկ 1912-ի Հոկտեմբերէն առաջ գոյութիւն ունէր նոյնանուն մարմին մը, ներկայ ուսումնասիրութիւնը չի՝ վերաբերիր անոր եւ կը սեւեռի Կիլիկիոյ մէջ ապստամբութիւն ծրագրած Ազգային Պաշտպանութեան Քոմիթէին վրայ, որ, մեր քննած աղբիւրներուն համաձայն, աներկբայօրէն մարմին առած է Պալքանեան Ա. Պատերազմի սկզբնաւորութենէն ետք:

* * *

Սերոբեան տեղ մը նշած է թէ ինքնապաշտպանական այս նախաձեռնութեան հեղինակներն էին 1908-ի Հոկտեմբերին Եգիպտոսի մէջ իր հիմնադրութիւնը հռչակած Հայ Սահմանադրական-Ռամկավար Կուսակցութեան քառամեայ գործունէութենէն դժգոհ անձեր, մասնաւորաբար յիշատակելով երկու սահմանադրական-ռամկավարներ՝ Մ[իհրան] Տամատեանն ու Պ[երճ] Օհանեանը, որոնք «համազգային գործակցութեան մը հետամուտ» ըլլալով, հիմնած են կուսակցութենէն դուրս, բայց գլխաւորաբար անոր ուժերուն յենած «Ազգ[ային] Պաշտպանութեան» Քոմիթէն» եւ առ այդ 8 Փետրուար 1912 թուակիր շրջաբերական մը ուղարկած են Ամերիկայի սահմանադրական-ռամկավար ակումբներուն՝ որպէս դիւան տուեալ կոմիտէին²⁶:

Այլուր, ան յառաջացուցած է շփոթ մը, երբ անդրադառնալով Տամատեանի եւ ՊԵՐՃ Օհանեանի ստորագրած շրջաբերականին, սայթաքումով մը գրած է. «Այս շրջաբերականը կը ստորագրէին Մ. Տամատեան եւ Բ[արսէղ] Օհանեան, երկու լիտրներ»²⁷:

²⁶ Սերոբեան, *Դիտումներ*, 77:

²⁷ Սերոբեան, *Մեր Պայքարը*, 221: Բացայայտ սխալի մը հետեւանքով շփոթ կը ստեղծէ Օհանեանի անուան յիշատակումը: Նախապէս յիշատակուած Պերճն այստեղ դարձած է Բ[արսէղ]: Տրամաբանական չէ որ Բարսէղ Օհանեան Տամատեանի հետ ստորագրած ըլլար ՀՍՌԿ-ի ակումբներուն ուղղուած շրջաբերական մը, քանի որ սահմանադրական-ռամկավար չէր: Ան եղած էր Վերակազմեալ Հնչակեան Կուսակցութեան արմատական թեւի անդամ եւ հրատարակիչը՝ Երուանդ Օտեանի հիմնած *Ազատ Բեմ* շաբաթաթերթին: Հիմնադիրներէն էր նաեւ Կամբ մարմնամարզական ակումբին: Վերակազմեալներու գործունէութենէն դժգոհ մնալով, 1906-ին *Ազատ Բեմ* շաբաթաթերթն ու իր հիմնած տպարանը այդ Կուսակցութեան նուիրելի եւ անոր շարքերուն մէջ իր գործունէութիւնը դադրեցնելէ ետք, ան հեռու մնացած էր հանրային կեանքէ մինչեւ 1912, ըստ իր կենսագրին՝ Արշակ Ալայօյանեանի, որ կը գրէ. «1912-ին Միհրան Տամատեանի առաջարկով կը մասնակցի Եգիպտոսի մէջ կազմուած ինքնապաշտպանութեան քոմիթէին, եւ կ'երթայ Տէօրթ-Եօլ քննական այցելութեան մը համար: Ապա կ'երթայ Աթէնք ուր կը յաջողի զէնք ձեռք բերել եւ գերի հայ 40 զինուորներու եւ այլ հինգ կամաւորներու հետ ճամբայ կ'ելլէ դէպի Կիլիկիա, ճիշդ այն օրերուն երբ թրքական «Համիտիէ» զրահաւորը Սիրան կը զննակոծէր» (Ալայօյանեան Արշակ Ա., *Պատմութիւն Հայ Կեսարիոյ*, Բ. հատոր, հրտ. Կեսարիոյ Եւ Շրջակայից Հայրենակցական Միութեան Գահիրէի Վարչութեան, Գահիրէ, 1937, 2080): Հարկ է նշել թէ 1903-ին Սուլթան Ապտուլ Համիտ Բ.ի անուանակրութեամբ ծով իջած

Իր «Մեր Պայքարը...» հատորին մեջ շրջաբերականին համար որպես «1912 Փետր. 8» ամբողջական թուական մը նշող Սերոբեան, «Դիտումներ...» հատորին մեջ,- յայտնել է տը Տամատեանին 20 Հոկտ. 1912 թուակիր նամակ մը ուղղուած ըլլալը Ամերիկայի Ռամկավար Վարչութեան՝ թելադրելով զինքը համոզել եւ Եգիպտոս դրկել՝ Կիլիկիոյ մեջ «ապստամբութեան դրօշը պարզելու համար», - առանց տարին որոշապէս նշելու, նոյն շրջաբերականին մասին գրած էր թէ ՀՍՌ Կուսակցութեան ակումբներուն ուղղուած շրջաբերականով գանգատած էին կուսակցութեան ընթացքէն եւ *յայտարարած էին* Ազգային Ազգային Պաշտպանութեան Բոմիթէին կազմութիւնը²⁸: Նոյնը արձանագրուած կը գտնենք Ինքնակենսագրութեան մեջ (էջ 592-593):

Այսպիսով դէմ յանդիման կը գտնուինք նոր շփոթեցուցիչ տեղեկութեան մը: Քերականօրէն՝ «արդէն ... *յայտարարած էին*»ը կը թողու տպաւորութիւնը նախադիպութեան, երբ 8 Փետրուար շրջաբերականը կը յիշատակուի 1912-ի Հոկտեմբերի 20-ին Բոմիթէին կողմէ ուղարկուած նամակէն ետք: Եւ քանի որ 1912-ի Հոկտեմբերին ստեղծուած Բոմիթէի մը կազմութիւնը չէր կրնար յայտարարուած ըլլալ 8 Փետրուած 1912-ին, ընթերցողը կը տարուի 1913-ի Փետրուար ամիսը նկատի առնելու իբրեւ շրջաբերականին առաքման թուական:

Մեր հաստոյթեան ներքեւ գտնուող վաւերաթուղթ մը,- որուն ճակտին կը հանդիպինք սեւ մելանով արձանագրուած «15 Յունվար 1913 ստացած 22 Մարտ 1913» թուականներուն, բայց որ չունի որեւէ ստորագրութիւն ու խորագիր եւ միայն ՀՍՌԿ-ի տունալ շրջանի շրջաբերականներուն իր նամանութեամբ կը յուշէ թէ կրնայ 1913-ի Յունուարին առաքուած բազմագրեալ շրջաբերական մը նկատուիլ,- ենթադրաբար կրնայ Տամատեանի եւ Պերճ Օհանեանի 8 Փետրուար թուակիրին մեջ ակնարկուած եւ իրենց քննադատութեան առարկան եղած կուսակցական շրջաբերականն ըլլալ: Հոն կը կարդանք.

ռազմանաւը Համիտի վերանուանուած էր 1908-ին երիտթրքական յեղափոխութենէն ետք եւ յունական Սիրա կամ Սիրոս կղզիի Էրմիփոլու նաւահանգիստը ռմբակոծած էր 1913-ի Յունուարի համարեա կիսուն: Քանի որ Սիրան ռմբակոծուած էր Յունուարին, իսկ զենքերու ցամաքահանման փորձը կատարուած էր Մարտին, մեզի կը թուի թէ ճիշդ պիտի ըլլայ հիմնուիլ Տեփոյեանի հայթայթած տեղեկութեան վրայ եւ ընդունիլ թէ Տամատեանի Աթէնք այցէն եւ վարչապետ Վենիզելոսի հետ յաջողապէս բանակցելէն ետք, Օհանեան մեկնած է Կիլիկիա՝ քննական այցելութեամբ եւ առաքելի զինամթերքի ստացման հողը նախապատրաստելու համար, ապա Ադեքսանդրիա վերադառնալէ ետք մեկնած է Յունաստան՝ զենքերու փոխադրութեան նպատակով (Տեփոյեան, *Տամատեան*, 130-135): Պարագան կը հաստատուի նաեւ այլ աղբիւրով մը, ուր կ'ըսուի. «Տամատեանի Յունաստանէ վերադարձին, Բարսեղ Օհանեան եւ ես, իրարու ետեւէ մեկնեցանք Յունաստան, հայ գերիներէն լաւագոյնները ջոկելու, զենքերը նաւ փոխադրելու եւ ճամբայ դնելու համար դէպի կիլիկեան ծովափը, ըստ կանխորոշուած ծրագրի մը:

«... Ու նաւը մեկնեցաւ բեռնուած 2000-ի մօտ հրացաններով, 2 միլիոնի չափ փամփուշտներով, ուժանակներով, զանազան պիտոյքներով, մթերքով եւ քաջարի զինուոր հայորդիներով» (Բարագեան, 28-29):

²⁸ Սերոբեան, *Դիտումներ*, 76-77:

Պալքանեան պատերազմը, որ առաջ եկաւ Ռուսիոյ նահանգներուն յոռի վարչութենէն, ինքնին խնդրոյ նիւթ ըրաւ – թէւ մի միայն մամուլի շրջանին մէջ մինչեւ հիմայ – Ասիական Թուրքիոյ վարչային դրութիւնը: ... Դեսպանախորհուրդի գաղափարը խակ է այս վայրկենին, մեծ հաւանականութիւն կայ, որ դեսպանախորհուրդը կազմուի խաղաղութեան կնքումէն ետք, ... խնդիրները կրնան ծեծուիլ նաեւ դեսպանախորհուրդի ձեւէն դուրս, հետեւապէս ներկայ քննութեան մէջ պէտք է ընդունիլ նախ սա կէտը. *ասիական զաւառներու բարենորոգումի խնդիրը կարելի է նկատել իբր քաղաքական այժմէութիւն ունեցող հարցերէն մէկը*: Միւս կողմէ պէտք է նկատել որ այս խնդիրը հայկական ըլլալու չափ միջազգային է եւ անոր լուծումը՝ արդի պարագաներու մէջ՝ աւելի կախում ունի պետութեանց մէջ տեղի ունենալիք հաշուեյարդարութենէն քան թէ զաւառային ժողովուրդին անուրանալի պէտքերէն, զորս ինչպէս յայտնի է տարիներէ ի վեր կ'անտեսէ դիւանագիտութիւնը:

.....

Արդի կացութեան մէջ հայկական տեսակէտով ուշադրութեան առնելիք հետեւեալ կէտերը կան:

Ա. Ներկայ տագնապալից ժամանակամիջոցին, երկրին ապահովութիւնը կրնայ ծանր վտանգներու յանգիլ, եթէ հայկական դրդեցուցիչ գործունէութիւն մը զայրացնէ մոլեռանդ խուժանը:

Բ. Եւրոպական նահանգներու Օսմ. պետութենէն պակսելով կը նուազի քրիստոնէից համեմատական թիւը Թուրքիոյ մէջ: Հայը որ կարելորագոյն քրիստոնէայ տարրը կ'ըլլայ ասկէ ետքը Օսմանեան կայսրութեան մէջ հանդէպ կը գտնուի աւելի ստուարաթիւ մահմետականներու: Իր դիրքը կարելի է սահմանել սա բառերով, *աւելի կարելոր իբր քաղաքական տարր եւ նուազ կարելոր քրիստոնէից թուական համեմատութեան տեսակէտով*:

Գ. Կարելիութիւն կայ որ հայը օգտուի ներկայ կացութենէն տնտեսականապէս եւ վարչային միջավայրին մէջ իբր երկրին ամենէն ընդունակ տարրը, եթէ ատելութիւն առաջ չի գայ անխորհուրդ եւ յախումն գործունէութեան մը հետեւանքով:

Միացնելով բոլոր այս տեսակէտները, այժմու հայկական գործունէութեան ծրագիրը կարելի է ուրուագծել սա քանի մը բառերով. բացարձակ հանդարտութիւն ու քաղաքական անկեղծութիւն երկրին մէջ, դիւանագիտական դիմումներ եւ գործունէութիւն Ռուսահայաստանի մէջ ինչպէս նաեւ արտասահմանի բոլոր հայկական գաղթականութեանց կողմէ:

Կաթողիկոսը կրնայ ձայն բարձրացնել, գաղթականութիւնները կրնան դիմումներ ընել եւ պէտք է ընեն, սակայն երկրին մէջ ռեւէ դիմում, ռեւէ քաղաքական արտայայտութիւն վտանգաւոր է:

Յեղափոխական գործունէութիւնը ռճիր կը նկատենք:

Բոլոր դիմումներու հիմը պիտի ըլլայ բարենորոգումներ, ապակեղրոնացումի գործադրութիւնը ապահովող հսկողութեամբ մը: Դիմումներու մասին ուրիշ ծրագիր մը Ձեզ պիտի դրկենք մօտ օրէն:

Ինչպես կարելի է հետեւցնել բովանդակութենէն, տուեալ պահուն յեղափոխական գործունէութիւն մը ոճի յնկատող շրջաբերական մը կրնար բորբոքած ըլլալ գայրոյթը Ազգային Պաշտպանութեան Քոմիթէի գլխաւոր դէմքերէն Տամատեանի եւ Պերճ Օհանեանի:

Սակայն եթէ իրապէս հաստատուի թէ վերի շրջաբերականը եղած է դրդապատճառը 8 Փետրուար թուակիրին, այդ պարագային ալ շփոթը չի փարատիր, որովհետեւ Սերոբեան նոյն պարբերութեամբ կ'ըսէր թէ խնդրոյ առարկայ թուակիրէն եզրակացնելով որ ապստամբութիւն գլխաւորելու համար իրեն ուղղուած հրաւերը Քոմիթէէն էր, անմիջապէս համակերպելով՝ իր գործերը կիսատ թողլով կը մեկնի: Իրողութիւնն այն էր, թէ ինք արդէն անմիջապէս մեկնած ըլլալով, Եգիպտոս կը գտնուէր այդ Փետրուար 8-էն առաջ: Սերոբեանի պատումն այս կէտին մէջ կը մնայ խոցելի:

* * *

Էօժէն Բաբազեան իր յուշերուն մէջ կը նշէ թէ 1909-ին Երիտասարդ Թուրքերու կազմակերպած կիլիկեան ջարդը ապացոյց մը ըլլալով թրքական նոր վարչակարգէն բարիք չսպասելու, 1912-ին շղթայազերծուած թուրք-պալքանեան պատերազմը առիթ մըն էր «բան մը» փորձելու *«գոնէ Կիլիկեան ճակատին վրայ, վերջը՝ պահանջատէրի իրաւունքով ներկայանալ կարենալու համար պատերազմին յաջորդելիք ժողովներուն»*²⁹:

Այնուհետեւ, ըսելէ ետք թէ Տամատեան այդ շրջանին իր «քունը փախցուցած էր», անուղղակիօրէն անոր գլխաւոր դերակատարութիւն մը վերագրելով, կ'աւելցնէ. *«Ու քիչ առնուան մէջ կազմուեցաւ «Հայ Ինքնապաշտպանութեան Մարմին» մը որ պէտք էր պարփակել ամէն կուսակցական եւ անկուսակցական համակիր ոյժ:*

*«Տքնաջան ճիգերով ու սրտատրտի աշխատութիւններով կարելի եղաւ կարենոր խմբակցութիւններու եւ արժէքներու գործակցութիւնը ապահովել»*³⁰:

Յայտնի կը դառնայ թէ որպէս «Հայ Ինքնապաշտպանութեան Մարմին» ներկայացուած Ազգային Պաշտպանութեան Քոմիթէն կեանքի կոչուած էր ո՛չ թէ մէկ կուսակցութեան նախաձեռնութեամբ կամ կուսակցութիւններու տեղական մարմիններու պաշտօնական բանակցութիւններուն իբրեւ արդիւնք, այլ՝ իրարու քով գալովը զանազան կուսակցութիւններու պատկանող եւ իրերու դրութեամբ մտահոգ անհատներու, որոնց «տքնաջան ճիգերը» պիտի կարենային ապահովել արտակուսակցական նեցուկ: Այդ ճիգերուն մէջ, ինչպէս այլ աղբիւրներու հիմամբ ալ կը հաստատուի, տիրական էր Տամատեանի եւ իր սահմանադրական ռամկավար գաղափարակիցներուն դերը:

* * *

²⁹ Բաբազեան, 28: Ի տարբերութիւն Սերոբեանի եւ այլոց, որոնք Տամատեանին վերագրած են երազատեսութիւն եւ անիրապաշտ ու արկածախնդրական մօտեցում՝ Քոմիթէին մշակած ծրագրին կապակցութեամբ, Բաբազեան գայն կը բնութագրէ որպէս «մեծ գաղափարապաշտն որ նոյն ատեն իրապաշտ ըլլալէ չէր դադրեր», «մեծ հայրենասէր, բարձր քաղաքական միտք, զուսպ, բայց ի հարկին աւելի քան յանդուգն» անձ (Նոյն):

³⁰ Նոյն, 28-9:

Վերոշարադրեալներով կը պարզուի թէ 1913-ի կիլիկեան ապստամբութեան ծրագիրը մշակած Կոմիտէն, որ ահագանգային վիճակի մատնած էր կաթողիկոս, պատրիարք, պատուիրակութիւն եւ այլք, կազմուած էր 1912-ի Հոկտեմբեր ամսուն եւ ունէր արտակուսակցական բնոյթ³¹:

Մեր համոզումով, այս Կոմիտէն էր որ հեղինակած էր Կիլիկիոյ անգլիացի, ռուս եւ ֆրանսացի հիւպատոսներուն յանձնուելու համար 1913-ի Մարտ ամսուն պատրաստուած ֆրանսերէն տպագիր յուշագիրը³², զոր Գերմանիա պատրուակի վերածած էր հայկական նահանգներու բարենորոգման ծրագրին դէմ կենալու համար, հարկադրելով որ Նուպար եւ Արշարունի պատրիարք լուսաբանութիւններ տան անոր մասին³³:

Ինքնավարութեան նախագիծին հիմնաւորման համար ներկայացնելով Կիլիկիոյ հայոց ընդհանուր վիճակը եւ տալով ժողովրդագրական ու այլ տուեալներ, կ'ըսուէր թէ երկրէն դուրս մասնաճիւղեր ունեցող Ազգային Պաշտպանութեան Կոմիտէն հիմնուելով 1913-ի Մարտին Կիլիկիոյ զանազան կարեւոր կեդրոններու պատուիրակներով գումարուած ընդհանուր ժողովին որոշման վրայ՝ նպատակադրած է հետամուտ ըլլալ Կիլիկիոյ ինքնավարութեան իրականացման, վերոնշեալ երեք պետութիւններուն ներկայացնելով ժողովին կողմէ միաձայնութեամբ վաւերացուած յուշագիրը եւ բողոքելով թրքական կառավարութեան՝ Թրակիայէն գաղթականներ Կիլիկիոյ մէջ բնակեցնելու որոշման դէմ:

Ինչ կը վերաբերի նախագիծին, հեղինակները կ'ըսէին թէ Կիլիկիոյ բովանդակ հայոց ցանկութիւններն ընդգրկող ինքնավարութեան նախագիծին տրամադրութիւններուն մէջ ոչինչ կայ արտառոց եւ անիրագործելի նկատուելիք:

Նախագիծը կը բաղկանար 23 կէտերէ: Ահաւասիկ այդ կէտերէն մի քանին.

Յօդ. 1.- Ատանայի վիլայէթին մէկ մասը եւ Հալէպի վիլայէթին մէկ մասը, որոնք անցեալին կը կազմէին Կիլիկիոյ Հայկական Թագաւորութեան Ժառան-

³¹ Արտակուսակցական բնոյթ ունենալով հանդերձ, մարմինը գէթ 26 Յունուար 1913-էն սկսեալ պիտի վայելէր ՀՄՌԿ-ի Գահիրէի Ակումբին ամբողջական նեցուկը, ինչպէս կը պարզէ ակումբին նոյն ամսաթիւով ԺԹ ընդհանուր ժողովին ատենագրութիւնը. «Նախագահը [= Մ. Յ. Աժտէրեան] կարդաց դիւանին եռամսեայ տեղեկատուութիւնը որմէ յետոյ բացատրելով ինքնապաշտպանութեան համար թափուած ջանքերը առաջարկեց որ այլեւս ակումբը իբր օժանդակ մարմին ամէն կերպով օգնէ նիւթապէս թէ բարոյապէս Ազգային Ինքնապաշտպանութեան Գօմիթէին:

Այս առաջարկը միաձայնութեամբ ըննդունուեցաւ» (ՌԱԿ Կեդրոնական Արխիւ):

³² *La question arménienne et les solutions qu'elle comporte : un projet d'autonomie arménienne de la Cilicie : mémoire confidentiel présenté au consuls des grandes puissances en Cilicie / par le comité arménien de la défense nationale 1913* (Հայկական Հարցը եւ Անոր Առնչուած Լուծումները. Նախագիծ Կիլիկիոյ Հայկական Ինքնավարութեան Համար. Խորհրդապահական Յուշագիր Ներկայացուած Մեծ Տերութիւններու Կիլիկիոյ Հիւպատոսներուն Ազգային Պաշտպանութեան Հայկական Կոմիտէին Կողմէ): Դիտելի է թէ Տամատեան Մարտի սկիզբէն կը գտնուէր Չորք Մարգպան (Տեփոյեան, *Տամատեան*, 136):

³³ Տեսնել մեր *Հայկական Բարենորոգումներուն Առնչուող Նիւթեր (1912–1914)* աշխատութիւնը (Էջեր 122–123 եւ 165, ծանօթագրութիւններով հանդերձ):

- գութիւնը, կը կազմեն Թուրքիոյ ինքնավար Հայկական նահանգ՝ «Հայակիլիկիա [Armenocilicia]» անունով:
- Յօդ. 2.- Հայակիլիկիան պիտի գտնուի Ն.Վ. Սուլթանին անուանական գերիշխանութեան ներքեւ եւ տէրութիւններուն պաշտպանութեան տակ:
- Յօդ. 3.- Եւրոպացի ընդհանուր Կառավարիչ մը պիտի նշանակուի Սուլթանին եւ տէրութիւններուն փոխադարձ համաձայնութեամբ վեց տարի ժամկետով եւ պիտի ըլլայ վերընտրելի:
- Յօդ. 4.- Հայակիլիկիան պիտի ունենայ սահմանադրական կառավարութիւն:
- Յօդ. 5.- Ընդհանուր Ժողովը պիտի ունենայ օրէնսդրական իշխանութիւն: Սկզբունքօրէն որդեգրուած է համընդհանուր ընտրական իրաւունքը...:
- Յօդ. 6.- Երկրին պաշտօնական լեզուն պիտի ըլլայ հայերէնը...
- Յօդ. 8.- Հանրային կրթութիւնը պիտի ըլլայ պարտադիր, ինչպէս նաեւ՝ հայերէնի ուսուցումը:
- Յօդ. 10.- Կրօնքներ եւ պաշտամունք պիտի վայելեն բացարձակ ազատութիւն...:
- Յօդ. 11.- Ն.Վ. Սուլթանին կողմէ նշանակուած Օսմանցի Բարձր Յանձնակատար մը պիտի բնակի երկրին մէջ եւ կատարէ միջնորդի պաշտօն ընդմէջ Օսմանեան Կառավարութեան եւ Հայակիլիկիա նահանգի Ինքնավար Վարչութեան: Բացի այդ, Սուլթանին կողմէ պիտի նշանակուի Մեծ Միւֆթի մը՝ առաքելութիւն ունենալով պաշտպանութիւնը իսլամներու զուտ կրօնական շահերուն եւ գործադրութիւնը Շերիի [= իսլամական] Օրէնքին...:

Այլ յօդուածներ կը տրամադրէին՝ գիւղական համայնքներու վերաբաշխումն ըստ ազգագրական պայմաններու. կազմութիւնը երկրին բոլոր բնակիչներէն հաւաքագրուած ազգային միլիսի. ոստիկան զօրքերու առժամաբար հաւաքագրումը միայն քրիստոնեաներէ. բնակչութեան զինաթափումը բացի Չէյթունի, Հաննոյ, Սուետիոյ եւ Քեսապի լեռնային շրջաններու քրիստոնեայ բնակիչներէն եւ զուտ հայկական գիւղերէ, ինչպէս՝ Տէօրթ-Եոլը, Հասան-Պէյին, Ֆնտնազը եւայլն. Հայակիլիկիոյ օժտումը դրօշով մը. մեծ տէրութիւններու երաշխաւորութեամբ վարչակարգին պահպանումը, եւայլն:

* * *

Սերոբեան իր պատումը շարունակելով կ'ըսէ թէ մեկնումի իր համակերպումին բուն դրդապատճառը Կոմիտէին կողմէ իրեն ուղղուած հրաւերին «յանուն Կիլիկիոյ ամբողջ ժողովուրդին» ըլլալն էր եւ թէ Կիլիկիա մեկնումի ճամբուն վրայ հարցարան-նամակներ դրկած է հոն՝ կուրօրէն նետուած չլլալու համար արկածախնդրութեան մը մէջ, որ յաջողելու պարագային կրնար աղիտաբեր ըլլալ: Ապա ուղղակի կ'աւելցնէ. «Իրիկուան դէմ կը հասնիմ Ադեքսանդրիա, եւ գիշերն իսկ, փողոցին մէջ եղած խօսակցութիւններէն կը տեսնեմ, թէ Կիլիկեան ապստամբութեան ՉԱՓԱՀԱՆՅ ԳԱՂՏՆԻ ծրագիրը, շուկայի հասարակ ապրանք մը եղած է»³⁴:

³⁴ Սերոբեան, *Դիտումներ*, 77:

Ծրագրին հանդեպ անգգաստ վերաբերումը խտացնող ակնարկություն մըն ալ կու գայ ՀՍՌԿ-ի հիմնադիրներէն եւ թրքական թերթերու խմբագիր Տիրան Քէլէկեանէ, որ հայկական կացութիւնը դիտելով գերմանական, ֆրանսական, ռուսական, իտալական եւ թրքական շահերու բախման յորձանապտոյտին մէջ եւ յստակօրէն կանխատեսելով ազդեցութեան գօտիներու քաղաքականութիւնը,- որ իր պաշտօնական բանաձեւումը պիտի գտնէր աւելի ուշ Սայքս-Փիքոյի Համաձայնութիւն անուան ներքեւ,- նախ հարց կու տայ. «*Երաց այս վիճակին մէջ քանի՞ բարս կ'ընէ ... ռեւէ «Հայկական Պաշտպանութեան Մարմնի» մը գործունէութիւնը*» եւ ապա կ'աւելցնէ. «*Տէօրթ-Եօլ որկուած նաւուն եւն. պատմութիւնը ես հոս առաջին անգամ լսեցի [Գրիգոր] Զօհրապէն, որ այդ տեղեկութիւնը ստացած էր, մինչեւ իր ամենափոքր մանրամասնութիւնները՝ ուղղակի թուրքերէ*»։ Թուական՝ 4 Մայիս 1913³⁵։

Սերոբեանի յաջորդական պարբերութիւնները կու տան մանրամասնութիւնները իր դերակատարութեան եւ իր ստացած նամակներուն, յստակացնելու համար թէ «կատարուելիքը պիտի ըլլար *արուեստական յեղափոխութիւն* մը», որովհետեւ պարարտ հող չկար յեղափոխութեան եւ ապստամբութեան համար, եւ թէ Կիլիկիոյ հայութիւնն ընդհանրապէս չունէր ապստամբական շարժումի մը լծուելու տրամադրութիւն³⁶։

Հակառակ պարզուած կացութեան, Սերոբեան յանձն կ'առնէ հանդիպիլ Թիֆլիս եւ Պոլիս, դրամական նպաստ ապահովելու հետ մէկտեղ «*համագործակցութիւն մը ստեղծելու, Կիլիկիոյ ինքնապաշտպանութեան խնդրոյն շուրջ, հայ կուսակցութիւններու միջեւ*»³⁷։

Կը հետեւի թէ Ազգային Պաշտպանութեան Կոմիտէն տակաւին պաշտօնապէս չէր բարձրացած բոլոր կուսակցութիւններու հովանաւորութիւնը համախոհաբար վայելելու աստիճանին, կամ առնուազն դաշնակցականները վերապահ կը մնային այդ մարմնին նկատմամբ³⁸։

Պոլսոյ թէ Թիֆլիսի մէջ Սերոբեանի ունեցած հանդիպումներու տեղեկագրութիւնը կը նշէ միայն դաշնակցական դեկավարներու անուններ՝ Դաշնակցութեան համագործակցութիւնը ապահովելու ակնյայտ ճիգով մը, որ երեւութապէս կը պսակուի ձախողութեամբ, հակառակ անոր որ Աւետիս Ահարոնեան եւ Սիմոն Զաւարեան Սերոբեանի ներշնչած էին դրական ակնկալիք։ Կը թուի թէ Դաշնակցութիւնը նախընտրած էր իր ուշադրութիւնը կեդրոնացնել Օսմանեան Կայսրութեան արեւելեան նահանգներուն եւ Կովկասի հայոց վրայ։ Տուեալ շրջանին Կիլիկիոյ մէջ ան չունէր ակնառու ներկայութիւն կամ ազդեցութիւն³⁹։

Ծրագրին դէմ էր նաեւ Ազգային Պատուիրակութեան նախագահի հանգամանքով գործող Պօղոս Նուպար, որ կը խորհէր թէ նման շարժում մը պիտի վնասէր հայկական նահանգներու բարենորոգման նպատակով իր կատարած բանակցութիւններուն եւ

³⁵ Մալեգեան, 48–50։

³⁶ Սերոբեան, *Դիտումներ*, 80։

³⁷ Նոյն, 81։

³⁸ Տեփոյեան, *Տամատեան*, 132։

³⁹ Տեսնել Վարանդեանի «Հ. Յ. Դաշնակցութիւնը Եւ Կիլիկիա» խորագրեալ բաժինը իր երկհատոր պատմագրական գործին մէջ (Վարանդեան Միքայէլ, Հ.Յ. Դաշնակցութեան Պատմութիւն, Երեւանի Համալսարանի Հրատ., Երեւան, 1992, 458–68)։

արդեն «Փարիզէն գրած էր Եզիպտոսի ականաւոր ազգայիններուն, որ ամէն ջանք ընեն խափանելու համար ծրագրուած ձեռնարկը»⁴⁰: Նուպար մինչեւ իսկ պիտի սպառնար հրաժարիլ իր պաշտօնէն, եթէ Սերոբեան դադրեցնել չտար շարժումը⁴¹:

* * *

Տամատեան Կիլիկիա գէնքի ցամաքահանման փորձին ձախողման համար կը թուէ վեց պատճառ⁴²: Կարելի է զանոնք,- որոնցմէ կը բացակային Սիմոնեանի կողմէ մատնանշուած նուագումը Կիլիկիոյ հայութեան թիւին՝ 1909-ի ապրիլեան կոտորածներուն հետեւանքով⁴³, եւ այլ աղբիւրներուն մէջ յիշատակուած *անգաղտնապահութիւնը*, - նկատել նաեւ ընդհանրապէս ինքնապաշտպանական փորձին ձախողման պատճառ, քանի որ առանց նիւթական միջոցներու եւ գէնքի՝ տրամաբանական պիտի չըլլար ականկալել յաջող ապստամբութիւն կամ ինքնապաշտպանութիւն:

Հակիրճ՝ այդ պատճառներն էին Կիլիկիոյ կաթողիկոսին ու առաջնորդին, ապա նաեւ Հայ Ազգային Պատուիրակութեան եւ Պոլսոյ պատրիարքարանին ընդդիմութիւնը ձեռնարկին, Դաշնակցութեան անտարբերութիւնը հանդէպ ձեռնարկին, հայոց տակաւին բոլորովին հիպոթափած չըլլալը իթթիհատականներէն եւ, վերջապէս՝ Պալքանեան Պատերազմին արագ աւարտին հետեւանքով յունական կառավարութեան կեցուածքին փոփոխութիւնը:

Ալպոյանեան Սահակ Բ.ի կեցուածքը դիտած է իբրեւ հետեւանք Ազգային Պատուիրակութեան միջամտութեան, գրելով. «*Ձեռնարկը կը վիժի Բարիզէն Հայկ[ական] պատգամաւորութեան [= Ազգային Պատուիրակութեան] կողմէ Կիլիկիոյ Սահակ Կաթողիկոսին հասած հրահանգներուն պատճառով*», որոնց հետեւանքով անհրաժեշտ նախապատրաստական աշխատանք չէր տարուած Կիլիկիոյ մէջ⁴⁴: Դիտել պէտք է տալ, սակայն, թէ միջամտութիւնը կատարուած էր թէ՛ ուղղակի Սահակ Բ.ի հետ հաղորդակցութեամբ, թէ՛ գործի լծելով Պոլսոյ պատրիարքարանը, որ փութացած էր Կիլիկիա դրկել Պալքեան վարդապետը: Նոյնպէս դիտել պէտք է տալ թէ, ինչպէս տիրող ընդհանուր մթնոլորտի նկարագրութեան համար ներկայացուած Սահակ Բ.ի 14 Փետրուար 1913 թուակիրէն եւ յաջորդ բաժնով ներկայացուելիք Նուպարի 12 Մարտ 1913 թուակիրէն կարելի է հետեւեցնել, Կիլիկիոյ Աթոռի կաթողիկոսն ինք արդէն նախաձեռնարկ եղած էր Նուպարի խնդրանք ներկայացնելու, որպէսզի համապատասխան քայլեր առնելով կարելի ըլլայ «կասեցնել վերահաս փորձութեան հոսանքը»:

Ծրագրին հեղինակները, որոնք ռուս-թրքական պատերազմի դադարը ամրագրած Սան Սթեֆանոյի հաշտութեան պայմանագիրը, անոր հետեւած Պերլինի Դաշնագիրը եւ մեծ տէրութիւններու 1895-ի բարենորոգումներու Մայիսեան Ծրագիրը իբրեւ նա-

⁴⁰ Տեփոյեան, *Տամատեան*, 131:

⁴¹ Սերոբեան, *Դիտումներ*, 83:

⁴² Տեփոյեան, *Տամատեան*, 136–137:

⁴³ Սիմոնյան, 304:

⁴⁴ Ալպոյանեան, 2080:

խընթաց եւ հիմ նկատի ունենալով,- նաեւ հաշուի առնելով Կիլիկիոյ ժողովրդագրական տուեալները,- կը յուսային պատերազմի աւարտին մեծ պետութիւններու մասնակցութեամբ ձեռնարկուելիք հաշտութեան բանակցութիւններու ընթացքին ուժ տուած ըլլալ Կիլիկիոյ հայութեան իրաւունքներու արծարծման, պիտի մնային յուսախաբ:

Ապստամբութիւնը վիժեցնող քայլեր՝ յարակից մանրամասնութիւններով

Այս բաժնին շարադրանքը յարմար դատեցինք կատարել վաւերագրերու լեզուով եւ անոնց ժամանակագրական դասաւորումով, այդպիսով ուրուագրելու համար իր ժամանակին տիրած ընդհանուր մթնոլորտն ու գործող անձերու վերաբերումները:

7 Փետրուար 1913-ին Նուպար կը դիմէ Գահիրէի Զադաքական Ժողովին.

... Ազգային Պատուիրակութիւնս իմացած ըլլալով զանազաններէ, թէ վերջերս Եգիպտոսի մէջ մասնաւոր կոմիտէ մը կազմուած է դրամ հաւաքելու եւ հաւանական ինքնապաշտպանութեան համար Հայաստանի եւ Կիլիկիոյ մեր հայրենակիցներուն բաշխելու նպատակաւ, կը կարծէ սակայն, որ մանաւանդ ներկայ քրիթիքական հանգամանքներուն մէջ, այսպիսի գործունէութիւններ ազգին շահերուն հակառակ են: Արդարեւ այսպիսի շարժում մը անվրիպելիօրէն մէջտեղ ըլլալով, պիտի կրնար թշնամի տարրերու մոլեռանդական պոռթկումը գրգռել եւ այսպիսով շատ ծանրակշիռ կնճռոտութեանց պատճառ դառնալ, որ բնականաբար մեր դատը պիտի վտանգեն եւ պատգամաւորութեան [= Ազգային Պատուիրակութեան] պաշտօնը պիտի դարձնեն դժուար, չըսելու համար՝ անհնար:

Մեր յոյսը կը դնենք ուրեմն Ձեր ազգասիրական զգացումներուն եւ մեր եգիպտահայ հայրենակիցներուն համերաշխութեան ոգիին վրայ, համոզելու համար տեղական կոմիտէի անդամները, որ ընդունին պատգամաւորութեանս հայեացքները: Կը խնդրենք, որ հասկցնէք անոնց այն վտանգը, որուն պիտի ենթարկուի հայ ժողովուրդը, եթէ անխոհեմ գործերով, նոյնիսկ լաւագոյն դիտաւորութեամբ, դիւրին պատրուակներ հայթայթուին՝ անոր վրայ յարձակելու համար...⁴⁵:

⁴⁵ Գոհար Աւագեան (կազմող), *Եգիպտոսի Համայնքը Հայկական հարցի Հղովորչութիւն*, հատոր Ա., հրտ. Եգիպտոսի Հայոց Թեմի, Գահիրէ, 2024, 155: Հանդիպած ենք նաեւ նոյնին ֆրանսերէն բնագրէն հայացուած տարրերակին (ՓՆՄ, ՉՆՀՀՄ), որուն մէջ «անվրիպելիօրէն մէջտեղ ըլլալով» արտայայտութիւնն աւելի մեկին կերպով բանաձեւուած է որպէս «անպատճառ երեւան ելլելով»:

8 Փետրուարին Նուպար կը գրէ Պատուիրակութեան անդամ Եագուպ Արթինի.

... Շատ լաւ ըրեր էք Ձեր մասնակցութիւնը մերժելով Ապահովութեան քովիլիին [= Ազգային Պաշտպանութեան Կոմիտէին], որուն կազմութիւնը կը ծանուցանէք ինծի: Ամենամեծ խոհեմութիւն պէտք է այս վայրկեանիս, մանաւանդ թրքական նոր դահլիճին պաշտօնի անցնելէն ի վեր: Ամէն շարժում որ կրնայ Ասիոյ [= Ասիական Թուրքիոյ] մէջ խռովութեան մը վախը ներշնչել, ամենաձանր հետեւանքներ պիտի ունենայ եւ պիտի վտանգէ մեր դատը: Պէտք է ամէն գնով խուսափիլ այդ վտանգէն, Պատուիրակութեան թողով բանակցութիւնները հետապնդելու եւ բարենորոգումները ձեռք բերելու գործը: Բոլոր պաշտօնակիցներս համամիտ են այս մասին, եւ այս մտքով գրեցի Գահիրէի եւ Ադեքսանդրիոյ մեր հասարակութեանց քաղաքական ժողովներուն, ինչպէս նաեւ Մուշեղ Եպիսկոպոսի, որուն վրայ դրած են ամբոխավարները իրենց յոյսը, ինչպէս ինծի կը հաւաստեն: Կը կարծեմ թէ Ատանայի դասը կը բաւէ Մուշեղին, եւ ինք ալ բաւական պիտի նկատէ զայն, ձեռնպահ մնալով...⁴⁶:

5 Մարտին ռամկավար գործիչ, հրապարակագիր եւ Ազգային Պատուիրակութեան ապագայ անդամ Լեւոն Մկրտիչեան Ադեքսանդրիայէն Պօղոս Նուպարի կը գրէ.

... Երբ այս նամակս ստանաք, ինքզինքնիդ պիտի գտնէք կատարուած իրողութեան մը, մեծ նշանակութիւն ունեցող դէպքի մը առջեւ, որ տեղի պիտի ունենայ Կիլիկիոյ մէջ,- ապստամբական շարժում մը:

Իմաստութեան, խոհեմութեան, համբերութեան բոլոր խորհուրդները որոնք շռայլուեցան Եգիպտոսի մէջ, ուր Ձեր ծառան [= նամակագիրը] բաւական նշանակելի դեր մը ունեցաւ, ապարդիւն մնացին.- Պ. Աղաթօն պէջ Ձեզի պիտի գրէ թէ նոյն իսկ խոշտանգուեցայ իմ գաղափարներուս պատճառաւ:

Իրողութիւնը այն է թէ Զէյթունցիներ որոշած են շարժում մը ընել, եւ Եգիպտոսի երիտասարդները խանդավառուած են ատով: Բայց աւելի ծանր իրողութիւն մը կայ տակաւին, եւ ատիկա՝ Պալքանեան Պետութեանց, մասնաւորաբար Յունաստանի քաջալերութիւնն ու գրգռութիւնն է:

Մօտաւորապէս երկու շաբաթ առաջ, Յունաստանի արտաքին գործոց նախարարը *հեռագրով* Աթէնք կանչած է Հայ յեղափոխական մը, որուն տրուած է 3000 հրացան, պայմանաւ որ անմիջապէս շարժում մը սկսի Կիլիկիոյ մէջ:- Նոյն գրգռութիւնը տեղի ունեցած է Հայոց մօտ, Մերպիական դահլիճին մէկ անդամին կողմէ:

Կ'ենթադրեմ թէ Պալքանեան Պետութիւնները յոգնած են պատերազմէն եւ Կիլիկիոյ կողմը շեղում մը կը պատրաստեն, Թուրքիան ստիպելու համար

⁴⁶ ՓՆՄ, ԶՆՀՀՄ: «Ատանայի դասը» հասկնալ որպէս ակնարկութիւն Սերոբեանի առաջնորդութեան յանձնուած թեմին մէջ պատահած 1909-ի ապրիլեան կոտորածներուն, որոնց համար պատասխանատուութեան բաժին վերագրուած էր Սերոբեանի:

որ հաշտություն կնքել կարելի եղածին չափ շուտ, ի վնաս խեղճ Հայերուն:

Տեղեկացայ, Վսեմաշուք Տէր, թէ ներկայիս հազիւ 10,000 թուրք զինուորներ կը գտնուին բովանդակ Կիլիկիոյ մէջ, եւ Չէթունի մէջ ալ հազիւ 500 զինուոր: Ճիշդ այս է որ կը քաջալերէ ո՛չ միայն Չէթունցիները եւ հայ ամբոխավարները, այլ նաեւ Պալքանեան Պետութիւնները:

Բայց, ընդունելով հանդերձ որ շարժումը յաջողի սկիզբները, ի՞նչ պիտի ըլլայ մեր խեղճ հայրենակիցներուն վիճակը երբ, խաղաղութիւնը կնքուելէ ետք, թուրք զինուորները Կիլիկիոյ վրայ ուղղուին:

Եթէ տէրութեանց կողմէ անմիջական միջամտութիւն մը չըլլայ, երկրին բոլոր Հայերը պիտի ջարդուին անխնայ, որովհետեւ, ինչ որ ալ ըլլայ ապստամբական շարժման ոյժը՝ շատ հեռու պիտի մնայ բովանդակ Կիլիկիոյ մէջ տարածուելէ եւ, աւելի հեռու՝ կարենալ չափուելէ թրքական ոյժերուն հետ, որոնք թերեւս տկար Դաշնակից բանակներու դէմ, սակայն ի վիճակի են մէկ քանի օրուան մէջ ճգմելու, ոչնչացնելու հայկական դիմադրութիւնը:

Ուրեմն, անխուսափելի չարիքին հանդէպ, անմիջական միջամտութիւն մը անհրաժեշտ կը դառնայ:

Արդէն իսկ երկար նամակ մը գրեցի Ն. Ս. Օծութիւն Էջմիածնայ Կաթողիկոսին եւ իրեն շատ մը մանրամասնութիւններ տուի Պալքանեան Պետութիւններու գրգռութեանց մասին, խնդրելով իր միջամտութիւնը Ռուսական Պետութեան մօտ, որպէս զի առաջքը առնէ ջարդերուն⁴⁷:

⁴⁷ Գեորգ Ե.ի ուղղուած նամակը հրատարակուած կը գտնենք որպէս 8 Մարտ թուակիր, ինչ որ կը թուի ըլլալ հետեւանքը սխալ ընթերցման կամ տպագրման (Սանդրօ Բէրուդեան (կազմող), *Վաւերագրեր Հայ Եկեղեցու Պատմութեան*, Գիրք ԺԵ, հրտ. Հայաստանի Հանրապետութեան Ազգային Արխիւի, Երեւան, 2005, 143): Թուականը պէտք է ըլլայ շատ հաւանաբար Մարտի 3՝ 8-ի հետ շփոթութիւն յառաջացնելու համար: Հոն կը հանդիպինք Նուպարի ուղղուածէն բացակայ կարգ մը մանրամասնութիւններու, ինչպէս հետեւեալը. «... թուականն մօտաւորապէս վեց ամիս առաջ, Չէթունի աղաներէն մին Եգիպտոս եկաւ հարուստներէն դրամ հաւաքելով ապստամբութիւն սարքելու: Չինքը ամէն կերպով տար-համոզեցի այդ վտանգաւոր գործողութենէն եւ արդէն հարուստներն ալ չի քաջալերեցին զինք, որով ձեռնունայն մեկնեցաւ: Բայց, դժբախտաբար, այստեղ գտնուած միջոցին կարգ մը երիտասարդներ գլխահանեց ինչ-ինչ փայլուն պատմութիւններով: Մինչ այս մինչ այն, [Պալքանեան] պատերազմը վրայ հասաւ, որով երիտասարդութեան երեւակայութիւնն ալ ա՛լ աւելի բորբոքեցաւ: Տարեց եւ փորձառու մարդիկ սկիզբները շարունակ խոհեմութեան դաս տուին եւ Կիլիկեան շարժումի մը աղիտաբեր հետեւանքները պարզեցին...: Բայց վերջերս կարելոր դէպք մը պատահեցաւ որ ամէն հաշիւ, խոհեմութեան ամէն դաս վեր ի վայր շրջեց:

«...Պատերազմի սկիզբէն ի վեր, յոյները շարունակ զհայս կը դրդէին ոտքի ելլել...: Մեր տաք գլուխ երիտասարդներէն մին, քաջալերուած յունական յորդորներէն, Յունաստան մեկնեցաւ եւ արտաքին գործերու նախարար Պ. Քարօմիլիսին ներկայանալով խնդրեց որ կառավարութիւնը հայոց քանի մը հազար հրացան նուիրէ, որպէսզի անոնք ապստամբութիւն սարքեն ի Կիլիկիա: Պ. Քարօմիլիս մերժած էր ... Բայց պատերազմը վերսկսելէն 15 օր յետոյ հեղին կառավարութիւնը իր ընթացքը փոխեց հայոց հանդէպ: Արտաքին

Մեր դիւանագիտական կացութիւնը, այս շարժման հետեւանքով, շատ փափուկ դրութիւն մը կը ստանայ.- Արդեօք պէ՛տք է որ զայն դատապարտենք⁴⁸ [dénoncer] իբր անխորհուրդ եւ անմիտ արարք մը: Արդեօ՞ք պէտք է որ ամբողջ յանցանքը վերագրենք Պալքանեան Պետութեանց, որոնք այս կերպով կ'անապարեն վերջ տալ պատերազմին: Երբ կ'ըսեմ «մեր կացութիւնը», քիչ մըն ալ Ձեր կացութիւնն է, Վսեմաշուք Տէր, քանի որ դուք էք որ պաշտօն ունիք Եւրոպայի առջեւ պաշտպանելու ամբողջ ցեղի մը շահերը...:

... Կը հարցնեմ սակայն ես ինձի.- Կատարուած իրողութեան մը, ըսենք նոյն իսկ Կիլիկիոյ մէջ ապստամբական շարժման մը հանդէպ, արդեօք պէ՛տք է որ պաշտօնապէս եւ յատուկ կերպով [ad hoc] դատապարտենք զայն եւրոպական տէրութեանց առջեւ: Լաւագո՞յն պիտի ըլլար արդեօք, ո՛ր եւ է յայտարարութիւն ընելէ առաջ, ճարտար հետազօտութիւն մը կատարել, հասկնալու համար թէ այս շարժումը,- որ Ռուսիոյ ազդեցութեան շրջանակին մէջ տեղի չ'ունենար,- ո՛ր եւ է կերպով հաճելի՞ է Երրեակ Համաձայնութեան!

Ինչ որ ալ ըլլայ Ձեր Վսեմութեան ուղեգիծը այս մասին, կը համարձակիմ պնդել Երրեակ Համաձայնութեան կողմէ կատարուելիք դրական միջամտութեան մը վրայ, խաղաղութեան կնքումէն առաջ, որպէս զի կարելի ըլլայ առաջքը առնել այն ահռելի սպանդին գոր կը նախատեսեմ Կիլիկիոյ համար...⁴⁹:

գործերու նախարար[ը] Աթէնք հրաւիրեց հեռագրաւ, հայ երիտասարդներէն մին եւ անոր տրամադրութեան տակ դրաւ երեք հազար կրա հրացան, պայմանաւ որ հայերը անմիջապէս ապստամբութիւն մը սարքեն...:

... Այս բոպէիս Կիլիկեան ջուրերը երկու գրահաւոր կայ միայն: Անգլիական գրահաւոր մը Ալէքսանդրէթի առջեւ եւ Գերմանական մը Մէրսինի առջեւ: ... Գերմանիա, որ հզօրապէս տարածուած է Կիլիկիոյ մէջ ... անշուշտ հաշտ աչօք չպիտի դիտէ հայկական շարժման մը յաջողութիւնը տեղւոյն վրայ, ... ուստի եւ վստահաբար պիտի թելադրէ Թուրքիոյ՝ որպէսզի զօրաւոր ափով մը զսպէ շարժումը, ինչ որ կը նշանակէ Կիլիկիոյ հայութիւնը փճացնել...» (Նոյն, 143–144): Հարկ է նշել թէ պատերազմը վերսկսած էր 3 Փետրուարին, որով հեռագիրը դրկուած պէտք է ըլլայ Փետրուար 18-էն ոչ առաջ: Իր վրայ ուշադրութիւն կը հրաւիրէ նամակին «Պ. Քարօմիլիս մերժած էր ... Բայց պատերազմը վերսկսելէն 15 օր յետոյ հեղին կառավարութիւնը իր ընթացքը փոխեց...» հատուածը, որ չի համապատասխաներ Տեփոյեանի եւ Բաբազեանի գործերուն մէջ մեր հանդիպած եւ նախապէս ներկայացուցած տեղեկութիւններուն՝ եթէ «15 օր»ը նկատի առնուի բառացիօրէն:

⁴⁸ Մկրտիչեան սկզբնապէս գրած է *յայտարարենք*: 8 Մարտին երկտողով մը «խիղճը հանդարտեցնելու համար» հարկ դատեր է յստակացնել թէ բառը գործածած է «դատել, քննադատել, դատապարտել» իմաստով: Հոս եւ վարը՝ Անտոնեան աւելցուցած է ուղիղ փակագծերը:

⁴⁹ ՓՆՄ, ՉՆՀՀՄ, հայացեալ՝ ֆրանսերէնէ: Նուպար այս նամակին պիտի պատասխանէր 12 Մարտին, գրելով. «Պալքանեան Դաշնակիցներու, եւ մասնաւորաբար Յունաստանի կատարած դերը շատ դիւրըմբռնելի է իր շնականութեան մէջ. ճիշդ ու ճիշդ այն բանն է գոր նախորդ տարի իտալացիք ըրին, տեսնելով որ Ափրիկեան Տրիպոլսոյ պատերազմը կ'երկարաձգուի, եւ Բ. Դուռը ստիպելու համար որ փութացնէ Լօզանի բանակցութիւնները, պատերազմի մղեցին Պալքանեան Պետութիւնները եւ լքեցին զանոնք, խաղաղութիւնը կնքելէն անմիջապէս վերջ: Նոյն մաքիավելական խաղն է գոր Դաշնակիցները այսօր

8 Մարտին Նուպար, Մկրտիչեանի նամակին հետևողութեամբ, Ամենայն Հայոց Կաթողիկոսէն կը խնդրէ որ իբրեւ Ազգային Պատուիրակութեան նախագահէն ավելի գերիվեր հեղինակութիւն ներկայացնող իշխանութիւն, ազդու միջամտութեամբ առաջ-քը առնէ կատարուելիքին⁵⁰:

8 Մարտին Կիլիկիոյ հրաժարեալ կաթողիկոսը՝ Սահակ Բ., Ատանայէն,- ուր սպասած էր իր Փետրուարի սկիզբները գրած նամակի պատասխանին, գոր չէր ստացած տակաւին,- Ազգային Պաշտպանութեան Կոմիտէին որպէս «գործի յանձնաժողով» ակնարկելով, կը գրէ Նուպարի.

... Գահիրէի մէջ կազմուած *գործի* յանձնաժողովը հապշտապ եռանդով ու փութկոտութեամբ գործի ձեռնարկելու փորձերն սկսած եւ յատուկ պատուիրակներ ալ որկած էր մեռած Կիլիկիայի յարութիւն տալու պաշտօնով. սակայն մենք ամէն կերպով աշխատեցանք վերահաս վտանգը հեռացնելու:

Կեղծիքները այնքան շատցած են Թուրքիոյ մէջ, յորմէ վարակուած ենք ազգովին, հաւատալիս չը գար թէ «խիզախ ու աննպատակ ծրագրերու գործադրութիւնը յաջողեցանք յետաձգելու». կ'ապրինք անստուգութեան ու մահուան երկիւղներու մէջ. իցի՛ւ մեր անձնական զոհողութիւնը ապահովէր ընդհանուրին ազատութիւնը. սակայն ո՛չ մեր եւ ո՛չ եւ հազարաւորներու արիւնը կաթիլի մը արժէքը չը պիտի ունենայ ու զօրաւոր հաւանականութեամբ նաեւ դիւանագիտական ձեռնարկներն ալ ունայնացնէ...⁵¹:

11 Մարտ թուակիրով Նուպար կը փափաքի ունենալ Պատուիրակութեան անդամ Մօստիչեանի տեսակէտը ապստամբական ծրագրին վերաբերեալ, ըսելով թէ չեն կրնար միջամտել ետ կենալ: Կը յայտնէ թէ գրած է արդէն Գեորգ Ե.ի, որպէսզի միջամտէ եւ կասեցնէ շարժումը՝ եթէ կարելի է, եւ թէ պիտի գրէ Սահակ Բ.ի, որպէսզի յանուն Պատուիրակութեան միջամտէ Չէթունի իշխաններուն մօտ: Կ'աւելցնէ. «Բայց ասիկա չի բաւեր, եւ այնպէս կը կարծեմ թէ պէտք է փորձենք դիմումներ ընել եւրոպական պետութեանց մօտ, խուսափելու համար մեզի սպառնացող մեծ վտանգներէն: Պէտք կը զգամ խորհելու թէ ո՞ր պետութեանց մօտ պէտք է ընել այս դիմումները եւ թէ խնդիրը ի՞նչ կերպով պէտք է ներկայացնենք անոնց»⁵²:

կ'ուզեն խաղալ ի վնաս Հայոց: Այդ երիտասարդ խելացնորները որոնք ... տեղի տուեր են այս հրապուրանքին, ինչպէ՛ս յստակ չեն տեսեր, եւ ինչպէ՛ս կրցեր են անգիտանալ այն զարհուրելի հետեւանքները որոնց կրնան ենթարկուիլ Ասիոյ [= Ասիական Թուրքիոյ] Հայ բնակչութիւնները, ո՛ր եւ է բռնական արարքի հետեւանքով» (Նոյն, հայացեալ՝ ֆրանսերէնէ):

⁵⁰ Բէիբուդեան, 147:

⁵¹ ՓՆՄ, ՉՆՀՀՄ:

⁵² ՓՆՄ, ՉՆՀՀՄ, հայացեալ՝ ֆրանսերէնէ: Մօստիչեան 14 Մարտին կը պատասխանէ թէ հարցին լուծման համար պէտք է բաւարարուիլ ներազգային միջամտութիւններով եւ խուսափիլ պետութիւններու դիմելէ: Յաջորդ օր Նուպար կը գրէ Մօստիչեանի թէ ինք ալ նոյն տեսակէտին յանգած էր, ըսելով. «Իմ առաջին մտածումս եղած էր քանի մը դիմումներ

Նոյն ամսաթուով եւ Յ[ակոբ] Պէքեարեան ստորագրութեամբ Ադեքսանդրիայէն ուղարկուած նամակի մը մէջ Ազգային Պաշտպանութեան Բօմիթէի մասին որպէս «բացարձակապէս ստոյգ եւ ապահով» տեղեկութիւն կը յայտնուի, թէ ան հանգանակութիւն կատարելէ ետք իր բուն նպատակը դիմակաթափ ըրած է բացայայտելով Կիլիկիոյ մէջ խռովութիւն յարուցելու ծրագիրը՝ Եւրոպայի ուշադրութիւնն ու միջամտութիւնը հրաւիրելու համար, եւ թէ հելլէն կառավարութիւնը Կոմիտէին տուեր է 3000 հրացան եւ մէկ միլիոն փամփուշտ, «խոստանալով Կիլիկիոյ ծովեզերքին վրայ եւ Բօմիթէին ընտրութեան թողուած վայր մը փոխադրել զանոնք»։ Նամակագիրը հաւանական կը գտնէ որ այդ վայրն ըլլայ Եռմուրթալըքի նաւահանգիստը Ալեքսանտրէի Ծոցին մէջ, Չորք Մարգապանէն 3-4 ժամ հեռու, հոնկէ զինեալ խումբի մը պաշտպանութեամբ ռազմանիւթերը Զէյթուն եւ այլուր փոխադրելու համար։ Կ'աւելցուի. «Այս վտանգաւոր եւ ոճրագործ ձեռնարկութեան ծանօթ շատ մը իտալահաս մարդիկ ուզեցին Բօմիթէին անդամները ետ կեցնել ատկէ, բայց ի զուր աշխատեցան. նոյն իսկ Ձեր Վսեմութեան կողմէ տեղւոյս Քաղաքական Ժողովին որկուած նամակը պահուեցաւ եւ չտրուեցաւ այդ Ժողովին, ո՛չ ալ Թեմական Խորհուրդին, որպէս զի իրենց նպատակին գործադրութիւնը ո՛րեւէ արգելքի չբաղխի. ասիկա ընողը նոյն ինքն Քաղաքական Ժողովոյ ատենապետն է որ, դժբախտաբար, նոյն Բօմիթէին կ'անդամակցի»⁵³։

12 Մարտին, մինչ Նուպար նամակով մը կը խնդրէր Գէորգ Ե.ի ազդու միջամտութիւնը, Արշարունի պատրիարք Նուպարի կ'ուղղէր նամակ մը, ուր ի միջի այլոց կ'ըսուի. «...ի մասին Կիլիկիոյ անդորրութեան, Ձեր Վսեմութեան գրածին ի պատասխան, կը փութանք յայտնել որ՝ նկատի առնելով խնդրոյն անմիջական եւ ծանրակշիռ կարեւորութիւնը, համաձայն Ձեր Վսեմութեան եւս փափաքանաց, յանձնեցինք մասնաւոր ուշադրութեան Ազգային Կեդրոնական Վարչութեան, որ տեսնելով ահաւոր վտանգին

ընել կառավարութեանց մօտ, բայց խորհելէ ետք տեսայ այն բոլոր վտանգները որոնք կրնային առաջ գալ եթէ տարածայնուէր այս լուրը որ մտերմաբար հասած էր մեզի. ու ցաւելով հանդերձ որ անկարող ենք յիմարութիւն մը արգիլելու, որոշած էի բացարձակապէս ոչինչ ընել, բացի այն նամակներէն զորս ուղղեցի Էջմիածնայ եւ Սոյ կաթողիկոսներուն...» (Նոյն)։

⁵³ ՓՆՄ, ՉՆՀՀՄ, հայացեալ՝ ֆրանսերէնէ։ Մեր հատուածաբար ներկայացուցած ընդարձակ նամակի աւարտին, Անտոնեան ծանօթագրած է թէ, համաձայն Աղաթօնի մէկ նամակին, Ադեքսանդրիոյ ազգային խառն վարժարաններու փոխ տնօրէն Պէքեարեան, «որ Տամատեանի սերտ բարեկամն էր, տեսնելով որ կարելի չ'ըլլար արգիլել անոնց արկածախնդրութիւնը Կիլիկիոյ մէջ, ցաւէն մեռած է»։ Ենթակային կենսագրական տուեալներուն եւ անուան կը հանդիպինք Պէքարեան տարբերակով Արտաշէս Հ. Գարտաշեանի աշխատութեան մէջ (*Նիւթեր Եգիպտոսի Հայոց Պատմութեան Համար*, Գ. հատոր, Վենետիկ-Ս. Ղազար, 1981, 44-46)։ Հոն կը նշուի թէ 1861-ին Զէյթուն ծնած կրթական գործիչը ժամանակին իբր յեղափոխական բանտարկուած է Տրապիզոն, եղած է տնօրէն Ադեքսանդրիոյ Ազգային Պօղոսեան վարժարանի, ապա աշխատած է Ադեքսանդր Մանթաշեանի Ադեքսանդրիոյ մասնաճիւղին մէջ, 1910-1911 տարիներուն եղած է Քաղաքական Ժողովի անդամ եւ մահացած է 11 Մարտին. այլ խօսքով՝ նամակն ուղարկած օրը։

մերձաւորութիւնը, Խառն ժողովը պաշտօն տուաւ վարչութեան անդամ Գեր. Տ. Պալագեան վարդապետի, որ այսօր կը մեկնի Ատանա Սոյ Վեհ. Կաթողիկոսին հետ համախորհուրդ ձեռք առնելու այն բոլոր նպատակայարմար միջոցները, որով հնար է վտանգին առջեւն առնել...»⁵⁴:

Նուպար նոյն օրը՝ 12 Մարտին, կը գրէ Սահակ Բ.ի.

... Ձեր Շնորհազարդ Սրբազնութեան նման կը տեսնեմ կացութեան բոլոր վտանգները եւ այն ամբողջ չարիքը զոր կարգ մը ցնորամիտներու կողմէ ստեղծուած խռովութիւններ կրնան պատճառել Հայկական դատին:

... Պատուիրակութիւնը իսկոյն միջամտեց հակազդելու համար...:

... Ձեր Շնորհազարդ Սրբազնութեան նամակը կու գայ հաստատել այս երկիւղները, եւ այսօր իսկ ստացանք մտերմական նամակ մը որ մեզի մատնանիշ կ'ընէ ուղղակի կերպով կատարուած գրգռութիւն մը Պալքանեան դաշնակիցներու կողմէ, որոնք, ապստամբութեան դրդումներով չզոհանալով, նոյն իսկ իրենց նիւթական աջակցութիւնը ընծայեր են այդ ապստամբութեան:

... կը կարծենք թէ ամէն բանէ առաջ պէտք է մանաւանդ Չէյթունի իշխանները լուսարանել Պալքանեան Պետութեանց նենգամիտ ընթացքին նկատմամբ, որպէս զի իրենց ջանքերը մերիններուն միացնեն, բռնութեան ամէն պոռթկում արգիլելու համար:

Կը խնդրենք ուրեմն Ձեր Շնորհազարդ Սրբազնութենէն որ իր մօտ հրաւիրէ զանոնք...:

Նամակին մէջ կը թուարկուին պատճառաբանութիւններ.- նա'խ, որպէս ճշում բռնական միջոցներու կիրարկումը տուեալ պահուն յաջողութեան յոյս չի ներշնչեր, քանի որ պետութիւններ զբաղած են պալքանեան պատերազմով, խռովութիւնը չի կրնար ստանալ բաւարար ծաւալ եւ յաջողելու համար պէտք եղած ուժը. ապա՝ եթէ նոյնիսկ զէյթունցիք յաջողին իրենց ծրագրին մէջ, «կարելի պիտի չըլլայ այդքան փոքր հողամաս մը անկախ հռչակել»: Կ'աւելցնէ. «... Ինչ որ իրապէս պէտք է հետապնդել Կիլիկիոյ համար, բարենորոգումներու լայն ծրագիր մըն է, որ պէտք է ձեռք բերուի դիւանագիտական բանակցութիւններով: Ծիշդ այդ է որ կ'ընէ Պատուիրակութիւնը...»:

Յետ գրութեան մը յաւելումով ալ Նուպար Սահակ Բ.ի կը վերադարձնէ յիշատակագրին նախագիծը, նշելով. «Պատուիրակութիւնը, նկատի առնելով Թուրքիոյ արդի կառավարութեան հակառակութիւնը ամէն կարգի բարենորոգմանց դէմ, չի կարծեր որ Մեծ-Եպարզոսին տրուելիք Ուղերձ մը կարենայ լաւ տպաւորութիւն ընել. բայց ո՛ր եւ է առարկութիւն չունի, եթէ Ձեր Շնորհազարդ Սրբազնութիւնը օգտակար դատէ զայն դրկել...»: Կը թելադրուի նման պարագայի մը անկէ ջնջել պատուիրակութեան կողմէ նշուած պարբերութիւններ⁵⁵:

⁵⁴ ՓՆՄ, ՁՆՀՀՄ:

⁵⁵ ՓՆՄ, ՁՆՀՀՄ, հայացեալ՝ ֆրանսերէնէ: Անտոնեան ծանօթագրութեամբ մը կը նշէ թէ

14 Մարտին, Նուպար Եագուպ Արթինի կը տեղեկացնէ իր ստացած տեղեկութիւններուն եւ Գէորգ Ե.ի ու Սահակ Բ.ի գրած նամակներուն մասին ու կ'աւելցնէ. «... շատ օգտակար պիտի ըլլար եթէ քանի մը խելահաս մարդոց՝ Աղաթօնի, Անդրանիկեանի, Մալեգեանի եւ Ձեր կողմէ յարմար դատուած ուրիշ ո՛ր եւ է անձի հետ, հրաւիրէիք ամբոխավարները եւ անոնց աչքը բանայիք մէկ կողմէ այն վտանգներուն վրայ որոնց կրնայ ենթարկուիլ բովանդակ Հայ ազգը, եւ միւս կողմէ այն խաբէութեան վրայ որուն Յոյները առարկայ դարձնել կ'ուզեն զիրենք:

«Կը խորհիմ թէ Ապահ, որ բարի եւ պարկեշտ մարդ մըն է, կրնայ Ձեզի օգտակար ըլլալ այս մասին: Վերջապէս պէտք է ընել ինչ որ կարելի է, որպէս զի մեզ չմեղադրեն թէ թոյլատրեցինք այս յիմարտութիւնը...»⁵⁶:

17 Մարտին Գէորգ Ե., ընթացք տալով Նուպարի փափաքին, Արշարունի պատրիարքին կ'ուղղէ կոնդակ մը, ուր կ'ըսէ.

Ամենապատուութեան Ձերում եւ սիրելի անդամոց Ազգային Կեդրոնական Վարչութեան քաջայայտ են քաղաքական բարդ պայմանք եւ վիճակ Հայոց Տաճկաստանի, ուստի եւ գիտէք, զի յայտոսիկ հանգամանս դժուարինս պահանջի յամենեցունց զգուշութիւն, լուրջ կշռադատութիւն եւ հեռատեսութիւն 'ի գործունէութեան, նաեւ խուսափումն այնպիսի յախումն գործոց, որք յայտնապէս կարեն գրգռել զմոլեռանդութիւն եւ զվրէժխնդրութիւն ամբոխին եւ ոմանց պաշտօնէից կարճամտաց, որք ո՛չ ըմբռնելով զօգուտն եւ զշահն Պետութեան Տաճկաց, յայսմ խռովեալ ժամանակի առիթս խնդրեն ընդդէմ անօգնական հոգեւոր որդւոց մերոց:

'Ի գրութեանց մերագնէից Եզիպտոսի տեղեկանամք, զի Կառավարութիւն Տաճկաց կամի նեղել զհայ բնակիչս Կիլիկիոյ, որոյ վասն առաքէ զօրս յԱլմիա եւ յայլ վայրս հայաբնակս ընդ պատրուակաւ խաղաղեցուցանելոյ զդժբաղդ եւ զխաղաղ բնակիչս երկրին:

Արդ՝ այսու կոնդակաւ մերով յանձնարարեմք Ամենապատուութեան Ձերում՝ փութով առնել զինչ որ արժան է եւ հնարաւոր՝ վասն անդորրութեան եւ ապահովութեան աշխատասեր ժողովրդեան մերոյ, ի ձեռն Վեհաշնորհ Կաթօղիկոսին Տանն Կիլիկիոյ եւ ազգային ազդեցիկ գործչաց մերոց...»⁵⁷:

19 Մարտին Սահակ Բ. Ատանայէն Նուպարի կը յայտնէ անոր 12 Մարտ թուակիրն ստացուած ըլլալը եւ կ'ըսէ.

... աղէտը անխուսափելի էր ու նոյն իսկ Ձեր ստանձնած նուիրական

նամակով ներկայացուած պատճառաբանութիւնները խմբագրած է «Պատրիարքարանի պատգամաւոր Պ. Վահան Փափագեան, որ Փարիզ կը գտնուէր այդ միջոցին»:

⁵⁶ ՓՆՄ, ՉՆՀՀՄ, հայացեալ՝ ֆրանսերէնէ:

⁵⁷ ՊՏԴ, Շ120: Տեսնել նաեւ մեր Հայկական Բարենորոգումներ... աշխատութիւնը, 123:

պարտաւորութեան տապալումը, եթէ չը յաջողէինք խօս ծրագրի գործադրութեան առաջքը առնել:

Իմացած էինք որ Մ. Տամատեանը Պէյրութի ճամբով Հալէպ գնացած է, անտի պիտի դառնայ Իսկէնտէրուն ու Տէօրթ Եօլ, ուր պիտի հանէին 3000 յունական կրա, ինն հարիւր հազար փամփուշտով, եւայլն, եւայլն, եւ բաւական թուով զինեալ բախտախնդիրներ: Անմիջապէս գրութիւն եւ առանձինն մարդ դրկուեցաւ Իսկէնտէրուն, որ Տամատեանը տեսնէ ու պարտաւորեցնէ ուղղակի Ատանա գալու:

Փետրուար 28ին (Ն[որ] Տ[ոմարով]) եկաւ. ամբողջ երկու օր եւ մէկ գիշեր խօսուեցաւ, որ իրենց երագները իրականացնելու ո՛չ միայն հող չը կայ, այլ նաեւ բովանդակ Հայութիւնը ջնջելու առիթ պիտի ըլլան ու ազգասպանութեան անէծքին պիտի արժանանան:

Համոզուած եւ ահ ու սարսափի մատնուած, որովհետեւ իրենցմէ աւելի խակ գործակիցներու միջոցաւ լուրը տարածուած էր⁵⁸, մեկնեցաւ ի Տէօրթ Եօլ, ուր լաւ ընդունելութեան չը հանդիպիր ու հազիւ հետապնդումներէ ինքզինքը ապահովելու կը յաջողի: Յառաջ քան Տամատեանի Ատանա գալը, Տէօրթ Եօլէն մարդ կանչած ու աղէտին անչափութիւնը բացատրուած էր եւ խօսք առնուած որ ամէն հնարաւոր միջոց ի գործ կը դնեն զէնք հանելու գործողութեան չը մասնակցելու: Որոշեալ օրը կը հասնի, կառավարական զգուշութիւնն ու հսկողութիւնը կը կրկնապատկեն Իսկէնտէրունէն մինչեւ Տէօրթ Եօլ, թերեւս մինչեւ Մէրսին ծովեզերաց վրայ: Նոյն օրը ծովը սովորականէն աւելի փոթորկոտ, նաւը որոշեալ տեղը կը հասնի, պայմանադրական նշանները չեն տեսնուիր, որով կը պարտաւորի Բարսեղ Յովհաննէանը⁵⁹ ամէն վտանգ աչք առնելով եւ ծովի կատաղութիւնը արհամարհելով գիշերայն նաւէն ծովեզերք իջնել եւ հազիւ խարխափելով Տէօրթ Եօլ ժամանել, ուր երկու հերոսներ իրարու կը հանդիպին, զիրար կը նախատեն եւ ի վերջոյ կը հիասթափուին: Շատ մը անցողարձերէ յետոյ, գործին անհնարութեան առջեւ որոշում կու տան նաւը վերադարձնել եւ զէնքերը յունական կղզի մը հանել: Բարսեղ Անանեան⁶⁰ Իսկէնտէրունի մէջ կը ձերբակալուի, քահանային երաշխաւորութեամբ կ'արձակուի. Եզիպտոսէն անձնագիր եւ կառավարական բարձր գովիստէրէն բարուք վկայութիւն կը խնդրուի, եւ այս պայմաններուն լրացումով ազատ կ'արձակուի եւ անտի կը մեկնի թերեւս ի Գահիրէ եւ կամ զինարարձ նաւուն գնացած տեղը:

Բարձրապատիւ Տէր, ինչպէս նկատած էիք, Պալքանեան Դաշնակիցներու, ի մասնաւորի Հէլլենաց խաղն էր, Կիլիկիայի համար պատրաստուած նոր մարտիրոսագրութիւնը, անշուշտ ո՛չ յօգուտ Հայութեան, այլ յօգուտ իրենց

⁵⁸ Կը թուի թէ Կաթողիկոսը կ'ակնարկէ «խորհրդապահական նախագգուշութիւններով» յղացուած ծրագրին հրապարակաւ յայտնի դարձած ըլլալուն:

⁵⁹ Անտոնեան իր կողմէ ուղիղ փակագծերու մէջ ենթադրաբար աւելցուցած է [Պերճ Օհանեան?]: Ենթական Բարսեղ Օհանեանն էր (Տեփոյեան, *Տամատեան*, 135):

⁶⁰ Անտոնեան հոս ճշգրտապէս աւելցուցած է [Օհանեան?]:

դատին: Մեր խելօքները գոնե անդրադարձած լինեին յունական դարաւոր նենգութեան, որ փոխանակ Փոքր Ասիոյ միլիոնաւոր Յոյները ոտքի հանելու, յիմար Հայերու արիւնով իր ազգակցաց բախտը ապահովել ուզած են. զենքերը ձրի տրուած են, եւ նաւուն մէջ միայն յիսուն Հայ երիտասարդներ կան եղեր. նպատակնին եղած է դուրս ելլելու եւ զենքերը հանելուն պէս գործի սկսելու, ակամայ կամայ Հայերը մորթուելու բռնադատելու: Իբրեւ թէ զենքերը պիտի բաժնեն եղեր Տէօրթ Եօյցլոց, Հասան Պէյլեցլոց, Հանընցլոց եւ Չէյթունցլոց. գուցէ եւ դրամով ալ ծախէին:

Ամէնէն խայտառակ ու ամօթալին այն է որ միամիտները խաբած են ահագին գումարներու խոստումով ու Ձեր եւ մեր համամիտ ըլլալու առասպելով: Ահաւասիկ ազգի մը ճակատագիրը վնասող խորհուրդ մը, որ խաբէութեամբ յղացուած, խաբէութեամբ ծնած ու խաբէութեամբ կազմակերպուած էր, բնական է որ ունենար այս վախճանը, որուն հասցնելու ոչ մէկ ջանք ու գոհողութիւն չը խնայուեցաւ:

Չէյթունի աղաները կանչել, կամ մարդ դրկել, երկուքն ալ անգործադրելի են ժամանակի փափկութեան պատճառաւ, եւ արդէն ամիսներ առաջ կառավարութեան խնդրանօք Ներսէս Եպիսկոպոսը դրկեցինք. ակնկալուած օգտակարութիւնը չունենալէ զատ վնասակար ըլլալը կը կարծուի, մանաւանդ կարօտութեան պատրուակի տակ Պատրիարքարանէն նպաստ խնդրելը ու 111 ոսկի մեր միջոցաւ դրկուիլը քար գայթակողութեան ու ճահիլներու ձեռքը սերմիա [դրամագլուխ]⁶¹ եղած է, թէ մեզ տրուելու համար եկած է այդ դրամը⁶²:

Շաբաթը մի քանի անգամ թէ Հալէպ Ներսէս Եպիսկոպոսին եւ թէ ի Չէյթուն գրելէ չենք դադրիր, գոհ ենք որ ամէն կողմ, մանաւանդ Չէյթունի յուրջ մասը, աղայները, հասկցած են վտանգին իրականութիւնն ու մեծութիւնը, նաեւ աննպատակ ըլլալը: Դրամական ամէն սուտ խոստում կարգ մը անօթիներ կը գրգռէ. Տարածուած սուտ եւ առասպելական յուրերու կարգէն է Եգիպտոսի ազգասէր! խումբին տրամադրութեան տակ գտնուած 100 հազարաւոր ոսկիներու գոյութիւնը, մինչդէռ ունեցածնին է 300–500 ոսկի, եւ Յունաց արտաքին գործոց նախարարի հարցման առ ամօթոյ պատասխան տուած են թէ 5000 ոսկի ունինք, եւ այն ալ ապշահար ըսած է.- Միայն հինգ հազար ոսկի⁶³:

Տեղւոյս կառավարութիւնը իմացած է եւ վալին փափկանկատ եղանակաւ հարցուց մեզ. մենք վստահութիւն տուինք որ Կիլիկիոյ Հայութիւնը իր օրական հացէն զատ ուրիշ հոգ ու մտածմունք չունի. բայց կրնայ ըլլալ որ երկրի թշնամիները Հայ անունով գործակալներ [դրկեն], կամ նոյն իսկ կաշառուած օտարահպատակ Հայեր գան եւ յօգուտ Պալքանեան Դաշնակիցներու մտքեր պղտորելու աշխատին. կառավարութեան պարտականութիւնն է պէտք եղած

⁶¹ Յաւելադրում՝ Անտոնեանի կողմէ:

⁶² Անտոնեան անհրաժեշտ նկատած է ծանօթագրել. «Կաթողիկոսը կ'ուզէ հասկցնել թէ տեղւոյն մէջ ապստամբութեան միտում ունեցողները, այդ դրամը իրենց համար դրկուած կարծած են»:

զգուշութիւնն ընել յօգուտ երկրին եւ խաղաղ ժողովուրդին: ...⁶³

21 Մարտին Լեւոն Մկրտիչեան Ադեքսանդրիայէն կը գրէ Նուպարի.

... Ձեր վսեմութիւնը կրնայ բացարձակապէս վստահ ըլլալ իմ տեղեկութիւններուս ճշդութեան մասին, որովհետեւ զանոնք կը քաղեմ ուղղակի աղբիւրէն: Ծարժման պետերը, գիտնալով հանդերձ թէ իրենց գործունէութեան եղանակին համամիտ չեմ, ոչինչ կը ծածկեն ինձմէ...

... Հանճեցէք չմոռնալ որ պատրաստուելու վրայ եղող շարժումը երկու մասի կը բաժնուի. մէկը Չէթունի մէջ, եւ միւսը Կիլիկիոյ հարաւային մասին մէջ: Այս կէտը շատ կարեւոր է. որովհետեւ, եթէ Կիլիկիոյ հարաւային մասին մէջ եղած շարժումը, որուն կեդրոնը կը գտնուի Տէօրթ Եօլ, Պալքանեան պետութեանց կողմէ դրդուած է, Չէթունինը, ընդհակառակը, զուտ տեղական հանգամանք մը ունի, եւ ոչ մէկուն, ոչ իսկ մեր տաքզուլի բարեկամներուն կողմէ դրդուած է: Կրնամ այս մասին Ձեզ վստահեցնել ամենահաստատ եւ ամենաբացարձակ կերպով:

Պալքանեան պատերազմէն շատ առաջ, 1912 Սեպտեմբերի սկիզբը, Չէթունի «իշխան»ներէն մէկը Եգիպտոս եկաւ, Չէթունցիներու ապստամբութեան մը ի նպաստ դրամ հաւաքելու համար: Չէթուն բաժնուած է չորս թաղերու, որոնցմէ իւրաքանչիւրը ունի իր «Աղա»ն որ «իշխան» կը կոչուի: Եգիպտոս եկողը օր մը, վերջին Սեպտեմբեր 15ին կամ 16ին, եկաւ զիս տեսնելու: Ինձի ցոյց տուաւ տեղւոյն հասարակութեան կողմէ գրուած վկայագրեր որոնք կը հաստատէին իր ինքնութիւնը եւ ինձի կը յանձնարարէին իր աստիճանին վայել պատիւներ ընծայել իրեն: Այս անձը բացէ ի բաց յայտարարեց թէ իր հայրենակիցները պիտի ապստամբին կառավարութեան դէմ, նախ անոր համար որ այս վերջինը չէ յարգած 1895ի ապստամբներուն անձնատուութեան բրօթօթօլը [= համաձայնութիւնը] որ ստորագրուած է տէրութեանց ներկայացուցիչներուն եւ Օսմանեան կառավարութեան կողմէ⁶⁴, եւ երկրորդ՝ այն պատճառաւ որ Չէթունի շրջակայ գիւղերը միշտ հարստահարուած են, եւ թէ Չէթունցիներու պարտականութիւնն է զանոնք փրկել իրենց տխուր վիճակէն:

Ծատ քաղաքավարութեամբ ընդունեցայ «իշխան»ը, բայց իրեն հասկցուցի թէ քաղաքականութեամբ չեմ զբաղիր: Աւելի ետքը իմացայ թէ դիմում ըրեր է բազմաթիւ երեսէիներու, բայց ոչ ոք իրեն դրամական օգնութիւն ըրեր է...:

Հար կը դատեմ քանի մը մանրամասնութիւններ տալ Ձեր Վսեմութեան՝ Չէթունցիներու նկարագրին նկատմամբ.- Այս մարդիկը հայրենասէրներ չեն բառին փիլիսոփայական իմաստով. պարբերաբար ապստամբութիւնները գորս

⁶³ ՓՆՄ, ՉՆՀՀՄ:

⁶⁴ Օսմանեան նոր սահմանադրութեան հռչակումին հետ իշխանութիւնները դադարեալ յայտարարած էին Չէթունի կարգավիճակին վերաբերեալ 1895-ին կիրարկութեան մէջ դրուած առանձնաշնորհեալի տրամադրութիւնները:

ըրած են, ո՛չ մէկ առնչութիւն ունին Հայաստանի տառապանքներուն հետ: Երբե՛ք, բնա՛ւ երբեք, իրենց հայրենակիցներուն օգտակար ըլլալու մտածումը չէ հպած այս մարդոց: Առաջնակարգ անձնասէրներ են: Իրենց նշանաբանն է՝ «Աստուած եւ *իմ իրաւունքս*»: Լեռնականներ են որոնք լոկ իրենց վրայ կը խորհին: Կատաղի թշնամութիւն մը կը սնուցանեն թուրքին հանդէպ եւ չեն կրնար տանիլ անոնց ներկայութիւնը իրենց երկրին մէջ, նոյն իսկ եթէ այդ ներկայութիւնը բոլորովին անվնաս ըլլայ, ինչպէս է հիմայ: Գիտեն թէ շնորհիւ իրենց բոյնին հրաշալի աշխարհագրական դիրքին, կրնան յաղթական դիմադրել 30–40.000 հոգինոց բանակի մը, եւ համոզուած են որ իրենց անվիճելի քաջութեան հետեւանքով Եւրոպա միշտ պիտի միջամտէ, վերջին պահուն, իրենց ի նպաստ: Օսմանեան կառավարութիւնն ալ գիտէ որ այսպէս են, եւ խոհեմութեամբ կը վարուի անոնց հետ...: ... վերոյիշեալ «իշխան»ը ինծի տեղեկութիւն տուաւ թէ հակառակ օրէնքին, իր հայրենակիցները զինուորական ծառայութիւն չեն ընէր: Երբ իրեն հարցուցի ատոր պատճառները, բառ առ բառ հետեւեալ պատասխանը տուաւ ինծի.

«- Երբ ոչ-իսլամներու զինուորագրութեան վերաբերող օրէնքը քուէարկուեցաւ, Ձէյթունի չորս «իշան»ները գումարում մը ունեցան եւ որոշեցին հետեւանք չտալ անոր!!!...

«- Հապա Օսմանեան իշխանութիւնն էր:

«- Մեր որոշման հպատակեցան!!!...»

Եւ ասիկա գուտ ճշմարտութիւնն է: Ոչ մէկ Ձէյթունցի կը գտնուի Օսմանեան բանակին մէջ:

... իրենց համար, իւրաքանչիւր ապստամբութիւն ընդհանուր ռազմավորած մըն է, որպէս զի զէնքերը չժանգոտին ... պիտի ընեն ատիկա, հակառակ Կաթողիկոսին բոլոր յորդորներուն. որովհետեւ, անգամ մըն ալ կ'ըսեմ, լոկ իրենց վրայ կը խորհին եւ այն հաստատ, անխորտակելի համոզումը ունին թէ *թուրքերը չեն կրնար Ձէյթուն մտնել*:

Կը զարմանամ ուրեմն որ Կիլիկիոյ Կաթողիկոսը նկատի չէ առած Ձէյթունցիներու նկարագիրն ու հոգեբանութիւն:

Այս տեսակետով պարտք կը զգամ Ձեր Վսեմութեան հաղորդելու լուր մը զոր նոր ստացայ, եւ որ բացարձակապէս ճշմարիտ է:

Վերջերս, Հալէպի Առաջնորդ Ներսէս Եպիսկոպոս Դանիէլեան, Կիլիկիոյ Կաթողիկոսին հրամանով եւ ժողովուրդը խաղաղեցնելու պաշտօնով, գացած էր Ձէյթուն, ուր մտքերը մեծապէս գրգռուած էին, իբր հետեւանք նոր հարսի մը սպանութեան որ սպաննուած էր թուրք զինուորներու կողմէ:

Դանիէլեան Սրբազան իր պաշտօնը կատարած եւ վերադարձած է Հալէպ⁶⁵:-

⁶⁵ Պոլսոյ պատրիարքարանին եւ Սահակ Բ.ի հրահանգներուն համաձայն, Ներսէս Եպիսկոպոս Հալէպէն Ձէյթուն մեկնած էր քննական այց մը կատարելու համար 1913-ի Յունուարին, երբ թրքական «կառավարութիւնը բացի Ձէյթունէն շրջակայ հայաշատ վայրերու

Պ. Միհրան Տամատեան, զոր Ձեր Վսեմութիւնը կը ճանչնայ, եւ որ այս միջոցիս Կիլիկիա կը գտնուի, Մարտ 12 թուով կը գրէ հետեւեալը.

«Պատիւը ունեցայ ընդունուելու Դանիէեան Սրբազանի կողմէ: Սքանչացած է Ձէյթուն ըրած ճամբորդութենէն: Ինծի պատմեց թէ Ձէյթունի երեւելիները իրեն յանձնած են Յիշատակագիր մը, բաղկացած 12 յօդուածներէ, 12 պահանջման կէտերէ, որոնց իրականացումը կը պահանջեն Բ. Դռնէն, Կ. Պոլսոյ Պատրիարքարանին միջոցաւ: Ինչ որ կը պահանջեն, Ձէյթունի եւ շրջականերուն համար կատարեալ ինքնավարութիւն մըն է, ո՛չ աւելի ո՛չ պակաս: Դանիէեան Սրբազան ինծի յայտնեց թէ Ձէյթունցիները վեց շաբաթ պայմանաժամ տուեր են Բ. Դրան՝ իրենց Յիշատակագրին պատասխանելու համար: Երբ այս պայմանաժամը անցնի, ինքզինքնին ազատ պիտի նկատեն իրենց յարմար թուած ո՛ր է եւ որոշում տալու: Ինչ որ ամէնէն հետաքրքրականն է, աւելցուց Դանիէեան Սրբազան, Ռուսիոյ, Ֆրանսայի եւ Անգլիոյ Հիւպատոսները, Ձէյթունէ դարձիս ինծի այցելեցին եւ փափաքեցան տեղեկանալ Ձէյթունցիներու պահանջմանց. իրենց յայտնեցի Յիշատակագրին խնդիրը, եւ շատ պնդեցին անոր օրինակը ունենալու համար»:

Պ. Տամատեան կ'աւելցնէ թէ Դանիէեան Սրբազան, լաւ ֆրանսերէն չգիտնալով, իրմէ խնդրէր է որ հաւատարմօրէն թարգմանէ Ձէյթունցիներու Յիշատակագիրը, ինչ որ կատարէր է, եւ եպիսկոպոսը, անմիջապէս, երեք Հիւպատոսներուն որկեր է այդ թարգմանութենէն մէյմէկ օրինակ:

Իմ մասիս, համոզուած եմ որ Ձէյթուն քաղաքը, իր շրջակայքով, այս անգամ ինքնավարութիւն պիտի ունենայ.- արժանի է ատոր, կը վայելէ Եւրոպայի համակրութիւնը, եւ յետոյ, երմտական շահեր գոյութիւն չունին այդ անմատչելի լեռներուն վրայ: Այլեւս ատեն է, թերեւս, որ այս արի փոքրիկ ժողովուրդը, այս հայկական Մօնթէնէկրօցին⁶⁶, քաղէ իր քաջութեան եւ դարաւոր դիմադրութեան պտուղը: Միակ ժողովուրդն է որ մինչեւ աստիճան մը փրկած է Հայոց զինուորական պատիւը: Արժանի է ազատ ըլլալու, եւ Եւրոպայի համակրութիւնը կը վայելէ: Եւ եթէ որոշած է զէնքի դիմելու, ինչպէս կը հաստատեն, մեր պարտականութիւնն է, Վսեմաշուք Տէր, Ձէյթունը չուրանալ: ...

*

Գալով Կիլիկիոյ հարաւային կողմին, խնդիրը ամէն կերպով կը տարբերի: Այդտեղը՝ Ձէյթունի նման երկար ատենէ ի վեր Օսմանեան կառավարութենէն մեկուսացած վայր մը չէ: Կիլիկիոյ հարաւային կողմը շարժում մը, կառավարութեան աչքին, կը նշանակէ Հայ խռովարարներու կողմէ վառուած ընդհանուր

մէջ» ալ տեղաւորած էր զինուորական ուժ՝ «առ ի կանխագգուշութիւն հաւանական ապստամբութեան» (Փամպուքեան, 376-377):

⁶⁶ Մկրտիչեան զէյթունցիները կը նմանեցնէ մոնթենէկրօցիներուն, որոնք 1858-ին, ապա նաեւ 1878-ին յաջողութեամբ մարտնչելով գերակշիռ օսմանեան ուժերու դէմ, եւրոպական մեծ տէրութիւններու ուշադրութիւնը հրաւիրած էին իրենց վրայ եւ մեծ տէրութիւններու միջամտութիւնն ու նեցուկը վայելելով, Ապտուլ Համիտ Բ. հարկադրուած էր ընդունիլ անոնց անկախութիւնը Պերլինի Դաշնագրով:

ապստամբություն մը որ կրնայ շատ չարաղէտ հետեւանքներ ունենայ: Այս վերջին շարժման դէմ է որ մաքառեցայ, ինչպէս ինծի հետ ուրիշ շատեր, եւ ճիշդ այս շարժումն է որ քաջալերուած է Յունաստանի կողմէ:

3000 «կռա» հրացանները եւ 100 «մաւզեր»ները զորս Յունաստան հայթայթեց ճրի, անոնց հետ միասին մեծ եւ փոքր ծաւալով պայթուցիկ ռումբերը զորս հեղին կառավարությունը շարժման պարագլուխներուն ծախեց ծիծաղելի գիներով, Կիլիկիա փոխադրուեցան Յունական շոգեմաւով մը, եւ զարմանալի դիրքութեամբ մթերուեցան Տէօթ Եօլ⁶⁷: Պ. Տամատեան տարօրինակ բաներ կը գրէ: Այս մարդը միշտ իմ հակառակորդս եղած է Աղեքսանդրիոյ հայ հասարակութեան ճղճիմ գործերուն մէջ. բայց Ձեր Վսեմութիւնը, որ զիս լաւ կը ճանչնայ, անշուշտ հաստատած է թէ չեմ կրնար ատելություն սնուցանել իմ քաղաքական հակառակորդներուս նկատմամբ, մանաւանդ երբ «քաղաքականություն» ըսելով կը հասկցուին տեղական գործերը: Արդ, ինչ որ ալ եղած ըլլայ Պ. Տամատեանի տրամադրությունը ինծի հանդէպ, զինքը միշտ նկատած եմ եւ կը շարունակեմ նկատել, հակառակ իր կարգ մը թերութեանց, իբր արժանահաւատ մարդ մը, եւ չեմ կարծեր որ կրնայ սուտ խօսիլ: Ճշմարտապէս պիտի վշտանայի այն օրը ուր հակառակը հաստատելի:

Արդ, սկզբունքով ընդունելով թէ Պ. Տամատեան անկարող է սուտ խօսելու, Ձեր Վսեմութեան կը հաղորդեմ, ի գիտություն, իր վերջին նամակէն կարգ մը հատուածներ.

«Երջեցայ բովանդակ Կիլիկիոյ մէջ: Յաւեցայ տեսնելով որ իսլամ բնակչութիւնը, ամէն կողմ, վիստ վիճակ մը ունի, եւ թուրք զինուորներն ալ գրգռեցաներու մէջ են: Ծատ զինուորներ շուկային մէջ կը ծախեն իրենց զէնքերը, որպէս զի քիչ մը դրամ ձեռք բերելով պատահ մը հաց գնեն: Ճշմարտապէս տխուր եւ անհաւատալի է քայքայումը այս փառաւոր եւ ահարկու բանակին որ երբեմն բովանդակ աշխարհը կը դողացներ: Ինչ որ ալ ըսելու ըլլաք, ես իմ սեփական աչքերովս տեսայ այս կայսրութեան քայքայումը թէ՛ իր ժողովուրդով եւ թէ իր բանակին մնացորդներով: Կարծես այս յաղթական եւ հպարտ ժողովուրդը իր քաղաքական կեանքին վերջալոյսը մտած է: Դուք իմաստուն մարդիկ ի գուր մեզի խոհեմություն եւ անգործություն կը քարոզէք: Գաղափար չունիք Ձեր տուած խորհուրդին վրայ: Թող չըսուի թէ անգործությունը իմաստուն քաղաքականություն մըն է ամէն ժամանակի եւ ամէն պարագայի մէջ: Ժողովուրդի մը կեանքին մէջ պահեր կան ուր խոհեմությունը քաղաքականութեանց

⁶⁷ Պարզապէս կ'ուզենք նշել թէ ցամաքահանելի ռազմանիւթերու քանակին եւ տեսակին մասին աղբիւրներու մէջ տրուած են հակասական տուեալներ, որոնց վրայ չենք ուզեր յամենայ: Կարելոյ է, սակայն, դիտել տալ թէ «զարմանալի դիրքութեամբ մթերուեցան» արձանագրությունը չի համապատասխաներ իրականութեան: Նամակագիրը՝ Մկրտիչեան, կրնար անտեղեակ գոհ մը կամ գիտակից տարածող մը ըլլալ ապատեղեկատուութեան մը, որ կատարուած էր ցամաքահանումը վիժեցնելու փորձեր կանխելու դիտաւորութեամբ՝ զայն ներկայացնելով որպէս կատարուած իրողություն, ինչպէս կը յուշէ Յակոբ Փափագեանի 6 Մարտ 1913 թուակիրը (տեսնել Սերոբեանի Ինքնակենսագրութեան բաժնին մէջ):

յոռեգոյնն է, անձնասպանութիւն է: Այս միջոցիս համանման տագնապ մը կ'անցընենք. վա՛յ անոնց որոնք չեն գիտեր օգտուիլ ամիթներուն ամէնէն նպաստաւորէն որ երկրորդ անգամ մըն ալ չպիտի յայտնուի. ասիկա բացարձակապէս ասպաւիտ է:

«Կրնաք իմ վրաս խորհիլ ինչպէս որ ուզէք. Եգիպտոսի կարգ մը քաղաքագետներու աչքին ես յարգելի խենթ մըն եմ, անհաւասարակշիռ մարդ մը, ցնորամիտ մը: Բայց, իբր իրազեկ, Ձեզի կը յայտարարեմ թէ Թուրքիա այս պահուս ոչ մէկ զինուորական ոյժ կրնայ հանել մեզի դէմ: Կիլիկիոյ մէջ, Թուրքիոյ գէնքի ամբարանոցները մեծ մասամբ վստահուած են Հայ զինուորներու որոնք արդէն իսկ շահուած են մեր դատին: Մեզմէ բառի մը կը սպասեն դասալիք ըլլալու եւ մեզի յանձնելու համար բազմաահազար կատարելագործեալ գէնքեր, այնպէս որ Յունաստանի օգնութիւնը երկրորդական նշանակութիւն մը կը ստանայ: Կիլիկիոյ մէջ, բացի Չէյթունէն, անառիկ բնական դիրքեր կան, աւելի ամուր քան Եանիան եւ Շքօտրան⁶⁸, ինչպէս Սիս, Պէլլան, Սուէլտիա, Էւայն. թուրքերը բնաւ չեն խորհած այդ վայրերը գրաւել, որովհետեւ մտքերնէն անգամ չէին կրնար անցընել թէ հայկական ապստամբութենէ մը վախճալու տեղի կայ: Մեր առաջին հոգը պիտի ըլլայ գրաւել այդ ռազմական կէտերը որոնք կրնան ամիսներ ու ամիսներ դիմադրել թշնամիին, պայմանաւ որ պաշտպանողները անհրաժեշտ պարէնը ունենան: Այդ է որ կը պակսի մեզի, որովհետեւ հաւաքուած գումարները բացարձակապէս անբաւական են երկար դիմադրութեան մը համար: Բայց յանցանքը մեր ունեւոր հայրենակիցներունը պիտի ըլլայ, որոնք բնաւ չուզեցին մեզի օգնել: Ուրիշ բանի պէտք չունինք, այլ միայն հացի: Ինչ որ ալ ըլլայ, քիչ ատենէն արտասովոր բաներու լուրը պիտի առնէք: Տէօրթ Եօլի սպառազէն յեղափոխականները, *ամենամեծ դիւրութեամբ* պիտի կրնան գրաւել Իսկէնտէրուն քաղաքը ուր առժամեայ կառավարութիւն մը պիտի հաստատուի: Ձիաւորներու գումարտակ մը պիտի միանայ Սիսի, Պէլլանի եւ Սուէլտիոյ նման ամուր դիրքերու բնակչութեանց եւ զանոնք պիտի գրաւէ: Ուրիշ գումարտակ մը պիտի յարձակի Ատանա քաղքին վրայ, եւ մեծ ծաւալ ունեցող պայթուցիկ ռումբերով ահաբեկութեան պիտի մատնէ իսլամ բնակչութիւնը: Յեղափոխական դատարան մը, առանց ձեւակերպութեան պիտի դատէ 1909ի ջարդարարներուն պետերը եւ անոնց պիտի տայ իրենց արժանի պատիժը:

«Մեր հարաւի շարժման հետ համաձայնաբար, Չէյթունցիները, լոկ 400 հոգինոց գումարտակով մը իրենց լեռներէն իջնելով պիտի գրաւեն Մարաշ քաղաքը, ուր առժամեայ կառավարութիւն մը պիտի հաստատեն. աւելի ետքը

⁶⁸ Տամատեան ներկայիս Յունաստանի մէջ գտնուող Եանինայի (Ioannina) և Ալպանիոյ պատկանող Շքօտրայի (Shkodër) յիշատակութիւնը կը կատարէ այն հաւատքով թէ, ինչպէս անոնք Օսմանեան Կայսրութեան մէջ յաջողած էին ինքնավար շրջաններ դառնալ, այնպէս ալ Կիլիկիոյ անառիկ նկատուած վայրերը կրնային ինքնավարութիւն ձեռք բերել գէնքի դիմելով:

պիտի անցնին Հանրն, էապէս Հայկական քաղաք մը, որ ապահովաբար պիտի կրնայ յամառ դիմադրութիւն մը ընել թուրք զինուորներուն: Ձէյթունցիները ինքնօրէնութիւն կը պահանջեն երկրամասի մը համար որուն մէջ պիտի գտնուին, բացի քաղքէն եւ շրջակայ գիւղերէն, Մարաշ եւ Հանրն քաղաքները որոնք իրենց երկրէն քիչ հեռաւորութիւն ունին: Մերինին հետ համընթաց իրենց շարժումը բարեբախտ գուգադիպութիւն մըն է, որովհետեւ, եթէ յոռեզոյն պարագային մեր շարժումը յաջողութեամբ չպսակուի, գէթ ապահով ենք որ Ձէյթուն լաւագոյն արդիւնք մը ձեռք պիտի բերէ⁶⁹: Ես համոզուած եմ սակայն որ մենք ալ Ձէյթունցիներուն չափ յաջողութիւն պիտի ունենանք: Այստեղ այլեւս կառավարութիւն չկայ: Ի՞նչ պիտի խորհիք, եթէ յայտնեմ թէ թուրքերը *ճակատագրի, «քրտսէլ»*ի հաւատքը ունին: Ի՞նչ պիտի խորհիք, եթէ յայտնեմ թէ Տէօրթ Եօլի գայմագամն ու զինուորական հրամանատարը արդէն իսկ շահուած են մեր դատին, կաշառքով, եւ թէ ցարդ մեզի յանձնած են թղթատարատունն ու հեռագրատունը: Ապահովաբար բնաւ չպիտի ուզէք հաւատալ այս ամէնուն, եւ զիս ցնորամիտ մը պիտի ենթադրէք: - Հազար անգամ իրաւունք ունիք, Ձեր տեսակէտով: - Ես ինքս, եթէ Ձեր տեղը ըլլայի, ուրիշ կերպ չպիտի խորհէի: - Բայց քիչ մը համբերութիւն ունեցէք, եւ պիտի տեսնէք թէ Տամատեան խենթ մը չէ եւ Ձեզի ըսած է ճշմարտութիւնը, զուտ ճշմարտութիւնը:

«Հիմայ, Ձեզմէ ամբողջ խնդրածս է դրամ, դրամ, եւ միշտ դրամ, ո՛չ թէ ուրիշ նպատակի, այլ հաց, լոկ հաց գնելու համար: Որովհետեւ, հացով միայն պիտի կրնանք երեսնիս ճերմկցնել ամիսներ ու ամիսներ⁷⁰: Չէ՞ք ուզեր մեզի օգնել.

⁶⁹ Այս պարբերութեամբ աներկբայօրէն կը հաստատուի թէ Ազգային Պաշտպանութեան Բոմիթէին եւ զէյթունցիներու ծրագիրները մշակուած էին անջատաբար եւ անոնց համընթացութիւնը բարեղէպ գուգադիպութիւն նկատուելով, համակարգումի ճիգ մը տեղի ունեցած էր ծրագիրները գործադրութեան դնելէ առաջ:

⁷⁰ Երբ նկատի ունենանք յետզինադադարեան շրջանին ֆրանսական ուժերու ներկայութեամբ Կիլիկիոյ մէջ քեմալական ուժերով, չեթէներով եւ այլ զինեալ թուրքերով շրջապատուած ու իրենք իրենց բաղդին ձգուած, նոյնիսկ ֆրանսական ուժերու ալ անբարեկամ ընթացքին առջեւ գտնուած հանրացիներու եւ այնթապցիներու ինքնապաշտպանական կռիւներուն առնչուած մանրամասնութիւններ, կը տարուիինք մտածելու թէ Տամատեանի գնահատումը տեղին էր երկարաձիգ դիմադրութեան համար բաւարար սնունդ ունենալու կարելորդութեան մասին՝ որպէս յաջող շարժման մը էատարր: Դիտել տանք թէ կար նախադէպ մըն ալ՝ կապուած Չորք Մարգպանի հետ եւ պատմուած՝ ապստամբական ծրագրէն անհանգստացած եւ անոր ընդդիմացող Երուանդ Աղաթօնի կողմէ: Տէօրթեոլցիներու 1909-ի ինքնապաշտպանութեամբ զիւղին տասնեակ մը հազար հաշուող հայերը մահէ կրցած էին փրկուիլ շնորհիւ այն ալիւրին, որ ՀԲԸՄ-ի նիւթական յատկացումով եւ Ալեքսանտրէթի իտալացի հիւպատոսին կարգադրութեամբ հասցուած էր Չորք Մարգպան, երբ հազիւ երեք օրուան պաշար մնացած ըլլալով գիւղն մէջ, անձնատուութենէ տարբեր ելք չէր մնացած «հազարաւոր զինուորներէ եւ *սաշույօզուքներէ* պաշարուած» հայոց համար (Ե[րուանդ] Գ[րիգոր] Աղաթօն, *Պոլսոյ 1860-ի եւ Գահիլթէի 1906-ի Բարեկործականներուն Ծնունդը եւ Պատմութիւնը*, տպ. Հայ Դպրոց, Պրնէէն եւ Ժընէվ, Չուիցերիա, [1931], 41–43:

Դուք գիտեք: Խղճերնիդ մշտապես պիտի տանջե Ձեզ որ Ձեր անտարբերությամբ եւ հակառակությամբ պզտիկցուցիք կարեւորութիւնը շարժման մը, որ մօտ ատենէն բովանդակ Եւրոպայն ապշութեան պիտի մատնէ»:

Ասոնք են Վսեմաշուք Տէր, Պ. Միհրան Տամատեանի խօսքերը. զանոնք կ'արտագրեմ առանց մեկնութեան⁷¹: ...

23 Մարտին Վահան Մալեգեան Գահիրէէն կը գրէ Նուպարի.

... Աղեքսանդրիա հասնելուս՝ զարմացայ լսելով որ Կիլիկիոյ մէջ ընդհանուր ապստամբութիւն մը կազմակերպուած է Ազգային Պաշտպանութեան (իրականութեան մէջ՝ Յեղափոխական) նոր Բօմիթէին կողմէ, եւ թէ շոնդալից դէպքերու կը սպասուի մէկ վայրկեանէն միւսը: Այս մասին բազմաթիւ գումարումներ ունեցանք, որոնց վերջինը այսօր իսկ, Ն. Վսեմ. Արթին փաշայի մօտ, եւ իր հրաւերին վրայ: Բացի մեր բարեկամներէն, ներկայ էին Մկրտիչեան, Ապահ, Օհանեան եւ Փափագեան Աղեքսանդրիայէն: Եզրակացութիւնը սա եղաւ թէ ոչինչ կարելի է ընել կատարուած իրողութեան հանդէպ: Արդարեւ, համոզուած եմ թէ անկարելի է այս անմիտ շարժումը կասեցնել: Շատ ծանր դէպքեր տեղի պիտի ունենան եւ շատ անմեղ արիւն պիտի հոսի Կիլիկիոյ մէջ: Յիմարութիւնը իր գործը պիտի տեսնէ անգամ մըն ալ: Անդիմադրելի մոլուցք մըն է, որուն անխորհուրդ հանգամանքը սակայն կասկածի չ'ենթարկեր ղեկավարներուն ուղղամտութիւնը: Բոլոր մը մարդիկ են, մեծ մասամբ մեզի բարեկամներ, Տամատեան, Օհանեան, Ապահ, եւ այլն, որոնք այս շարժման գլուխը անցած են: Յաջողեր են քիչ շատ օժանդակութիւն ստանալ Յունաստանէն եւ համախոհներ գտնել Կիլիկիոյ մէջ (Հայ ժողովուրդը դժբախտաբար շատ հարուստ է ցնորամիտներով): Շատ չպիտի ծանրանամ այս կէտին վրայ. Մկրտիչեան (որ կատարուած իրողութեան յարած է) երկարօրէն գրած է Ձեզի, իրեն յատուկ եղանակով, եւ Արթին փաշա ալ այսօր մանրամասնօրէն պիտի գրէ, մեզի յատուկ եղանակով:

Միայն թէ, որովհետեւ այս շարժումը Եգիպտոսէն կը մեկնի, ո՛չ միայն մենք բոլորս անձնապէս, այլ նոյն իսկ Ձեր Վսեմութեան նախագահութեան տակ գտնուող Պատուիրակութիւնը, եւ Միութիւնն ալ, կասկածի ենթակայ ենք: Որովհետեւ, Կիլիկիայէն մեզի հասած տեղեկութեանց համաձայն, այդ երկիրներու մեր հայրենակիցները կարծեր են թէ համակիր ենք այս յեղափոխական շարժումին. նոյն իսկ այնտեղ գտնուել են մարդիկ որոնք հաւատացեր են թէ մենք ալ կ'անդամակցինք Բօմիթէին, եւ կամ Բօմիթէն կը գտնուի [Հ. Բ. Ը.] Միութեան հովանաւորութեան տակ: Պէտք է գէշ հեռացնել այն վտանգը որ կրնայ ծագիլ այս կարգի գնահատումէ մը: ... նոյն իսկ խնդիր եղաւ որ պատուի-

⁷¹ ՓՆՄ, ՉՆՀՀՄ: Անտոնեան նշած է հետեւեալը. «Պ. Տամատեանի այս նամակին բնագիրը անշուշտ հայերէն է եւ Պ. Լեւոն Մկրտիչեան թարգմանած է ֆրանսերէնի, որուն վրայէն, իմ կարգիս, թարգմանեցի հայերէնի»:

րակ մը դրկենք Կիլիկիա:

Ձեր Վսեմութիւնը պիտի գիտնայ չափել ծանրակշիռ հանգամանքը նախատեսուած դէպքերուն, եւ պիտի բարեհաճի ձեռք առնել անհրաժեշտ միջոցները, այս անարգ յիմարութեան աղիտաբեր հետեւանքները իրենց նուազագոյն համեմատութեան վերածելու համար...⁷²:

25 Մարտին Երուանդ Աղաթօն ալ Գահիրէէն կը գրէ Նուպարի հետեւեալ «մտերմական» տողերը.

... Անդրանիկեան եւ ես մեր բոլոր կրցածը ըրինք այդ յիմարութիւնը արգիլելու համար: Բայց մեզի անկարելի եղաւ իմաստութեան յորդորել խենթերը:

Իմ Խոնարհ կարծիքովս, Պ. Մկրտիչեան որ վերջերս գրած է Ձեզի, երկդիմի խաղ մը կը խաղայ: Ինքզինք խենթերուն հակառակորդ ցոյց կու տայ, բայց միւս կողմէ կ'ուզէ դրամ հաւաքել, յեղափոխութեան օգնելու համար: ... Վերջին պահուն, հոգուով մարմնով նուիրուեցաւ յեղափոխական դատին⁷³: Բայց դեղահատը ոսկեգօծեց, մեզ դրդելու համար որ բանանք մեր քսակները:

Անկեղծ ըլլալու համար կը յայտնեն թէ այս ամբողջ շարժումը *մեր պատուական բարեկամ Ապահի* էնթրիկներուն արդիւնքն է: ... Դժբախտութիւնը հոն է որ մեր խենթերը, իրենց գործակալներուն միջոցաւ, Կիլիկիոյ մէջ լուր տարածած են թէ Միութիւնը շարժման գլուխը կը գտնուի: Այս ցնորամիտները կ'ուզեն Միութեան անունը շահագործել՝ որպէսզի ժողովուրդը իրենց ետեւէն քաշեն:

Երէկ, Ատանայէն, մեր պատուիրակ Մ. Նաթանեանէն⁷⁴, ստացանք նամակ մը որ մեզի տեղեկութիւն կու տար այդ խենթերու արարքներուն նկատմամբ, խնդրելով որ բոլոր կրցածնիս ընենք անոնց յիմարութեան առաջքը առնելու համար: Շատ կը ցաւինք, բայց ոչինչ կրնանք ընել: ...

Այս գործին բուն պարագլուխներն են Պերճ Օհանեան, Տամատեան եւ Յակոբ Փափագեան՝ Ադեքսանդրիոյ մէջ, եւ Ապահ ու Ատոմ Ասլանեան՝ Գահիրէի մէջ:

Մեր բարեկամներէն մէկ քանին, տեսնելով որ շարժումը անխուսափելի էր քանի մը տասնեակ օսմանեան ոսկի տուին:

Ադեքսանդրիոյ մէջ սկսած են պայքօթի ենթարկել Միութիւնը: Մեզ թշուառականներ կը նկատեն...⁷⁵:

⁷² ՓՆՄ, ՉՆՀՀՄ, հայացեալ՝ ֆրանսերէնէ:

⁷³ Լեւոն Մկրտիչեանի նախապէս ներկայացուած նամակները չեն հիմնաւորեր Աղաթօնի անոր տուած գնահատականը:

⁷⁴ Կրթական բազմերախտ աշխատաւոր Միքայէլ Նաթանեան ՀԲԸՄ-ի Կեդրոնական Վարչական Ժողովին որոշումով որպէս քննիչ-պատուիրակ դրկուած էր Կիլիկիա, ուր Միութեան մասնագիտորէրով զբաղելու կողքին, կը մասնակցէր կրթարաններն ու կրթական կեանքը կազմակերպելու աշխատանքներուն:

⁷⁵ ՓՆՄ, ՉՆՀՀՄ, հայացեալ՝ ֆրանսերէնէ:

23 Ապրիլին, երբ այլևս պատմություն դարձած էին ապստամբական վիժած ծրագիրները, Նուպար Սահակ Բ.ի կը գրէ.

... Կը փութամ Ձեր Շնորհազարդ Սրբազնութեան մօտ թարգմանը ըլլալ Ազգային Պատուիրակութեան, Ձեզի յայտնելու համար բովանդակ գոհունակութիւնը զոր զգաց, տեղեկանալով որ, շնորհիւ Ձեր Շնորհազարդ Սրբազնութեան փութաջանութեան ու կորովին, կատարելապէս ձախողեր է Յոյներու կողմէ Ատանայի նահանգին մէջ տեղի ունեցած խռովութեան փորձը:

Ոչ այնքան Ձեր շնորհազարդ Սրբազնութեան նամակէն, որ համեստօրէն կը ծածկէր այն տիրական դերը զոր կատարած էք այս պարագային, որքան ուրիշ լուսատեղեակ աղբիւրներէ իմացանք թէ Ձեր Շնորհազարդ Սրբազնութիւնը ի՛նչ զմայելի կերպով մը յաջողած է հեռացնել այս վտանգը որուն պիտի ենթարկուէին հազարաւոր անմեղներ:

Իր մասին, Պատուիրակութիւնը, վտանգին մտատանջութեան մէջ, խոր անձկութեան պահեր անցուց: Ան կը նախատեսէր այն սոսկալի եւ արիւնալի փոխվրէժը զոր քանի մը խելայեղներու անխորհուրդ եւ անպէտ ժէսթը, եթէ գործադրութեան դրուէր, կրնար առաջ բերել անխուսափելի կերպով:

Ձեր Շնորհազարդ Սրբազնութիւնը մեծապէս արժանի եղաւ Հայկական հայրենիքին. եւ մեզի այլևս ուրիշ բան չի մնար ընելիք, այլ մաղթել որպէս զի իր անձնուիրութիւնը տայ իր բոլոր պտուղները, եւ այն բանակցութիւնները զորս Պատուիրակութիւնը՝ հիմայ որ ապստամբութեան ահռելի մղձաւանջը փարատեցաւ՝ կրնայ շարունակել կատարեալ հանդարտութեամբ, յաջող արդիւնքի մը յանգին եւ կարենան մեր հայրենակիցներուն ապահովել, վերջապէս պաշտպանուած իրենց շէներուն մէջ, արդարութեան եւ կեանքի իրաւունքը: ...⁷⁶

* * *

Ապստամբութեան ծրագիրն ըստ Տեփոյեանի աշխատութեան

... Վրայ հասաւ Պալքանեան պատերազմը: Այս պատերազմին հռչակման առաջին օրերուն իսկ Եգիպտոսի ռամկավար, հնչակեան, դաշնակցական եւ վերակազմեալ ընկերներէն խումբ մը, Ազգային Պաշտպանութեան կոմիտէ անունով միութիւն մը ստեղծած էին, որուն նպատակն էր այս պատերազմի առիթէն օգտուելով Կիլիկիոյ մէջ ապստամբական շարժում յառաջացնել: Սոյն կոմիտէն 1912 Հոկտեմբերին ազգային շրջանակներու մէջ տարածեց գաղտնի յայտարարութիւն մը, որուն մէջ հետեւեալ կերպով կը պարզէր Կիլիկիոյ կացութիւնը եւ զինեալ ինքնապաշտպանութեան շարժումի մը անհրաժեշտութիւնը:

⁷⁶ ՓՆՄ, ՉՆՀՀՄ, հայացեալ՝ ֆրանսերէնէ:

Հինգ պարբերություններով կը ներկայացուի բուսանդակությունը գաղտնի յայտարարություն- Վ.Դ.:

Այս յայտարարության մէջ յիշած հայերու կողմէ եւրոպական քոնթրոլի պահանջը բարենորոգմանց խնդրոյն մէջ, ակնարկութիւն մըն է բարեյիշատակ Պօղոս Նուպար փաշայի այդ միջոցին իբրեւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի լիազօր ներկայացուցիչը եւ իբրեւ նախագահ Ազգային Պատուիրակութեան մեծ պետութեանց մօտ կատարած դիմումներուն եւրոպական քոնթրոլի տակ հայկական բարենորոգութիւններու պահանջով: Այս դիմումներուն արդիւնքը տակաւին յայտնի չէր, եւ Եգիպտոսի Ազգային Պաշտպանութեան կոմիտէն յոյս չունէր որ անով արդիւնաւոր ելքի մը պիտի յանգէին, քանի որ մեծ պետութիւնները պաքսանեան պատերազմի առաջին փուլերուն մէջ իսկ նախատեսելով Թուրքիոյ եւրոպական հողամասերուն հաւանական կորուստը, իրարու հետ կը բանակցէին գոնէ ասիական Թուրքիոյ ամբողջականութեան պահպանումը երաշխաւորելու մասին:

Տամատեան Ազգային Պաշտպանութեան կոմիտէին անունով կ'երթայ Յունաստան եւ կը ներկայանայ նախարարապետ Վենիզելոսին և կը յաջողի անկէ առնել խոստում մը Կիլիկեան շարժումի մը համար տրամադրելու մեծաքանակ զէնք եւ փամփուշտ:

Տրուած այս խոստումէն քաջալերուած կոմիտէն պաշտօն կը յանձնէ իր անդամներէն Բարսեղ Օհանեանի Կիլիկիա շրջան մը ընելու: Օհանեան կ'ելլէ Ալեքսանտրէթ եւ անկէ կ'անցնի Տէօրթ Եոյ: Կը տեսնուի ռամկավար Գուրգէն Սարայտարեանի, տէօրթ ելոցի Համբարձում Պարսումեանի եւ Խաչեր Էֆենտի Գարաեաղուպեանի հետ, որոնք կը խոստանան հասնելիք զէնքերը Տէօրթ Եոյի մէջ ստանալ եւ ամէն կերպով ջանադիր ըլլալ ինքնապաշտպանութեան մը ձեռնարկին յաջողութեանը:

Տամատեան եւ իր ընկերները (Յակոբ Փափագեան, Պերճ Օհանեան, Էօժէն Բաբագեան) կը թղթակցին իրենց Ձէյթունի, Հանճընի, Սիսի գաղափարի ընկերներուն հետ, որոնցմէ նպաստաւոր պատասխան կը ստանան:

Տամատեան կը գրէ նաեւ Ատանայի Առաջնորդ Շահէ վրդ. Գասպարեանին եւ անոր կարծիքը կը հարցնէ: Շահէ վարդապետ սկեպտիկ պատասխան մը կուտայ: Ան կ'ըսէ, թէ ժողովուրդը այսպիսի շարժումի մը համար ո'չ պատրաստ է եւ ո'չ ալ տրամադիր եւ մանաւանդ զէնք չունի: Տամատեան ի պատասխանի կաւեցնէ, թէ իրենց զէնք պիտի հասցուի:

Այդ միջոցին Եգիպտոս կը հասնի Մուշեղ Մերոբեան (այն ատեն Արքեպիսկոպոս), որ Տամատեանի կողմէ Ամերիկայի Ռամկավար Կուսակցութեան նախագ. վարչութեան եւ իրեն գրուած նամակներուն արձագանգ տալով Ամերիկայէն մեկնած եւ Փարիզի ճամբով Եգիպտոս եկած էր ծրագրուած շարժումին գլուխը անցնելու համար: Փարիզի մէջ Պօղոս Նուպար փաշա զինք զգուշացուցած էր մասնակցելէ այդպիսի վտանգաւոր ձեռնարկի մը, որ կրնար վիժեցնել հայկական բարենորոգումներու մասին իր դիմումները պետութեանց մօտ:

Մուշեղ Մերոբեան երբ Աղեքսանդրիա հասաւ, ձեռնարկին հանդէպ տակաւին խանդավառուած էր, բայց պետք զգաց Կիլիկիոյ Սահակ Կաթողիկոսին կարծիքը հարցնելու, որմէ ստացաւ բոլորովին աննպաստ պատասխան մը, որուն ամփոփումն այն

էր, որ այդպիսի ձեռնարկ մը անխուսափելի[օրէն] պիտի յանգէր Կիլիկիոյ հայութեան ընդհանուր կոտորածին:

Պօղոս Նուպար փաշա ինքն ալ Փարիզէն գրած էր Եգիպտոսի ականաւոր ազգայիններուն, որ ամէն ջանք ընեն խափանելու ծրագրուած ձեռնարկը: Հակառակ այս ընդդիմութեանց, որոնք մասնաւորապէս վնասեցին ձեռնարկին համար բացուած հանգանակութեան արդիւնաւորութեան, կոմիտէն հաստատ կեցաւ իր ծրագրին վրայ, Գասպար Իփէկեան կոմիտէին կարգադրութեամբը մեկնեցաւ Ադէքսանդրիայէն Կովկաս, դրամական հանգանակութիւն կատարելու: Մուշեղ Սերոբեան նոյն նպատակով Կովկաս երթալու ճամբուն վրայ նախ հանդիպեցաւ Աթէնք, տեսնուեցաւ յոյն կառավարութեան բարձրաստիճան պետերուն հետ եւ անոնց խոստումներէն խանդավառուած անցաւ Կ. Պոլիս⁷⁷: Հոն տեսնուեցաւ դաշնակցական գլխաւոր գործիչներէն Ս. Չաւարեանի հետ, որ ինքն ալ ձեռնարկի մասին աննպաստ արտայայտուեցաւ, ըսելով որ Դաշնակցութիւնը տակաւին իր յոյսը կտրած չէ թուրքերէն, որոնք իրենց ըրած են մեծ մեծ խոստումներ⁷⁸: Թիֆլիսի մէջ թէ՛ Գասպար Իփէկեանին, թէ՛ Մուշեղ Սերոբեանի ջանքերը կիլիկեան ձեռնարկի ի նպաստ հանգանակութեան մը համար կը մատնուին անյաջողութեան դաշնակցականներու երեսէն: Հոն կատարուած հանգանակութեանց գումարները կ'երթան պարարտացնել Դաշնակցութեան գանձը:

Մուշեղ Սերոբեան Կովկասէն վերադարձին փոխանակ Եգիպտոս գալու եւ անկէ Կիլիկիա անցնելու, ինչպէս նախապէս խոստացած էր, ամէն կողմէ յարուցուած հակառակութիւններէն ու դժուարութիւններէն յուսալքուած Պոլսէն կ'անցնի ուղղակի Փարիզ եւ կը վերադառնայ Ամերիկա:

Այս միջոցին Եգիպտոսի դաշնակցականներն ալ կը բաժնուին Ազգ. Պաշտպա-

⁷⁷ Բարսեղ Օհանեանի հետ Աթէնք ուղղուած Սերոբեանի պատումը չի թողուր Աթէնքէն «խոստումներով խանդավառուածի» մը մեկնումի տպաւորութիւնը: Իր Ինքնակենսագրութեան մէջ ան կը գրէ. «Յոյն Պատերազմական Խորհուրդը երբ գնահատելով հանդերձ իմ ներկայացուցած ծրագրիս առաւելութիւնները յայտարարեց, թէ դժբախտաբար բաւականաչափ տրամադրելի զօրք չունին նոր ճակատ մը կարենալ ստեղծելու համար Կիլիկիոյ մէջ, հրաժեշտ կուտամ Բ. Օհանեանի, նաւ կը մտնեմ եւ կը շարունակեմ ճամբաս»: Սերոբեանի «Մեր Պայքարը...» հատորը աւելի յստակ է այս հարցին մասին. «Յոյն պատերազմական նխարարութիւնը կը մերժէ առաջարկս ... եւ ես ձեռնունայն կը շարունակեմ ճամբաս»:

⁷⁸ Այստեղ եւս պէտք է նշել թէ Սերոբեանի պատումը կ'առաջնորդէ տարբեր մտածումի, երբ կը գրէ. «... Չաւարեան իմ պարզած տեսութիւններու բացարձակ համամտութիւն յայտնել վերջ ... կ'ըսէ ինծի. «Մուշեղ, մենք սխալը ենք. թուրքահայ կացութիւնը վտանգուած է: Իթթիհատականներ աւելի վատ տրամադրուած են մեր ժողովուրդին հանդէպ քան սուլթան Համիտ: ... Պէտք է փրկել ժողովուրդը: Պէտք է զանի պատրաստել ինքնապաշտպանութեան: ... մեր կարելու անդամները Թիֆլիս կը գտնուին ... տեսնուեցէք իրենց հետ ... իրենց հաղորդեցէք ... իմ համամտութիւնս համագործակցութեան մասին...»: Այլ հարց թէ, իր Ինքնակենսագրութեան մէջ Սերոբեան Վռամեանի ընթացքը կը նկատէ ապացոյց մը այն մասին, թէ Դաշնակցութիւնը «կառչած իր բարեկամական յարաբերութեան Իթթիհատի հետ, չէր ուզեր մօտենալ կուսակցական համագործակցութեան գաղափարին, հետեւաբար եւ ազգային ինքնապաշտպանութեան...»:

նութեան կոմիտէն: Մինչ այդ պալքանեան պատերազմը արագ կերպով կը մօտենար իր վախճանին: Բարսեղ Օհանեան, Ատոմ Ասլանեան, Լեւոն Մաիլէպճեան եւ մէկ քանի ուրիշներ կոմիտէին կողմէ կ'երթան Աթէնք խոստացուած զէնքերու ստացումը եւ շոգենաւով Կիլիկիա փոխադրութիւնը ապահովելու համար: Իսկ Տամատեան հետը առնելով Արայ Գրչունի եւ հաճընցի Թաթուլ Ն[ա]րկիզեանը կը մեկնի Կիլիկիա, զէնքերու Չորք Մարգուանի (Տէօրթ Եոյ) մէջ ցամաքահանումն ու տեղաւորումը ապահովելու եւ Կիլիկեան շարժումը յաջողցնելու առաքելութեամբ:

Տամատեան 1913ի Մարտի սկիզբները Պէյրութէն կ'անցնի Հալէպ, ուր կը տեսնուի Ներսէս Եպիսկոպոս Դանիէլեանի, Տոքթ. Թոփալեանի՝ այլ անունով Քաջբերունի, Գաբրիէլ Խանճեանի եւ ուրիշ մէկ քանի անձնաւորութիւններու հետ, որոնք իրենց համամտութիւնը կը յայտնեն ծրագրուած ձեռնարկութեան համար: Հալէպէն կանցնի Ալեքսանտրէթ, ուր կը տեսակցի ծերունագարդ Գրիգոր Մինասեանի հետ, որ արդէն կանխաւ յայտնած էր իր համամտութիւնը:

Ալեքսանտրէթէն հետը առնելով Թաթուլը գիշերով կանցնի Տէօրթ Եոյ, ուր Խաչեր էֆ. Գարաեաղուպեան եւ Համբարձում Պարսումեան, շրջապատուած տեղւոյն մէկ քանի երեւելիներէն, լաւ ընդունելութիւն մը կ'ընեն իրեն: Տեսակցութեան ընթացքին Խաչեր էֆենտի կը յանձնէ Տամատեանին Շահէ վարդապետի մէկ գրութիւնը, որով յիշեալը Վեհ. Կաթողիկոսին անունով կը հրաւիրէ զինք որեւէ գործի չձեռնարկած անմիջապէս Ատանա անցնիլ եւ տեսակցի իրենց հետ անվիշտ, հակառակ պարագային, կ'ըսէր, պատասխանատու պիտի մնայ ազգին առջեւ:

Չէնք փոխադրող նաւը երկու օրէն պիտի հասնէր Տէօրթ Եոյ եւ այդ երեք օրերուն մէջ պիտի կատարուէին զէնքերու ապահով ստացման համար պէտք եղած բոլոր պատրաստութիւնները: Տամատեան նամակին ընթերցումէն ետք կ'ըսէ Խաչեր էֆենտիին. «Ես պէտք է այս գիշեր իսկ մեկնիմ Թոփրազ Գալէ, առտուան գնացքով երթալու համար Ատանա, ուրկէ կը վերադառնամ վաղայաջորդ իրիկուն»: Եւ հապճեպով կարգ մը հրահանգներ տալէ յետոյ շոգենաւին դիմաւորման եւ զէնքերու ստացման կարգադրութիւններուն շուրջ, ճամբայ կելլէ դէպի Թոփրազ Գալէ, նոյն այն կառքով որ զինք բերած էր Ալեքսանտրէթ: Առտուն Թոփրազ Գալէն կ'առնէ երկաթուղիի գնացքը ու կ'էսօրին կը հասնի Ատանա: Կը տեսնուի Կաթողիկոսին ու Շահէ վարդապետին հետ: Ասոնք ամէն ջանք կ'ընեն տարհանողելու Տամատեանը որ ետ կենայ Տէօրթ Եոյ զէնք հանելու ձեռնարկէն, որու մասին կ'ըսեն կառավարութիւնը տեղեկութիւն ստացած է եւ զայն արգիլելու համար միջոցներ ձեռք առած: Տամատեան կը մնայ անդրդուելի:

Յաջորդ օրը, կ'էսօրէն ետք մեկնող գնացքով Տամատեան կը վերադառնայ Թոփրազ Գալէ ուր կը հասնի մայրամուտին: Առջի գիշեր զինք փոխադրող կառապանը հոն կը սպասէր: Անմիջապէս անոր կառքը հեծնալով կ'երթայ Տէօրթ Եոյ: Ճամբուն վրայ թրքաբնակ Էրզին գիւղէն երկու հեծեալ ոստիկաններ կառքին ճամբան կը կտրեն, կառքը կը կեցնեն, կառապանին կ'ըսեն թէ գիշերով մարդ կը փախցնեն եւ կը հրամայեն ետ դառնալ Էրզին: Էրզինի մէջ Տամատեանը կը տանին ոստիկանատունը, ուր հարցաքննութեան կ'ենթարկուի ոստիկանապետին կողմէ: Տամատեան կ'ըսէ թէ ինք վաճառական է եւ յաջորդ օրուան շոգենաւով Ալեքսանտրէթէն Եգիպտոս պիտի մեկնի, այդ պատճառով ստիպուած է գիշերով ճամբորդել, քանի որ Ատանայէն եկող գնացքը

վերջալոյսին հասած էր Թոփրագ Գալէ: Ոստիկանապետը կը համոզուի ու կը թոյլատրէ, որ շարունակէ ճամբան գիշերով: Այսպէս կէս-գիշերին կը հասնին Տէօրթ Եոլ: Խաչեր Էֆենտի, որ գիտէր թէ Տամատեան նոյն գիշերը պիտի հասներ եւ իր ընկերներով անոր պիտի սպասէր, քնացած էր ու տունը մէկը չկար իր ընկերներէն: Բաւականատեն դուռը զարնուելէ ետք ան քունէն կ'արթննայ եւ այս անգամ առաջուրնէ տարբեր ընդունելութիւն մը կ'ընէ Տամատեանին. «Քու այստեղ գալը կառավարութիւնը իմացած է ու քեզ իմ տունս չեմ կրնար պահել», կ'ըսէ և առտուն կանուխ կը տանի ու կը յանձնէ զինքը Յակոբ Գարասարգիսեանի տունը: Այնտեղ ալ իրեն ըսելով որ գիւղը կառավարութեան կողմէ հսկողութեան տակ առնուած է, կ'արգիլեն դուրս ելլել եւ մարդու երեւալ:

Նոյն գիշերը շոգենաւր պիտի հասներ, բայց Խաչեր Էֆենտի մէջտեղ չկար եւ ոչ ալ իր հայրենակից ընկերները: Տամատեան գիւղին մէջ ունէր Եգիպտոսէն իրեն ընկերակից երկու անձեր, Արա Գրչունի եւ Թաթուլ Նարկիզեանը, բայց ճամբաները չէր գիտէր ու անոնք ալ իր ուր ըլլալը կ'անգիտանային: Պարզ էր որ Խաչեր Էֆենտին որեւէ պատրաստութիւն չէր տեսեր շոգենաւր ընդունելու համար: Խաչեր Էֆենտիին այս դիմափոխութիւնը հետագային իմացուածին համաձայն, արդիւնքն էր Ատանայի առաջնորդարանի քարտուղար Քերովբէ Փափագեանի Տէօրթ Եոլէն գաղտագողի անցքին, Տամատեանի ճամբորդութեան ընթացքին: Երեկոյին պարզ դիպուածով մը նախկին Հնչակեան Սիսակ Վանեան եւ իր փեսան Թոլեան կը հանդիպին Գարասարգիսեանի բնակարանը ու հոն կը տեսնուին Տամատեանի հետ, որմէ կ'իմանան օրուան անցուդարձերը ու իր խնդրանքին վրայ զինք կ'առնեն ու կը տանին իրենց տունը, ուր շուտով կը հաւաքուին Համբարձում Պարսումեան եւ Տամատեանի հետեւորդները Գրչունի ու Թաթուլ, ինչպէս նաեւ խումբ մը տէօրթ եոլցի եռանդուն երիտասարդներ:

Խորհրդակցութեանց ընթացքին յայտնի կ'ըլլայ որ Խաչեր Էֆենտին զենքեր բերող շոգենաւր ընդունելութեանը համար որեւէ նախապատրաստական կարգադրութիւն ըրած չէր եւ կառավարութեան կողմէ վտանգին շինծու փաստերով Տամատեանը կողիացուցած էր որեւէ կարգադրութիւն ընելու անկարողութեան մատնած էր: Շոգենաւր նոյն գիշերը պիտի հասներ եւ արդէն հասած ըլլալու էր Տէօրթ Եոլի ծովեզերքին մօտերը մինչ ոչ որ դրկուած էր հոն: Պայմանադրական ոչ մէկ նշան տրուած էր շոգենաւրն եւ որեւէ նոր կարգադրութիւն կարելի չէր գիշերուան այդ յառաջացած ժամուն: Արդէն կարգադրուած էր որ շոգենաւր գիշերով պիտի գար եւ գիշերով պիտի պարպէր իր բեռը ու արշալոյսէն առաջ պիտի հեռանար ծովեզերքէն: Եւ ըսել թէ այդ ճակատագրական գիշերը կորսուած էր:

Հակառակ այս ճախորդ հանգամանքներուն, ժողովականները դեռ յոյս կը տածեն, թէ շոգենաւր երկրորդ գիշերը անգամ մըն ալ կուգայ Տէօրթ Եոլի կողմը եւ ըստ այնմ յաջորդ գիշերուան համար կ'որոշեն շոգենաւրն նշանատուութեան եւ զենքերու ցամաքահանութեան բոլոր կարգադրութիւնները: Ժողովը կը վերջանայ առտուն մօտ: Տամատեան յոգնած եւ ուժաթափ հագիւ աչքերը փակած էր երբ կ'արթնցնեն զինք եւ աչքերը շփելով իր առջեւը կը տեսնէ Բարսեղ Օհանեանը երկու ընկերներով, որոնք առջի գիշեր հասած էին շոգենաւրով, որը լեցուն էր հրացաններով եւ կամաւորներով:

Ծովեզերքներուն վրայ որեւէ նշան չտեսնելով առանձին ցամաք ելած էին հասկնալու համար թէ ինչ պատահած էր: Իրենց ելած եզերքը ճիշդ Տէօրթ Եոլին դիմացը չլլալով ժամերով թափառած էին այս ու այն կողմ, մինչեւ հասած էին Տէօրթ Եոլ: Օհանեան անտեղեակ տեղի ունեցած անցուդարձերէն ու չտեսնելով որ Տէօրթ Եոլի մէջ ոչ մէկ պատրաստութիւն կատարուած ու Տամատեանը գտնելով քունի մէջ, առաջին տպաւորութեամբ կը մտածէ վեցհարուածեանը ուղղել անոր սրտին, բայց յետոյ ինքզինքը կը զսպէ ու յետոյ Տամատեանէն կը տեղեկանայ անցած դարձածի մասին ու նոյն օրուան երեկոյեան Տէօրթ Եոլի համար ձեռք առնուած կարգադրութիւններուն: Ամբողջ օրը Տէօրթ Եոլի մէջ կը տիրէր արտակարգ եռուզեռ: Երիտասարդութիւնը ոտքի ելած պատրաստութիւններ կը տեսնէր շոգենաւը դիմաւորելու և զենքերը ցամաք հանելու: Խաչեր էֆենտի եւ միւս ընկերը ծամակուտ եղած էին: Գիշերը ծովեզերքին վրայ պէտք եղած տեղերը գետեղուած էին նշանատուութեան գոյնզգոյն լապտերներ ու նոյնիսկ Տէօրթ Եոլի մէջ բարտիներու գազաթներուն վրայ տեղ տեղ կախուած էին լապտերներ: Չենքերը ցամաք հանելու պաշտօն ստանձնող երիտասարդներ խումբ խումբ բռնած էին Տէօրթ Եոլէն երկաթուղիի կայարանի ու ծովեզերքի ճամբան:

Սպասումի անձկագին ժամերը տեւեցին մինչեւ առտուան դէմ երբ վերադարձան զինաբեր երիտասարդներ ձեռնունայն: Ալեքսանտրէթի ծովածոցին մէջ Տէօրթ Եոլի մօտը կամ հեռուն որեւէ շոգենաւ երեւցած չէր: Վերջէն իմացուածին նայելով շոգենաւը նոյն իրիկունը մարած լոյսերով անգամ մըն ալ կ'առաջանայ ծովածոցին մէջ, բայց կը հասնի խորշ մը, որ Տէօրթ Եոլի մօտ չէր և ուրտեղէն չէին երեւնար Տէօրթ Եոլի ծովեզերքէն տրուած նշանները: Շոգենաւին մէջի կամաւորները նկատելով որ ոչ առջի զիշեր պայմանադրական Նշանները տրուած էին եւ ոչ ալ երկրորդ զիշերը որեւէ նշան կ'երեւէր, այն տպաւորութեան տակ կը մնան որ Տէօրթ Եոլի մէջ դժբախտութիւն մը պատահած պէտք է ըլլայ եւ թէ հաւանօրէն շոգենաւէն դուրս ելլելով Բարսեղ Օհանեան եւ իր երկու ընկերները ձերբակալուած են, նաւապետին կը հրամայեն վերադառնալ Փիրէայի նաւահանգիստը:

Օհանեան Ալեքսանտրէթէն մեկնեցաւ Եգիպտոս տեղեկանալու համար թէ ինչ եղան շոգենաւն ու զենքերը, իսկ Տամատեան մնաց Տէօրթ Եոլ, յուսալով որ թռած թռչունը անգամ մըն ալ կուգայ:

Չենքերը Փիրէա ցամաք հանած եւ կառավարութեան կարգադրութեամբ մասնաւոր մթերանոցի մը մէջ գետեղուած էին հայերու տրամադրութեան տակ, բայց որովհետեւ Պալքանեան պատերազմը սպասուածէն աւելի շուտով յաջող ելքի մը յանգած ու Թուրքիոյ հետ խաղաղութեան բանակցութիւնները արդէն սկսած էին, յոյն կառավարութիւնը կոմիտէին կ'իմացնէ որ զենքերը կրնան վերցնել Յունաստանէն, պայմանաւ որ ուղղակի Տաճկաստան չմտցնեն, այլ նախ զանոնք ազատ նաւահանգիստ մը տեղաւորեն: Այս պայմանի գործադրութիւնը շատ մը դժուարութիւններու եւ նորանոր ծախքերու ենթակայ ըլլալով, կոմիտէն ժամանակ մըն ալ զենքերը Փիրէայի մէջ իր տրամադրութեան տակ պահելէ ետք կը վերադարձնէ յոյն կառավարութեան, ապագային զանոնք վերադարձնելու պայմանով երբ պարագաները կը թոյլատրեն:

Տամատեան, որ 1913 Մարտի սկիզբէն ի վեր Տէօրթ Եոլ կը գտնուէր, Մայիսի մէջ Ատանայի եւ Մերսինի ճամբով կը մեկնի Կիլիկիայէն ու կ'անցնի Յունաստան, ուրկէ

կը վերադառնայ Ադեքսանդրիա:

Կիլիկիա գէնք հանելու այս փորձը ճախողեցաւ զլիսաւորաբար հետեւեալ պատճառներով.

Ա.- Եգիպտոսի Ազգ. Պաշտպանութեան կոմիտէն Կիլիկիոյ Կաթողիկոսին եւ Ատանայի Առաջնորդին տեղեկութիւն հաղորդած էր անոնց աջակցութեան դիմած ըլլալով, անոնք հակառակեցան ձեռնարկին եւ Տէօրթ Եռլի աղաներուն վրայ ազդեցութիւն բանեցնելով խոչընդոտ հանդիսացան զենքերու ցամաքահանումին:

Բ.- Պօղոս Նուպար փաշա, որուն նմանապէս տեղեկութիւն հաղորդուած էր, ինքն ալ հակառակեցաւ պետութեանց մօտ իր դիմումներուն ոգիին եւ ուղղութեան իբրեւ հակասող ձեռնարկ մը եւ իր հակառակելովը վնասեց ձեռնարկին համար բացուած հանգանակութեան մը արդիւնաւորութեանը:

Գ.- Կ. Պոլսոյ Ազգ. Պատրիարքարանը նոյնպէս հակառակելով ձեռնարկին, զայն խափանելու պաշտօնով Կիլիկիա դրկեց Գրիգորիս վարդապետ Պալազեանը:

Դ.- Դաշնակցութիւնը Կովկասի մէջ յանուն յեղափոխութեան կատարուած հանգանակութեան ամբողջական գումարը իւրացուց առանց Կիլիկեան ձեռնարկին համեմատական բաժին հանելու:

Ե.- Ազգը տակաւին բոլորովին հիասթափուած չէր իթթիհատականներու խաբեպատիր ու նենգամիտ քաղաքականութենէն եւ տակաւին կը մնար օսմանեան սահմանադրութեան հրապոյրէն յափշտակուած:

Զ.- Պալքանեան պատերազմը շուտ վերջացաւ, որով յունական կառավարութիւնը ստիպուեցաւ մասնաւոր սեղմումներ դնել զենքերու Թուրքիա փոխադրութեան կերպին մէջ եւ այս պարագան պատճառ եղաւ որ զենքերը ի վերջոյ վերադարձուին յունական կառավարութեան:

Տեփոյեան, *Տամառեան*, 129–137

* * *

Ապստամբութեան ծրագիրն ըստ Մուշեղ Սերոբեանի

Սերոբեան ինքնապաշտպանութեան փորձին եւ իր մասնակցութեան մասին արտայայտուած է երկու հրատարակեալ աշխատութիւններու, ինչպէս նաեւ հազարէ աւելի ձեռագիր էջեր լեցնող անտիպ Ինքնակենսագրութեան մէջ: Վերջինը կը նպաստէ նիւթին եւ Սերոբեանի դերին շուրջ մեր գիտելիքներուն ընդարձակման: Կը խորհինք թէ տեղին պիտի ըլլայ հերթաբար ընդգրկումը անոր երկու հրատարակեալ գործերուն մէջ ապստամբութեան ծրագրին յատկացուած տեղեկութիւններուն, կրճատելով, սակայն, «Դիտումներ...»ուն մէջ յիշատակուած նամակները, որոնք ամբողջութեամբ կամ աւելի ընդարձակ ձեւով կը տրուին Ինքնակենսագրութեան մէջ:

*

1932-ին հրատարակուած «Գիտումներ...»-ու բաժինը (Էջ 76–84)

§ 234. — Կիլիկեան Չաւեշտը ... կրնար ողբերգութեան մը վերածուիլ, եթէ մտիկ ըրած չըլլայի խղճիս ձայնին եւ ոմանց թելադրութիւններուն: 1912ի վերջին կիսուն տեղի ունեցած եւ փակուած էր Ս. Ռ. Կուսակցութեան Բրովիտենսի Պատգ. Ժողովը, ուր իմ հրաժարականս տուած էի, ցնոր տնօրինութիւն, զգուած ներքին կարգ մը Էնթրիկներ ու Էնթրիկաններէ: Այդ հրաժարումէս անմիջապէս վերջ Ամերիկայի Ռամկ. Վարչութիւնը ինծի կը բերէր Ս. Տամատեանի մէկ նամակն ու հեռագիրը, որ կը հաղորդէր, թէ Կիլիկիոյ ամբողջ Ժողովուրդը կազմ եւ պատրաստ է ազատագրական եւ վրէժխնդրական յեղափոխութեան մը, օգտուելով Պալքանեան պատերազմէն, եւ անհամբեր ինծի կը սպասէ ապստամբութեան դրօշը պարզելու համար: Ուստի անհրաժեշտ է որ մեկնիմ անմիջապէս: Ս. Տամատեան իր 1912 Հոկտ. 20 թուակիր նամակով կը գրէ Ամերիկայի Ռամկավար կեդրոնին, ըսելով, թէ Մուշեղ Եպիսկոպոսին «ներկայութիւնը հրաշագործ ազդեցութիւն կը գործէ» Կիլիկիոյ մէջ, հետեւաբար անհրաժեշտ է որ իր նամակը անձամբ բերեն ինծի, եւ զիս համոզեն անմիջապէս մեկնելու համար:

Արդէն Փետր. 8 թուական եւ Ս. Ռ. ակումբներու ուղղուած «ԽՈՐՀՐԴԱՊԱՀԱԿԱՆ» շրջաբերականով մը, Ս. Տամատեան եւ Պ. Օհանեան, «Ազգ. Պաշտպանութեան Քօմիթէ»ի դիւանի հանգամանքով, յայտարարած էին, թէ Ս. Ռ. Կուսակցութեան Կեդր. Վարչութիւնը «չը գիտցաւ իր կացութեան բարձրութեան վրայ գտնուիլ: Չորս տարուան ընթացքին նոյն իսկ խաղաղ զարգացման գործունէութեան շաւղին մէջ. Կեդր. Ակումբը չը գիտցաւ կենդանութեան եւ ոգեւորութեան մթնոլորտ մը ստեղծել, ազատական շունչ մը ներշնչել շարքերուն»: Թէ՛ Կեդր. Վարչութիւնը, իր «վերջին շրջաբերականով» «իր սնանկութեան ամենէն խոշոր վաւերագիրը» ստորագրած եղաւ: Այսպիսի բացատրութիւններէ վերջ, կը յայտարարէին —միշտ *խորհրդապահական*— թէ իրենք համագ-գային գործակցութեան մը հետամուտ, հիմնած են «Ս. Ռ. Կուսակցութենէն դուրս, բայց գլխաւորապէս անոր կենդանի եւ խանդավառ ոյժերուն վրայ կրթնած, «Ազգ. Պաշտ. Քօմիթեն»: Ինծի եղած հրաւերը, ուրեմն, ո՛չ թէ Ս. Ռ. Կուսակցութենէն կուգար, այլ Ազգ. Պաշտ. Քօմիթէին կողմէ. եւ *յանուն Կիլիկիոյ ամբողջ Ժողովուրդին*: Անմիջապէս համակերպեցայ, եւ տպարան, հրատարակչական գործեր կիսատ երեսի վրայ ձգած, մեկնեցայ Ամերիկայէն:

Անշուշտ չէի կրնար կուրօրէն նետուիլ քաղաքական աւագ կարեւորութիւն ունեցող արկածախնդրութեան մը մէջ, որը կրնար թերեւս յաջողիլ եւ պսակել մեր յոյսերը, բայց կրնար նաեւ չը յաջողիլ եւ աղիտաբեր ըլլալ երկրի բնակչութեան: Եւ որպէսզի կարենայի վստահօրէն քալել այդ լարծուն գետնին վրայ, ճամբուս վրայէն հարցարան-նամակներ կը գրեմ Կիլիկիա, մանրամասնօրէն տեղեկանալու համար երկրի զինուորական կացութեան, Ժողովրդային հոգեբանութեան եւ միտումներուն, դիմադրութեան կորովին ու պատրաստութիւններու մասին:

Իրիկուան դէմ կը հասնիմ Ադեքսանդրիա, եւ զիշերն իսկ, փողոցին մէջ եղած խօսակցութիւններէն կը տեսնեմ, թէ *Կիլիկեան ապստամբութեան ՉԱՓԱԶԱՆՑ ԳԱՂՏՆԻՃ* ծրագիրը, շուկայի հասարակ ապրանք մը եղած է: Ասոր գուզընթաց գնահատումով կը տեսնեմ այն մեծ խանդավառութիւնը, զոր կ'ապրին ապստամբութեան ծրագրին հեղինակները: Դժբաղդաբար խանդավառութիւնս երկար չը տևեր: Հետզհե-

տե՛ հասնող նամակներ, տեղեկագիրներ, ներկայացուցիչներ կը շեշտեն վայրկեանին անյարմարութիւնը, եւ հակայեղափոխական տրամադրութիւնը Կիլիկեան ամբողջ ժողովուրդին:

Կիլիկիոյ Վեհ. Կաթողիկոսը իր 23 Դեկտ. պատասխանագրով աղէտը միայն կը տեսնէ ձեռնարկին մէջ, եւ 25 թիւ նամակով կը գրէ. «Հարցարանը» այնքան երազական եւ անիրականալի բաներ կը պարունակէր, որ եթէ ձեր գրչով գրուած չլլար, չպիտի հաւատայի, թէ Կիլիկիոյ կեանքին անծանօթի մը ոճով ալ կրնաք գրել: Ամենէն աւելի դուք ուսումնասիրած էք, աղէտէն առաջ, Կիլիկիոյ հոգեբանութիւնը. անկէ վերջն ալ ոչ կեանք եւ ո՛չ հոգի մնաց, որ կարող ըլլային թելադրել ձեզ այդ հարցարանը...: Սոսկացած եմ ձեր *քարեկամներէն*, յանիրաւի ձեզ վերագրուածէն(*)⁷⁹. չեմ փափաքիր իրաւամբ ժառանգել Կիլիկիայի արիւնով օծուած ըլլալս»:

Տեղեկագիր մը ցոյց կուտայ թուրք կառավարութեան զին. ոյժը, զօրքերու եւ ռազմամթերքի քանակը. Եւ անոր ձեռք առած ահաւոր միջոցները հայերու բնաջնջումին համար, եթէ յեղափոխութիւն մը ծագէր: Միւս կողմէն կանչուած պատգամաւորներ եւ անհատներ դրապէս կը հաւաստեն, թէ ժողովուրդը ո՛չ միայն պատրաստ չէ՛, այլ եւ բացարձակապէս հակառակ է ապստամբական գաղափարին, թէ միմիայն զինուորութենէ խուսափող կարգ մը երիտասարդներ կրնան լծուիլ ապստամբութեան գործին, քանի որ լեռները ապաստանած են արդէն, իրենց մորթը փրկելու համար:

Եգիպտոսի եւ Կիլիկիոյ մտայնութիւններու այս հակամարտութեան միջոցին, Եագուպ Արթին Փաշա իր նամակով ահագանգը հնչեցուցած է Փարիզի մէջ, ուրկէ նամակներ կը տեղան գլխուս: Աղաթօն իր 1913 Յունվար 5 թուականով կը գրէ. «... Եթէ այսպէս չարիքի մը պատճառ լինիք դուք կամ ձեր սիրելի ընկերները, յաւիտեան անէծքի արժանի պիտի լինիք.....»:

Դեռ Եգիպտոս չը հասած, Փարիզի մէջ դիմումներ կատարած էի ծրագրուած նպատակին համար դրամական օժանդակութիւն ձեռք բերելու: Խոստացան իրենց նուէրները որկէ Եգիպտոս: Ա. Չօպանեան, իր «մտերմական» անթուակիր նամակովը ըսելէ վերջ, թէ դեռ դրամ չկայ մէջտեղ, կը յաւելու. «Չէյթունի ապստամբութիւն մը՝ այսպիսի բոպէի մը, ջախջախման միայն կը յանգի.....»: Իսկ 1913 Յունվար 9 թուականով կը գրէր. «Պէտք ունինք Փաշային անունին եւ անձին: Պէտք չէ վարկաբեկել զայն: Խնդրեմ առաջքը առ այդ հոսանքին: ...Չէյթունի հարցը փակէ.....»:

Պօղոս Փաշայի նամակը փետր. 7 թուականով. «...Պատգամաւորութիւնը սաստիկ յուզուեցաւ այն վտանգներուն պատճառաւ, զոր այդպիսի գործեր կրնան ստեղծել ի վնաս հայ ժողովուրդին.....»:

Կիլիկ. Վեհ. Կաթողիկոսը Փետր. 3 թուականով արցունքոտ նամակը կը գրէ ինծի. «Վերջին խօսք մը ունինք, որ եթէ լսէք, Կիլիկիան արեան նոր ծովերու մէջ խեղդուելու անխուսափելի դժբախտութենէն պիտի փրկէք.....»:

Շահէ Վարդապետ ալ Փետր. 3–16 ին կը գրէ. «... Կիլիկիան մոռցած էք. ջարդէն

⁷⁹ (*) Նամակին այս կտորէն այնպէս կը հասկցուի, թէ երբ մէկ կողմէն ժողովուրդին անունով կանչած են զիս, միւս կողմէն ուզած են ժողովուրդին հաւատացնել, թէ ես է որ այդ շարժումը կը կազմակերպեմ:

վերջի ներկայ կացութիւնը չը տեսնելով, անօրինակ լաւատեսներու շրջանակէն ոգեւորուած, յեղափոխական արկածախնդրութեան մը մէջէն, ազգին փրկութիւն մը կ'ակնկալէք...»:

Այս նամակներուն մէկ մասը դեռ ձեռքս չը հասած, կացութեան մէջ երկու որոշ կէտեր կը տեսնէի. 1. Քօմիթէն մէկ կողմէն զիս կը հրաւիրէր գործի *Կիլիկիոյ ժողովուրդին անունով*. միւս կողմէ կ'աշխատէր Կիլիկիոյ ժողովուրդը համոզել *իմ անունով*, իբր թէ ես ուզած եւ կազմած ըլլամ ապստամբական ծրագիրը. այս պարագան որոշ կերպով կը հաստատեն վերոնշանակեալ նամակներուն ի՛նչ ինչ հատուածները. 2. Յեղափոխութեան եւ ապստամբութեան գետին չկար: —Հակառակ տրուած հաւաստումներու կատարուելիքը պիտի ըլլար *արուեստական յեղափոխութիւն* մը, բայց ես կեանքիս մէջ բարեկամ եղած չեմ բնաւ արուեստական յեղափոխութեան: Այս պատճառով նոր մտայնութիւն մը կը ստեղծեմ Ազգ. Պաշտպանութեան Քօմիթէի անդամներուն մէջ. հրաժարելու անմիջական յեղափոխութեան մը գաղափարէն, եւ լծուելու ազգ. ինքնապաշտպանութեան յամբաքայլ բայց փրկարար գործին, քանի որ երկրի ժողովուրդին համար ջարդուելու հաւանականութիւնը կար ու կը մնար: Եւ քանի որ իրենք ալ իրենց շրջաբերականին մէջ կը յայտարարէին, թէ «այս տեսակ շարժում մը մենք կը հաւատանք, թէ արուեստական միջոցներով կարելի չէ ստեղծել»: Այդ մոծաւանջով էր, որ Օսմ. Սահմանադրութեան նախօրերուն մօտեցայ նահատակ Ակնունիի եւ Ռ. Չարդարեանի, որոնք չափազանց շատ փարած ըլլալով Իթթիհատին, չուզեցին ազգային համագործակցութեան մը լծուիլ ինքնապաշտպանութեան պատրաստելու համար մեր ժողովուրդը: Հետեւաբար կը ճշդենք Քօմիթէին դիրքն ու բռնելիք ընթացքը. կ'որոշենք պատրաստ գտնուիլ ամեն հաւանականութեան առջեւ, եւ դէկավարել ու քաջալերել ապստամբական շարժում մը, երբ

1.— Երկրին կացութիւնը ստիպողական եւ անհրաժեշտ դարձնէ.

2.— Ժողովուրդին հաւաքական եւ ամբողջ տրամադրութիւնը պատրաստուած ըլլայ.

3.— Քաղաքական հանգամանքները նպաստաւոր ըլլան.

4.— Դիւանագիտութիւնը յոյսեր ներշնչէ գայն արդիւնաւորելու.

5.— Ժողովրդեան պաշտպանութեան միջոցները լրապէս գոհացուած ըլլան...»:

Եւ ինքնապաշտպանութեան թերին լրացնելու համար կ'որոշուի դիմում կատարել արտասահմանի հայութեան դրամական նպաստին, ջանալ համագործակցութիւն մը ստեղծելու, Կիլիկիոյ ինքնապաշտպանութեան խնդրոյն շուրջ, հայ կուսակցութիւններու միջեւ: Եւ ես այդ երկու նպատակներուն համար կը մեկնիմ Կովկաս:

Դեռ Եգիպտոս չը հասած, Չուիցերիա կը հանդիպիմ Պ. Ահարոնեանի, հիւանդ, Դաշնակցութեան համագործակցութիւնը ապահովելու Կիլիկիոյ ինքնապաշտպանութեան եւ յեղափոխութեան գործին: Պ. Ահարոնեան իր անձնական համամտութիւնը յայտնելով հանդերձ, կը յանձնարարէ որ այս մասին տեսակցինք Պոլսոյ իրենց ընկերներուն հետ: Թէպէտ թուրք կառավարութենէն մահուան դատապարտուած, Փետր. 2 ին աշխարհիկ տարագով Պոլիս կը մտնեմ, տեսակցելու համար դաշնակցական պետերու հետ: Ս. Չաւարեան, ինծի չափ յոռետես է Թուրքիոյ հայութեան ներկայի եւ ապագայի մասին. ան ալ կը հաւատայ թէ փոթորիկ մը անխուսափելի է. հետեւաբար

անհրաժեշտ է որ հայը զինուի, ինքնապաշտպանութեան համար: Եւ ինծի կը յանձնարարէ տեսակցիլ Թիֆլիզի ընկերներուն հետ: Յանձնարարութիւն ունիմ, Եգիպտոսէն, որ Թիֆլիզի մէջ ինծի գործակցի Գ. Իփէկեան յաջողցնելու համար դրամական օգնութիւն մը ի նպաստ Կիլիկիոյ ինքնապաշտպանութեան գործին: Երկու շաբաթուան մեր աշխատանքը, ժողովները, տեսակցութիւնները կը յանգին Պղատոնական համակրանքի եւ խոստումներու: Ն. Աղբալեան եւ Չամալեան, հակառակ իրենց խոստումին, չեն գտնուիր Յ. Թումանեանի տունը իրենց ժամադրութեան, բանակցելու համար համագործակցութեան խնդրոյն շուրջ, «Թուրքահայ Լիազօր Ներկայացուցիչ» Վռամեանի դրդումով. ու ես կը մեկնիմ Ռուսաստանէն:

Մարտ 13ին Փարիզ հասնելուս, անակնկալի մը առջեւ կը գտնեմ ինքզինքս: Եգիպտոսի մեր բարեկամները յեղափոխական գործին լծուեր են, հակառակ ստորագրուած յայտագրին, իբր թէ, անոր պարունակած վերոյիշեալ *հինգ պայմանները* մէկ վայրկեանի մէջ իրականացած ըլլային մոզական գաւազանի մը հպումով: Եւ անոնք գործի կը լծուին իմ հասցէիս ուղղուած վերոյիշեալ նամակները *ինձմէ առաջ* կարդացած ըլլալով հանդերձ: Մ. Տամատեան հակառակ այս ամենուն, հակառակ նամակներով յայտնուած բաղձանքին եւ յորդորներուն, հակառակ Կիլիկիոյ ժողովուրդի «հաւաքական» մերժումներուն, կը պատրաստուի Կիլիկիա երթալ, եւ այս առթիւ իր Մարտ 4 թուականով կը գրէ ինծի. «Մնաք բարով» չեմ ըսեր.....»:

Մարտ 15, 19 եւ 22 թուակիր նամակներովս, ուղղուած Ազգ.Պաշտ. Բօմիթէին, դառնօրէն կը գանգատիմ, որ զիս անակնկալի մը առջեւ կը դնէ, ինքնապաշտպանութեան մեր որոշումէն եւ ստորագրուած Յայտագրէն վերջ, յանկարծ եւ առանց իմ գիտութեանս, արուեստական յեղափոխութեան մը ձեռնարկելով: Եւ կը խնդրեմ, որ հաւատարիմ մնան տրուած որոշումներուն, բաւականանալով, առ այժմ, ինքնապաշտպանութեան միջոցներու հայթայթումով: Բօմիթէին Մարտ 13 հեռագիրը կըսէր ինծի. «(Չէնքերու) փոխադրութիւնը արդէն կատարուած է. Տամատ ստիպողաբար ձեզի կը սպասէ. Ապահ կը մեկնի. հասէք. հեռագրով երկու հազար ոսկի հայթայթեցէք»: Մարտ 15 ին կը պատասխանեմ հեռագրով. «արգիլել ամեն առաքում, եւ սպասել նամակներուս»: Որովհետեւ Պօղոս Փաշա զիս մօտը կանչելով կը պնդէ, որ դադրեցնել տամ շարժումը, հակառակ պարագային, կը սպառնայ Պատուիրակութենէ հրաժարիլ, եւ մեկնիլ Եգիպտոս, *դէպքերու ամբողջ պատասխանատուութիւնը ձգելով իմ վրաս*: Նոյն օրն իսկ կը ստանամ հեռագրիս պատասխանը. «Շատ ուշ. կատարեցէք ձեր պարտականութիւնը»:

Այս պայմաններու մէջ, այսպիսի պարագաներու տակ եւ այսպիսի գործիչներու հետ իմ գործակցութիւնս անհնար էր այլ եւս: Եւ կը հեռագրեմ, թէ «անկարելի է դրամ ճարել»: Այսու հանդերձ տեսակ մը խղճահարութիւն կ'ունենամ հոգիիս խորը, մտածելով, որ եթէ«փոխադրութիւնը» կատարուած է ստուգիւ, եւ ալ ուշ է արգիլել շարժումը, պէտք է անուղղակի օգնել անոնց դրամապէս, գործուած մեծագոյն չարիքը «նուագագոյն չարիք»ի վերածելու համար, ըստ Մ. Տամատեանի բացատրութեան: Եւ կը յաջողինք տասը հազար ֆրանք հայթայթել: Չմոռնամ ըսելու, թէ օրը օրին բոլոր անցուդարձերը, թղթակցութեանց բովանդակութիւնները կը հաղորդեմ Պօղոս Նուպարի:

Ապրիլ 8ին մեր դիրքերը ճշդուած են արդէն: Այդ օր Ա. Չօպանեան նամակ մը կը

ստանայ Եգիպտոսէն, վստահելի եւ խնդիրներուն մօտէն տեղեակ անձէ մը, ուրկէ կը տեղեկանանք, թէ հակառակ Մարտ 13 եւ 15 հեռագիրներուն, դեռ փոխադրութիւն գոյութիւն չունի, թէ գէնքերու առաքումը տեղի պիտի ունենայ 1000 ոսկիի վճարումով, որուն մէկ մասը միայն վճարուած է ցարդ: Չափազանց կ'ըլլայ մեր ցաւն ու սրտնեղութիւնը, տեսնելով որ Քօմիթէն կը խաղայ մեր ուղղամտութեան հետ: Կանխօրօք այդ օր ժողով հրաւիրած էինք դրամահաւաքութեան համար. բայց ի'նչ սրտով համարձակութիւնը պիտի ունենայինք դրամ պահանջելու գործի մը համար, որ այլ եւս արկածախնդրական զաւեշտի մը կերպարանքն էր առած: Ու կ'որոշէնք հեռագրել Եգիպտոս, որ մեր դրկած վերջին գումարը, չը յանձնուի Քօմիթէին. եւ ես Ապրիլ 9ին կը մեկնիմ Փարիզէն դէպի Ամերիկա, ինծի հետ տանելով խայթիչ համոզումը, թէ անկեղծ ու անձնուէր յեղափոխականներ ըլլալով հանդերձ, տակաւին շատ հեռու կը գտնուինք քաղաքացիական հասունութենէ: Ու անգամ մըն ալ միտքս կ'անդրադառնայ, նոյն իսկ ակամայ, Ռիպօի սա խօսքին. «Ժողովուրդի մը կառավարութիւնը, իր պատմութեան ինչ ինչ վայրկեաններուն, կը գտնուի կէս-յիմարներու ձեռք»: 16-5-913

* * *

1943-ին լոյս տեսած «Մեր Պայքարը...» հատորին բաժինը (Էջ 221–223)

Պայքանեան պատերազմի օրերուն էր, որ Եգիպտոսի մէջ կը կազմուի բոլոր Հայ կուսակցութիւններու համամտութեամբ ոչ-կուսակցական «Ազգ. Պաշտպանութեան Քօմիթէ» մը: Այդ Քօմիթէի դիւանը 1912 Փետր. 8 շրջաբերականով կը յայտարարէր, թէ Ս.Ռ. կուսակցութեան կեդրոն. Վարչութիւնը «չգիտցաւ իր կացութեան բարձրութեան վրայ գտնուի: Չորս տարուան ընթացքին նոյնիսկ խաղաղ զարգացման գործունէութեան շաւղին մէջ, Կեդր. Ակումբը չգիտցաւ կենդանութեան եւ ոգեւորութեան մթնոլորտ մը ստեղծել, ազատական շունչ մը ներշնչել շարքերուն»: Թէ Կեդր. Վարչութիւնը իր «վերջին շրջաբերականով» իր սնանկութեան ամէնէն խոշոր վաւերագիրը ստորագրած եղաւ»: Այս շրջաբերականը կը ստորագրէին Մ. Տամատեան, եւ Բ. Օհանեան, երկու լիտրներ: Այս Քօմիթէին նպատակն էր եղած օգտուելով Պայքանեան պատերազմէն, ապստամբական շարժում մը ստեղծել Կիլիկիոյ մէջ: Այս ապստամբական շարժումին ղեկավարութեան կը հրաւիրուիմ Ամերիկայէն: Անմիջապէս կը թողում գործերս, կը փակեմ տպարանս, կիսատ կը թողում «Ամերիկահայ Տարեցոյց»-իս տպագրութեան գործը, եւ կը մեկնիմ Եգիպտոս: Չեմ ուզեր *սրուեստական* յեղափոխութեան մը ձեռնարկել, առանց Կիլիկիոյ Ժողովուրդին համագործակցութեան: Եւ երբ կը տեսնեմ, թէ չկայ տարր մը որուն կարենանք յենուլ Կիլիկիոյ մէջ, ապստամբութեան ծրագիրը առժամաբար կը դնենք մէկ կողմ, եւ կը ծրագրենք Ժողովուրդը զինել *վաղուան աղէտքը* կարենալ դիմագրաւելու համար: Դէպի Ռուսաստան ճամբորդութեանս միջոցին, վերջին փորձ մը կ'ընեմ, ապստամբութեան հանդէպ Կիլիկիոյ Ժողովուրդին չկամութիւնը դարմանելու տարբեր միջոցներով: Աթէնքի մէջ կը տեսակցիմ պատերազմական նախարարութեան դիւանի պետերուն հետ, իրենց կը ներկայացնեմ Տէօրթ-Եօլէն յունական զօրք ցամաք հանելու ծրագիրը, խոստանալով իրենց ամբողջ

Կիլիկիան ոտքի հանել, իմ ներկայությամբս եւ կռիւ մղել իրենց կողքին: Յոյն պատերազմական նախարարութիւնը կը մերժէ առաջարկս, զօրքի անբաւականութեան պատրուակով, եւ ես ձեռնունայն կը շարունակեմ ճամբաս: Եւ հազիւ քանի մը ամիս վերջ ապստամբական ձախող փորձ մը տեղի կ'ունենայ մեր բարեկամներու կողմէ Տէօրթ-Եօլի ծովեզերքը: (Այս խնդրոյ մասին տես մեր ԴԻՏՈՒՄՆԵՐ ԵՒ ԴԱՏՈՒՄՆԵՐՈՒ մէջ *Կիլիկեան Չաւեշոր* (էջ 76—84):

* * *

Անտիպ Ինքնակենսագրութեան բաժինը

Ստորեւ ներկայացուող նիւթը կ'ընդայնէ սահմանների այն հակիրճ տեղեկութիւններուն, զորս Սերոբեան յոյսին տուած էր իր «Դիտումներ...» եւ «Մեր Պայքարը...» հատորներով:

Յատկապէս Սահակ Բ. Կաթողիկոսի նամակներուն մէջ կատարուած քանի մը ակնարկութիւններ հասկնալու համար հարկ է նշել թէ Սերոբեան Միացեալ Նահանգներ գտնուած շրջանին աղմուկ բարձրացուցած էր իր անձին դէմ՝ նախ ամուսնալուծում շնորհելով այնթապցի գոյգի մը եւ ապա ամուսնալուծեալ այդ մարդուն տալով կրկնամուսնութեան արտօնութիւն: Ամերիկեան ըլլալով էջմիածնական թեմ, Սերոբեան դատապարտուած էր եկեղեցական կանոնադանցութեան մէջ իբրեւ Կիլիկեան Աթոռի հոգեւորական, որուն իրաւասութենէն դուրս մնալով էջմիածնական թեմը, հակակաթոնական ոտնձգութիւն մը կատարած կը նկատուէր ան: Դատապարտեալին արդարացումն եղած էր այն՝ թէ ինք Սահակ Բ.ի թողտուութիւնն ապահոված էր իր տնօրինութենէն առաջ, ուստի եւ հակակաթոնական չէր իր արարքը, մանաւանդ որ ամուսնալուծեալները որպէս այնթապցի կը գտնուէին Կիլիկեան Աթոռի իրաւասութեան ներքեւ:

Կար նաեւ այլ պատճառ մը, որ կապ ունէր որպէս Ատանայի հայոց առաջնորդ իր պաշտօնավարութեան եւ 1909-ի կոտորածներէն առաջ զինք իբրեւ հայկական ապստամբութեան մը կազմակերպիչ ներկայացնող ամբաստանութիւններուն հետ, որոնք միտքերու մէջ յառաջացուցած էին այն հետեւութիւնը, թէ Սերոբեան պատասխանատուութեան բաժին ունէր կոտորածներուն մէջ՝ պատրուակ ծառայած ըլլալով թուրք ցեղասպաններուն: Սերոբեան կոտորածներէն ետք գրքոյկով մը պիտի ջանար ճշդել բո՛ւն պատասխանատուները կատարուածին⁸⁰:

Ինքնակենսագրութիւնը կը բացայայտէ քննական սուր միտք, խոր զարգացում եւ յեղափոխականի խմոր ու յանդգնութիւն ունեցող Սերոբեանի նկարագրին բնորոշ գիծեր, որոնցմէ մին՝ ինքնահմայքը, կը խորհիւնք թէ նկատի պէտք է ունենալ իր գրութիւններն ընդերցելու պահուն⁸¹:

⁸⁰ Մուշեղ Եպիսկոպոս, *Ատանայի Զարդը Եւ Պատասխանատուները* (Նախընթաց Պարագաներ), տպ. Արարատ-Ս. Դարբինեան, Գահիրէ, 1909:

⁸¹ Ինքնահմայքի ցայտուն դրսեւորման նմոյշ մըն է, օրինակ, Սերոբեանի Ինքնակենսագրութենէն հետեւեալ մէջբերումը. «...առաւել քան այլ ոք, շատ լաւ կը ճանչնայի Կիլիկիոյ ժողովուրդին հոգեբանութիւնը...»:

«Ինքնակենսագրության» էջատակի ծանօթագրությունները կը պատկանին Սերոբեանի, եթէ չեն աւարտիր մեր անուան սկզբնատառերով: Ուղիղ փակագիծերը կը պարփակեն մեր յաւելադրումները:

Թաւ շեղագիր տառեր գործածած ենք նախադասություններու կամ արտայայտություններու համար, որոնց հարկ է յատուկ ուշադրություն դարձնել, որովհետեւ, կը խորհինք, մտածել կու տան թէ արդեօ՞ք ծրագրուած շարժման յարուցած հակազդեցություններն ու ձախողանքը ունեցած են դրոշմադիր դեր:

Անհրաժեշտ կը նկատենք նշել թէ Սերոբեան ունէր օրատեսոր պահելու սովորությունը: Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսության արխիւատան մէջ պահպանուած նիւթերէն, ինչպէս Սերոբեան առթով մը նշած է, կը պակսին արկածի գոհ զացած օրատեսորներ, ներառեալ՝ 1912 տարուանը: Հարցական է թէ անոր գոյությունը օգտակար պիտի լիլա՞ր մեր ուսումնասիրության: Կասկածը կը ծագի երկու պատճառով, դատելով 1913-ի օրագրի արձանագրություններէն: Նախ, կը տեսնենք անկանոնություն մը առաջին իսկ էջէն: Օրինակ, Յունուար 4-ի ներքեւ կը նկարագրուի Թիֆլիսը, Յունուար 10-ի ներքեւ կը գտնենք տեղեկությունը ռուս նախարարապետին հետ Ղուկասեանի եւ Սադաթիէլեանի ունեցած հանդիպման: Ինչպէս աւելի ուշ պիտի տեսնենք, Սերոբեան Թիֆլիս պիտի հասնէր Փետրուար 12-ին, իսկ Ղուկասեանն ու Սադաթիէլեանը պիտի տեսնէր Մարտ 7-ին: Նոյնիսկ եթէ ենթադրենք թէ յիշեալները կը տեղեկագրէին նախարարապետին հետ Յունուար 10-ին կայացած հանդիպման մը մասին, դա՛րձեալ օրագիրը կը մնայ փորձանաւոր աղբիւր՝ թուականներ ճշդելու առումով: Երկրորդ պատճառն է արձանագրություններու հակիրճությունը, ինչպէս կը հետեւցուի ստորեւ ներկայացուող քանի մը նշումներէն:

14, Երեքշաբթի. Պատարագ Նուպարեան գերդաստանին ի Գահիրէ. գիշերը Մալեգեաններու:

16, Հինգշաբթի. Աղեքսանդրիա կ'իջնեմ Մալեգեանի հետ: Նամակներ կ'ընդունիմ Վեհ. Կաթողիկոսէն եւսյոյն:

17, Ուրբաթ. Ժողով մեծամեծներու: Գործը կը վիժի, անհամաձայնություններու պատճառով: Այոյս չկայ:

18, Շաբաթ. Գիշերը Տամատեանին՝ ճաշի:

19, Կիրակի. Կը պատարագեմ Ծնունդի առթիւ յԱղեքսանդրիա: ... Գիշերը Էօժէն Փափագեանի [= Բաբագեան], նուազ եւ ցնծանք: Կը լսենք թէ Գարրիէլ Եպ. Ճէվահիրեան եկած է այստեղ, Աղեքսանդրիա:

20, Երկուշաբթի. Թղթակցություններով կը զբաղիմ...

Կը բացակային Յունուար 21-էն Փետրուար 4-ի էջերը: Փետրուար 5-ին Սերոբեան արդէն Օտեսա էր:

* * *

1912ի առաջին վեցամսեակէն յետոյ ... ինծի կը ներկայանան Պոստոնի Ռամկավար պարագլուխները, իրենց հետ բերելով Մ. Տամատեանի մէկ նամակը եւ հեռագիրը: Այդ հեռագիրն ու նամակը կը հաղորդէին, թէ Կիլիկիոյ մէջ ամբողջ ժողովուրդը կազմ եւ պատրաստ է ազատագրական եւ վրէժխնդրական յեղափոխական շարժումի մը,

օգտուելով Պալքանեան Պատերազմէն, եւ անհամբեր ինծի կը սպասէ ապստամբութեան դրօշը պարզելու համար: Ուստի անհրաժեշտ է որ մեկնիմ անմիջապէս: Տամատեան իր 1912 Հոկտ. 20 թուակիր նամակով կը գրէ Ամերիկայի Ռամկավար Կեդրոնին, թէ «Մուշեղ Եպիսկոպոսի ներկայութիւնը հրաշագործ ազդեցութիւն կը գործէ Կիլիկիոյ մէջ», հետեւաբար կը յանձնարարէ իրենց որ նամակը անձամբ բերեն ինծի, եւ զիս համոզեն անմիջապէս մեկնելու:

Արդէն Փետր. 8 թուական «ԽՈՐՀՐԴԱՊԱՀԱԿԱՆ» գաղտնի Շրջաբերականով մը, ուղղուած Հ.Ս.Ռ. Ակումբներու, Մ. Տամատեան եւ Պերճ Օհանեան, իրենց «Ազգային Պաշտպանութեան Քոմիթէ»ի դիւանի հանգամանքով, յայտարարած էին, թէ Հ.Ս.Ռ. Կուսակցութեան Կեդր. Վարչութիւնը «չը գիտցաւ իր կացութեան բարձրութեան վրայ գտնուիլ: Չորս տարուան ընթացքին նոյն իսկ խաղաղ զարգացման գործունէութեան շաւղին մէջ, Կեդր. Ակումբը չը գիտցաւ կենդանութեան եւ ոգեւորութեան մթնոլորտ մը ստեղծել, ազատական շունչ մը ներշնչել շարքերուն»: Թէ Կեդր. Վարչութիւնը, իր «վերջին շրջաբերական»ով, «իր սնանկութեան ամենէն խոշոր վաւերագիրը» ստորագրած եղաւ⁸²: Այսպիսի բացատրութիւններէ յետոյ, անոնք կը յայտարարէին – միշտ *խորհրդապահօրէն* – թէ իրենք Համագային գործակցութեան մը հետամուտ, հիմնած են «Ս.Ռ. Կուսակցութենէն դուրս, բայց գլխաւորապէս անոր կենդանի եւ խանդավառ ոյժերուն վրայ կոթնած, Ազգ. Պաշտպանութեան Քոմիթէն»: Ինծի եղած հրաւերը, ուրեմն, ոչ թէ Հ.Ս.Ռ. Կուսակցութենէն կուգար, այլ Ազգ. Պաշտպանութեան Քոմիթէի կողմէն եւ յանուն *Կիլիկիոյ ամբողջ ժողովուրդին* եւ անոր կողմէ:

Ինծի ներկայացուած նամակներէն իմանալով այս ամէնը, կ'ըսեմ ինծի ներկայացող Ռամկավար *խորրոներուն*. «Հարկ չկայ զիս համոզելու ոեւէ փորձ ընել: Կացութեան մը առջեւ կը գտնուինք: Պարագան ծանրակշիռ է եւ վայրկեանը նուիրական: Ազատագրական եւ վրէժխնդրական շարժում մը հոգիիս ամենամօտ զգացումն է եղած, մանաւանդ Կիլիկեան եղեռնէն յետոյ: Ես սիրայօժար պատրաստ եմ մինչեւ մահ քալելու, երբ յանուն ազգային ազատագրութեան գայլ կը պահանջէ իմ ժողովուրդս: Բայց այժմէն կը հաղորդեմ ձեզ, եւ ձեր միջոցով Գահիրէ, մեր բարեկամներուն, թէ չեմ հաւատարարուեստական յեղափոխութեան մը, որ կրնայ բռնի պարտադրուիլ անպատրաստ եւ գործելու անտրամադիր ժողովուրդի մը: Ինծի համար նուիրական [է] ժողովուրդին ձայնը: Հեռագրեցէք, թէ անմիջապէս պիտի մեկնիմ: Եւ միեւնոյն ժամանակ նամակով հաղորդեցէք այս խնդրոյն սկզբնաւորութեան համար իմ տեսակէտներս»: Եւ անմիջապէս մեկնումի պատրաստութիւններս կը տեսնեմ: Տպարան, հրատարակչական կիսատ գործեր, հովութիւն կը թողում երեսի վրայ, անշուշտ նիւթական-անձնական շահերու զոհողութեամբ, եւ կը մեկնիմ Ամերիկայէն:

Մեկնած պահուս իսկ գիտէի, թէ դէպի յեղափոխական-քաղաքական արկածախնդրութիւն մը կը դիմեմ: Նախընթաց փորձերու եւ փորձութեան դասերէն օգտուած՝

⁸² Իսեղճ Տամատեան, այս տողերը ստորագրած պահուն, թերեւս իսկ չէր կրնար երեւակայել, թէ Ամերիկայի Ռամկավար ակումբներն ալ վարակուած էին անդամալուծութեան այդ ախտէն եւ կուսակցութեան մէջ անարժաններու եւ վատերու մուտքը սպանած էր Վեր[ակազմեալ] Հնչակեան շարքային մաքուր տոհմ յեղափոխական ոգին:

անշուշտ պիտի չկրնայի կուրօրէն նետուիլ այդ անժամօթին գիրկը, որ կրնար թերեւս պսակել մեր յոյսերը, եւ որ գուցէ կրնար աղիտաբեր ըլլալ երկրի բնակչութեան: Ես անձնապէս տրամադիր կը զգայի ինքզինքս մահը արհամարհելու եւ վազելու անոր ընդառաջ: Բայց իրաւունք չունէի ինծի հետ դէպի կորուստ առաջնորդել ամբողջ ժողովուրդ մը, բռնի անոր պարտադրելով արուեստական յեղափոխութենէ մը յառաջ գալիք պատասխանատւութիւնն ու վտանգները: Եւ որպէս զի Եգիպտոս հասնելուս կարենայի վստահօրէն քալել այդ լպրծուն գետնի վրայ, ճամբորդութեանս ընթացքին *հարցարան-նամակներ* կը գրեմ կիլիկեան զանազան շրջաններ, մանրամասնօրէն տեղեկանալու համար երկրի զինուորական կացութեան, ժողովրդային հոգեբանութեան եւ միտումներուն, դիմադրութեան յօժարականութեան, կորովին եւ պատրաստութիւններու մասին. քանի որ նամակով ինծի հաղորդուած էր, թէ *Կիլիկիոյ ամբողջ ժողովուրդը կազմ եւ պատրաստ, ինծի կը սպասէ*: Նամակներովս հրահանգած էի իրենց պատասխանները փութացնել Եգիպտոսի հասցէիս:

Եւ որովհետեւ վստահ էի, թէ Փարիզի մեր շրջանակները պէտք էր տեղեակ եղած ըլլային յեղափոխական այսպիսի ձեռնարկի մը ծրագրին, պահ մը կանգ կ'առնում Փարիզ, շօշափելու համար Ա[րշակ] Չօպանեանի եւ ուրիշներու տրամադրութիւնները ծրագրին շուրջ. Ազգ. Պատուիրակութեան վերաբերումը այս խնդրոյն հանդէպ. եւ հայ հարուստներու դրամական օգնութեան յօժարականութեան չափը: Անկէ կ'անցնիմ Չուիցերիա, տեսակցելու համար մասնաւորապէս Ա[ւետիս] Ահարոնեանի հետ, որուն կը հանդիպիմ Ժընէվի մէջ, հիւանդութեան անկողնի մէջ: Իրեն կը պարզեմ Ազգ. Պաշտպանութեան Զոմիթէի ծրագիրը, իմ ճամբորդութեանս նպատակը այս ծրագրին իրագործման ձեռնարկելու համար, եւ շէշտելու կուսակցութիւններու ամբողջական համագործակցութիւնը ինքնապաշտպանութեան ծրագրի մը շուրջ եւ ազգային ազատագրութեան անունով, ինչ որ 1908ին թելադրած էի Ակնունիի եւ Ռ[ուբէն] Չարդարեանի: Ահարոնեան, հիւանդ եւ խրատուած իրօթիհատականներու դաւերէն, իր կատարեալ համամտութիւնը կը յայտնէ ինծի եւ կը յանձնարարէ, խնդրանքով, որ Պոլիս երթամ, տեսնելու իր ընկերները եւ անոնց հաղորդելով իր կատարեալ համամտութիւնը, համախոհութեան մը գանք կուսակցական համագործակցութեան անհրաժեշտ գործին մէջ: Այս այցելութեանս միջոցին, հանդիպում մը կ'ունենամ նաեւ Երուսաղէմի Պէյ Աղաթօնի [հետ], որ այդ պահուն Ժընէվ կը բնակէր:

Չմոռնամ ըսելու, թէ ճամբորդութեանս միջոցին գրած էի Տամատեանին եւ խնդրած, որպէս զի առայժմ բացարձակապէս գաղտնի պահուի Կիլիկեան ապստամբութեան ծրագիրը: Եւ սակայն երբ իրիկուն մը մեր նաւը Ադերսանդրիա կը հասնի եւ ես դուրս ելած, դէպի պանդոկ կ'երթամ մութին մէջէն, առջեւէս քալող կարգ մը մարդոց խօսակցութիւնը կը լսեմ, որոնք իրարու կը հաղորդեն Կիլիկիոյ ապստամբութեան մասին լուրեր, ինչպէս նաեւ այս օրերուն «Մուշեղ եպիսկոպոսի ժամանումը»: Խեղճերը չէին գիտեր, թէ մօտէն իրենց հետեւող ստուերը ես իսկ եմ արդէն, նոյն երեկոյին հասած: Ուրեմն ապստամբական ծրագիրը արդէն իսկ շուկայի ապրանք եղած է: Այս երեւոյթին զուգընթացաբար, երեկոյին մեր ընկերական հաւաքոյթի միջոցին գնահատումով ականատես կ'ըլլամ այն մեծ խանդավառութեան, զոր կ'ապրին ապստամբութեան ծրագրին հեղինակները՝ Մ. Տամատեան, Պ[երճ] Օհանեան, Յ[ակոբ] Փափագեան,

Բ[արսեղ] Օհանեան եւ ուրիշներ, որոնց կարգին Ապահ, Ատոմ Ասլանեան եւայլն: Դժբախտաբար խանդավառութիւնս երկար չը տւեր: Հետզհետէ հասնող պատասխանները, նամակ-տեղեկագիրները, անձնապէս Կիլիկիոյ շրջաններէն մեզի դրկուած պատուիրակներ, առանց բացառութեան, կը շեշտեն վայրկեանին անյարմարութիւնը եւ Կիլիկիոյ ամբողջ ժողովուրդին հակայեղափոխական տրամադրութիւնը:

Մենք թելէտ այս խնդիրներու մասին ամփոփ տեղեկութիւններ տուած ենք մեր ԴԻՏՈՒՄՆԵՐ ԵՒ ԴԱՏՈՒՄՆԵՐ հատորին մէջ (էջ 76–84. §234), «Կիլիկեան Չաւեշտը» վերնագրին տակ, բայց այս անգամ անհրաժեշտ կը նկատեմ այդ հրատարակութեանս մէջ ակնարկուած նամակներուն ամբողջութիւնը դնել, այսպէսով կորուստէ փրկած ըլլալու համար անոնց գոյութիւնը, որոնք օր մը կրնան պատմական եւ գրական արժէք մը ներկայացնել: Եւ այդ նամակները յառաջ կը բերենք իրենց ժամանակագրական կարգով:

Կիլիկիոյ Վեհ. Կաթողիկոս Սահակ Խապայեան սա նամակը կը գրէ ինձ, առանց անունս յիշատակելու նամակին վրայ

1912 Դեկտ. 23

Ապրած եմ այնքան, որ այլ եւս երկիւղ չունիմ բաժնուելէ կեանքէ մը, որ տառապանք կոչուելէ զատ ուրիշ անունի արժանի չէ: Հետեւաբար խօսիլ, երագել, եւ յոյսերով ոգեւորիլ շատ անելի պատշաճ է Ձեր հասակին, քան ռելէ մէկուն, որ առջին տակաւին կեանքի երկայն ասպարէզ մը կը տեսնէ:

Տարապարտ սխալ մի է մտածել, թէ գերեզմանի մօտ եղողներուն մէջ յոյսն արթնցնել այնքան դժուար է ո՛րքան ապառաժի մը վրայ ինկած սերմէն պտուղ սպասել: Ապալեր անապատները յորամարգիով լիացուցին բռնութենէ խուսափող ժողովուրդ մը, եւ ամուլ ապառաժները ջրով զովացուցին ազատութեան ծարաւով պապակողները:

Սակայն ապառաժները փշրող գաւազանը եւ անապատները բեղմնաւորող ոյժը կը պակսի մեզմէ⁸³. որովհետեւ Կիլիկիան տակաւին կ'անցնի այն առուններէն, որ իր սիրելիներու արիւնէն կազմուած է. որովհետեւ Կիլիկիան կ'անցնի այն մոխրակոյտերուն վրայ[էն], որոնք բլուրներ եւ լեռներ ձեւացուցած են նուիրական օճախներու դերբուկներով, եւ որովհետեւ Կիլիկիան տակաւին իր կորսնցուցած հացի փշրանքներու կարօտով կը գալարուի:

Ինքնակամ պատերազմի մղուող տէրութիւնք տասնեակ տարիներու կը կարօտին իրենց կորուսած նիւթական եւ բարոյական ոյժերուն վերստացման համար: Դժբախտ Կիլիկիան քանի՞ տասնեակներու պէտք ունի իր մարտիրոսներուն աճիւններէն վերկենցաղելու համար:

Իրաց այս վիճակին մէջ կարգ մը հարցումներու դրական պատասխաններ չունենալէ զատ, ամէն կերպով, անցեալի, ներկայի, եթէ տարօրինակ չէ, ըսենք նաեւ ապագայի փորձառութեամբ հակառակ ենք այն գաղափարին, թէ նահա-

⁸³ Նախորդ եւ այս նախադասութիւնները առնչուած են Հին Կտակարանի հրեական առասպելներուն- Վ.Ղ.:

տակ ազգը օր ու արեւ պիտի տեսնէ շնորհիւ դիւանագիտութեան, զոր երէկ պոռնիկ եւ շնական մակդիրներով կ'որակէինք եւ կը հրատարակէինք:

Եթէ հակառակ մեր մարմնացեալ գաղափարին երէկի պոռնիկ եւ այսօրուայ սրբացեալ դիւանագիտութիւնը... ազատէ Հայութիւնը իր խաչակրութենէն, ապացուցած պիտի ըլլայ իր փառքն եղող քաղաքակրթութեան պարզ դիմակ մը չլլալուն: Եթէ երեք հարիւր հազարներու եւ բովանդակ Կիլիկիոյ ողջակի-զումը բաւական չէ Եւրոպայի Մոդոքը հաշտեցնելու, շարունակենք ողջակիզուելու սուրբ գործը. երկինք ալ եթէ չհաշտուի, պիտի բթանան մեր դահիճներուն սուրբերը, ու պիտի ըսեն ու վկայեն մեր կորովն ու կենսունակութիւնը, զոր Եդիշէ հազար հինգ հարիւր տարիներէ ի վեր պահած է, յանուն մոխրապաշտ Մոզպետին:

Թերեւս այս ալ բան մը չարժէ յաչս ոմանց. սակայն ինչո՞ւ մոռնանք եւ այն նոր վկայութիւնը, զոր ողջամիտ Եւրոպան տուաւ յետ Համիտի հայակեր գազանութեան եւ սահմանադրական կառավարութեան Կիլիկիայի եղեռնին, թէ Հայը իր քաղաքակրթական բոլոր յատկութիւններով գոհն եղաւ վայրենի եւ անասնական բնագոյով ապրող ցեղի մը: Հակառակ այս սփոփարար վկայութեան որեւէ քայլ չը պիտի՞ համարուի ծայրագոյն յիմարութիւն մեր ձեռքով ջնջելու խեղկատակութեան, առանց իրական շահ մը ձեռք բերելու:

Ըլլան թերեւս ըսողներ վրէժխնդրութեան արդար գայրոյթով, կոտորածի փոխարէն կոտորած. անուրանալի իրաւունք: Բայց այն ժողովուրդին համար, որ ուտելու հաց ունի, ինքնապաշտպանութեան գէնք չունենալէ զատ, նաեւ ցեղակից կամ կրօնակից հօգօր նեցուկներ եւ յոյսեր կ'ունենայ:

Մենք ունի՞նք ցեղակիցներ: Ընկերաբաններ եւ պատմագէտներ վարանքի մէջ են այս մասին. իսկ կրօնակիցներ թէեւ ունինք, բայց կրօնքի էական ոգին թողած, դաւանաբանական ճղճիմ խտրանքներ անկործանելի միջնորմներ կանգնած են մեր եւ Եւրոպայի մէջ:

Դարի կամ լայնմտութեան պահանջքին հետեւելով նախնեաց իմաստութեան, թող ըսեն ոմանք յիմարութեան երես դարձնենք եւ կոխտենք այս խտրանքը, որ զմեզ կը բաժնեն օրթոտոքսութենէ, պապականութենէ եւ կամ բողոքականութենէ. ի՞նչ պիտի ըլլայ վաստկաձնիս:

Ինքնօրէնութիւն կամ անկախութի՞ւն, ա՛խ, մեր ժողովուրդի վայրավատին վիճակը, մանաւանդ ներքին լայնափեռեկ պատառումները բնաւ յոյս չեն ներշնչեր, թէ անկախութիւնը աւելի երջանկաբեր պիտի ըլլայ ազգին, որուն գլուխները քիչ մը պատռուեցան Օսմանեան թղթայ սահմանադրութենէն նպաստաւորութիւններէն⁸⁴: Խորին ցաւ կը զգամք յիշելէ զանազան կուսակցութիւնները, որոնք հազարաւոր տարիներու նուիրագործած Հայ անունէն շատ աւելի փառք եւ պատիւ կը համարին իրենց նորահնար անունները:

Թեւարկութիւն կամ գրաւո՞ւմ հայաբնակ գաւառներու այս կամ այն պետութենէն. չենք կարող հաշտուիլ այդ գաղափարին, որ ստրկութեան լուծի

⁸⁴ Ակնարկութիւնը դաշնակցականներուն ուղղուած է:

փոփոխումեն զատ՝ թերեւս ազգութեան անէացումն ալ ըլլայ:

Մնա՞նք ներկայ ստրկութեան վիճակին մէջ. ո՛չ, հազար անգամ ո՛չ, այլ պահանջեմք մեր մարդկային իրաւունքները, կեանքի, պատուոյ, ընչից ապահովութիւնը. պահանջեմք անոնցմէ, որոնք կապտած են եւ կը կապտեն. պահանջեմք անոնցմէ, որոնց նուիրած ենք, վեց հարիւր տարիներէ ի վեր, մեր քիւտը, մեր արիւնը, մեր խելքը, կեանքն ու վաստակը: Եթէ գրկողները չը ճանաչեն գրկեալին իրաւունքները, հեռաւորներէն հանդիսատեսի դերէն աւելին սպասել, անմտութիւն չըսելու համար, խելօքութիւն չէ:

Ընդհանրական Հայրապետին դիմումը, արտասահմանի հայերուն ցոյցերը ու բողոքները բաւական են ազդելու, բաւական են Եւրոպայի հանրային կարծիքը պատրաստելու ի նպաստ դժբախտ ազգին: Իսկ եթէ ատկէ աւելին կը պահանջեն, նոր արիւն, նոր սպանդ, Կիլիկիան այդպիսի զոհաբերութեան ոչ ոյժ ունի եւ ո՛չ արիւնը:

Չորս հինգ Հանընցի հագիւ քսանէն աւելի Ձէյթունցի փախստականներէ, որ իրենց օրապահիկը հայթայթելու համար ազգակցաց պատուհասն եղած են, միթէ կարելի՞ է ակնկալել, որ անձնուէր հերոսներ ըլլան ազգի մը ազատագրութեան:

Ինչպէս կը տեսնուի այս տողերէն, Կաթողիկոսին ինծի դրկած այս *անվերնագիր* եւ *անստորագիր* բայց ինքնագիր քաղաքական տեսութեան ամփոփումը պարզապէս պատասխանն է իմ նամակ-հարցարանիս, եւ որ ցոյց կուտայ, թէ Կիլիկիոյ մէջ յեղափոխական շարժումի մը փափաքողները միայն 20–25 փախստականներ են եւ ո՛չ աւելի: Այս տեսութեան կը յաջորդէ Կաթողիկոսին ինծի ուղղած հետեւեալ ինքնագիր նամակը:

1912 Դեկտ. 25. ի Սիս

Սիրելի Մուշեղ Արքեպիսկոպոս

Փարիզէն գրածնիդ ընդունած էինք, որով կ'ըսէիք, թէ *կենսական* եւ *վնասական* խնդիրներու համար Եգիպտոս պիտի անցնիք մի քանի օրով: Չարմացանք, երբ յանակնկալս «Հարցարանի» մը հետ Եգիպտոս հասած ըլլալու լուրը առինք: Ի՞նչ ըրիք Եւրոպիոյ մէջ եւ ի՞նչ պիտի ընէք այդ տեղ: Պօղոս փաշա ուրիշները յԵւրոպա կը հրաւիրէ եւ ինքը կը վերադառնայ. լուսաբանութեան կարօտ պարագաներ:

Որքան որ չէինք փափաքիր որ դուք յանձն առնէիք այդ նոր առաքելութիւնը, նոյնքան չէինք փափաքիր որ փաշան թուրք մտայնութիւնը գերազրգող քաղաքականութեան միջամտէր, եւ հակառակ «բարեգործական Միութեան սկզբունքին» կասկածանքի ենթարկէր⁸⁵:

⁸⁵ Կաթողիկոսը իր այս տողերով այն համոզումին հասած կը թուի ըլլալ, թէ Պօղոս փաշա համամիտ է մեր ծրագրին գործադրութեան եւ Եգիպտոս կը վերադառնայ գործակցելու համար մեզի: Պարզ թիրիմացութիւն մըն է եղածը, որ յառաջ եկած է նոյն օրերուն Պօղոս

«Հարցարանը» այնքան երազական եւ անիրականանալի բաներ կը պարունակէր, որ եթէ ձեր գրչով գրուած չըլլար, չը պիտի հաւատայի, թէ Կիլիկիոյ ներքին կեանքին անձանօթի մը ոճով ալ կրնաք գրել: Ամենէն աւելի դուք ուսումնասիրած էք, աղետէն առաջ, Կիլիկիայի հոգեբանութիւնը, անկէ վերջն ալ ո՛չ կեանք եւ ո՛չ հոգի մնաց, որ կարող ըլլային թելադրել Ձեզ այդ հարցարանը:

Իմ կարծիքս ալ ուզած էք իմանալ. որքան որ ուրիշ գրով բացատրուած է մեր մտածելու եղանակը (- կ'ակնարկէ Դեկտ. 23 թուակիր նամակին.- ծանօթ.), համառօտիւ հոս ալ կ'ընեմ. սոսկացած եմ ձեր բարեկամներէն, յանիրաւի, ձեզ վերագրուածէն⁸⁶. չեմ փափաքիր իրաւամբ ժառանգել Կիլիկիայի արիւնով օծուած ըլլալս:

Կ'ուզեն երկիւղի, կ'ուզեն ծերութեան կամ կոշտ նախապաշարման վերագրեն, մենք հակառակ ենք վրէժ լուծելու հակամարդկային գաղափարին: Թողունք, որ անմոռնչ ի սպանդ վարուած ատեննիս ըսողներ եղան, թրքամոլ եւրոպացիներէն, թէ «Հայերը առիթ տուին» ու հասարակաց կարծիքը գայթակղեցուցին, ինչե՞ր չը պիտի ըսեն, եթէ ուղիղ, ըստ մեզ սխալ, քայլ մը առնենք, Բիւր Լոթիները, «նապաստակի ցեղին» վրայ աւելցնելով ըմբոստ եւ անիշխանական մակդիրները հայասեր եւ արեւելագէտ Պետուներու (= Պետութիւններու?)⁸⁷ նպաստաւոր կարծիքը չարափոխելու համար⁸⁸:

Պիտի առարկուի. այդպիսի աննշան լուտանք ու լորձունքներէն վախճալով մնա՞նք անասնական համակերպութեան մէջ: Ո՛չ. աւելի կորովով, աւելի յարատեւութեամբ պահանջենք 61րդ յօդուածի, կամ 95ի «Մայիսեան ծրագրի» Կայս[երական] բարձրագոյն քոմիտէի մը ձեռքով գործադրութիւնը. պահանջենք կեանքի, ինչքի եւ պատուոյ իրական ապահովութիւնը, եւ պահանջենք ո՛չ թէ Եւրոպայէն, որ թերեւս «թելարկութիւն» անուշ եւ քաղցրահնչիւն բառով գրաւէ մեր նուիրական ծննդավայրը եւ եւրոպական անօթիներով լեցնէ. պահանջենք օսմ. կառավարութենէն⁸⁹ յօգուտ մեր եւ յօգուտ իրեն: Եթէ ապրիլ

փաշայի եւ իմ ճամբորդութեան գուգադիպումէն:

⁸⁶ Կաթողիկոսին այս տողերէն այնպէս կը հասկցուի, թէ երբ մէկ կողմէ զիս հրաւիրող Ազգ. Պաշտպանութեան Քոմիտէն զիս գործի կը հրաւիրէ *Կիլիկիոյ ամբողջ ժողովուրդին անունով*, միւս կողմէն նոյն այդ Քոմիտէն իր շրջաբերականներով ջանացած է հաւատացնել Կիլիկիոյ ժողովուրդին, թէ ես եմ որ կը կազմակերպեմ յեղափոխական այդ շարժումը: Տարիներ յետոյ ստուգեցի այս պարագան:

⁸⁷ Մերոքեանի աւելցուցած փակածեալ թեական «Պետութիւն?»-ը կրնայ ճիշդ նկատուիլ միայն «արեւելագէտ» բառը «արեւելքցի սիրող» կամ «արեւելքցիի բարեկամ» իմաստով ընդունուելու պարագային- Վ.Ղ.:

⁸⁸ Փիւր Լոթի գրչանունով ծանօթ ֆրանսացի ծովային սպայ եւ ֆրանսական կանառի անդամ արձակագիրը հայ գրականութեան մէջ ապահոված է թրքասիրութեան եւ հայատեցութեան խորհրդանշի յատուկ պատուանդան մը՝ հայերը վարկաբեկելով թուրքերուն շռայլած իր գովեստներուն եւ թրքական շահեր պաշտպանելուն համար- Վ.Ղ.:

⁸⁹ Սահակ Կաթողիկոս չափազանց հաւատք ունի Թուրքիոյ բարեացակամութեան մասին:

կը սիրենք ներկայ մեր վիճակով, զուրկ բարձրագոյն կրթութենէ, զուրկ տնտեսական ապահով վիճակէ, եւ զուրկ քաղաքակրթական նոյն իսկ տարրական միջոցներէ, չենք կարող մրցիլ եւրոպացի գիտունին, երկրագործին, գիւղատնտեսին եւ հարուստին հետ, այլ կրաւորական դիրքի ու դերի մէջ պիտի մնանք: Նոքա լիօրէն պիտի վայելեն երկրին կաթն ու մեղրը, իսկ մենք չէ՛նք եւ թանին կարօտը պիտի քաշենք: Մենք ապահովեալ կեանքով կրնանք ապրիլ մեզմէ նուազ եւ ստոր *կուլտուրա* [= մշակոյթ] ունեցող ցեղին հետ եւ անոր մէջ, եւ այդ միակ պատճառն է որ կը գովուինք իբր քաղաքակրթութեան սերմերը պահող կամ ցանող Արեւելքի խոպան եւ կորդ դաշտերուն մէջ: Ինչո՞ւ նոյն համբաւը չեն վայելեր գաղթական հայերը:

Թերեւս ըսէք որ «Հարցարանին» իսկական պատասխանը չէ գրածներս: Սակայն Ձեր գրածներն ալ ա՛յնքան լակոնական եւ մթին են, որ մեր միգամած միտքին անթափանց կը մնան: Ունի՞ք որոշ եւ յուսալիք ծրագիր, քիչ շատ պարզել պէտք է, որ ըստ այնմ նոր գաղափար կազմէինք, կամ պիտի գաղափարնիս փոխէինք:

Հայրական սիրոյ ողջունիւ եւ ջերմագին մաղթանքներով

Մնամք Աղօթարար
Սահակ Կաթողիկոս Կիլիկիոյ

Վերի երկու նամակներով յայտնաբերուած Կաթողիկոսին ազգային-քաղաքական ըմբռնումը ներկայացնելով հանդերձ, կը կարծեմ թէ Կաթողիկոսը ինքն ալ համամիտ չէ իր որդեգրել ուզած տեսութիւններուն: Գոնէ անուղղակի կերպով այդ ցոյց կուտայ մեր քարտուղարին հետեւեալ նամակը:

Մերսին 29 Դեկտ. 912

Սիրեցեալ Սրբազան

Ութն օր առաջ առի Հարցարան-նամակդ եւ շաբաթ օրն իսկ Ճիհանի ճամբով գացի Սիւ: Արդէն գիտէինք, թէ Վեհափառը նամակ առած է Ձենէ Փարիզէն, որովհետեւ պարունակութիւնը համառօտաբար մեզ հաղորդած էր: Երկար տեսակցեցանք իր հետ. հակառակ չէ որեւէ ծրագրի, ըլլայ վրէժխնդրական, ըլլայ յաջողութեան մը համար, օրինակ ոյժ տալ Հայկական խնդրոյն կարգադրութեան, կամ ա՛յն է առիթ ստեղծելով եւրոպական միջամտութեան, հաւանաբար ապահովել ֆրանսական occupation [= գրաւում] մը, սակայն ապահովուիլ կ'ուզէ, դրական ապացոյցներով, որոնց ծնելիք արդիւնքը արժէ նուիրուելիք զոհողութիւնը, եւ նպատակակէտին կարելի ըլլայ հասնիլ անվրէպ: Եթէ ոչ ամենադոյզն արարք մը կը յայտարարէ, թէ պիտի արգիլէ իր բոլոր

Թուրքը բարեկարգութեան բարեկամ չէ, թէ իսկ ան ըլլայ ի նպաստ թուրքին: Ան կը զոջայ կանխաւ քրիստոնէայ տարրերը բնաջնջած չըլլալուն: Ազատագրութեան ձգտող վերջին քրիստոնէայ տարրը հայն է. եւ թուրքերը, անոր մասին բարեկարգութիւն մտածելէ աւելի, մտադրած էին բնաջնջել հայը, ինչպէս որ ըր[ին] 1915–16ին:

միջոցներով: Սրբազան, իրաւացի կը գտնեմ այս տեսակէտը. Կաթողիկոսը իր դերին մէջն է: Ես պնդեցի, որ ինքը մեկին եւ որոշ ըլլայ այս գործին մէջ եւ եթէ համամիտ է՝ բացայայտօրէն պարզէ իր տեսութիւնները, եթէ հակառակ է՝ փաստացիօրէն բացատրէ իր պատճառաբանութիւնները: Իր ներփակ նամակը եւ միւս գիրը, պէտք է խոստովանիլ, թէ վճռական չեն, սակայն իրաւունք չունենք աւելին սպասելու, քանի որ ո՛չ որոշ տեղեկութիւն տուած էիք, եւ ո՛չ ալ լուսաբանելիք ծանօթութիւններ: Արդէն թէ՛ նա եւ թէ՛ մենք համամիտ չենք, որ ամենակարելոր ծանօթութիւնք գրով հաղորդուին մեզ: Ամենավստահելի միջոցն է, որ գործին յարմար մէկը առանց յապաղումի Եգիպտոս երթալով անձամբ անձին տեսակցի Ձեր բոլորին հետ, խորհրդակցի եւ լուսաբանէ զՁեզ, եւ Ձեր ծրագիրներուն նկատմամբ լիակատար տեղեկութիւններ իւրացնելով, հասկացողութիւն գոյանալէ վերջ, վերադառնայ եւ այլ եւս հարկ չը մնայ սկզբունքով զբաղուելու, եւ անհրաժեշտ *détail*ները [= մանրամասնութիւնները] միայն ձեռուին ու որոշուին: Այս մէկը, աւելորդ է ըսել, միայն ես կրնամ ըլլալ, քանի որ Կաթողիկոսը ոչ ոքի հաւատալու տրամադրութիւն ունի այս պաշտօնին համար, եւ մանաւանդ կը փափաքի, որ Պօղոս փաշային համոզումը, տեսութիւնը եւ Ձեր շօշափած խնդրոց մասին իր վերաբերումները եւ անձամբ լսեմ եւ իրեն հաղորդեմ: Չորրորդի մը գոյութիւնը, բացի Ձենէ, իրեն համար կասկած պիտի արթնցնէ: Նայեցէք, խորհրդակցեցէք. եթէ աւելորդ չդատէք, ինչ որ մեր կարծիքով թերեւաբար վերաբերուելու տպաւորութիւնը պիտի թողու Կաթողիկոսին վրայ, անմիջապէս հեռագրեցէք, որ փութամ հոդ: Արդէն մեր պատրուակը որոշած ենք. ես հիւանդութիւնս դարմանել տալու խնդրանօք Քաղաք[ական] Ժողովէն Պէյրութ երթալու արտօնութիւն պիտի ստանամ, այսչափ: Պէյրութէն կը գրեմ, թէ բժշկին դիմելս յանձնարարուեցաւ եւայլն: Ահաւասիկ հեռագրի հասցէ. Nahabedian, Église arménienne, Adana – Achetez. Aram (ստորգ.): Հայր Շահէն ալ թէւս սկզբունքով համամիտ է Կաթողիկոսին, սակայն անիկա հարկ կը տեսնէ, որ փոխանակ Սիս մնալու, այլ եւս Ատանա իջնէ, կամ լաւ եւս Մէրսին, եւ առիթ ունենայ Կիպրոսի մէջ պատրաստ գտնուելիք յարմարագոյն անձին հետ բանակց[ելու] կանոնաւորաբար, եւ անզգալի կերպով, եւ միւս կողմէն Բ. Դրան դրկ[ելու] հետզհետէ գրեր, բողոքներ, առաջարկներ եւայլն, կացութեան անիրաւութեանց եւ բարեկարգութեան մասին, զգացնել տալու համար, թէ ընդհանուրի պահանջին համաձայն է, թէ Կիլիկիան ալ ա՛լ աւելի դժգոհ է, եւ թէ հարկ է զայն ալ աչքի առջեւ ունենալ եւայլն: Այս հիմներուն վրայ երկար խօսեցայ Կաթողիկոսին, որ վերջապէս հաւանեցաւ, կա՛մ այն է Ծնունդէն քանի մը օր առաջ, եւ կամ 1–2 օր վերջ Ատանա պիտի իջնէ: Միեւնոյն ժամանակ իրեն պէտք էիք աւելի ընդարձակ տեղեկութիւններ հաղորդել Դեսպանաժողովին ըլլալիք դիմումին եւայլն եւայլնի մասին⁹⁰, որովհետեւ թերթերու հատուկտոր տեղեկութիւններէ դուրս

⁹⁰ Կաթողիկոսը սխալ ըմբռնումով մը մեր յեղափոխական ծրագիրը կը շփոթէ Պօղոս փաշային կազմած Ազգ. Պատուիրակութեան դիւանագիտական ձեռնարկին հետ եւ կը

ոչինչ գիտենք: Խեղճ մարդը Պատրիարքարան գրած էլ գոնե իրենց գիտցածը իրեն հաղորդել խնդրած է, որպես զի եթե իրեն ալ բան մը վիճակի, փութայ գործել. պատասխան անգամ չէ առած⁹¹:

Գալով ձեր հարցումներու պատասխանին, ո՛չ մէկ տեղ զինուած կարելի է նկատել Կիլիկիան, եւ այս ցաւալի իրողութիւնը ծանօթ պէտք է ըլլայ ձեզի: Ուլնիա, Հանքն եւ Չոզ Մարզուան, որոնց զէնքերն անգամ անկարելոր են, կրնան դիմանալ թերեւս 15–30 օր, սակայն չեմ յուսար յարձակումներ գործել կարենան, քանի որ ոչ մասնագէտ կառավարող մը կայ, ո՛չ դրամ, ո՛չ ուտեստ: Չինուորական կրթութիւն առած մարդիկ պէտք են, նոր ու վստահելի դէմքեր, որոնք տեղացի անձնուէր եւ փորձառու անձերու հետ կրնան ապահովել յաջողութիւնը: Հասան Պէյի իր կարողութեան չափով զինուած է, սակայն կազմակերպող ոյժ մը պէտք է, որ յաջողութեամբ եւ ճիշդ ժամանակին հոն հաւաքէ շրջակայ գիւղերը, եւ թէ զանոնք պաշտպանէ, եւ թէ գործին օգտակար ըլլայ: Միս եւ Ատանա ոչ իսկ կրնամ երեւակայել որ խումբեր կազմել կարենա[ն] յարձակումներու համար: Եթէ ծանօթ գործիչներ, օրինակ, Անդրանիկի, Ապահի եւ այլնի նման առնուազն երկուքական հոգի զան Կիլիկիա, եւ ամէն անհրաժեշտ պատրաստութեանց լիուլի ի գլուխ հանուէլէն վերջ գործի սկսին, կարելի է այս թմրած ժողովուրդէն քանի մը անձնուէր գտնել. հակառակ պարագային մեծ ցաւ է ըսել, թէ ամենափոքր յոյս մը տաճել խելքի բան չէ: Կաթողիկոսին վրայ զէշ տպաւորութիւն ըրած է Ձեր նամակով Կիլիկիան Գերմանիոյ բաժին ցոյց տալէ վերջ, յաջողով շարժումի եւ զոհողութեան մասին ճառել. կը կարծէ թէ, անհնար է Կիլիկիոյ ճակատագիրը մեր միջոցներով փոխել, եթէ իրօք Գերմանիոյ տալ որոշուած է: Միթէ ֆրանսական զրահաւորներու եւ զօրքերու Մէրսինը, Տարսոնն ու Ատանան պաշտպանելու Ձեր բառով *ասպահով* պարագան ինչո՞վ կրնաք հաստատել մեր արդար եւ իրաւացի կասկածանքին առջեւ, երբ դուք ալ գիտէք, թէ օտար զրահաւորներու ներկայութեամբ էր որ ճղատուեցաւ Կիլիկիան: Չօրք կայ 2–3 պէտլուկ [= վաշտ կամ զօրաբաժին] Մէրսին, 1–2 թապուր [= զումարտակ] Տարսոն, 2 թապուր Ատանա, 2 պէտլուկ Տէօրթ Եօլ, Միս եւ այլն. Հանքն 400 հատ, Ուլնիա 1200 հատ թնդանօթով. Մարաշ 2–3 պէտլուկ կ'ըսուի: Ասոնցմէ զատ 2000 հատ ալ՝ վրէժով ու ցատումով առի՞ ժանտարմաներ պիտի գան այս կողմերը Մակեդոնիայէն, եւ 2–300 հատ այս օրերուս հասաւ: Նայեցէք, լաւ խորհեցէք, բոլոր հաւանականութիւնները աչքի առջեւ ունենալով, ըստ այնմ ձեր ծրագիրը պատրաստեցէք: Կրնա՞ք ապահովել որ, օրինակ, օտար ոյժեր ըստ ամենայնի մեզ տրամադրեն իրենց ծառայութիւն-

կարծէ, թէ փաշան ալ համակարծիք է մեր գործունէութեան ծրագրին:

⁹¹ Ակնարկութիւնը կը վերաբերի Սահակ Բ.ի Նոյեմբեր կամ Դեկտեմբեր 1912-ին գրած անթուակիր նամակին, ուր ան իր դժգոհութիւնը կը զգացնէր բարենորոգումներու «էջմի-ածնական ծրագիր»ին մասին իր մտքին մէջ մնացած եւ Կիլիկիան ալ անտեսուած ըլլալուն համար: Նամակը կը փակելը ըսելով. «Անցելոյն տխուր փորձերը պարտք կը դնեն մեր վրայ ընելիք քայլերնիս կշիռքով, չափով եւ հասուն գիտակցութեամբ ընել, որպէս զի ապագայի վային ու անէծքին չ'արժանանանք (Ղազարեան, 317–319)- Վ.Ղ.:

ները, կարիպալտեաններու պէս նոյն իսկ ռազմիկներ դրկելով մեր օժանդակութեան⁹², պաշտպանելով՝ զրահաւորներու թնդանօթներու ներքէն՝ շոգենաւերով եւայլն ցամաք հանուելիք հայ մարտիկներն ու զէնքի եւայլնի ցամաք հանուելիք: Եթէ ասոնք անիրականաւի գտնէք, մենք ալ Ձեր ծրագիրները, առանց այս կարգի արտակարգ աջակցութեանց, իրաւունք ունինք անիրականաւի նկատելու: Հոգ չէ, ասանկ չըլլայ ալ, նորէն կ'ուզենք իմանալ Ձեր ծրագիրը, ինչպէս ըսինք յամենայն դէպս անձամբ, քանի որ թղթակցութիւնք կ'երկարին, եւ վտանգաւոր ըլլալէ գերծ չեն:

Յարգանքներ բոլորիդ ալ

Ք[երովբէ] Փափագեան

Յ.Գ.- Ներսէս եպիսկոպոս Հալէպ վերադարձած էր իմ Սիս հասնելէ 5 օր առաջ:

Այս նամակէն յետոյ Եգիպտոս կը հասնի[ն] մեր քարտուղարը, եւ Չոգ Մարգուանէն եւ Այնթապէն ներկայացուցիչներ: Անոնցմէ մեր քաղած տեղեկութիւնները զիս կ'առաջնորդէին սա եզրակացութեան, թէ մեր ձեռնարկելիք շարժումը պիտի ըլլար *արուեստական յեղափոխութիւն* մը, առանց տեղական ժողովուրդին մասնակցութեան, եւ հակառակ՝ անոր կամքին ու յօժարութեան: Եւ մեր ձեռնարկը ողբալի ձախողանք մը պիտի ըլլար, քանի որ Եգիպտոս եկող կիլիկեան պատուիրակներուն գրաւոր թէ բերանացի պահանջներուն, ուզուած արտաքին օժանդակութեան մասին ի վիճակի չէինք ապահովութիւն տալ իրենց: Բաց աստի *անոնք իրենց աչքով տեսած եւ իրենց քաղած տեղեկութիւններով համոզուած էին, թէ մեր Քոմիթէի գործունէութիւնը ոեւէ կապ չունէր Ազգային Պատուիրակութեան դիւանագիտական գործունէութեան հետ, եւ որ կրնար գուցէ վտանգուիլ մեր ծրագրին անպատասխանատու գործադրութեամբը*: Եւ պատուիրակները վերադարձան Կիլիկիա, իրենց հետ տանելով յուսախաբութիւն եւ պատրանք. եւ մեր ձեռնարկելիք յեղափոխական շարժումին հանդէպ զայրոյթ եւ զգուանք: Կացութիւնը այս վիճակին մէջ էր, երբ Արշակ Զօպանեանէն կը ստանամ հետեւեալ նամակը.

Փարիզ 9 Յունվար 1913

Սիրելի բարեկամս

Երէկ Ադաթօն Պէյը տեսայ, որ Անդրանիկեանէն նամակ մը ստացեր է, որով կ'իմացնէ թէ Եգիպտոսի մէջ *courant* [= հոսանք] մը կազմուեր է փաշային դէմ, թէ մինչեւ իսկ կաթողիկոսին հեռագրեր են Եգիպտոսէն բողոքելով փաշային թրքասէր ընթացքին դէմ եւայլն: Խնդրեմ այդ հոսանքին առաջըր առ: Այս տեղի աղաներուն թրքամերձ ուղղութենէն *ոչինչ կը մնայ այժմ*: [Վարչապետ] Բեամիլ փաշային ուղղեալ խնդրագիրը գնաց. բայց հոգ չէ: [Նուպար] Փաշան այժմ այդ

⁹² Ակնարկութիւն 19-րդ դարու իտալացի յեղափոխական եւ գորավար Ճուզեփիէ Կարիպալտիի եւ անոր հետեւորդներուն օտար հողերու վրայ ունեցած դերին՝ յանուն այլոց բարեկալկեանքի- Վ.Դ.:

ուղղություններ բոլորովին ետ կեցած է: [Փարիզի թուրք դեսպան] Բիֆաթ փաշան նորեն ուզած է տեսնել զինքը, *մերժած է*: Երկու անգամ տեսակցած է Իզվոլսքի-ին հետ. բոլորովին լաւ ճամբու մէջ է նորէն:

Վաղուան համար ինծի ժամադրութիւն տուած է: Պիտի տեսակցինք երկա-րօրէն. գաղութներու ներկայացուցիչներու համաժողովի գաղափարը իրակա-նանալու շատ մօտ է: Քանի մը օր առաջ փաշային այդ մասին նամակ գրեցի եւ իր հաւանութիւնը ուզեցի. նամակով տուաւ իր հաւանութիւնը եւ աստոր համար ժամադրութիւն նշանակեց: Եգիպտոսի կողմէ ներկայացուցիչ պիտի ըլլայ այդ համաժողովին Աղաթօն Պէյ: Պիտի կազմենք նաեւ Հայ propagandehi comitè [= քարոզչութեան յանձնաժողով] մը: Այդ գաղափարն ալ եւ առաջարկեցի փաշային, որ հաւանած է:

Պէտք ունինք փաշային անունին եւ անձին: Պէտք չէ՛ վարկաբեկել զայն: Խնդրեմ առաջըր առ այդ հոսանքին, առանց նամակս ունէ մէկուն ցոյց տալու: Կը գրեմ միայն քեզ համար, որպէս զի իրազեկ ըլլաս եւ ըստ այնմ վստահաբար խօսիս: Դեռ շատ բաներ կան ըսելու, բայց նամակով չեմ կրնար գրել: Ձեռքունի հարցը ՓԱԿԷ. անհրաժեշտ է: Այլապէս յիմարութիւն պիտի ըլլար: Այդ ճամբով il n'y a rien à faire [= ոչինչ կրնանք ընել]. եւ գրէ ինձ այդ մասին:

Սիրով քոյդ

Ա. Զօպանեան

Իսկ անթուակիր «ՄՏԵՐՄԱԿԱՆ» նամակով, աւելի կը խորանայ այն յեղափո-խական ծրագրի շուրջ, որուն գործադրութեան համար կանչուած էի Ամերիկայէն, եւ որուն ձեռնարկուելուն ինքն ալ գաղափարակից գտնուած էր Փարիզի մէջ մեր խորհրդակցութիւններու պահուն: Կը գրէր.

Սիրելի բարեկամ

Ձեր երկու նամակները միասին ստացայ: Պատասխանելէ առաջ անգամ մը եւս տեսայ Աղաթօն Պէյը, եւ կը փութամ ձեզի իմացնել որ այս տեղ ունէ *ֆոնտ* [= հիմնադրամ] կազմուած չէ եւ կազմուելիք չունի: Մանրամասնութիւն-ներ տալ աւելորդ է: Էականը սա է որ ունէ յոյս դնելու չէք այստեղ այդպիսի *ֆոնտ* մը կազմուելուն վրայ: Գիտէք, որ արդէն sceptique [= թերահաւատ] էի. կ'ըսէի ձեզի որ եթէ երբեք գումար մը հաւաքուի իսկ, փոքր բան մը պիտի ըլլայ. ան ալ չէ հաւաքուած: [Տիգրան խան] Բլէյկեան ալ նորէն մեկնեցաւ Փարիզէն. կարծեմ Նիս գնաց եւ անկէջ ալ Եգիպտոս պիտի գայ: Il n'y a rien à faire. Նոյն իսկ Հայ պատգամաւորութեան եւ Հայկական Հարցի շուրջ կատարուելիք գործառնութեանց համար պէտք եղած գումարը դեռ հաւաքուած չէ: Հիմա ամէն ջանք ընելու վրայ ենք, որ գոնէ այդ անհրաժեշտ եղող գումարը ձեւանայ:

Աս այսպէս է: Յուսահատելու չէ. եղածովը գործ տեսնելու է, ու տեսնելու է այն գործը, որ կարելի է տեսնել զոյութիւն ունեցող տարրերով: Քեամիլ փաշա-յին նամակը փառաւորապէս դրկեցին, հակառակ իմ ամբողջ ընդդիմութեանս: [Փարիզի Հայկական Մասնախումբի անդամ] Էզնայեանը, որ ձեզի համախոհ

յայտներ է ինքզինքը եւ խոստացեր է փաշային խօսիլ այս մասին, *ոչինչ լուր է փաշային*: Մեր քահանան գրեց Կաթողիկոսին եւ հրահանգ ուզեց: Բայց Կաթողիկոսն պատասխանի ալ չսպասեցին: Փաշան մէկը դրկեր է քահանային վրայ ըսելով, որ եթէ չստորագրէ՝ ինքը կը ձգէ Եգիպտոս կը մեկնի: Քահանան ալ ստորագրեր է scandaleի [= գայթակղութեան] տեղի չտալու համար: Այդ ալ բաւական չը համարելով, փաշան առանց մարդու բան մը ըսելու, Եւրոպական Պետութեանց ուղղեալ մեր խնդրագիրները դեռ տեղը չհասած, գացեր է Փարիզի օսմ. դեսպան Բիֆաթ փաշային հետ տեսակցութիւն ունեցեր, եւ բացատրեր է, թի ինչո՞ւ հայերը կը դիմեն Եւրոպային, թէ միայն *réforme* [= բարենորոգում] կ'ուզեն, *séparationiste* [= անջատողական] ձգտում չունին. թէ նոյն ատեն թուրք կառավարութեան ալ կը դիմեն եւայլն եւայլն: Ատոր վրայ երկար տեսակցութիւն մը եւ վիճաբանութիւն մը ունեցայ փաշային հետ եւ խզուեցանք:

Բիֆաթ փաշան բնականաբար իսկոյն հեռագրած է Պոլիս, եւ ատոր հետեւանքն է թուրք կառավարութեան սարքած *comédie*ն [= կատակերգութիւնը]. բարենորոգմանց ծրագիրը կանխելու, Հայաստան Յանձնաժողով դրկելու, Օրմանեան եւայլն խորհրդակցութեան կանչելու եւայլն: Այդ *manœuvre*ին [= գաղտնորոգայթին] առաջքը առի սակայն: Ընդարձակօրէն գրեցի Պոլիս Պատրիարքին եւ այլոց, գրեցի Կաթողիկոսին, գրեցի ուրիշ գաղութներու անձնաւորութեանց: *Temps*ի մէջ տարի հրատարակել տուի Փրանսայի Հանրապետութեան նախագահին ուղղեալ մեր խնդրագիրը, որ հայ ժողովրդեան զգացմանց հարազատ արտայայտութիւնն է. եւ *Temps*ի խմբագրապետին տուի նօթեր, որոնց վրայ հիմնուելով գրեց հոյակապ յօդուած մը, զոր անշուշտ կարդացիր: Պատրիարքը փաշային գրեր է նամակ մը եւ դրկեր է «Հրահանգ» մը ճիշդ ուզածիս պէս խմբագրուած: Եւ իմացայ, որ փաշան հիմա նորէն լաւ ճամբու մէջ վերստին մտած է (Իզվոլսքիին հետ տեսակցութիւն մը ունեցեր է, Իզվոլսքին քանի մը օրէն *իրեն փոխադարձ այցելութեան պիտի գայ*: Բարեկամներ կը ջանան կոր որ նորէն աշխատակցիմ փաշային հետ եւ հաւանական է որ պիտի ըլլայ այդ բանը: Անձնական խնդիր չունիմ իրեն հետ. սկզբունքի խնդիր է միայն: Կատարուած սխալը կը կարծեմ դարմանած ըլլայ: Ուրեմն շարունակելու ենք ամենքս մէկ աշխատիլ նոյն ուղղութեամբ:

Մեր դատը շատ լաւ վիճակի մէջ է. կը բաւէ որ թուրքին *manoeuvres*ներուն խաղալիք չըլլանք, անոր ծուղակը չիյնանք: *Temps*ին մէջ Փետրսպուրկէն ընդարձակ հեռագիր մը կար, որ գայդ ստուգապէս կ'ապացուցաներ: Թրքահայաստանի մէջ *autonomie* [= ինքնավարութիւն] պիտի ունենանք, ռուսի հովանաւորութեամբ: Ատոր համոզուած եմ այլ եւս: Այս պայմաններուն մէջ՝ լաւ չէ Կիլիկիոյ խնդիրը սուր ձեւով մէջտեղ հանել: Ամէն ոյժ եւ ուշադրութիւն կեդրոնացնենք Թրքահայաստանի հարցին վրայ: Կիլիկիոյ խնդիր եթէ ելլէ, Գերմանիա պիտի միջամտէ անպատճառ, եւ թերեւս մեզի դէմ: Ընդհանուր պատերազմի վտանգը փարատած է: Դաշնակիցներուն եւ թուրքին միջեւ պատերազմի վերսկսելուն շատ յոյս չկայ: Չէյթունի ապստամբութիւն մը,

այսպիսի թույլի մը, ջախջախման միայն կը յանգի: Միւս կողմէն լուրջ գումարի մը պակասը (եւ զայն գոյացնելու անհնարութիւնը) կը ստիպեն մեզ բոլորովին մէկդի դնել այդպիսի ծրագիր մը: Ուրեմն ամէն կրցածնիդ ըրէք իսկոյն առաջը առնելու այդ շարժման: Թող տեղերնին բոլորովին հանգիստ նստին. այլապէս Ձէյթունի բացարձակ քայքայման եւ փնացման պատճառ կ'ըլլաք: Այդ խորհուրդը անոնց կրնաք ըսել, մատնանիշ ընելով ներկայ պարագաներուն աննպաստութիւնը: Եւ ատիկա ընելէ յետոյ մանրամասն տեղեկագիր մը դրկեցէք թուրք կառավարութեան կողմէ առանց պատճառի Ձէյթունը ջնջելու մասին միջոցներ ձեռք առնելը ապացուցանող, որպէս զի հոս եւ Անգղիա դիմում ընենք եւ երկու կառավարութիւնները միջամտեն եւ Ձէյթունի դէմ զօրք դրկուիլը դադրեցնել տան: Ասկէ ուրիշ բան չկայ ընելու:

Ընդունեցէք սիրալիր բարեւներս

Ա. Չօպանեան

Յ.Գ.- Ատոնք ընելէ յետոյ, լաւագոյն է, որ հոս դառնաք եւ մեզի հետ աշխատիք. հոս շատ բան կայ ընելու Հայկական դատին համար: (Այս նամակս շատ քիչ մարդերու ցոյց տուէք, աւելի լաւ, անոր պարունակութիւնը միայն հաղորդեցէք համառօտիւ, եւ բնաւ պէտք չէ հրատարակուի):

Աչքի առջեւ ունենալով Եգիպտոսի եւ Կիլիկիոյ մտայնութիւններուն տարբերութիւնները, ժողովուրդին անպատրաստ վիճակն ու արկածախնդրական շարժումներէ խուսափումը. միւս կողմէն նկատելով թէ ո՛չ միայն կը պակսի Կիլիկիոյ ժողովուրդին մէջ յեղափոխական շարժումի մը ծարաւը, այլ եւ յաջողութեան անհրաժեշտ պայմաններէն եղող դրամն ու զէնքը. նկատելով, որ, ինչպէս Չօպանեան կը գրէր, մեր սկսելիք շարժումը պիտի խաչաձեւէր Ազգ. Պատուիրակութեան Հայկական նահանգներու ընդհ. բարեկարգութեան հետապնդումները, կ'աշխատիմ Եգիպտոսի Ազգ. Պաշտպանութեան Քոմիթէ[ի] յեղափոխական եռանդը չափաւորել, եւ անոր ուշադրութիւնը հրաւիրել դէպի ուրիշ նպատակայարմար ուղղութիւն: Այս գետնի վրայ իմ կատարած լուրջ ուսումնասիրութիւններս զիս առաջնորդած էին սա եզրակացութեան, թէ

1.- Քոմիթէն գիտակցաբար թէ անգիտակցաբար զիս գործի հրաւիրած էր *Կիլիկիոյ ժողովուրդին անունով*. մինչ հիմա ձեռք բերուած տեղեկութիւններէն կը տեսնուէր, որ ժողովուրդը անտեղեակ էր այդ կոչին:

2.- Կը գրուէր թէ «Կիլիկիոյ ամբողջ ժողովուրդը կազմ եւ պատրաստ է ազատագրական եւ վրէժխնդրական յեղափոխական շարժումի մը, ու միայն ինծի կը սպասէ». մինչ քննութիւնները ցոյց տուին, թէ ժողովուրդը ո՛չ նպատակ եւ ոչ պատրաստութիւն ունի այդպիսի արկածախնդրական ձեռնարկի մը:

3.- Տեղեկութիւնները ցոյց տուին, թէ Քոմիթէն իր շրջաբերական նամակներով ուզած է Կիլիկիոյ ժողովուրդը համոզել, թէ ես եմ այդ յեղափոխական ծրագիրը կազմողն ու հետապնդողը, ինչ որ հեռի էր ճշմարտութիւն ըլլալէ:

4.- Մեր կողմէ պահանջուած եւ երկրէն մեզի դրկուած տեղեկութիւններու քննութեան այդ օրերուն, արդէն իսկ յեղափոխական շարժումի ձեռնարկը տարաձայնուած

ըլլալով Եգիպտոսի մէջ, Եադուպ Արթին փաշա ահագանգը կը հնչեցնէ իր նամակներով Պօղոս փաշայի եւ Ազգ. Պատուիրակութեան մօտ, մատնանշելով մեր ձեռնարկին ահաւոր հետեւանքները: Եւ ահա կը ստանամ սա նամակը.

Միրելի Սրբազանս

Նամակնիդ ստացայ. խորին ուշադրութեամբ կարդացի⁹³: Եթէ այս միջոցիս Ձէյթունի կողմերն յեղափոխութիւն մը ելնէ՝ Հայութեան մահն է. ապի միայն իմ անձնական գաղափարս չէ, այլ շատ հայասէր եւրոպացիներու գաղափարը: Հիմա կատարեալ հանդարտութիւն պէտք է. եթէ այսպէս չարիքի մը պատճառ լինիք դուք եւ ձեր սիրելի ընկերները, յաւիտեան անէծքի արժանի պիտի լինիք:

Ամէն միջոց գործածեցէք, լուր կամ մարդ որկելով Ձէյթին, որ խենթութիւն մը չընեն. եթէ Ձէյթինցիք հասկնան որ Եգիպտոսէն կամ ուրիշ որեւիցէ տեղէ մը խրախոյս չը պիտի գտնեն եւ դրամ չի պիտի ստանան, այն ատեն հանդարտ կը կենան: Միայն կը վախնամ *Եգիպտոսի մէջ խեղքը կարճ խենդեր գտնուին, որ ձեռքի տակէ անոնց պօլ պօլ [= առատ առատ] խոտաւմներ կ'ընեն կոր, որով անոնք ալ կը քաշակերուին*: Կառավարութիւնը երբ կը տեսնէ կամ կ'իմանայ որ Ձէյթինէն Եգիպտոս մարդ կուգայ, Եգիպտոսէն Ձէյթին կ'երթայ, բնական է որ աչքը կը բանայ. 3 չէ 13 թնդանօթ կը դրկէ: Հիմա խաղաղութեամբ գործելու ժամանակ է. պէտք է խաղաղ եւ խոհեմ ըլլալ:

Գալով միւս խնդրին, հոս եկած օրս Էսմէրեանը մեկնած էր, միայն Երուսանդը տեսայ. նա գործնական դեր մը խաղալ չի ուզեր կոր. երբ Էսմէրեանը գայ, պիտի տեսնուիմ այս խնդրոյ մասին: Թէպէտ այդ խնդիրը լուրջ բան մ'է, բայց այսօր կամ վաղը լուծուելիք բան մը չէ, քանի որ հոս Պօղոս բաշան լուրջ մարդիկ եւ եւրոպացիներ շուրջը բոլորած կ'աշխատի գիշեր ցերեկ, Եգիպտոսի Հայոց հանդարտ կենալ կը մնայ, զի վերջէն բաշային ամբողջ աշխատութիւնը պարապը կ'երթայ: Ուրեմն սրբազանս խաչը քարոզեցէք եւ ոչ սուրը. ամէն բանի ժամանակը կայ:

Միրով եւ յարգանօթ Ձերդ
Աղաթօն

Փարիզ 5 Յփր 913

Ու իբր յաւելուած կը շարունակէ.

Նոր տարին կը բարեմաղթեմ: Մեր աշխատութեանց վրայ չեմ գրեր, զի հիմակու հիմա պէտք է այսպէս. վստահ եղէք որ չենք քնանար կոր. մերինը սրճարանի ազգասիրութիւն (չէ) 4 պիրայի գաւաթներու դիմաց:

Կը ցաւիմ, որ պարապ տեղը քեզ Ամերիկայէն մինչեւ հող յոգնեցուցին. Հայը այսպէս է. եղածը իրականութիւն կը կարծէ: Ազգը ազգասէրներէն տուժած է միշտ...: Հաւանական է ամսոյս վերջը հող կը լինիմ:

Տիար [Համբարձում] Առաքելեան հոս է. ամէն օր միասին ենք. ռուս

⁹³ Այդ նամակը գրուած էր իմ կողմէս, խնդրելով որ մեր ձեռնարկելիք շարժումին ի նպաստ հանգանակութեան գործին օժանդակէ:

կառավարությունը շատ բարեացակամ է հիմա, եւ անկէ միայն խեր մը պիտի տեսնենք:

Այս բոլոր տուեալներուն վրայ հիմնուելով կը տեսնէի, թէ կատարուելիքը *արուեստական յեղափոխութիւն մը պիտի ըլլար լոկ*, որուն չէի կրնար իմ համամտութիւնս յայտնել եւ գործակցիլ: Հետեւաբար, իմ ջանքս կ'ըլլայ նոր մտայնութիւն մը ստեղծել, որ պիտի ըլլար հրաժարելով անմիջական յեղափոխութեան մը գաղափարէն, լծուիլ ազգային ինքնապաշտպանութեան յամարաբայլ բայց փրկարար գործին, քանի որ միշտ ջարդուելու երկիւղը կայ երկրի ժողովուրդին համար: Այս գետնի վրայ շատ դժուարութիւն չքաշեցի Քոմիթէի անդամները համոզելու, քանի որ իրենք ալ տեսան, թէ ձեռնարկուելիքը *արուեստական յեղափոխութիւն մը պիտի ըլլար*, եւ քանի որ իրենք ալ իրենց շրջաբերականին մէջ կը յայտարարէին թէ «այս տեսակ շարժում մը մենք կը հաւատանք, թէ *արուեստական միջոցներով կարելի չէ ստեղծել*»: ***Երկուստեք հիմնուած մեր համախոհ ըմբռնումին վրայ, մէկ կողմ կը դնենք անմիջական յեղափոխութեան անգործադրելի ծրագիրը, եւ կը ծրագրենք ինքնապաշտպանութեան անկետաձգելի պետքը, պատրաստ գտնուելու համար ամէն հաւանականութեան առջեւ, եւ դեկավարելու ապստամբական շարժում մը***, երբ

- 1.- Երկրին⁹⁴ կացութիւնը ստիպողական դարձնէ եւ անհրաժեշտ.
- 2.- Ժողովուրդին հաւաքական տրամադրութիւնը պատրաստուած ըլլայ դէպքերու հետեւանքով.
- 3.- Քաղաքական հանգամանքները նպաստաւոր ըլլան.
- 4.- Դիւանագիտութիւնը յոյսեր ներշնչէ զայն արդիւնաւորելու.
- 5.- Ժողովուրդի պաշտպանութեան միջոցները գոհացուած ըլլան զենքի եւ ուզմամբերքի հայթայթումով:

Այս ըմբռնումով Քոմիթէին հետ կը ծրագրենք մեր դիրքը, բռնելիք ուղղութիւնը: Եւ ինքնապաշտպանութեան թերին լրացնելու համար կ'որոշենք դիմում կատարել արտասահմանի հայութեան դրամական նպաստին, միեւնոյն ժամանակ համագործակցութիւն մը ստեղծել Կիլիկիոյ ինքնապաշտպանութեան խնդրոյն շուրջ բոլոր հայ կուսակցութիւններու եւ մանաւանդ Հ.Յ. Դաշնակցութեան միջեւ: Եւ ես այդ նպատակներու իրագործման համար պետք էր Կովկաս մեկնէի:

Մեր այս որոշումները կը հաղորդենք նաեւ Կիլիկիոյ կաթողիկոսին եւ կարգ մը շրջանային կեդրոններու: Եւ ես 1913 Յունվար 28ին Նիքոլա Բ. ռուսական շոգենաւով կը մեկնիմ Ադերսանդրիայէն, ինծի հետ ունենալով մեր հին Հնչակեան ընկերներէն յեղափոխական խառնուածքով Բարսեղ Օհանեանը, որ Յունաստան կ'երթայ զենք գնելու կամ գտնելու համար: Պալքանեան ազգերու պատերազմը կը շարունակուէր Թուրքիոյ դէմ: Երբ մեր նաւը Փիլէ կը հասնի Յունվար 30ին, նաւին վրայ գտնուող յոյն լրտեսի մը մատնութեամբ ճետտէէն եկող եւ մեր նաւով Պոլիս ճամբորդող Տոքդ. Պաղտասար Յովհաննէսեանի եւ իր 3 ընկերներուն կ'արգիլուի ցամաք ելնեն. իսկ ես Բարսեղ Օհանեանի հետ ուղղակի Աթէնք կ'ելնեմ: Եւ նոր արկածախնդրութեամբ մը,

⁹⁴ Ձնշած ենք նախադասութեան սկիզբը դրուած անտեղի «Երբ»ը- Վ.Ղ.:

որուն համամիտ է նաեւ Օհանեան, կ'երթամ ուղղակի պատերազմական նախարարութեան պաշտօնատունը, եւ կ'առաջարկեմ, որ յունական ջոկատ մը կամ աւելի զօրք ցամաք հանուի Չոզ Մարգուանի ծովեզերքէն եւ դէպի վեր յառաջանալով կտրէ Պադ-տատ Պոլիս երկաթուղային գծերը, եւ այսպիսով Թուրքիոյ զինուորական առաքումներու ցանցը խորտակէ եւրոպական ճակատին վրայ աւելի արագ եւ ապահով յաղթութիւն շահելու համար. եւ կը խոստանամ մասնակցիլ անձամբ իրենց զինուորական առաքելութեան: **Եւ այս առաջարկը կ'ընէի սա համոզումով, թէ այսպէս ընելով իմ անձս միայն վտանգած կ'ըլլայի, առանց Կիլիկիոյ հայ ժողովուրդին վրայ պատասխանատուութիւն հրաւիրելու**⁹⁵: Յոյն Պատերազմական Խորհուրդը երբ գնահատելով հանդերձ իմ ներկայացուցած ծրագրիս առաւելութիւնները յայտարարեց, թէ դժբախտաբար բաւականաչափ տրամադրելի զօրք չունին նոր ճակատ մը կարենալ ստեղծելու համար Կիլիկիոյ մէջ, հրաժեշտ կուտամ Բ. Օհանեանի, նաւ կը մտնեմ եւ կը շարունակեմ ճամբաս: Յունվար 31ին կը հասնինք Իզմիրի առջեւ: Իմ հրաւերովս շոգենաւ կուգան Հ[րանդ] Մամուրեան եւ Մատթէոս վրդ. Ինճէեան, որոնց հետ կը տեսակցիմ երկու ժամի չափ, եւ անոնցմէ տեղեկութիւններ կը ստանամ երկրին քաղաքային դրութեան, պատերազմի եւ թրքական հոգեբանութեան մասին: Մեր նաւը կը յառաջանայ ականուած ջուրերու մէջէն:

Եգիպտոսէն մեկնելէ առաջ գրած էի մեր ընկերներուն, թէ անհրաժեշտօրէն կ'ուզեմ Պոլիս մտնել իմ «Բրոֆ. Սերոբեան» անցագրովս, թէ պէտք է ամէն միջոցներ ի գործ դնեն, ի հարկին կաշառքի դիմելով, որպէս զի կարենամ գոնէ 24 ժամ Պոլիս մնալ, եւ կարելոր տեսակցութիւններէս վերջ վերադառնալ շոգենաւ: Չմոռնամ ըսելու, թէ այդ պահուն արդէն *մահուան դատապարտուած*ի հանգամանքը կը կրեմ վրաս: Երբ մեր շոգենաւը Պոլսոյ քարափը կը հասնի, ամէն ինչ կարգադրուած է արդէն Պոլիս մուտքիս համար: Վար կ'իջնեմ շոգենաւէն եւ հոն սպասող մեր անձնուէր ընկերներուն միացած, Բերա կ'ելլեմ: Ա. Մկրեանի տունը գտնուած միջոցիս այցելութեան կուգան ինծի զիդէն մասնաւորապէս զիս տեսնելու եկող հայրս եւ Կարապետ եղբայրս: Հրաւեր կը դրկեմ Ս[իմոն] Չաւարեանի եւ գիշերուան համար կը ժամադրուիմ իրեն եւ իրեն ընկերացող դաշնակցականներուն [հետ], եւ մինչ այդ ես Գատը Գիւղ կ'անցնիմ Բրոֆ. Սերոբեանի աշխարհիկ տարագով, այցելութիւն տալու համար Դուրեան Եղիշէ սրբազանի, եւ Բերա դարձիս այցելելէ յետոյ Տորդ. Կ. Մութաֆեանի, կուգամ ժամադրութեանս: Ս. Չաւարեան մինակ եկած է, չեմ գիտեր ինչու: Իրեն կը յայտնեմ Ժընէվի մէջ Ա. Ահարոնեանի հետ մեր տեսակցութիւնն ու իր յանձնարարութիւնները, կիլիկեան մեր ծրագիրն ու անոր յետաձգումը, եւ ցոյց տալէ վերջ իթթիհատականներուն հայաջինջ ծրագիրները

⁹⁵ Թոյլատրելի է հարց տալ թէ ի՞նչ տրամաբանութեամբ Սերոբեան այլոց կողմէ ձեռնարկուած ցամաքահանումը Կիլիկիոյ հայութիւնը վտանգի ենթարկող արկածախնդրութիւն նկատելով, կը խորհի թէ իր նախաձեռնութեամբ կատարուելիքով միայն իր անձը կ'ենթարկուի վտանգի: Թոյլատրելի է այդպիսի հարց մը տալը՝ հակառակ նաեւ Սերոբեանի աւելի ուշ արձանագրած այն ծանօթագրութեան, թէ ի տարբերութիւն Տամատեանի նախաձեռնութեան,՝ որ ինք որակած է յունական մթին շարժառիթներով խոստումի մը կոյր հետեւում,՝ իր առաջարկը միայն իր անձը պիտի վտանգէր՝ առանց աղետ պատճառելու Կիլիկիոյ հայոց- Վ.Ղ.:

եւ վաղուան ու ապագային անոնց կողմէ գործադրուելիք ջարդերուն հաւանակա-
նութիւնը, կը շեշտեմ բոլոր կուսակցութիւններուն համագործակցութեան անհրաժեշտ
եւ ստիպողական պէտքը, ազգային ինքնապաշտպանութեան ընդհանուր եւ լրջօրէն
մտածուած ինքնապաշտպանութեան պէտքին շուրջ: Հէք Զաւարեան իմ պարզած
տեսութիւններու բացարձակ համամտութիւն յայտնելէ վերջ, յուզուած եւ աչքերը
արցունքով լեցուած, կ'ըսէ ինծի. «Մուշեղ, մենք սխալեր ենք. թուրքահայ կացութիւնը
վտանգուած է: Իթթիհատականներ աւելի վատ տրամադրուած են մեր ժողովուրդին
հանդէպ քան սուլթան Համիտ: Ես ալ այլ եւս կը հաւատամ քեզի հետ, թէ փոթորիկ մը,
սահաւոր փոթորիկ մը անխուսափելի է: Պէտք է փրկել ժողովուրդը: Պէտք է զանի
պատրաստել ինքնապաշտպանութեան: Եթէ ես լիազօրուած ըլլայի յանուն մեր կու-
սակցութեան, անմիջապէս պիտի ստորագրէի համագործակցութիւնը: Բայց պէտք է
գիտնալ, թէ մեր կարելոր անդամները Թիֆլիս կը գտնուին, Ն. Աղպալեան, Չամալեան⁹⁶
եւ ուրիշներ: Խնդրեմ տեսնուեցէք իրենց հետ, մատնանշեցէք թրքահայութեան սպառ-
նացող սահաւոր վտանգը, իրենց հաղորդեցէք Ա. Ահարոնեանի եւ իմ համամտութիւնս
համագործակցութեան մասին եւ զայն իրականացուցէք Թիֆլիսի մէջ, եւ փրկեցէք այս
ժողովուրդը»: Արդէն ա՛յնքան երկար տեսած է գիշերային այս մեր տեսակցութիւնը որ
յունաւոր մօտ է: Եւ ես առանց անկողին մտնելու, առաւօտուն հրաժեշտ կուտամ հօրս
եւ եղբօրս, որպէս զի շոգենաւին չմօտենան, եւ Ժազ Սայապալեանի հետ շուկայ
կ'իջնեմ քանի մը գնումներու համար, եւ Ժամը 10ին քարափ կ'իջնեմ: Հոն են մեր
յեղափոխական բարեկամները: Ծնորհակալութեան համբոյր մը կը փոխանակեմ իրենց
հետ եւ շոգենաւ կ'ելլեմ եւ կը շարունակենք ճամբանիս:

Փետր. 5ին Օտեսայի առջեւն ենք արդէն...:

.....

[Փետր. 12ին] Թիֆլիզ ... կը հասնիմ երեկոյին ուշատեն:

Եգիպտոսէն Ռամկավարներ ինձ յանձնարարած էին Թիֆլիզի մէջ իբր գործակից
ունենալ Գասպար Իփեկեանը, իբր իրենց ներկայացուցիչը, այն յոյսով, թէ անոր
գործակցութիւնը պիտի դիւրացնէ Կիլիկիոյ ինքնապաշտպանութեան նպատակով մեր
ձեռնարկելիք հանգանակութիւնը: Առաջին օրը (13 Փետր.) երկար տեսակցութիւն մը
կ'ունենամ Համբարձում Առաքելեանի հետ իմ ճամբորդութեանս նպատակին շուրջ:
Եւ իրմէ կ'իմանամ, թէ [Արշակ] Վռամեան այս պահուն Բագու կը գտնուի «թրքահայ
լիազօր ներկայացուցիչ» (?) կեղծ հանգամանքով, քանի որ բացի դաշնակցականներէն
թրքահայ մեծագոյն զանգուածը ներկայացնելու պաշտօնը չունէր: Հոս կը մոռնամ
ըսելու, թէ առաջին օրերուն միշտ եւ ամենուն ինքզինքս ներկայացուցած եմ «Բրոֆ.
Մերոբեան» անունով մէկը ամերիկահայ գաղութէն: Միայն Հ. Առաքելեան եւ Գ.
Իփեկեան զիս կը ճանչնան իմ իսկական անունովս: Այսպէս ընել եւ այս անունով
անցագիր առնելու հարկադրուած էի, ո՛չ միայն որովհետեւ ուրիշ անունով չէի կրնար
Պոլիս մտնել, այլ եւ անոր համար, որ առանց Չարական հրամանի բարձրաստիճան

⁹⁶ Այս մականունները պահպանած ենք այնպէս ինչպէս գրած է Մերոբեան, հակառակ անոր
որ անոնք կը վերաբերին առաւելաբար Նիկոլ Աղբալեան եւ Արշակ Չամալեան ուղղագրու-
թեամբ յայտնի դէմքերուն- Վ.Ղ.:

եկեղեցականի մը մուտքը արգիլուած էր Ռուսական սահմաններէ ներս, եւ Ձարը պիտի չթոյլատրէր, որ *յեղափոխական եւ մահուան դատապարտուած մէկը* Ռուսիա մտնէր: Նոյն օրը երկրորդ տեսակցութիւնս կ'ունենամ Սամսոն Յարութիւնեանի հետ, եւ երկարօրէն կարծիքի փոխանակութիւններ կ'ունենամ իրեն հետ, իմ առաքելութեանս նպատակին շուրջ: Այդ գիշեր Աբելեան-Արմէնեան խումբը պիտի ներկայացնէր [Լեւոն] Շանթի հեղինակութիւնն եղող «Հին Աստուածները»: Ներկայ կը գտնուիմ: Հիանալի տէքոր, տրամաթիք թապօներու շարք մը, որոնք կը յուզեն եւ կը լացնեն, եւ մեր աչքին կը պատկերացնեն զգացումի եւ դատողութեան յաւիտենական պայքարին ապրող դրուագները: Յաջորդ օրը Յովհ. Թումանեանի: Ուր որ ալ երթամ իմ այցելութիւններուս միջոցին խօսակցութիւնը կը դառնայ ճամբորդութեանս նպատակին շուրջ: Այս երեկոյ ալ (14 Փետր.) «Տարագ»ի սրահին մէջ լսարան կայ, ուր պիտի բանախօսէ Հ. Առաքելեան, նիւթ ունենալով Փարիզի մէջ Ազգ. Պատուիրակութեան հետ իր ունեցած տեսակցութիւններուն արդիւնքը եւ իր տպաւորութիւնները: Չիս կը ստիպէ, որ ես ալ ներկայ գտնուիմ: Նախ կը մերժեմ, յայտարարելով, թէ գուցէ ինծի հետ անձնապէս ծանօթներու հանդիպիմ հոն: Վերջապէս կ'որոշենք, որ անկիւն մը քաշուած նստիմ: Հոն է Թիֆլիզի ամբողջ մտաւորականութիւնը, փաստաբան, բժիշկ, գրագետ: Շատերուն կը ներկայացուիմ: Հ. Առաքելեանի բանախօսութենէն վերջ, հանդեսին նախագահը ոտքի ելլելով կը յայտարարէ. «Բարեբախտ ենք, որ մեր այս իրիկուան հանդիպումին, մեր մէջ ունինք Ամերիկայէն ճամբորդ մը՝ Բրոֆ. Սերոբեան: Չափազանց ուրախ պիտի ըլլայինք, եթէ Ամերիկահայ գաղութի մասին տեղեկութիւններ տար մեզի: Ուստի զինքը կը հրաւիրենք խօսելու»: Այս անակնկալ հրաւերը զիս կը դնէ դժնդակ կացութեան մէջ: Բայց այլ եւս կարելի չէր մերժել հրաւերը: Ամերիկահայութեան մասին հակիրճ տեղեկատուութենէ մը յետոյ, կ'անդրադառնամ Հ. Առաքելեանի տուած եւ Ազգ. Պատուիրակութեան կողմէ ձեռնարկուած դիւանագիտական աշխատութիւններուն, եւ կը շեշտեմ սա պարագան, թէ դիւանագիտական աշխատանքը կրնայ ապարդիւն մնալ որչափ ատեն կառավարութիւններու հակոտնեայ շահերը իրարու կը բաղիսին, թէ դիւանագիտական դիմումներ[ու] առնթրեր պէտք է հայ ժողովուրդը ինքը ստեղծէ իր ճակատագրին բարելաւումը. եւ ատի կրնայ ընել միայն իր պայքարի ոգիով, իր արիւնի գոհաբերումով, իր ինքնապաշտպանութեան բնագոյային անհրաժեշտութեան ըմբռնումով եւ գործադրութեամբ: Եւ երեք քառորդ ժամու չափ խօսեցայ այս նիւթին շուրջ, ցնցող բառերու եւ տրամաբանական տուեալներու յորդումով մը: Եւ երբ բանախօսութիւնս աւարտեցի անվերջ ծափահարութիւններու մէջ, խիզախ գաղափարներէս հիբնոսացած ունկնդիրները զիս շրջապատեցին, զիս շնորհաւորելու համար...:

.....

Նոյն օր մեր տեսակցութեան միջոցին Յ. Թումանեանի շեշտած էի հայ կուսակցութիւններու համագործակցութեան ստիպողականութեան մասին. եւ այս առթիւ Ա. Ահարոնեանի եւ Ս. Չաւարեանի համամտութիւնն ու յանձնարարութիւնները, եւ խնդրած իրմէն, որպէս զի «Հորիզոն»ի խմբագիրներէն Ն. Աղապեանէ եւ Չամալեանէ ժամադրութիւն մը ուզէ ինծի հետ տեսնուելու իր տունին մէջ: Օր մը վերջ իրմէ կ'իմանանք, թէ անոնք ընդունած են հրաւերս եւ յաջորդ օր Թումանեանի տունը ներկայ

պիտի գտնուին որոշեալ ժամուն: Երբ նոյն օր կ'այցելեմ Յ. Թումանեանի, այս վերջինը կ'ըսէ ինծի.

– Աղէկ որ եկար. ես լուր պիտի դրկէի քեզի թէ Աղապեան եւ Չամալեան թէպէտ խոստացած էին գալ, բայց պիտի չկրնան գալ տրուած ժամադրութեան, յայտնելով թէ ուրիշ կարելուոր գործերով զբաղած պիտի ըլլան: Ես այս լուրը քեզի հաղորդելով հանդերձ, պիտի խնդրէի որ գայիր եւ թէյը միասին առնէինք: Ես պատեհութիւն եւ ժամանակ չունեցայ լուր տալու, ուրախ եմ որ եկար եւ թէյը միասին կ'առնենք:

Այս այցելութիւնը կուտամ Թումանեանի, ընկերակցութեամբ Գ. Իփէկեանի: Ես Թումանեանի այցելելէ առաջ ուրիշ աղբիւրէ լուր առած էի, թէ Ն. Աղապեան եւ Չամալեան պիտի չը յարգեն ժամադրութիւնը: Եւ երբ թէյով զբաղած էինք, ըսի Յ. Թումանեանի.

– Դուռն պարկեշտ եւ պատուաւոր մարդ մըն ես. քեզի հարցում մը պիտի ընեմ եւ վստահ եմ թէ անկեղծութեամբ պիտի պատասխանես ինծի: Ես Ձեզի գալէ առաջ գիտէի թէ պիտի չգան: Բայց իրենց բացակայութեան համար ցոյց տուած պատճառը փախուստի պատրուակ մըն է միայն: Ահա ինչ որ ինծի հաղորդուեցաւ. Վռամեան Բագունէն հոս եկած է, եւ երբ տեղեկութիւն կը ստանայ, թէ անոնք ժամադրուած են ինծի հետ, բացարձակապէս կ'արգիլէ զիրենք տեսակցելու ինծի հետ: Կ'ուզէի գիտնալ, թէ այս պարագան ստոյգ է թէ ոչ:

– Դժբախտաբար, ստոյգ է, կ'ըսէ Թումանեան:

Այս մերժումը ինքնին ապացոյց մըն էր թէ Հ.Յ. Դաշնակցութիւնը, կառչած իր բարեկամական յարաբերութեան Իթթիհատի հետ, չէր ուզեր մօտենալ կուսակցական համագործակցութեան գաղափարին, հետեւաբար եւ ազգային ինքնապաշտպանութեան, որ ինծի համար այլ եւս մահու եւ կենաց խնդիր մը եղած էր 1908էն, ու մանաւանդ 1909ի կիլիկեան ջարդերէն յետոյ:

Թիֆլիզ հասնելուս կ'իմանամ, թէ արդէն իսկ կազմուած է քոմիթէ մը, որ կը զբաղի հայկական ազատագրութեան գործերով: 15 Փետր.ին կ'այցելեմ Տոքդ. [Բագրատ] Նաւասարդեանին, որուն ընկերակցութեամբ կը ներկայանամ Հայկական Քոմիթէի⁹⁷ ժողովին, որ տեղի կ'ունենար առաջնորդարանի մէջ: Այդ ժողովին մանրամասնօրէն կը պարզեմ Թուրքիոյ մէջ հայ ժողովուրդին սպասող ահաւոր վտանգը, ինքնապաշտպանութեան հրամայական պետքը: Տեղեկութիւններ կուտամ Եգիպտոսի մէջ կազմուած Ազգ. Պաշտպանութեան Քոմիթէի ծրագրի մասին եւ կը շեշտեմ Կիլիկիոյ ինքնապաշտպանութեան ի նպաստ դրամական օգնութեան պետքը եւ կը խնդրեմ, որ Կովկասահայր⁹⁸ այս նպատակին գործադրութեան համար գումար մը տրամադրէ:

⁹⁷ Կը թուի թէ կ'ակնարկէ 1912-ի Հոկտեմբեր-Նոյեմբերին կազմուած Ազգային Բիւրոյին, որ մօտէն կը հետեւէր հայկական բարենորոգումներու խնդրին՝ յարաբերելով Գէորգ Ե.ի, Պոլսոյ պատրիարքարանին, Ազգային Պատուիրակութեան, ինչպէս նաեւ Արեւմտահայաստանի նահանգներու բարենորոգումներու խնդրով զբաղելու համար Սան Փեթերսպուրկ եւ Մոսկուա կազմուած հայկական մարմիններուն հետ- Վ.Ղ.:

⁹⁸ Ակնարկութիւն բժիշկ Բագրատ Նաւասարդեանի նախաձեռնութեամբ 1881-ին Թիֆլիսի մէջ հիմնուած Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութեան: Նաւասարդեան պատուոյ նախագահն էր Ընկերութեան- Վ.Ղ.:

մեզի: Այդ իրիկուան երկար խորհրդակցությունները արդիւնքի մը չեն յանգիր: Եւ կ'որոշուի նոր ժողով մը գումարել: ...

... Փետր. 17ին կարգ մը տեսակցություններ կ'ունենամ Հայ Քոմիթէի անդամներուն եւ Ս[ամսոն] Յարութիւնեանի հետ, որ ինծի հաւաստիք կուտայ, թէ ամէն ջանք պիտի ընէ արդիւնաւորելու մեր դիմումը եւ գումար մը տրամադրելու Կիլիկիոյ ինքնապաշտպանութեան գործին:

... Այսօր [19 Փետրուար] վերջապէս անպաշտօն կերպով ինծի կը հաղորդուի, թէ Ազգ. Քոմիթէն, *Կովկասահայն ալ միասին, չեն ուզեր հետաքրքրուիլ Կիլիկիոյ հայութեան ճակատագրով, տրուած ըլլալով որ Կովկասի սահմանակից հայկ. գաւառներուն հոգը ծանրացած է իրենց վրայ*: Սամսոն Յարութիւնեան այս գործին մէջ աննկարագիր մարդու մը դիրքը ցոյց տուաւ իր վարուելակերպով: Եւ ես ստիպուեցայ իր երեսին զարնել իր երկդիմութիւնը: ...

Արդէն մեկնումի պատրաստություններս տեսած եմ: Կը յանձնարարեմ Գ. Ի[փ]էկեանի, որպէս զի ինքն ալ իր կողմէն Եգիպտոսի Ազգ. Պաշտպանութեան [Քոմիթէին] տեղեկագրէ կովկասահայութեան տրամադրությունը Կիլիկիոյ հանդէպ, ինչպէս եւ պիտի տեղեկագրեմ Մոսկուայէն եւ Փեթերսպուրկէն:

... Թիֆլիզէն յանձնարարուած եմ մասնաւորապէս [Փեթերսպուրկի մէջ] տեսակցելու Յովհաննէ Սադաթիէլեանի հետ, պատերազմի եւ Հայկական Հարցի շուրջ, իբր մէկուն հետ, որ իր դիրքին բերումով յարաբերություններ ունի պետական շրջանակներու հետ: Սադաթիէլեանի կարծիքով առայժմ պատերազմի երկիւղ գոյութիւն չունի: Պատերազմը հաւանաբար սկսի 1915ին, եւ մինչ այդ Ռուսիա ամէն ջանք կը թափէ երկաթուղագծերը կազմակերպել, նեղ գծերուն տեղ լայներ գետեղել դիւրացնելու համար ներքին հաղորդակցությունները եւ ճակատի ու թիկունքի փոխադրությունները: Գալով Հայկական Հարցին, Սադաթիէլեան ինձ կը հաղորդէ, թէ ինքը եւ Ղուկասեան տեսակցած են նախարարապետին եւ արտ. Գործոց նախարարին հետ եւ անոնցմէ *confidentiellement* [= խորհրդապահաբար] իմացած են, թէ Պալքանեան պատերազմը լրանալուն պէս Ռուս կառավարությունը վճռած է ձեռք առնուլ եւ սեղանի վրայ բերել Հայկական Հարցը եւ աշխատիլ զայն լուծելու: Նոյն օրն իսկ [Մարտ 7] այս տեղեկությունները կը հաղորդեմ Թիֆլիս Գ. Իփէկեանի գրելով...:

... Հոս պիտի վերսկսինք շարունակել Կիլիկիոյ մեր յեղափոխական ծրագրին հետ կապ ունեցող հարցերը եւ թղթակցությունները, ժամանակագրական կարգով: Կիլիկիոյ կաթողիկոսը կը ստանայ Եգիպտոսէն գրուած վերջին նամակս, որով իրեն կը հաղորդէի, թէ Եգիպտոսի Քոմիթէին հետ համաձայն յետաձգած ենք Կիլիկիոյ մէջ անմիջական յեղափոխութեան մը ծրագիրը, եւ նպատակ ունինք դիւրութիւններ տալ ժողովուրդին, ինքնապաշտպանութեան պատրաստուելու համար:

Համար 4217/35

1913 Յունվար 28, Ատանա

Ձեր Յունուար 17 ամսաթիւ գրությունը ընդունեցինք: Ուրախ եղանք որ մեր գրությունները իրաց իսկական վիճակը պարզած ըլլալով, կարգ մը վտանգաւոր ծրագիրներ ի բաց թողուած են:

Հարկ չեմք համարիր վերակրկնելու մեր գաղափարը ռուսական բարեկարգութեան կամ գրաւման մասին: Միայն կը զարմանամ, թէ ուրկէջ ծնաւ, հակառակ պատմական աղաղակող փաստերուն, ոմանց մէջ, ռուսին համակիր զգացումը: Մենք այնքան յոռետես ենք, որ մինչեւ անգամ կը կասկածիմք թէ Հայրապետին ձեռներեցութիւնը արդիւնք ըլլայ ռուսական թելադրութեանց: Ինչ ալ ըսենք, կազմուած հոսանքը, որ կը թուի թէ Գահիրէի մէջ երեք տարի առաջ օրթոտոքսութեան հրաւերներու կրկնութիւնն է, չը պիտի կրնանք կասեցնել մինչեւ որ փորձով տեսնեն, թէ այդ վտանգաւոր հոսանքը իր ընթացքին մէջ ինչպիսի ահեղ եւ ահաւոր ժայռերու պիտի զարնէ մեր դժբախտ ազգութիւնը:

Խորհուրդ կուտաք որ Կիլիկիան ալ ըլլալիք բարենորոգումներէն զուրկ չը թողու համար յիշատակագիր մը տանք օսմ. կառավարութեան: Արդէն այդ յիշատակագիրը ճիշդ Ձեր մտածած բովանդակութեամբ Սոյո մէջ պատրաստելով՝ ճանապարհ ելանք եւ կը մտածէինք բազմաթիւ օրինակներ տպելով դրկել եւ ցրուել: Դահլիճի անակնկալ եւ խորհրդաւոր անկումը պահ մը շուարեցուց զմեզ եւ ժողովուրդը երկիւղով լեցուց. այդ ցաւագին տպաւորութիւնը անցնելէ ետք նորէն կը մտածենք սկսուածը չը յետաձգել: Խնդրածնիս է 1895ի Մայիսեան ծրագրի ընդունուած սկզբունքներու վրայ բարեկարգել Կիլիկիան: Իրաւ է, թէ յիշեալ ծրագիրը հինգսմ է Հայաստանի համար, քանի որ տարիներ առաջ անոր պետքերուն վրայ չափուած ձեւուած ու պատրաստուած, այժմ կարճ կրնայ գալ, բայց Կիլիկիոյ համար նոր է, եւ եթէ երբեք ընդունելութիւն գտնէ, մանուկ Կիլիկիային պետքերուն կը բաւէ եւ անոր վիրաւոր մարմինը կրնայ պարտկել:

Ձեր դատին վերաբերեալ դիմումի խնդիրը ժամանակին պատրաստեցինք. բայց Պալքաններու պատերազմին պատճառաւ չկարողացանք դրկել: Եթէ հետո ըլլար օրինակը՝ կը ներփակէի. սակայն լաւ կ'ընէք, ինչպէս մտադրած էք Փարիզի եւ Լոնտոնի դեսպաններուն դիմէք, առանց մեծ յոյս ունենալու, քանի որ Հայոց եւ ի մասնաւորի ձեր բարեկամները գործի գլուխ կը գտնուին:

Այնթէպի Տ. Ներսէսի գրութենէն բաւական տեղեկացանք Եգիպտոսի օդի վրայ հիմնուած անցուդարձերուն. նաեւ մեր կողմէ դրկուած Չեյթունցի պատգամաւորին խակ ու տոփալ առաքելութեան պարագայներուն: Հիւանդներուն յոյս ներշնչող Հանընցի փախստականք իրենց ազգավնաս ծայրայեղութեանց պատիժը գտան, վերջին անգամ ազգին 7-8000 ոսկի վնասով. Թէրզեանի բազմաթիւ տունը այրեցին, ուր էր աղջկանց դպրոցը, գորգագործարանը եւ գուլպայի աշխատանոցը. 500 ուսանող աղջիկներ փողոցները մնացին իրենց վարժուհիներով, իրենց վրայի զգեստով կրակէն հագլու ճողոպրած. փախստականներէն չորսը սպանուած, երկուքը ձերբակալուած, մէկ ոստիկան սպանուած, ինը վիրաւոր. թէեւ դէպքը եղբրական եւ ցաւալի, բայց Հանընը եւ ժողովուրդը մեծ վտանգէ մը ազատեցան.....:

Հայրական սիրով մաղթելով ամէն յաջողութիւն

Մնամք աղօթարար
Հրժ. Սահակ Կաթ. Կիլիկիոյ

Միեւնոյն թուականով Շահէ վարդապետ Գասպարեան իմ 27 Յունվար թուակիր նամակիս իբր պատասխան կը գրէ հետեւեալը, Ատանայէն.

Միրելի Սրբազան

Ստացայ Ձեր 27 Յունվար թուակիր նամակը. քանի մը օր վերջ նոյն թուականով աւելի կարճ մը Տամատեանի միջոցաւ:

Ուղեգիծը կը թուի թէ փոխեր էք, եւ ինչպէս Տամատ կը գրէր, կարելոր գործով կ'երթաք ի Փարիզ: Տամատեանի նամակը կարդացի եւ պատասխանեցի:

Գահավէժ գործունէութեան մը մղուած եւ առանց մեզի համոզելու կը պահանջէք որ բաժնենք Ձեր տեսութիւնները, յեղափոխութեան գլուխ կանգնինք:

Վեհ[ափառը] արդէն գրեց Ձեզի. ես աւելի գրելիք մը ի՛նչ ունիմ, բայց եթէ կրկնէ նոյնը, ինչ որ խիստ երկար նամակով մը պարզեցի Տամատին: Ինծի այնպէս կը թուի, թէ դուք, սիրելի Սրբազան, կամ այն է որ յուսադրութեան հաստատ հիմ մը ունիք, գոր մենք չենք գիտեր, եւ կամ այն է՝ Կիլիկիան մոռցած էք, ջարդէն վերջի ներկայ կացութիւնը չտեսնելով, անօրինակ լաւատեսներու շրջանակէն ոգեւորուած, յեղափոխական արկածախնդրութեան մը մէջէն Ազգին փրկութիւն մը կ'ակնկալէք:

Անկարելի բան չկայ. բայց հետեւանք սա պիտի ըլլայ, որ յեղափոխութենէն վերջ անկախութիւն տալիք հայ չի պիտի գտնուի Կիլիկիոյ մէջ: Հայկական աւերակներու վրայ՝ պիտի հիմնուի մեր անկախութիւնը. աւերակները կրնան շինուիլ, բայց ժողովո՛ւրդը...:

Անվերապահ նուիրումով մը գործին փարելու համար նախ անոր մասին համոզում գոյացնել անհրաժեշտ է: Համոզեցէ՛ք մեզ. ամէն բան ընելու պատրաստ ենք:

Տամատեանին ուղղեցի կարգ մը հարցումներ, զորս նոյնութեամբ կ'արտագրեմ, քանի որ խնդիրը լուսաբանելու եւ համոզում գոյացնելու կը ծառայեն:

1.- Շարժման բուն նպատակը ի՛նչ է. Կիլիկիո՞յ թէ Մեծ Հայաստանի համար է. անկախութի՞ւն թէ կցում. քոնդրո՞լ թէ թրքական բարեկարգութիւն:

2.- Միջոցները ի՞նչ են ըստ ծրագրի. ըմբոստացում՝ Կիլիկիոյ ո՞ր կէտերուն վրայ: Երկրին մէջ ձեր գաղափարակիցները որո՞նք են եւ ո՞րքան տրամադրելի մարդիկ ունին իրենց կարգին. ի՞նչ աստիճանի մարդիկ (պարզ զինուորացուներ, ուսուցիչներ, վաճառականներ, ջոջեր, ի՞նչ արհեստաւորներ, երբեմնի յեղափոխականներ, եւայլն, եւայլն):

3.- Եզիպտոսի գաղափարակիցները կամ արտասահմանեանները ո՞րքան եւ որպէս անձնաւորութիւններ. ի՞նչ ընդունելութիւն գտած է ցարդ երկրէն դուրս այս գաղափարը: Միեւնակ մե՞նք ենք ընդդիմացողները:

4.- Որո՞նք եւ ի՞նչ չափով պիտի ծառայեն այսպիսի վճռական ձեռնարկի մը, զէնքի, ռազմամթերքի, պաշարի գնման, ռազմական պիտոյից ամէն տեսակին (ամբողջ տեւողութեան միջոցին բաւելու աստիճան ի հարկէ) հայթայթման եւ մանաւանդ հնչուն ահագին գումարին համար:

5.- Ո՞րքան մարդ պիտի ներս, երկիր մտէ արտասահմանէն. յեղափոխու-

թիւնը որո՞նք պիտի վարեն. հին գործիչներ, Աղասի եւայլն, եւ ռազմագիտական մասնաւոր կրթութիւն ստացած քանի՞ հոգի պիտի գան:

6.- Ծովի խնդիրները ինչպէ՞ս ծրագրուած են եւ ապահովուած:

7.- Թուրք կառավարութեան ներկայի ոյժը շարժումին ծրագրուած կէտերուն վրայ ի՞նչ է եւ ի վերջոյ ո՞րքան պիտի ըլլայ: Զինուորէն գատ իսլամ ժողովուրդին ոյժի մասին ի՞նչ խորհուած է:

8.- Յեղափոխութեան ընթացքին Կիլիկիոյ հայ բնակչութեան վիճակը ինչպէ՞ս նկատի առնուած է. կիլիկեան նոր կոտորածի մը դէմ ինչ խորհուած է:

9.- Այս յեղափոխական շարժման ծրագրէն տեղեա՞կ են ա) Պօղոս փաշայի Պատուիրակութիւնը, հաւանա՞ծ են. բ.) Ռուսահայք. գ.) Եւրոպական դիւանագիտութենէն գտնէ Անգլ. Ֆրանս. եւ Ռուսը օգտակար եւ անհրաժեշտ գտա՞ծ են, անշուշտ անպաշտօն եղանակաւ:

10.- Յեղափոխութենէն վերջ միջամտելու եւ ի նպաստ լուծելու խոստում եւ այս խոստման երաշխիք հաստատ հիմք մը կա՞յ: Հակառակող պետութիւնք չպիտի[՞] գտնուին եւ եթէ բացէն չընեն, ի ներքուստ չպիտի[՞] աշխատին եւ արեն: Ռուսաստան իր կցման ծրագրին եւ Գերմանը իր կիլիկեան տնտեսական շահերուն հետ ինչպէ՞ս պիտի հաշտեցնեն Հայկական պահանջներն ու շարժումները:

Այս հարցումներուն ստոյգ եւ անպատրուակ պատասխանները կը սպասենք ընդ փոյթ:

Յեղափոխական ամբողջ կէս դարու մը դառն փորձերու պատմութիւնն ունինք մեր աչքին առջեւ: Ի սէր Աստուծոյ, խօսք հասկցուցէք Ձեր սա բարեկամներուն: Դեռ չի դադրեցան հաչելէ՝ Ձեր բան մըն ալ չըրած տեղը Ձեր վեղարը արիւնոտելու օգնողները: Մենք մեզի եթէ չենք մեղքնար անշուշտ, բայց ջարդէ նոր ելած ժողովուրդները բնաջինջ ընել տալու կ'առաջնորդեն այդ ծրագիրները, որոնք երկրէն հեռու, ամենէն աւելի տարրական միջոցներէ զուրկ, իսպառ զուրկ, հապճեպ եւ անհաշիւ շարժումներ են: Դաշնակցականներուն գործած մանր համեմատութեամբ⁹⁹ սխալները քննադատած եւ անոնց հետ տարիներ պայքարած մարդոց չի ներուիր անոնցմէ շատ գէշ շարժիլ: Նախ զիրար հասկնանք ու ապա գործենք եթէ հարկը պահանջէ:

Աւելի գրելիք չունիմ. կը սպասեմ Ձեր նամակին:

Վեհ.ը յիշատակագրին պատճենը հաղորդեց Պօղոս փաշային. անոր կարծիքները առնելէ անմիջապէս վերջ պիտի տպել տայ եւ դրկէ ուր որ պետք է:

Մնամ յարգանքօք եւ ջերմ սիրով

Շահէ Վարդ.

Չեմ գիտեր թէ Մ. Տամատեան Եգիպտոսէն իմ մեկնելէս յետոյ ի՞նչ գրած է Շահէ վարդապետի, որ այդքան մտահոգ ցոյց կուտայ ինքզինքը, եւ մօտալուտ յեղափոխա-

⁹⁹ Բառէն ետք բնագրային *գործած* բառը ջնջած ենք՝ անտեղի գտնելով զայն- Վ.Դ.:

կան շարժումի մը եւ անոր հետեւանք ջարդերու երկիւղովը կը տառապի: Կը խորհիմ, թէ հակառակ Քոմիթէին հետ մեր հասկացողութեան, իմ մեկնումէս յետոյ Մ. Տամատեան եւ իր համախոհները իրենց յեղափոխական շարժումի գաղափարին լարն են հնչեցուցած, եւ տակն ու վրայ ըրած Շահէի, ինչպէս նաեւ կաթողիկոսին հազիւ հանդարտած մտավախութիւնները, ինչպէս պիտի տեսնենք նաեւ կաթողիկոսին մէկ նամակէն: Որովհետեւ Քոմիթէի հետ մեր համաձայնութենէն յետոյ, իրեն գրած նամակս արդէն փարատած էր այն մտահոգութիւնները, ինչպէս վերեւ տեսանք, անպատրաստի շարժումէ մը ծնելիք վտանգներու մասին: Յունվար 27ին, իմ մեկնումիս նախընթոքին, կարճ նամակներ կը գրեմ կաթողիկոսին եւ Շահէ վարդապետին, եւ անգամ մըն ալ կրկնելով առայժմ ո եւ է շարժումի չսկսելու մեր որոշումը, իրենց կը հաղորդէի, թէ երբ ամէն պատրաստութիւն կը տեսնուի եւ ալ կրնանք համոզում կազմել թէ պիտի յաջողինք մեր ձեռնարկով ազգօգուտ արդիւնքի մը հասնելու, այն ատեն միայն գործի պիտի սկսինք, ամէն նախազգուշութիւն ձեռք առնելով: Կը հաղորդէի իրենց, թէ այս պարագան նկատի ունենալով, պէտք է այնպէս պատրաստ ըլլան դէպքերուն եւ ըստ այնմ պատրաստեն ժողովուրդին միտքը: Շահէ վարդապետի վերոյիշեալ նամակը պատասխանը չէ իմ նամակիս, այլ պատասխանը Մ. Տամատեանի նամակին, քանի որ անոր ուղղած հարցումներն է որ կը կը կրկնէ ինծի:

Փարիզ հասնելուս [Մարտ 13-ի] այս առաջին գիշերը, գրեթէ անկողին չեմ մտներ եւ կը շարունակեմ ընթերցումը դիզուած նամակներուս, որոնց պարունակութիւնը մերթ միխթարական բայց յաճախ ըմբոստացնող կը դառնա[յ] ինձ համար, եւ ընդվզեցուցիչ:

(Անձնական)

Քարիզ 7 Փետր. 1913

Գեր. Տ. Մուշեղ Արքեպ. Մերոբեան
Գահիրէ

Գեր. Տէր

Վսեմ Եագուպ փաշա Արթինէն ստացած մէկ նամակէս իմացայ, որ Եգիպտոսի մէջ վերջերս կազմուած է ազգային ինքնապաշտպանութեան Գոմիթէ մը, դրամ հաւաքելու Հայաստանի ու Կիլիկիոյ մեր հայրենակիցներուն բաժնետու համար, հաւանական ինքնապաշտպանութեան մը նպատակաւ:

Պատգամաւորութիւնը սաստիկ յուզուեցաւ, այն վտանգներուն պատճառաւ, զոր այսպիսի գործեր կրնան ստեղծել ի վնաս հայ ժողովուրդին, մասնաւորապէս ներկայ քրիդիկական հանգամանքներուն մէջ, որ յառաջ եկած են Կ. Պոլսոյ վերջին պատահարներէն: Պատգամաւորութիւնը որոշեց յատկապէս գրել Գահիրէի եւ Աղեքսանդրիոյ Քաղաքական Ժողովներուն, անոնց ուշադրութիւնը հրաւիրելու համար այն շատ ծանրակշիռ կնճռոտութեանց վրայ, որոնց կրնայ պատճառ դառնալ նմանօրինակ շարժում մը, որ միեւնոյն ատեն բնոյթը ունի անվրիպելիօրէն վտանգելու մեր դատը եւ Պատգամաւորութեան պաշտօնը դարձնելու դժուար, չըսելու համար անհնար:

Իմացայ նաեւ որ այդ Գոմիթէին հիմնադիրները կը յուսային Ձեր մօտ

գտնել գործօն մասնակցություն մը եւ նկատի ունէին ձեր օժանդակությունը: Սակայն համոզուած եմ, որ բոլորովին կը բաժնէք Պատգամաւորութեան կարծիքը, եւ անձնապէս յոյս կը դնեմ ձեր խոհականութեան եւ այն ազդեցութեան վրայ զոր ունիք մեր հայրենակիցներուն մօտ, արգիլելու համար անոնք վտանգելէ ազգային դատը այն վայրկեանին որ ամէն ժամանակէ աւելի պէտք ունինք միացնելու մեր բոլոր ջանքերը, Պետություններէն ստանալու համար հայ ժողովուրդին ճակատագրին բարելաւումը, լրջօրէն երաշխաւորեալ բարենորոգումներու գործադրութեամբ:

Այս յոյսով, կը խնդրեմ, Գերապատիւ Տէր, որ ընդունիք խորին յարգանքիս հաւաստիքը:

Պօղոս Նուպար

Բարիզ 7 Փետր. 1913

Սիրելի Սրբազան

Չեմ գիտեր թէ տակաւին Եգիպտոս եւ. բայց շատ գոհ պիտի ըլլայի իմանալով որ հոդ եւ եւ հոդ կը մնաս առայժմ: Հաւանօրէն առիթը պիտի ունենամ աւելի երկարօրէն գրելու Ձեզի: Առայժմ կը գոհանամ երկտող մը գրելով, փաշային նամակէն օգտուելով:

Անշուշտ իմացար հոս հրաւիրուելուս պատճառը իբրեւ քարտուղար Ազգ. Պատգամաւորութեան եւ իբրեւ մասնաւոր քարտուղար Պօղոս փաշա Նուպարի: Ահագին գործ ունիմ. փաշային գրասենեակը դիւանատունի մը վերածուած է, ուր կ'անցընեմ ամբողջ օրս: Եւ արդէն Բարիզը աչքս հրապուրելու բնոյթ չունի. աչքս ետիս է, Գահիրէ եւ Իզմիր, ուր գործերս եւ սիրելիներս երեսի վրայ ձգած եմ. կը մտածեմ միշտ ծեր հօրս եւ խեղճ նշանածիս վրայ. կը մտածեմ նաեւ անձնական գործերուս եւ Միութեան վրայ, եւ այս հոգեւորով ծանրաբեռնուած, սիրտ չունիմ. արդէն օդն ալ աղտոտ է եւ տխուր, յաճախ: Միակ հաճոյքս աշխատութիւնը եւ թատրոնն են: Արդէն ժամանակ ալ չունիմ այլապէս զբաղուելու:

Պատգամաւորները շատ յուզուեցան կարդալով Արթին փաշային վերջին նամակը՝ ինքնապաշտպանութեան Յանձնաժողովի կազմութեան մասին, եւ տրուած որոշման վրայ է որ փաշան անձնապէս Ձեզի ալ գրել յարմար տեսաւ. չէլլաս նորէն néfaste [= չարաղէտ] դեր մը վերագրես ինծի¹⁰⁰, որովհետեւ վերջին անգամ Ադեքսանդրիայէն լաւագոյն տրամադրութիւններով բաժնուեցայ, եւ նոյն իսկ մտադրեցի գետին մը պատրաստել ապագային համար: Բայց հոս

¹⁰⁰ Իմ Եգիպտոս հասնելուս երկրորդ կամ երրորդ օրն էր. Մալեգեան Ադեքսանդրիա եկած էր Փարիզ մեկնելու համար: Բաւական վիճաբանութիւն ունեցանք իրեն հետ մեր ծրագրի շուրջ, եւ երբ Տամատեան եւ ուրիշներ կը խնդրէին Մալեգեանէն, որ Փարիզի մէջ նպաստի գործին աշխատի, այն ատեն Մալեգեանի ալ ներկայութեան ըսի ամենուն. «Ես յոյս չունիմ Մալեգեանէն գալիք օգնութեան. աւելի կը վախճամ անոր կողմէ ըլլալիք néfaste ձեռնարկէ մը»: Մալեգեան իր այս նամակով կ'ակնարկէ այս խօսքիս:

գետին բնաւ չի կայ. առայժմ այդ տեսակ գաղափարի մը hostile [= հակառակ] են, անխտիր:

Շատ գործ կայ անշուշտ, բայց տակաւին ո՛չ մէկ արդիւնք. նախապատրաստական բանակցութիւններու եւ թղթակցութիւններու շրջանն է. բեղուն անշուշտ, բայց ո՛չ դեռ վճռական. ամէն կողմէ կուգան եւ կը գրեն փաշային, դիւանագիտական աշխատութեանց կեդրոնացումը ապահովուած է, եւ փաշան փարած է գործին զմայլելի տոկունութեամբ մը:

Անկարելի չէ որ ամսուս վերջերը ոստ (?)¹⁰¹ մը ընեմ Եգիպտոս. բայց դիւրին չ'երեւար առայժմ:

Բոլոր բարեկամներուն սիրալիր բարեւներս: Պարթեւեանին դեռ չկրցայ գրել. ո՛չ որ թող մեղադրէ զիս:

Անկեղծօրէն անձնուէրդ

Վահան (ՄԱԼԷՉԵԱՆ)

1913 Փետր. 3 Ատանա

Սիրելի Մուշեղ Արքեպ.

Ձեր վերջին (27-1-913) համառօտ նամակին, որ պետական հարուածով կրկին ստացած նոր կացութեան իբր հետեւանք, նոր մտքի, խորհուրդի, ծրագրի, ճամբորդելու փոփոխութիւններ կը հաղորդէր, պիտի փորձեմ կարճ պատասխանել:

Նախորդ գրութիւններով ամէն բան ըսած եւ պարզած էինք. ուրիշ նոր ըսելիքներ չը պիտի աւելցնենք, այլ վերջին խօսք մը ունինք, զայն եթէ լսէք, Կիլիկիան արեան նոր ծովերու մէջ խեղդուելու անխուսափելի դժբախտութենէն պիտի փրկէք, եւ ամէն անոնք որ մթին ծրագիրներով կը փափաքին դժբախտ կիլիկեցին մղել նոյն դժոխային հարկէն, գերծ պիտի պահէք ներկայի եւ ապագայի շանթ-անէծքէն. Իսկ եթէ չը լսէք, ներկայս իբրեւ հայրական սիրոյ եւ գուրգուրանքի անպէտ յիշատակ կրակի տուէք, որով փակած պիտի ըլլանք մեր երկարամեայ յարաբերութիւնն ու հաղորդագրութիւնը¹⁰²:

Եթէ առանց տեղական օժանդակութեան վրայ յոյս դնելու մեր փրկիչները ունին կազմուած ոյժեր արիւնոտ ծրագիրներ յաջողցնելու, մասամբ կը կարճեր մեր ըսելիքը: Սակայն չէր խեղդէր խղճի ձայնը բացարձակապէս յայտարարելու. «Դիւսէն գալիք ոյժերը, ըլլան մեծ կամ փոքր, իբրեւ կաթիլ մը ջրոյ պիտի ցնդին բազմատարր եւ բազմաթիւ թշնամի խուժանին մոլեգին կատաղութենէն, եւ նոյն իսկ անցեալի ցաւագին ու քստմնելի փորձէն խրատուած, մերայինք պիտի քամահրեն եւ երես դարձնեն, եւ գուցէ իրենց ձեռքով բարեխնամ կառավարութեան յանձնեն[»]:

¹⁰¹ Կը թուի թէ Մալեգեան «ոստում» ըսել ուզած է, բայց բառն անուշադրաբար թերաւարտ մնացած ըլլալով, Սերոբեան հարցական նշան մը աւելցուցած է անոր ետին- Վ.Դ.:

¹⁰² Բառը պահպանած ենք նոյնութեամբ, թէւ կը թուի թէ հաղորդակցութեան դադարեցման իմաստով տեղ գտած է բնագրին մէջ- Վ.Դ.:

Վստահելի անձնաւորութեան¹⁰³ Հ. Շահէի ուղղելով ընդարձակ գրութենէն կ'երեւի, որ փրկիչներդ մեծ յոյս դրած էք մեր բարոյական աջակցութեան վրայ, նոյնն է, մեր պայրագտարութեան [= դրօշակրութեան, փխր.՝ առաջնորդութեան] վրայ. ի՛նչ անմեղունակ միամտութիւն: Մենք կ'աշխատինք իրաւամբ կամ յանիրաւի Ձեր արատաւորութեամբ անունը, հակառակորդներու Ձեր վեղարին նետած արիւնի բիծերը մաքրելու. հաւատալով Եզիպտոսի երագներուն, վեղար եւ ալիք մեր զաւակաց արեան մէջ թաթխել, ամէն երագ եօթը տարիներու առատութեան¹⁰⁴ յայտարարը չը կրնար ըլլալ. հետեւաբար լաւ չէ՞, հակառակ մեր քարացած հաւատքին, նոր վարդապետութեամբ նախապաշարումին, անձնասպան ըլլալ եւ չը տեսնել երագներու սեւ օրերն ու տարիները. լաւագոյն չէ՞ առաջին անգամ մեր կուրծքը բանալ գալիք հերոսներու դաւանան գնդակին եւ չը թողուլ, որ հոգեվարք ժողովուրդ մը իսպառ կորսուի, եւ Կիլիկիան ըլլայ Հայուն համար պատմական անուն մը:

Եթէ ունենայիք հարիւր հազարաւոր ոսկիներ եւ նոյն համեմատութեամբ պատրաստութիւն, դարձեալ վերջին աղաղակս, վերջին բողոքս է. «Խիղճ ունեցէք. խիղճ ունեցէք Կիլիկիային խնայելու, որ գերեզմանէն նոր ելած, արիւն արտասուքով իր սիրելիներու ոսկորոտիքը ժողովելու համարձակութիւնը անգամ չունի. խիղճ ըրէք կիլիկեցւոցն դիակները պատուանդան ընելէ մեզ համար իսպառ անիրականալի ծրագիրներու եւ երագներու»:

Եթէ ճակատագիրնիս է նոր ջարդի արհաւիրքներու մատնուիլը, մի՛ խանգարէք մեր անդորրութիւնը, որ անհրաժեշտ է պաղարեամբ դիմաւորել գալիք ամէն փորձութիւն, եւ չը տարուիլ *Տայուորիկ*ներու¹⁰⁵ հմայքներով:

Դուք սիրելիս, եթէ Ներսէս Աշտարակեցիի փառքին նախանձելով կ'ուզէք նման ճանապարհաւ Ձեր կամ մեր գլխուն փառապսակ մը պատրաստել, չարաչար եւ մեղապարտօրէն կը սխալիք, որովհետեւ Ներսէս ալ նման երագներով հայ կամաւորներու առաջնորդեց¹⁰⁶, իր կռնակն ունենալով Պարսկաստանի զանազան հողամասերուն սիրահար հզօր պետութեան մը երկաթակուռ բանակը. հայ արիւնով յաջողեցաւ յաղթականին ճանապարհը բանալ եւ դիւրացնել: Արդի՛ւնքը. 90 հազար պարսկահպատակ հայ տուներ գաղթեցնել, կէտը ճանապարհին թաղել, մնացեալ կէտը հազիւ Երեսանի նահանգը հասցնել

¹⁰³ Կաթողիկոսը կ'ակնարկէ Տամատեանի: Կ'երեւի թէ Մ. Տամատեան իր այդ նամակին մէջ զիս համամիտ ներկայացուցած է իր անհատական գաղափարներուն, աւելի արժէքաւորելու համար զայնս: Առանց ատոր Վեհ. Կաթողիկոսը պիտի չկրնար ինծի գրել «ՓՐԿԻԶ-ՆԵՐԴ»:

¹⁰⁴ Դարձեալ օգտագործում Հին Կտակարանի հրեական առասպելի- Վ.Դ.:

¹⁰⁵ Ակնարկութիւն Տամատեանի: Այս ալ ապացոյց մըն է, թէ ինչպէս Շահէ վարդապետ, կաթողիկոսն ալ անուղղակի կը պատասխանէ Տամատեանին, զիս նոյնացնելով անոր հետ, մտածումի ուղղութեան տեսակետով:

¹⁰⁶ Սահակ Բ. կ'ակնարկէ 1826–1828 տարիներու ռուս-պարսկական պատերազմի շրջանին Ներսէս Աշտարակեցիի գործունէութեան, նախքան անոր արքայանքն ու աւելի ուշ ընտրութիւնը որպէս Ներսէս Ե. Ամենայն Հայոց Կաթողիկոս- Վ.Դ.:

եւ բազմամարդել. այսքան: Ժպտող երագները ցնդեցան, Ներսէս իբրեւ դաւա-
ճան Բիշնէւի մէջ տասնէւչորս ամեայ արքայանքին եւ տառապանքին մէջ
երագներու ցնդած մեկնութիւններով պարապեցաւ: Չունիք դուք ձեր ետեւը
բանակներ, եւ եթէ ունենայիք ալ՝ Հայի արիւնով օտարին չորաբեկ հացը թրջած
պիտի ըլլայիք:

Ըսելիքս լրացաւ. մի՛ ըլլաք օտարին դիւցազնը եւ ազգին դահիճը:

Վերջին սէրս եւ ողջոյնս ծրարելով

Մնամ վշտաբեկ

Սահակ Կաթող. Կիլիկիոյ

Այս նամակին ընթերցումը զգալ կուտայ ինծի, թէ վարը՝ Եգիպտոս եւ Կիլիկիա
ծանրակշիռ քայլեր առնուած են Բոմիթէի անդամներուն կողմէ, որովհետեւ առանց
դէպքերու այդ ծանր հանգամանքին, Կիլիկիոյ կաթողիկոսը ա՛յդքան վրդովելու
պատճառ մը պիտի չըլլար իմ կարճ նամակս: Այս նամակով Սահակ կաթողիկոս
կատարուելիք աղիտաբեր ձեռնարկին եւ անոր վտանգաւոր հետեւանքներուն ամբողջ
պատասխանատուութիւնը ինծի կը վերագրէ: Այս պարագան անգամ մըն ալ ցոյց
կուտայ, թէ Մ. Տամատեան եւ իր համախոհները զիս նոյնացուցած են իրենց տղայա-
միտ ձեռնարկին հետ եւ կիլիկիեցիներուն հաւատացուցած թէ ծրագրին յղացումը
ինձմէ բղիւսած է, եւ թէ ես եմ որ պիտի ղեկավարեմ շարժումը անձամբ: Մեր Եգիպտոսի
բարեկամները կ'երեւի խորհած են, թէ այդ *սուտու*/ միայն կարելի է շարժման մէջ դնել
Կիլիկիոյ կաթողիկոս, առաջնորդներ եւ ժողովուրդ: Ահա այդ պատճառով է, որ Սահակ
կաթողիկոս զիս բաղդատութեան կը դնէ Ներսէս Աշտարակեցիի հետ: Բաղդատու-
թիւնը չափազանց անիմաստ է, որովհետեւ ճիշդ իր նամակին գրութեան պահուն ես
արդէն սա համոզումին եկած եմ, թէ ոճիր մը պիտի ըլլար արուեստական յեղափո-
խութեամբ մը վտանգի ենթարկել ո՛չ միայն Կիլիկիոյ, այլ եւ ամբողջ Թուրքիոյ հայու-
թեան կեանքը. քանի որ թուրք մտայնութիւնը այդ պահուն չափազանց լարուած էր
մեզի դէմ եւ իսլամական մոլեռանդութիւնը գերագոգոռուած, Պոլիս նախարարութիւնը
տապալած յանկարծ եւ ազգամով նախարարներ ընտրուած: Ու պայքարը Պոլսոյ մէջ
եւ գաւառները սկսած էր հայերու դէմ: Բաց աստի ալ անձնապէս համոզուած էի, իմ
ճամբորդութեանս մասին զանազան երկիրներու շատ մը պաշտօնական անձերու հետ
ունեցած տեսութիւններուս բերումով, թէ ո՛չ մէկ պետութեան մօտ նպաստաւոր
հանգամանք գոյութիւն չունէր յեղափոխական ո՛րեւէ շարժումի համար, եւ այդ պարա-
զան արդէն Պօղոս փաշա ալ շեշտած էր իր վերոյիշեալ նամակով: Հաւանաբար մի
միայն Թուրքիա պիտի փափաքէր, որ մենք անխոհեմութեամբ քաղաքական-յեղա-
փոխական շարժում մը ստեղծէինք եւ ատով պատրուակ տայինք իրեն նոր ջարդի մը,
վերջնական հաշուեյարդարի ենթարկելու համար հայ կեանքը: Ինծի համար միակ եւ
կարելոր կէտը երկրի ժողովուրդին անձնապաշտպանութեան խնդիրն էր: 1908էն ի վեր
այդ էր իր միակ մտածումիս առարկան: Պէտք էր զինել ժողովուրդը ինքզինքը կարենալ
պաշտպանելու համար մեծ վտանգին դէմ, որուն առջեւ պիտի գտնուէինք ուշ կամ
կանուխ, որչափ ատեն որ իթթիհատական կառավարութիւնը հին քաղաքական
ծրագիրներ գործադրելու եւ Թուրքիոյ քրիստոնէայ տարրին սխալմամբ պահպանուած

գոյությունը ջնջելու [ծրագիրը կը հետապնդէր]:

Յաջորդ առաւօտ չափազանց ջղայնոտ վիճակ մը ունիմ. հոգեկան տագնապ մը զիս կը խռովէ: Անմիջապէս նամակներ կը գրեմ Եգիպտոս, շեշտելու համար, թէ հակառակ մեր հասկացողութեան եւ որոշումին, սխալ մըն է ինքնապաշտպանութենէ դուրս յեղափոխական շարժումի ձեռնարկելը, երբ մանաւանդ այդ շարժումին նպաստող հինգ պայմաններէն եւ ո՛չ մէկը նպաստաւոր է այդ շարժման: Օր մը վերջ (Մարտ 15) Ա. Չօպանեան, հիմնուելով Եգիպտոսէն ստացած նամակներուն վրայ, վրդովեցուցիչ լուրեր կը հաղորդէ ինծի արդէն իսկ սկսուած շարժման մասին: Անմիջապէս կը հեռագրեմ Եգիպտոսի Քոմիթէին. «Դադրեցուցէք ամէն առաքում եւ սպասեցէք նամակիս»: Եւ նոյն օրն իսկ ընդարձակ նամակով մը կը շեշտեմ իրենց վարմունքին վնասակար հանգամանքը, ժամանակին աննպաստ կացութիւնը եւ միմիայն ժողովուրդը ինքնապաշտպանութեան պատրաստելու անհրաժեշտութիւնը: Եւ արդէն եթէ Քոմիթէի անդամներուն մօտ քիչ մը ողջնտութիւն գոյութիւն ունենար, պէտք չէր որ այս քայլը առնէին, քանի որ ո՛չ միայն ստացած էին ժամանակին Թիֆլիզէն դրկած տեղեկագիրս, թէ ռուսահայերէն օգնութեան յոյս չկայ, այլ եւ կարդացած էին այն բոլոր վերոյիշեալ նամակները, որոնք իմ Եգիպտոսի հասցէիս դրկուած էին կաթողիկոսին, Շահէ վրդ.ին, Պօղոս փաշա Նուպարին եւ Վ. Մալեգեանին կողմէ, եւ այնուհետեւ ինծի դրկուած: Հազիւ նամակս փոստին յանձնած, եւ ահա հեռագրիս սա հեռագրական պատասխանը կը ստանամ. «Շատ ուշ. կատարեցէք ձեր պարտականութիւնը»: Իբր թէ այս հեռագիրը բաւական չլլար խանգարելու իմ տրամադրութիւններս, վայրկեանէ վայրկեան նոր լուրեր կը ստանամ: Մարտ 17ին նորէն կը հեռագրեմ դադրեցնել առաքումները եւ սպասել նամակներու: Մարտ 20ին կ'այցելեմ Պօղոս փաշային: Ինք օրը օրին տեղեկութիւններ կը ստանայ Եգիպտոսի Քոմիթէի շարժումներու մասին: Ինձ կը հաղորդէ թէ նամակ գրած է ինծի արգիլելու համար կիլիկեան շարժումը: Իրեն կը հաղորդեմ այդ նամակը ստացած ըլլալս, իրեն կը հաղորդեմ ըրած յանձնարարութիւններս, նամակներուս բովանդակութիւնը, հեռագիրներս: Այս անգամ բերանացի նորէն կը խնդրէ, որ այդ յիմար շարժումը արգիլելու համար կարելիս ընեմ եւ կը յաւելու. «Այդ շարժումը պիտի վտանգէ Կիլիկիոյ ժողովուրդին կեանքը եւ պիտի վնասէ Հայկական դատին: Եթէ հակառակ ձեր եւ ուրիշներու կողմէ տրուած հրահանգներուն եւ յորդորներուն այդ խենթերը յիմարութիւնը գործեն յեղափոխութիւն ստեղծելու, պիտի թողում Ազգ. Պատուիրակութեան գործը եւ պիտի մեկուսանամ, եւ իրենք պիտի ըլլան մեր ազգային դժբախտութեան պատասխանատուները»: Փաշային այս յայտարարութիւնն ալ կը հաղորդեմ իրենց եւ կը զգուշացնեմ զիրենք ռեւէ արկածախնդրական քայլ առնելէ: Յաջորդ օրը (Մարտ 21) սա հեռագիրը կը ստանամ Եգիպտոսէն, Յակոբ Փափագեան ստորագրութեամբ.

«Արդէն փոխադրութիւնը աւարտած է. Տամատեան ստիպողաբար քեզի կը սպասէ. Ապահ կը մեկնի. անապարեցէք եւ հեռագրով երկու հազար ոսկի հայթայթեցէք»:

Սոյն հեռագիրը ստանալուս, Ա. Չօպանեանին կ'երթամ: Ինք որ ասկէ առաջ գրած նամակով վտանգաւոր կը գտնէր այդպիսի շարժում մը եւ ինձմէ կը խնդրէր որ ամէն ջանք ընեմ արգիլել զայն, ինք որ կը գրէր. «ամէն կրցածնիդ ըրէք իսկոյն առաջքն առնելու այդ շարժման: Թող տեղերնին բոլորովին հանգիստ նստին: Այլապէս Չէյթունի

բացարձակ քայքայման եւ փնացման պատճառ կ'ըլլաք», հիմա կ'ուզէ որ աշխատինք դրամ հասցնել շարժումը ուժաւորելու համար: Բայց եւ բացարձակապէս վստահ եմ, թէ անկարելի պիտի ըլլայ կարելուր գումար մը հայթայթել այդ շարժումին ի նպաստ, քանի որ *ամէն մարդ առանց բացառութեան* հակառակ է շարժումի գաղափարին: Ընդհակառակն, առանց այդ շարժումին, միմիայն երկրին մէջ ինքնապաշտպանութեան ծրագրին գործադրութեան համար բաւական կոկիկ գումար մը հանգանակելու յոյսն ունէի: Մարտ 22ին կը հեռագրեմ Եգիպտոս, թէ անկարելի է հանգանակութիւն կատարել հոս եւ ձեր ուզած չափով դրամ հասցնել: Հեռագրէս անմիջապէս յետոյ ընդարձակ նամակով մը իրենց կը պարզեմ իմ տեսութիւններս, իրենց սխալ ուղղութիւնը կը մատնանշեմ, եւ որոշապէս կ'ըսեմ իրենց, թէ քանի որ չեն յարգեր մեր Աղեքսանդրիոյ վերջին ժողովին որոշումները, եւ այլ եւս ո'ւէլ յանձնառութիւն չեմ կրնար ստանձնել իրենց հանդէպ. թէ՛ եթէ յոյն կառավարութիւնը իրեն ներկայացուցած ծրագիրս չընդունի, այլ եւս հոս կատարելիք գործ մը չունիմ եւ պիտի վերադառնամ Ամերիկա:

Քանի մը օրեր յետոյ նոր նամակներու շարք մը կը ստանամ Եգիպտոսէն: Ահա թէ ինչ բռնազրօսիկ մեկնութիւններու, ինչ խախուտ փաստերու եւ ինչ ինքնավստահ յոխորտանքի վրայ հիմնուելով կ'ուզեն արդարացնել իրենց անարդարանալի ընթացքը:

Աղեքսանդրիա 2(?) Մարտ 1913

Գեր. Մուշեղ Եպ. Սերոբեան

Ստացայ ձեր 15, 19 եւ 22 Մարտ թուակիրները: Կ'երեւայ ինծի տխուր պարտականութիւնը տրուած է պատասխանել Ձեր այս նամակներուն, ո՛չ թէ այլ եւս յոյսը ունենալով որ դուք մեր գաղափարակիցն էք, թէ անձամբ պիտի պատասխանէք Տամատին Ձեր վրայ դրած յոյսերուն եւ իր սրտագին հրաւերին, թէ ըլլայ հոդ կամ Ամերիկա մեզի նիւթական օգնութիւն մը հասցնել պիտի ճգնիք եւ ատոր համար սրտանց ու համոզմամբ պիտի աշխատիք. ո՛չ, այս պատրանքները չունիմ այլ եւս. պիտի գրեմ միայն կարգ մը կէտեր՝ բացատրելու համար. կարգ մը սխալ հասկացողութիւններ պարզելու եւ գրաւոր կերպով պատմութեան նօթեր յանձնելու համար միայն:

1° Կը գրեք, թէ կատարեալ անակնկալի մը առջեւ կը գտնուիք, երբ ինքնապաշտպանութիւն որոշուած ըլլալով, յանկարծ եւ առանց Ձեր գիտութեան արուեստական յեղափոխութեան մը ձեռնարկած ենք: Պէտք է յիշեցնեմ ձեզի որ մենք երբ ուրուագծեցինք այս շարժումը, քանի մը զօրաւոր պատճառներ ունէինք. նախ, դիւանագիտութեան մեր հարցին հանդէպ ունեցած եւ ունենալիք սառն վերաբերմունքը¹⁰⁷, պատերազմական եւ անիշխանական վիճակը երկրին, ուրկէ կ'ուզէինք օգտուիլ. Յոյներէն եղած ռազմական օգնութիւնը. արտասահմանի նիւթական աջակցութիւնը եւ երկրի տրամադրութիւնները: Արդ՝ այս թուած պայմաններէս առաջին երեք պայմանները միշտ կան. կը

¹⁰⁷ Բնագրին մէջ՝ «... մեր հարցին հանդէպ ունեցած եւ ունենալիք վերաբերումը սառն վերաբերմունքը»: Ձնջած ենք անտեղի *վերաբերումը*- Վ.Ղ.:

մնա[ն] վերջին երկու պայմանները, որոնց մասին մեր եւ ձեր ակնկալութիւններ[ը] կը տարբերին. կամ աւելի ճիշդը, փոխանակ առաջին պայմանները զոհելու վերջիններուն, մենք կը ջանանք վերջինները ծառայեցնել առաջիններուն: Ահա մեր գլխաւոր եւ էական տարբերութիւնը: Մեր եւ Ձեր շարժումներուն գործելակերպին եւ վերաբերմունքին այսքան հակոտնեայ տարբերութիւնը անշուշտ իր խոր պատճառները ունի, որոնց կը վարանիմ դաչելու: Մենք սեւեռուն գաղափարէ մը առաջնորդուած ուզեցինք շարժել ե՛ւ արտասահմանը ե՛ւ երկիրը¹⁰⁸: Դուք կը փափաքիք *à la remorque* [= ուրիշէ մը մղուելով] երթալ. խառնուածքի կամ աւելի ճիշդը, դիրքի կամ յարաբերութեանց խնդիր. մենք ասոնցմէ ոչ մէկը չունինք: Պիտի ըսէք, թէ պատասխանատու մարդիկ ենք, կ'ընդունիմ. բայց պետք չէ մոռնաք, որ մենք ալ Ձեզի եւ ուրիշներուն չափ կը սիրենք մեր հայրենիքը եւ մեր դատը, հետեւաբար կշռած ենք մեր պատասխանատուութեան բաժինը: Կ'ըսէք, թէ առաջադրեալ շարժումին ազդակները միշտ անփոփոխ կը մնան: Տեսնենք սակայն որ միւս երկուքը ո՛րքան մեզի դէմ են: Երկրի պատրաստակամութեան եւ տրամադրութիւններուն մասին արդեօք ո՛րքան ճիշդ ու յստակ գաղափար կուտան կաթողիկոսի, Շահէ վարդապետի կամ Թավուզճեան քահանայի մը ողբերը կամ կոծերը. Ատանայի վատութեան ճահիճին փրփրիլը կամ խռովիլը: Տեսնենք, թէ անդին, կտրիճներու բազմութիւնը ի՛նչ կ'ըսէ եւ ի՛նչ կը խորհի: Նմոյշ մը տալու համար ատկէ պէտք չէ միայն դիմել եկեղեցական սքեմի տակ ծածկուած բուերուն: Ձեզի կը դրկեմ Տամատին գրի առած տպաւորութիւնները. *աղնատըշա կէօրէ ֆէշվա վերիլեր*¹⁰⁹, կ'ըսէ առածը: Մարդ է որ գործէ գերկիր.....: Եւ կը զարմանամ, կը հիանամ մանաւանդ այն աղեխարշ եւ խանդակաթ վերաբերմունքին, որ ցոյց կուտան Ազգ. Պատգմաւորութեան անդամներէն սկսեալ մինչեւ Մուշեղ սրբազան մը—քաջ եւ արի սրբազան—Վեհ.ին այն պատմական նզովքներուն հանդէպ, լաց ու կոծին առջեւ, այն առնագուրկ եւ լալկան պատգամներուն առջեւ, *մատնութեան* եւ *դաւանանքութեան* բարձրացող, ժողովուրդը դէպի մատնութիւն մղող, (մեր ընկերներն *իր ձեռքով բարեխնամ կառավարութեան յանձնող ժողովուրդը*. անանկ չէ, անուշիկ սրբազանս), զագրելի եւ քսու կոնդակներուն առջեւ: Մենք գիտէինք, որ կաթողիկոսներ, պատրիարքներ, առաջնորդներ չենք ունեցած մեր անցեա-

¹⁰⁸ Եթէ Քոմիթէն տեղեակ էր ձեռնարկուելիք շարժումին հանդէպ Կիլիկիոյ ժողովուրդին չկամութեա[ն]ը եւ կը ջանար ԾԱԲԺԵԼ, ո՛չ միայն արտասահմանը, այլ եւ ԵՐԿԻՐԸ, ուրեմն պարզապէս անբարեխղճութիւն մըն էր զիս գործի հրաւիրել նոյն այդ *երկրին ժողովուրդին անունով*, ըսելով թէ այդ ժողովուրդը ըստ ամենայնի պատրաստ է եւ միայն ինծի կը սպասէ ոտքի ելնելու համար: Եթէ ինծի գրած ըլլային թէ զիս կը կանչեն միմիայն *երկիրը շարժելու եւ նպաստ հաւաքելու համար*, ըստ այնմ տարբեր կը շարժէի եւ հեռուէն կըրցածս կ'ընէի առանց պատասխանատուութեան:

¹⁰⁹ Կը թուի թէ Մերոբեան օգտագործած է առածին ռամկօրէն գործածուող տարբերակը, որ այլապէս պիտի ըլլար «*անյայտըշա կէօրէ ֆէշվա վերիլեր*», որ բառացի կը նշանակէ. «Պատումին համաձայն վճիռ կը տրուի», փոխաբերաբար ակնարկելով ինքնարդարացման ձգտումով դէպք մը նկարագրելու- Վ.Ղ.:

լին մեջ, որոնք հովանաւորէին մղէին ժողովուրդը դէպի ընդվզում: Նոյն իսկ Իզմիրլեաններն ու Խրիմեաններ խօսքէն դէպի գործ շատ դիւրութեամբ չկրցան անցնիլ. բայց այսքան ցածութիւն եւ վատութիւն ալ չէինք տեսած. եւ այս իրադարձութիւնները մեզի դէմ փաստ կը բերուին, իբր թէ Սահակ կաթողիկոս մը պիտի կրնար ըմբռնել մեր ձեռնարկին սրբազանութիւնը եւ պահանջուած անձնուիրութեան մեծութիւնը: Իբրեւ թէ Սահակ կաթողիկոս մը պիտի հասկնար *մոսէնտը* [պահին կարեւորութիւնը], պիտի ուզէր օգտուիլ անկէ, պիտի ջանար համախմբել Կիլիկիոյ քաջերը եւ զանոնք ոտքի հանէր վերջնական ճիգին համար.... եթէ ասանկ բաներ մը ընելու կարող եւ ասակ մէկը ըլլար, թերեւս իր խորհուրդները բանի մը ծառայէին, բայց Հաճընի գոհերուն վրայ հրճուացողը ուրիշ կերպ կրնա՞ր միթէ վարուիլ մեր այս ձեռնարկին հանդէպ. ինչ որ է, այս մարդուն հետ *սոսայժմ* շատ զբաղեցանք:

Գանք արտասահմանի հայութեան, հարուստներուն պիտի ըսեմ, զի հասարակ ժողովուրդը աւելի *հայ* գտնուեցաւ ... Բայց հարուստներն ալ սկսան մասնակցիլ, եւ մեծ չափով ալ պիտի օգնեն, ապահով ենք. անոնք, որոնք դեռ հայու արին ունին իրենց երակներուն մէջ, ո՛չ անոնք, որոնք Բարեգործականի վարագոյրին տակ ամէն դաւ լարեցին, խոչ[ը]նդոտներ յարուցին մեզ դէմ, ո՛չ անոնք, վերջապէս, որք փառք ու պատիւ կը համարին Պօղոս փաշայի *լաքէ*ներն [= հաճոյակատարներն] ըլլալին Բայց անոնցմէ դուրս սիրտ ու զգացում ունեցողներ կան, կը գտնուին դեռ, եւ մենք բոլորովին յուսահատ չենք ո՛րքան դուրք... վասնզի մենք աւելի կտրուկ եւ աւելի վճռական եղանք, երկու տէրանց չը ծառայեցինք: Մենք մեր ընելիքը ուզեցինք համազգային ընել, այո՛. ուզեցինք որ ամբողջ հայութիւնը իր եկեղեցականով, հարուստով ու աղքատով մեզի հասկնայ, մեզի հետ ըլլայ ու մեզի հետ աշխատի. սխալեցանք. Մենք աջակցութիւն եւ համամտութիւն սպասեցինք, *վէթօ*ի [= արգելքի], ի՛նչ կ'ըսեմ, մատնութեան առջեւ գտանք ինքզինքնիս: Բայց ինչպէս ըսի, մենք այս վատութիւններէն ընկրկողներէն չենք, տարբեր *calibre*ի [= փխր.՝ բնոյթի] մարդ ըլլալնիս ցոյց պիտի տանք:

2^o Տարօրինակ բան մը[ն] ալ կը գրէք. այն թե՛ երբ Աթէնք հասած էք Բարսեղին հետ, հոն Տրակումիսին առաջարկած ըլլաք, որ Յոյն կառավարութիւնը գրաւման բանակ մը հանէ Կիլիկիա, ու դուք զայն առաջնորդէք¹¹⁰: Մենք չէինք

¹¹⁰ Եւ Եգիպտոս ժամանելու երբ իրենց կազմած ծրագրին շուրջ մանրամասն տեղեկութիւններ ստացայ, տեսայ, թէ միակ ապահով կէտը, որուն վրայ յենած կ'ուզէին յեղափոխական շարժումի մը ձեռնարկել, Յոյն կառավարութեան խոստումն է զէնք տրամադրելու իրենց: Տամատեանի խանդավառ հոգին միամտօրէն տպաւորուած էր այդ խոստումէն, եւ ալ չէր իսկ ուզած խորհիլ, թէ այդ խոստումը ի՛նչ շարժառիթներէ ծագում առած էր: Պալքանեան Պատերազմի ընթացքին Յոյն բանակը չափազանց յոգնած էր. կ'աշխատէր կարելի եղածին չափ կարճեցնել պատերազմին տևողութիւնը. եւ այս նպատակին հասնելու մէկ միջոց կար, որ կրնար կրկնակ արդիւնքներ յառաջ բերել եւ Պալքանեան թուրք ճակատը տկարացնել: Այդ միջոցն էր Կիլիկիոյ կողմը յեղափոխական շարժում մը ստեղծել եւ հոն երկաթուղային հաղորդակցութեանց արգելք հանդիսանալ, կամուրջներ օղը հանելով:

գիտեր, որ դուք ասանկ mission [= առաքելություն] մը ունէիք երբ Աթենք ու անկէ Կովկաս գացիք. մենք սա գիտէինք, որ մեզի անմիջական դրամ հասցնելու համար—ո՛չ թէ ինքնապաշտպանութեան համար, որ տարիներու եւ դարերու կարօտ գործ մ'է, եւ որուն համար ձեր անմիջապէս Կովկաս մեկնումը ծիծաղելի պիտի ըլլար—Կովկաս մեկնեցաք—անշուշտ, միջանկեալ կերպով ձեր եկեղեցական խնդիրները կարգադրելու հոգն ալ ունենալով¹¹¹—Բայց Աթենք ալ պիտի հանդիպէիք, եւ եթէ մեզի եկած հեռագրէն ակնկալութիւննիս ճիշդ ըլլար, այսինքն մեզի տրամադրուէր ծանօթ զէնքեր, դուք միայն 10–15 օր Կովկաս մնալէ յետոյ հոս պիտի վերադառնայիք գործը վարելու. կամ նոյն իսկ երկիր անցնելու համար¹¹²: Վասն զի միշտ հաւանական չէ՞ր որ զէնքերու փոխադրութեան ատեն պայթում մը յառաջ գար եւ շարժումը անմիջապէս տարածուէր: Միթէ առնուած զէնքերը ինքնապաշտպանութեա՞ն համար էին, ու խելքի հասնելի՞լ՞ք է այս ենթադրութիւննիդ: Նոյնպէս խելքի հասնելիք բա՞ն է ձեր Տրակումիսի առաջարկնիդ. նոյն առաջարկը արդէօք այսօր իսկ Ֆրանսայի չէ՞ք

Այսպէսով թուրք բանակին զինուորական առաքումները յապաղման պիտի ենթարկուէին ու նոյն իսկ գորքին մէկ մասը Պալքանեան Ճակատէն Կիլիկիա պիտի դրկուէր հայերը ջարդելու համար: Եգիպտոսի Զոմիթէն նկատի առած չէր Յոյն կառավարութեան այս նպատակը: Ես այդ չարիքը խափանելու նպատակով Տրակումիսի առաջարկեցի զինուորական յոյն արշաւախումբ մը դրկել Կիլիկիա՝ ոչ թէ *գրաւման բանակ*, որովհետեւ վստահ էի, թէ Կիլիկիան յոյներուն չէր տրուէր: Այս առաջարկն ըրի, խնայելու համար Կիլիկիոյ հայ ժողովուրդի կեանքին, որ պիտի վտանգուէր հայ յեղափոխութեան հետեւանքով, եւ առաջարկեցի անձամբ ընկերանալ այդ արշաւախումբին մի միայն իմ անձս վտանգելու յանձնառութեամբ:

¹¹¹ Մահակ կաթողիկոս վերել արտագրուած Յունվար 2 թուակիր նամակի անձնական բաժինին մէջ կը գրէր. «.... Խոստացած էիք հետզհետէ գրել, անհամբեր կը սպասենք, մանաւանդ ի Ս. Էջմիածին հանդիպումիդ արդիւնքներուն. եթէ Ներսէս Վարժապետեանի օրինակին հետեւելու խորհուրդը մղեց զձեզ Գէորգ Ե.ի գոգը, չեմք ցաւիր. բաւական է որ Կիլիկիա[յի] օգտակար ըլլալու գաղափարը չը ջնջէք Ձեր հոգիէն ու սրտէն»: Յ. Փափագեան Եգիպտոսի հասցէիս դրկուած այդ կաթողիկոսական նամակը դեռ Փարիզի հասցէիս չը դրկած բացած ու կարդացած ըլլալով, կաթողիկոսին այս *ենթադրութենէն* տպաւորուած կը գրէ այս տողերը, անոնց տալով դրական հանգամանք: Մարդը չէ կրցած ըմբռնել, թէ իմ ճամբորդութեանս մէջ անձնական գործ կարգադրելու նպատակ չեմ ունեցած երբեք, եւ նոյն իսկ մերժած եմ, ինչպէս գրած եմ ի վերել, Գէորգ կաթողիկոսի այս խնդրոյ առթիւ ըրած առաջարկը:

¹¹² Այս տեսակ որոշում մը գոյութիւն չունէր եւ չէր կրնար գոյութիւն ունենալ: Բարսեղ Օհանեան ինծի հետ մեկնեցաւ. Եգիպտոսէն եւ միասին Աթենք իջանք: Ինքը հոն մնաց բանակցելու համար Յունաստանի զինուորական իշխանութեանց հետ, գիտնալու համար, թէ ո՞րքան զէնք եւ ռազմանիւթ պիտի կրնան տրամադրել: Մենէ ոչ ոք գիտեր, թէ այդ բանակցութիւնները ո՞ր պիտի սկսէին եւ ո՞ր կամ ինչպէ՞ս պիտի վերջանային: Մեր որոշումն էր, զէնքեր տրամադրուած պարագային, զանոնք Կիլիկիա փոխադրել յամրօրէն եւ գաղտնի կերպով, մինչեւ որ մեր հինգ պայմանները ձեռք բերելու առիթը ունենայինք: Բայց Զոմիթէի ձեռնարկած այս անխոհեմ գործը, արդէն իսկ հրապարակուած եւ շուկայի ապրանք եղած էր Եգիպտոսի մէջ, ինչպէս պիտի տեսնենք Ժազ Սայապալեանի նամակէն:

կրնար ընել Լիբանանի վերաբերմամբ. ի՞նչ գեղեցիկ բան շիտակը. Corps d'expéditionի [= արշավախումբի] մը գլուխը անցնիլ Կիլիկիոյ մէջ¹¹³:

Այս կէտերը ճշդէլ յետոյ, աւելորդ է կարծեմ խօսիլ ձեր դրութեանը մասին: Կը գրէք, որ ձեզի ծիծաղելի դիրքի մը մէջ դրած ենք, ինքնապաշտպանութիւն կեղծելով եւ ապստամբութիւն պատրաստելով: Հոս հակասութիւն մը կայ որը կամովին է: Ինքնապաշտպանութիւն բառը հնարեցինք մեր ձեռնարկին համար ձեր իսկ թելադրութեամբ, վախնալով որ մեր հարուստներուն մօտ ընելիք դիմումները կը վտանգուին, եթէ խոշոր այլ իրական բառը գործածէինք: Եթէ Տամատ հոս չէ այս միջոցին, որ վկայէ ասոր, մենք հոս ենք... Խեղճ Տամատ, դեռ կը սպասէ ձենէ այն ուրկէ դուք շատոնց հեռացած էք. շատոնց հեռացած էք եղեր, երբ մեր մօտ էիք...:

Ուրիշ պարբերութիւն մ'ալ կայ, որը կ'ուզեմ լուսաբանել. *արուեստական յեղափոխութիւն* չէք հասկնար. բայց ի՞նչ կը հասկնաք արուեստական ըսելով: Պանքայի, Պապը Ալիյի դէպք կը հասկնաք¹¹⁴: Մենք ասանկ բան որոշած չենք. երբ կարգ մը վայրեր, շրջանակներ, դիրք ունին, տրամադրութիւն ունին, դիրքութիւններ կրնան ունենալ, վայրկեանը յարմար է, բայց տեսողութիւն չունին, ուղեղը կը պասի իրենց, ազգային դատին ծառայելու այս յարմարութիւնը, զանգուածային եւ միահամուռ շարժում մը ընելու համար, մարդիկ դրսէն կամ ներսէն բարթի [= կուսակցութիւն կամ կողմ] մը կամ թէ խումբ մը կը հրահրեն, կ'օգնեն, կ'աջակցին, կը մասնակցին եւ միօրինակ ուղղութիւն մը կուտան այդ շարժումին, ասոր սովորաբար ապստամբութիւն կ'ըսեն, եւ միշտ ալ ասանկ եղած է ամէն տեղ, ամէն ժամանակ: Արուեստական չլլալու համար արդէօք կաթողիկոսին կամ առաջնորդին մասնակցութիւնը պէտք է. երբ եւ իցէ այդպէ՛ս եղած է, մեր մէջ թէ այլուր, թէ[՞] անձնուէրներ, անձնագոհներ, chefsեր [= պարագլուխներ] յղացած են ու գործադրած ո եւ է շարժում:

Ուրիշ աւանդութիւն մըն ալ կայ որը կ'ուզեմ ջրել. այն, թէ Յունական կառավարութիւնը նեղը մնացած ըլլալով, ինքը մեզի կանչած, մեզի առաջարկած ըլլայ Կիլիկիոյ մէջ խլրտում մը յառաջ բերել. մեզի ջարդել տալ իր շահուն, իր հաշւոյն համար: Ուրկէ՞ ելած է այս անհեթեթ կարծիքը: Ու Պօղոս փաշան,

¹¹³ Նամակագիրը կը մոռնայ, որ ես դրամական հանգանակութեան գործով չէր միայն որ կը ճամբորդէի Պոլիս եւ Կովկաս, այլ եւս Հ.Յ. Դաշնակցութեան համագործակցութիւնը ձեռք բերելու համար ազգային ընդհանուր ինքնապաշտպանութեան գործին յաջողութեան համար: Եգիպտոսի Բոմբիթին արդէն պատմած էի Ժընէվի մէջ Ա. Ահարոնեանի հետ տեսակցութիւնս, անոր ցոյց տուած համահանդիսին ու թելադրութիւնները: Եւ Կովկասէն դրկած տեղեկագրիս մէջ մասնաւորապէս շեշտած էի նաեւ այս ձեռնարկիս ձախողանքը:

¹¹⁴ Ակնարկութիւն՝ Ա.- Դաշնակցութեան կազմակերպութեամբ 26 Օգոստոս 1896-ին Պոլսոյ մէջ Օսմանեան Դրամատան գրաւման՝ եւրոպական պետութիւններու ուշադրութիւնը հրաւիրելով բարենորոգումներ գործադրել տալու դիտաւորութեամբ. Բ.- Դա՛րձեալ բարենորոգումներու հասնելու նպատակով, բայց Հնչակեաններու կազմակերպութեամբ ցուցարարներու երթ դէպի Բարձր Դուռ 30 Սեպտեմբեր 1895-ին- Վ.Ղ.:

ինչպես ուրիշներ, այս բանին վրայ կոթնելով *սինիք*, *մաքիավելական* [= *շնական*, *նենգ*] կը կոչեն անոնք, որ ազնիւ գտնուեցան մեզի նկատմամբ, խեղճ ու դժբախտ ժողովուրդի մը նկատմամբ, ուրկէ մեծ բաներ ալ չէին կրնար ակնկալել: Դուք շատ աղէկ գիտէք, որ այս գաղափարը յղացողը եղաւ Տամատ, եւ հազար չարչարանքներէ եւ նազանքներէ յետոյ դժուարաւ կրցանք այդ նուէրը կորզել: Եթէ Յոյները շահ մը կը սպասէին մեր ձեռնարկներէն, շատ դոյզն, շատ չնչին բան մ'էր, բաղդատմամբ մեր ակնկալութիւններուն: Մենք էինք որ օգտուելու յոյս ունէինք, ո՛չ թէ անոնք. անոնց համար շատ շատ դիւանագիտական diversion [= խոտորում] մը պիտի ըլլար, Եւրոպան¹¹⁵ մտահոգող. բայց երբ իրենք կոթնած իրենց յաղթութիւններուն վրայ, մանաւանդ յուսահատած եւրոպական անկեղծ համաձայնութենէ մը յառաջ գալիք միջամտութենէ մը ի նպաստ Պալքանեան Պետութեանց, կրնա[՞]նք առանց խղճի խայթի հաւատալ, որ մենք գործիք եղած ենք իրենց ձեռքը, անհաշիւ եւ անմիտ կերպով, ու մենք ենք որ պիտի ազատենք զիրենք նեղ կացութենէ մը: Բայց կը տեսնեմ, որ ասոնց վերջը չի գար, եւ երբ մենք ասդին դէպքերը ու դիրքերը կը ճշդենք, անդին գործունէութեան դաշտին մէջ խօսքով չեն զբաղիր. գործին մեծութիւնը չէր որ պիտի վիստեցնէր մերինները, ո՛չ ալ *մատնութեան փորձերը*, որոնք կը կատարուին *կաթողիկոսի եւ Շահէի* գիտութեամբ, եթէ ո՛չ հրամանաւր, եւ ձեր նախկին քարտուղարին՝ Քերո[վ]բէի ձեռամբ եւ աղաներու մասնակցութեամբ: Բայց այս ամէնը դարձեալ պատճառ մը չէ որ մերինները տեղի տան *անորակելի եւ անմոռանալի* վատութեանց առջեւ: Մենք ամէն ջանք կը թափենք կոր խնդիրները չի գահաւիժելու համար. կը սպասենք կոր դրամին, որու զօրութեամբ դեռ մարդիկ ունինք տեղաւորելու, մինչեւ այն ատեն թող անոնք գիտնան, որ գործերը վիժեցան ու ամէն բան խաղաղեցաւ, այսպէս տարածայնած ենք թէ երկրի մէջ եւ թէ հոս:

Այս պահուս ստացայ Ձեր 27 թուակիրն ալ. *մէրսի* [= *շնորհակալութիւն*] ձեր աշխատութեան համար. լաւ է ուշ քան երբեք Լոնտոնի եւ Բարիզի ընելիք օգնութիւններուն համար անշուշտ շատ բան կը պարտինք ազնիւ Չօպանեանին. *չը պիտի մոռնանք երբեք* իր աջակցութիւնը. գոնէ ինքը չզբաղեցաւ մեզի տարհամոզելով մեր ընկերը չըլլալով հանդերձ¹¹⁶:

Մեր Արմենակ էֆ. [Կամսարականին] համոզեցինք ընդունիլ առժամեայ միջնորդի դերը. երկու անգամ ալ հեռագրեց Լոնտոն, թէ դրամները պիտի

¹¹⁵ Բնագրին մէջ՝ եւրոպական-Վ.Դ.:

¹¹⁶ Նամակագիրը մոռնալ կը ձեւացնէ ինքզինքը Ա. Չօպանեանի Յունվար 9 թուակիր նամակը, որ դրի Քոմիթէի առջեւ, եւ որով բացարձակապէս կը դատապարտէր յեղափոխական շարժումը եւ կը թելադրէր չը վտանգել Հայ Պատգամաւորութեան դիւանագիտական գործը: Վերջին պահուն Ա. Չօպանեան եւ Լ. Մկրտիչեան, երկուքն ալ բացարձակապէս հակառակ ըլլալով շարժումին, վերջին պահուն ակամայ հարկադրուեցան, ինչպէս ես, ոյժ տալ դրամական հանգանակութեան ձեռնարկին, սա մտածումով, թէ որքան կարելի է պէտք է զօրացնել այդ անժամանակ սխալ շարժումը, չարիքը նուազեցնելու համար, եթէ հնարաւոր ըլլայ:

ընդունի:

Տամատի վերջին նամակէն կը քաղեմ. «Մուշեղ Սրբազանին գործակցութիւնը ապահովէ.- մեզի լքելը ամենամեծ վատութիւնը պիտի ըլլայ...»:

Գործերու ընթացքին համար չը պիտի կարողանամ որոշ տեղեկութիւններ տալ, հակառակ բարի կամքիս. բացարձակապէս լռութիւն եւ խորհրդապահութիւն պատուիրուած է մեզի. այսքան տուժեցիմք արդէն սուտութիւն տարածայնութիւններէն. այսչափ միայն կրնամ ըսել, որ գործը կը *շարունակուի անխափան եւ խիստ շրջահայեաց կերպով*. Բայց արդիւնքը ապահովաբար ամիսը չ'անցնիր:

Պիտի ներքէ եթէ տեղ տեղ թերեւս խիստ գտնուեցայ. եթէ դեռ ընկեր ենք, ասոնք կը մոռցուին ու մանաւանդ կը դարմանուին. եթէ արդէն զիրար չենք հասկնար ու չը պիտի հասկնանք, դարձեալ բարեկամներ ենք, եւ օր մը թերեւս իրարու մօտենանք:

Ձերդ

Յ. Փափագեան

Ահա նամակ մը, որ իր մէջ կը ցոյացնէ արկածախնդիր մտայնութիւն մը, կոթնած ազգասիրութեան ոգիին: Կասկած չունէի բնաւ Քոմիթէի բոլոր անդամներուն խորունկ հայրենասիրութեանը մասին: Անոնց ամէնքն ալ, բացառաբար, կը պատկանին 1890–1908 շրջանի յեղափոխական շարքերուն, որոնց հետ գործակցութիւն ունեցած եմ անընդհատ: Բայց պարագաներ կան, ուր հայրենասիրութիւնը կրնայ վտանգաւոր թելադրիչ մը ըլլալ, երբ խոհականութիւն, լրջութիւն եւ հանգամանքները նկատի առնող պաղարիւնութիւնը կը պակսի: Մեր Յ. Փափագեան բարեկամը, յանուն Քոմիթէի, գործին ամբողջ պատասխանատուութիւնը յանձն առած ըլլալը կը գրէ: Բայց չը խորհիր, որ իրենց ստանձնած այդ պատասխանատուութիւնը չ'երաշխաւորեր Կիլիկիոյ ժողովուրդին կեանքի ապահովութիւնը: Եւ ինչպէս քիչ մը վերջ պիտի տեսնենք Տամատեանի նամակէն, արդէն կազմ ու պատրաստ [են] կառավարութիւնն ու ջարդարար խուժանը իր[ենց] հայաջինջ ոճիրին ձեռնարկելու համար: Սա շատ որոշ է, թէ, ինչպէս կ'երեւի Փափագեանի ալ նամակէն, յեղափոխական շարժումի ձեռնարկը այլ եւս հասարակաց ապրանք մը եղած է հրապարակի վրայ: Եւ իրենք պետք կը տեսնեն խօսող բերանները փակելու համար. գործէն ձեռնթափ եղած ըլլալու *տարածայնութիւն* մը կը նետեն մէջտեղ: Բայց արդէն ուշ էր: Լուրերը մինչեւ Պոլիս հասած էին, եւ ամենայն հաւանականութեամբ թուրք կառավարութիւնը տեղեկացած ըլլալով Եգիպտոսի շարժումներու մասին, ըստ այնմ պատրաստուած էր Կիլիկիոյ մէջ զսպելու ապստամբական շարժումը իր սաղմնային վիճակին մէջ:

Անգղ. հիւպատոսարանի թարգման Ժագ Սայապալեան, որ մօտէն տեղեակ էր ազգային ինքնապաշտպանութեան գործին շուրջ կուսակցութիւններու համագործակցութիւն մը ստեղծելու նպատակով Կ. Պոլսոյ մէջ Ս. Չաւարեանի հետ ունեցած տեսակցութեանս, եւ որ համամիտ էր իմ ձեռնարկիս, իմ կարգ մը թելադրութիւններուս եւ յանձնարարութիւններուս կը պատասխանէ հետեւեալ նամակով.

Բերա 24 Փետր. 1913¹¹⁷

Սիրելի Սրբազան

.....

Յ.Գ.- Գիտես որ իմ ամեն գործս քիչ մը բացառություն է: Հետևաբար չես զարմանար, որ խրատ մը տալու ելլեմ... արքեպիսկոպոսի մը:

Ոյժիդ եւ կարողութեանդ վրայ հաւատքս մեծ է, այնքան որքան չէ թերեւս ... քու կրօնականի հաւատքդ: Բայց յախուժն ո՛չ մէկ քայլ, աման, որովհետեւ այս գործը չի վերցներ: Եւ գիտե՛ս. ինչո՞ւ դրդուեցայ ասիկա գրել: Անոր համար, որ Եգիպտոսի մէջ շաղակրատություն կ'ընեն կոր: «Յուսաբեր»ին մէջ կարդացի կարգ մը բաներ, որոնք լաւ է որ բնաւ չգրուին: Սանձ դիր անոնց բերանը: Մենք թուլբերանութենէ շատ ենք տուժեր. քիչ մըն ալ լռելուն ոսկի ըլլալը թող հասկնան վերջապէս: Իրաւունք չունի՛մ: Խօսելու ալ ժամանակը կայ. հիմա այդ ժամանակին մէջ չենք:

[Ժ. Սայապալեան]

Ադեքսանդրիա 4 Մարտ 1913

Գեր. Մուշեղ Արք. Սերոբեան

Բարիզ

Անուշիկ Սրբազանս

Ահա ես, թոփալ ոտքովս, ինչպէս խոստացած էի, երկիր կ'անցնիմ: Վաղը կը մեկնիմ Պէյրութ-Հալէպ-Իսկէնտէրուն-Չ. Մարգուան, ուր պիտի ընդունիմ Բարսեղը զենքերով: Այս գործողութիւնը, հակառակ մեր ձեռք առած բոլոր միջոցներուն, կը մնայ միշտ վտանգաւոր. պայթումը կրնայ վայրկեանական ըլլալ եւ կայծակի արագութեամբ ծաւալի, մանաւանդ տուեալ ըլլալով մէկ կողմէ մեր վճռականութիւնը եւ միւս կողմէ կառավարութեան եւ ջարդարար խուժանին կազմ եւ պատրաստ տրամադրութիւնը: Այսօր Ձեր նամակը կարդացի (Թիֆ-լիզէն), որով մանրամասն նկարագրած էիք Ձեր եւ Գասպարի խիստ գնահատելի ջանքերը կովկասահայ օգնութիւն մը փութացնելու, ջանքեր, որ իրենց անմիջական արդիւնքը չեն ունեցած թէեւ, բայց որոնց ապարդիւն չանցնիլը գոնէ կարելի է դեռ յուսալ: Ենթադրելով որ հիմա արդէն Փարիզ հասած կ'ըլլաք, ներկայս կ'ուղղեմ Ձեզ, երկիր անցնելէ առաջ իբրեւ ընկերական ողջոյն մը: «Մնաք բարով» չեմ րսեր, որովհետեւ այն հաստատ համոզումը ունիմ, որ մեզի մինակ չպիտի ձգէք: Կիլիկեան ազատագրութեան եւ Ատանայի վրիժառութեան սրբազան դատը Ձեզ կը կանչէ:

Իմ կարծեօքս, Բարիզի մէջ փորձ մ'ալ ընելէ վերջ հայ ունեւոր դասակարգին կարծրացած սիրտը կակղեցնելու եւ Ս. Գործին համար կարելոր գումար մը ձեռք բերելու յաջողիք կամ ո՛չ, լաւագոյն բանը ըրած կ'ըլլաք վերադառնալ[ով] Եգիպտոս, եւ անկէ մեր ընկերներուն հետ խորհելով՝ միջոց մը գտնել երկիր անցնելու: Ձեր ներկայութիւնը պիտի ելեքտրականացնէ ամբողջ Կիլիկիոյ

¹¹⁷ Բնագրին մէջ՝ 1912- Վ.Ղ.:

հայությունը, եւ սարսափահար պիտի ընէ թշնամին:

Մկրտիչեանը վերջին պահուն մեզի եղբայրակցեցաւ. ես անձամբ գացի իրեն եւ Գործի հրաւիրեցի զինքը, եւ սիրայօժար ընդունեցաւ:

Ամերիկայէն դրամ չեկաւ. փոխանակ օգնություն փութացնելու, մեր զլխուն շան քարոզ կը կարդան, մանրամասնություն կ'ուզեն, աշխարհի միւս անկիւնէն կ'ուզեն մեզի հրահանգ տալ եւ պատգամ արձակել: Թերեւս Ձեր կողմէն հեռագիր մը յաջողի փոխել իրենց à la Nazaretian [= Արմենակ Նազարի հետեւողութեամբ] մտայնությունը¹¹⁸: Արդէն այսօր Մկրտիչեան ալ ստիպողական հեռագիր մը քաշեց Ամերիկա:

Խարթումի մեր հայրենակիցները մեզի տրամադրեցին 200 ոսկի. Ապիսինիոյ հայերը 250 ոսկի: Եթէ այս գումարները չլլային, զենքերը փոխադրելու իսկ անկարող պիտի ըլլայինք: Այս տեղի հարուստները, բացի մէկ քանիներէ – որոնք միւսներուն պատճառաւ փոքր չափով մը մասնակցեցան հանգանակութեան – մեծագոյն մասամբ անյողողող մնացին իրենց սառնասիրտ վերաբերումին մէջ՝ Բարիզէն եկած mot d'ordreի [= կարգախօսի] մը հետեւելով: Ահա, Սրբազան, մեր կացութիւնը:

Երկու խօսք ալ երկրի մասին: Ծահէ վարդապետին հետ երկար թղթակցություն մը փոխանակեցի. չեմ կրնար ըսել, թէ զինք համոզած եմ. բայց կարծեմ բաւական կակղացուցի: Հալէպ անձամբ պիտի տեսնուիմ Ն[երսէս] Եպիսկոպոս Դանիէլեանի հետ եւ Ձէյթունի խորտումին համար իր աջակցությունը պիտի պահանջեմ: Թերեւս դեռ ուշ չէ որ դուք թէ՛ այս երկուքը եւ թէ Վեհ.ը ցնցէք եւ շարժումին նպաստաւոր դարձնէք: Այս անհրաժեշտ է. եւ ո՞վ Ձենէ աւելի կրնայ ազդել Ձեր այս եղբայրակիցներուն վրայ: Թող մեզի խոհեմութեան յորդորներ չի կարդան: Մենք մեր ընելիքը որոշած ենք եւ խրատներու անսալու տրամադրություն չունինք: Եթէ յեղափոխությունը չարիք մը կը նկատեն, գոնէ այնպէս ընեն, որ նուազագոյն չարիք մ'ըլլայ այն, քանի որ զայն արգիլելու կամ խափանելու անկարող պիտի ըլլան:

Աւելի չեմ երկարեր: Ժամանակ չունիմ:

Ձեր հասցէին եկած բազմաթիւ նամակներ, որոնցմէ ոմանք Ձեր արտօնութեան համաձայն բացուած իմ կողմէ, կը յանձնեմ ընկերներուս, որ Ձեզի հասցնեն:

Յտեսություն ի Կիլիկիա

Համբոյրներով
Մ. Տամատեան

¹¹⁸ Այս տողերը գրած պահուն, Մ. Տամատեան մոռցած կը թուի ըլլալ, թէ ես հրաժարած եմ Ս.Ռ. Կուսակցութենէն, եւ հետեւաբար իմ կողմէ քաշուած հեռագիր մը անհետեւանք պիտի մնար, *ընկերական հանգամանք* չունենալուն համար: Մոռցած կը թուի ըլլալ, թէ իր ականարկած à la Nazaretian մտայնությունը անփոփոխելի պիտի մնայ, որչափ ատեն Ա. Նազար, այնթապցի, մնայ ԱԶԳի խմբագրութեան գլուխը, եւ իբր *էնթրիկան* իր կիլիկեցիի հանգամանքով ջանայ համոզել շարքայիները, կիլիկեան շարժումին ազգավնաս հանգամանքը ցուցադրելով անոնց աչքին:

Ադեքսանդրիա 6 Մարտ 1913

Անուշիկ Սրբազան

Տամատ գնաց, եւ իր վերջին նամակը թերեւս... քեզի ուղղուած կը ներփակեմ:

Չեմ գիտեր ի՞նչ որոշում պիտի տաս ներկայ կացութեան հանդէպ. ինչ որ պիտի ընես թերեւս լաւագոյնը ըլլայ:

Այսօրուան փոստիւ ընդարձակ նամակ կոչ մը ուղղած ենք Չօպանեանին, իր աշակցութիւնը խնդրելով, որ քեզի կը կարդայ անշուշտ,: Իրմէ եւ քենէ—եթէ քանի մը օր հոդ պիտի մնաս—նիւթական օգնութեան կարելի եւ անմիջական աշխատութիւններ կը պահանջենք. Քէլէկեաններ, Մարկոսեաններ թող հասնին մեզի: Գալով մեր խնդրոյն հետեւանօք ծագելիք դիւանագիտական կնճիռներուն եւ աշխատութիւններուն, Չօպանեանի կը թողունք վարել Պատ. Յակոբեանի, Մոստիչեանի եւայլնի հետ, երբ ատենը գայ: Արդէն այս մասին Լեւոն Մկրտիչեան պիտի գրէ.— ըսեմ որ Լեւոնին հետ եղբայրացանք ամէնքս եւ հիմա մեզի հետ կ'աշխատի խանդավառուած:

Գալով մեր ներքին գործունէութեան, Տամատ գնաց – Պէյրութ-Հալէպ (Ներսէս եպիսկոպոսը մղելու Չէյթուն – 300 ոսկի դրկեցինք, չը մոռնամ, իր ձեռքով). յետոյ պիտի անցնի Պէյլանի ճամբով Իսկէնտէրուն-Չոզ Մարգուան – փոխադրութիւնը, որ Չօպանեանի նամակին մէջ արդէն կատարուելու վրայ գրած եմ, վախճալով ամէն պատահականութենէ եւ արգելքէ, պիտի կատարուի 15 Մարտի ատենները, Իսկէնտէրունի բացը կամ Չոզ Մարգուանի առջեւ: Տամատ հոն հասած պիտի ըլլայ 2–3 օր առաջ: Չէնքերուն վրայ աւելցած են Մաւզեր, 100 ոսկիի արժէքով տինամիթ – մեծ ու փոքր ժումբեր, վառօդ եւ 50 զինուոր, մէկ քանի առաջնորդներով: Հաճըն նոյնպէս դրկեցինք մեր ընկերներէն մին. ճամբան Ատանա-Կարս Բագար-Սիս պիտի հանդիպի, անոնց աշակցութիւնը ապահովելով: Կը յուսամ 200 ոսկի ալ Հաճըն դրկել այսօր վաղը, պարտքով դրամ ճարելով: Կը հասկնաք ուրեմն որ որքան եւ ինչքան դրամի պէտք ունինք եւ ՄԻՆՉԵԻ ԱՄՍՈՅՍ 15Ը: Ձեր Թիֆլիզի առաջին նամակը առած ենք. շնորհակալութիւն ձեր աշխատութիւններուն, թէեւ առ այժմ ապարդիւն. այսօր իսկ կոչ մը եւս ուղղեցինք Մշակի խումբին¹¹⁹, եթէ կարելի ըլլայ որ դուք այդ տեղէն միջոց մը գտնէք եւ հեռագրաւ pression [= ճնշում] ընէք իրենց վրայ, մեզի¹²⁰ հասնելու համար, լաւ կ'ըլլար: Նոյնպէս Ամերիկա հեռագրեցինք, ինչպէս Լեւոնն ալ հեռագրեց, բայց ի գուր. ապրին որ մեզի չհասկցան եւ մինակ թողուցին:

Գրեցէք եւ հեռագրեցէք ինչ որ պիտի ընէք: Կը հասկնաք մեր կացութիւնը... Միջոցներ ձեռք առած ենք Մէրսին, Իսկէնտէրուն, օտար հասցէ ունենալու, դրամ դրկելու պարագային, նոյնպէս անձամբ գացող ունինք դրամ ապահով

¹¹⁹ Նկատի ունի թիֆլիսաբնակ Համբարձում Առաքելեանը, Սամսոն Յարութիւնեանն ու անոնց գաղափարակիցները- Վ.Ղ.:

¹²⁰ Չնշած ենք դերանուան նախորդած աւելորդ «հասնելու» բառը- Վ.Ղ.:

հասցնելու համար իրենց տեղերը:

[Իփեկեան] Գասպարին դրամը հեռագրաւ Մշակին դրկեցինք ժամանակին: Յանուն Աստուծոյ, շուտով գործեցէք եւ շուտով պատասխանեցէք, եւ եթէ պիտի վերադառնաք շուտ ըրէք...:

Առանձին պահարանաւ ձեզի դրկած ենք ձեր հասցէին եկած նամակները եւայլն եւայլն:

Համբոյրներով

Յ. Փափագեան

Ադեքսանդրիա 20 Մարտ 1913

Սիրելի Սրբազան

Ձեր երկու հեռագիրները ստացած ենք. հարկաւ մեր պատասխանն ալ ստացած էք: Չեմ կրնար բացատրել եւ արտայայտել մեր զարմացումին հետ այն խորունկ վիշտը որ կը զգանք տակաւին հասկցուած չըլլալուս. տակաւին այն ենթադրութիւնը թերեւս ունիք կամ ուրիշներ ունին, թէ մենք *պրոֆով* [= խաբէութեամբ] սկսանք եւ *պրոֆով* պիտի վերջացնենք... Հակառակ որ նաւը ամսոյն 12ին ճամբայ ելած է՝ 15ին հասած է ... ու ցայսօր լուր մը չունինք, լաւ թէ վատ. բայց դարձեալ մեզի սպասեցէք, մի՛ ընէքի պէս բաներ կ'ըսուին եւ ձեր իսկ միջոցաւ. զարմանալիք թէ ողբանք... մեր բարեկամը ու ընկերը, ձենէ եւ ուրիշներէ լքուած, մահուան եւ անծանօթին ընդառաջ կ'երթայ, իտեալէ մը մղուած, գործին վրայ հաւատքով, սա ջարդուելիք ժողովուրդին անձնուիրութեան դաս տալու համար, շարժելու համար, եւ բռնի իրաւունքներուն տէրը ընելու, ու բախտ[ը] փոխել փորձելու համար... ահագին տաժանքով քանի մը դրուշներ քով քովի կը բերենք *սա վայրկեանը* չկորսնցնելու համար, ամէն գնով, ամէն միջոցով շարժում մը յաջողցնելու համար, ու դեռ մեզի սպասեցէք, կարելոր ըսելիքներ ունինք կ'ըսուի. ըսել է թէ դեռ չենք հասկցուած, չօճուիսի [= երախայի] տեղ դրուած ենք. սուտ է բոլոր գրածնիս, բոլոր ըրածնիս. մենք վայրկեան առ վայրկեան փորձանքին կը սպասենք կոր, եւ ամէն վայրկեան որ կը կորսուի կոր, մարդ դրկելու, դրամ դրկելու համար, մեզի դարձեալ խրատ, յորդոր կամ դիւանագիտական յուսադրութիւններ պիտի հրամցուին... եւ մեր Սրբազանը, որ կացութիւնը կը հասկնայ ու գիտէ, ճիգ մը չ'ըներ, վճռական խօսք մը չ'ըսեր շուրջիներուն, իր ազդեցութիւնը չի բանեցներ մեզի օգնութիւն հասցնելու համար. դեռ ինքն ալ կը վարանի. մեզի հետ չէ բոլորովին. ձգձգումներէ եւ սպասողական վիճակէն յոյս ունի որ խաղաղութեամբ պիտի վերջանայ մեր ձեռնարկը:

Մենք ալ յիշում ենք չենք յուսար ո՛չ մեր բարեկամներէն, ոչ մեր թշնամիներէն ու հակառակորդներէն. մեր բախտին թողուած ենք այլ եւս, եւ գիտենք ընելիքնիս:

Մեր ամէնուս բարեւները, տխուր բարեւները

Յ. Փափագեան

Յ. Փափագեանի բոլոր նամակներուն մէջ քանի մը տողեր միայն կան, որոնք ցոյց

կու տան, թե վերջապես ըմբռնած են իմ բռնած քաղաքականությանս նպատակը, որ էր. «ձգձգումները եւ սպասողական վիճակէն յոյս ունի որ խաղաղութեամբ պիտի վերջանայ մեր ձեռնարկը»: Եւ այդպէս ընելու իրաւացի պատճառներ ունէի: Նախ, առաւել քան այլ ոք, շատ լաւ կը ճանչնայի Կիլիկիոյ ժողովուրդին հոգեբանութիւնը, անոր անտարբերութիւնը ազգային դատին եւ հասարակաց բարօրութեան գաղափարին հանդէպ. գիտէի թէ բացի Չոզ Մարգուանի ժողովուրդին ապրած ասպետական ոգիէն, ո՛չ մէկ տեղ կարելի պիտի ըլլար գտնել զոհողութեան եւ անձնուիրութեան ոգի: Յետոյ եւ չէի կրնար Քոմիթէի անպատասխանատու անդամներու ստանձնել փորձած պատասխանատուութիւնը ստանձնել առանց ժողովրդական կեանքին ապահովութեան երաշխիք մը ունենալու ձեռքիս մէջ. իմ դիրքս զիս կը դնէր աւելի ծանր պատասխանատուութեան մը տակ. իբր եկեղեցական կախումներ ունէի հոգեւոր վերին իշխանութենէն, որ հակառակ էր շարժումին եւ անէծքով զիս կը հարկադրէր խափանել շարժումը: Իբր հանրային գործիչ կախումն ունէի Ազգ. Պատգամաւորութենէն, որ դիւանագիտական ճամբով կ'աշխատէր Հայկական Հարցին լուծման, եւ Պատգամաւորութեան նախագահը՝ Պօղոս փաշա Նուպար, թէ նամակով եւ թէ բերանացի կը փափաքէր, որ ամէն գնով այդ շարժումը կասեցնէի: Բաց աստի, ուրիշ երկու պարագաներ ալ ստիպողական կը դարձնէին յետաձգել յեղափոխական շարժումը եւ ոյժ տալ ինքնապաշտպանութեան գործին, պատրաստ գտնուելու համար վաղուան անխուսափելի վտանգին առջեւ: Նախ Կիլիկիոյ ժողովուրդին բացարձակ չկամութիւնը յեղափոխական ոեւէ ձեռնարկի, եւ երկրորդ Քոմիթէի կողմէ ձեռք առնուած միջոցներուն անբաւականութիւնը: 1-2 հազար ոսկիի հանգանակութեամբ եւ քանի մը հրացանի ու ռումբի առաքումով ապստամբական շարժման սկսիլը 7-800 քիլոմէթր շրջանակի մը մէջ ցրուած եւ ցանցառ հայութեամբ եւ ստուարագոյն իսլամներով բնակուած ընդարձակ կեդրոնի մը մէջ, այդ դրամն ու զէնքերը հազիւ օրուան մը, երկու օրուան ինքնապաշտպանութեան կրնային ծառայել մէկ երկու վայրերու մէջ: Երրորդ օրը պատրաստ էր արդէն ընդհանուր ջարդը: Քոմիթէի անդամ մեր բարեկամները, իրենց հայրենասիրական խանդավառութենէն տարուած, եւ խրատ ու խորհուրդ մտիկ չընելու իրենց յամառ *նահիկութենէն* [= *անգիտութենէն*, *անփորձութենէն*] առաջնորդուած գործի սկսած էին: Մեզի կը մնար չարիքը նուազեցնելու համար գործակցիլ Ա. Չօպանեանի, եւ հոս ու հոն դիմել դրամական օգնութեամբ արժեւորելու ձեռնարկը: Մարտ 27ին Ռաբիկ [= Ռափայէլ] Մարկոսեան վերադարձած էր Նիսէն. անմիջապէս անոր մօտ կ'երթամ, պնդելով որ յարգէ իր խոստումը եւ նպաստէ գործին: Կը խոստանայ անմիջապէս 10.000 ֆրանք հեռագրել Եգիպտոս: Իմ այս դիմումներս իմանալով, Պօղոս փաշա, զիս կանչելով, կը պնդէ որ դադրեցնեմ դիմումներս եւ դադրեցնել տամ շարժումը. հակառակ պարագային, կը սպառնայ Պատուիրակութեան նախագահութենէ հրաժարիլ եւ *դէպքերու ամբողջ պատասխանատուութիւնը իմ վրաս* բեռնել: Պօղոս Նուպար չ'ուզեր լսել ո՛չ մէկ բացատրութիւն, ոչ մէկ առարկութիւն կամ դիտողութիւն:

Ապրիլ 8ին կարգ մը ազգայիններ ժողովի հրաւիրած ենք դրամահաւաքութեան համար: Սակայն նոյն օր Ա. Չօպանեան նամակ կը ստանայ Եգիպտոս գտնուող վատահելի եւ խնդիրներուն մօտէն ծանօթ ազգայինէ մը (Լ. Մկրտիչեան), ուրկէ կը տեղեկանանք, թէ հակառակ Մարտ 13 եւ 15 հեռագիրներուն դեռ փոխադրութիւն

գոյութիւն չունի. թէ գէնքերու առաքումը տեղի պիտի ունենայ 1000 ոսկիով, որուն մէկ մասը միայն վճարուած է ցարդ: Այս նամակին պարունակութենէն չափազանց կ'ազդուինք, տեսնելով, որ Քոմիթէն կը խաղայ մեր ուղղամտութեան հետ: Այլ եւս ինչպէ՞ս կրնայինք նոյն օր հրաւիրուած ազգայիններէն դրամ պահանջել գործի մը համար, որ այլ եւս արկածախնդրական գաւելտի մը կերպարանքն էր առած: Ո՛չ միայն նոյն օրուան ժողովը կը յետաձգենք, այլ եւ կը հեռագրենք Ա[րմենակ] Կամսարականի, որպէս զի մեր դրկած վերջին գումարը չը յանձնուի Քոմիթէին:

Մեր այս որոշումներէն քիչ յետոյ կը ստանամ Տամատեանի հետեւեալ նամակը.

Չոգ Մարգուան 23 Մարտ 1913

Գեր. Տ. Մուշեղ Արք. Սերոբեան

Սիրելի Սրբազանս

Չեմ գիտեր, հիմա ուր էք եւ ի՞նչ կ'ընէք: Միայն թէ շատ պիտի ցաւիմ ու գայթակղիմ, եթէ իմանամ որ Ամերիկա վերադարձած էք եւ հանդարտօրէն Ձեր գրական աշխատութիւններով կը պարապիք: Ես առաւելապէս կը սպասեմ, որ դուք Բարիզի մէջ աշխատած եւ յաջողած ըլլաք հայ հարուստներուն սրտին սառոյցը հալեցնելու, եւ կարելոր գումար մը ձեռք բերելու այն սուրբ նպատակին համար, զոր կը հետապնդենք:

Այս երկիրը, ուր կը գտնուիմ երեք շաբաթէ ի վեր, յարմար գետին մը կայ մեր ծրագրին գործադրութեան համար: Թէպէտ կաթողիկոսին եւ Շահէ վարդապետին ընդդիմութիւնը, եւ նոյն իսկ եռանդուն կերպով գործադրուած հակառակ բրոքականտը – որուն մէջ տխուր դեր մըն ալ Քերոբէն կատարեց – սկզբնական ծանր դժուարութիւններ եւ խոչընդոտներ յառաջացուցին, բայց հակառակ այդ ամէնուն, հողը պատրաստ է եւ լաւ հունձք կարելի է ակնկալել: Երկրին քաղաքական վիճակը, որ ուղղակի դէպի ապստամբութիւն կը տանի, Ձեզի բաւականին ծանօթ է. ուստի այդ մասին չեմ երկարեր: Ձենքերու խնդրին առած ձախող կերպարանքին վրայ ալ չեմ ծանրանար, զի յոյս ունիմ, որ ընկերներս Ձեզի այդ մասին գրած են¹²¹: Կը յուսամ, որ Բարսեղը կարող կ'ըլլայ ի նորոյ կարգադրել ամէն բան:

Ձեզի այս նամակս գրելուս պատճառը հետեւեալն է.

Սրբազան, մեզի չպիտի լքես, ու պէտք չէ որ կարող ըլլաս լքելու: Կիլիկիան Ձենէ երկու բան կը սպասէ. 1^o) Ձեր բոլոր ազդեցութիւնը պիտի բանեցնէք այս շարժումին անհրաժեշտութեանը եւ անխուսափելիութեանը համոզելու համար հայ ունեւոր դասակարգը եւ կարելոր դրամական օժանդակութիւն մը ապա-

¹²¹ Այս ձախողանքին համար, ո՛չ մէկ հաղորդագրութիւն ըրած է ինծի Քոմիթէն, եւ տակաւին այսօր ալ որոշ տեղեկութիւն չունիմ այդ ձախողանքի մասին: Ի լրոյ իմացած եմ միայն, թէ Իսկէնտէրունի կամ Չոգ Մարգուանի ժողովուրդը չէ ուզած ստանձնել գէնքերը, եւ զանոնք դէպի ցամաք փոխադրել: Եւ նաւը, ի զուր օրեր սպասելէ յետոյ, ետ դարձեր է իր գէնքերով: Չոգ Մարգուանի մէջ ունէինք խումբ մը անձնուէր եւ քաջամարտիկ *ֆէտաի*ներ, եւ երբ անոնք իսկ կը մերժեն գէնքերու փոխադրութիւնը կամ ստացումը, ալ աւելորդ է խօսիլ *պարսպոտ հողի* եւ *հունձքի* մասին Կիլիկիոյ մէջ:

հովելու համար Գործին: Դուք շատ բան կրնաք ընել այս ուղղությամբ եթե Ձեր բոլոր կորովը դնեք անոր մեջ, եթե այս վսեմ գործը Ձեզի նպատակ ընէք: Երկրորդ, այդ դրամական ոյժը *ամենակարճ ժամանակի մէջ* ապահովել վերջ ալ չ'աւարտիր Ձեր պաշտօնը: Ինչո՞ւ իբրեւ համոզեալ յեղափոխական, իբրեւ ամբոխներու ելեքտրացուցիչ եւ մագնիսացնող՝ չի ճանչնաք Ձեր բնածիր կոչումը, չանցնիք Ձէյթուն կամ Հանըն, եւ չառաջնորդէք կիլիկեան առիւծները յաղթանակի եւ փառքի ճամբաներուն մէջ:

Սրբազան, Ձենէ կը սպասուի, որ այս Ս. Իտէալին ծառայէք, առաթուր կոխելով ամէն ուրիշ նկատումները, եւ չազդուելով ո՛չ մէկէն: Ձեր խղճին, Ձեր իտէալին հետեւեցէք: Ձեր հոգեւոր եղբայրակիցներուն արատը դուք պիտի սրբէք: Ատանայի վրէժը դո՛ւք պիտի լուծէք: Կիլիկիոյ ազատագրութեան դատը Ձենէ շատ բան կը սպասէ: Ի դերեւ մի՛ հանէք Ձեր վրայ դրուած գեղեցիկ յոյսը:

Ներեցէք ինձի, եթե Ձեր բռնելիք ընթացքին մասին տարակոյսի շեշտ մը դրած եմ նամակիս մէջ: Ներեցէք ինձի, բայց մանաւանդ ամօթահար ըրէք զիս Ձեր գործովը, Ձեր ընթացքովը:

Սիրալիր համբոյրներով՝

Մնամ միշտ անձնուէր

Մ. Տամատեան

Յ.Գ.- Սրբազան, Ամերիկա ալ Ձեր ազդեցութիւնը բանեցուցէք, ամէն կերպով՝ մեզի դրամ հասցնելու համար. մենք հոս կատակ չենք ըներ կոր. լրջօրէն կը գործենք ու կը պատրաստուինք կոր:

Նոյն

Անշուշտ իբր արդիւնք զգացումի եւ յոյզի, գեղեցիկ են Տամատեանի գրաւոր արտայայտութիւնները: Տամատեան իր յեղափոխականի մաքուր խմորը պահած է անխարդախ, եւ երեւակայութեան ու երազանքի մարդն է եղած: Դէպքերն ու իրականութիւնները, ինչպէս նաեւ գործերն ու կացութիւնները դատելու համար, մանուկի աչքով կը նայի անոնց վրայ: Վայրկեանի մը դիպուածական յաջողութեան չափազանց կարեւորութիւն կուտայ, եւ կը կարծէ թէ այդ վաղանցուկ յաջողութիւնը տեւական ըլլալու հանգամանքն ունի: Կը սիրէ ստօրիւ [= չքաստանի, երագի] ետեւէ վազել. եւ անիկա իր այդ նկարագիրը շեշտուած կերպով երեւան բերաւ, 1921–22ին ստանձնելով Ատանայի կառավարութեան դէկը. կառավարութիւն մը, որ երկու ժամ հազիւ կրցաւ իր գոյութիւնը ցուցնել¹²²: Ահա այսպիսի զգացումներու եւ սխալ դատումի տպաւո-

¹²² Տամատեանի Սերոբեանական արժեւորումը մտաբերել կու տայ Սուրէն Պարթեւեանի դատումները: Ան կը գրէր. «96էն մինչեւ 908ը մեր դաւադրական գործունէութեան ամենէն դժնդակ ու մռայլ շրջանին՝ Տամատեան գործողութեան սեւ ու կարմիր գիծերէն դուրս ապրեցաւ: Եւ ասիկա քիչ չի նպաստեց իր գործիչի հմայքին մաքրափայլ ու անվթար պահպանմանը: Իր ձայնը եղբայրասպան վայրագութիւններու դէմ միայն լսուեցաւ, եւ իր լռութիւնը երբեք չենթադրուեցաւ մթին ու ոճրաբոյր համերաշխութիւններու մէջ: ... պիտի չվստահէի այս շէֆին յեղափոխական պատասխանատու ձեռնարկներու դէկավարութիւնը, վասն զի ... ծայրայեղ լաւատեսութեան մը հակամէտ ու անձնատուր կ'ըլլայ յաճախ, մար-

րութեան մը տակ է որ Տամատեան, հեռուէն կամ մօտէն, չկրնար ըմբռնել այն փափուկ կացութիւնը, որուն մէջ դրած են զիս Կիլիկիոյ ժողովուրդին, կաթողիկոսին եւ Ազգ. Պատգամաւորութեան նախագահ Պօղոս փաշայի խնդիրքներն ու սաստերը, եւ կը պահանջէ, որ ես ալ, իրենց նման անպատասխանատու անձերու նման վարուիմ անոնց հանդէպ, եւ հետեւիմ միայն իմ խղճիս եւ իտէալիս: Բայց դատողութիւնը տարբեր թելադրանք կ'ընէ այս վճռական վայրկեանին, երբ Հայկական Հարցին լուծումով ամբողջ Հայկական գաւառներու հայութեան կեանքի, ինչքի եւ պատիւի ապահովութիւնը պիտի դարբնուի: 1908էն սկսեալ չորս տարիներէ ի վեր ազգային ընդհանուր ինքնապաշտպանութեան կենսական հարցով մտալկուած հոգիս Քոմիթէի ձեռնարկին մէջ տեսաւ սկզբնաւորութիւնը ծրագրիս իրագործման. ոյժ տուի անոր, բայց անոր կազմած ապստամբական ծրագիրը քայքայեց ու ջլատեց ուղղութեանս ջիղերն ու թելերը: Ուրեմն, ալ ուրիշ ընելիք չէր մնար ինծի, քանի որ Կիլիկիոյ դուռներուն առջեւ վիժած էր յեղափոխական ծրագիրը եւ անտեսուած ինքնապաշտպանութեան հրամայական պէտքը: Եւ ես յուսախար եւ յուսահատ Ապրիլ 9ին կը մեկնիմ Փարիզէն դէպի Ամերիկա, ինծի հետ տանելով սա խայթիչ համոզումը, թէ անկեղծ եւ անձնուէր յեղափոխական ընկերներ ըլլալով հանդերձ, տակաւին շատ հեռի կը գտնուինք քաղաքացիական հասունութենէ, դատողութենէ եւ ողջմտութենէ. թէ՛ Տամատեան եւ Քոմիթէի անդամները զիս հրաւիրած են, իբրեւ գործիք ծառայեցնելու զիս, ինծի դրամ հաւաքել տալու, եւ կաթողիկոս ու ժողովուրդ մղելու բռնի դէպի արկածախնդրութիւն: Եւ երբ առանձնութեանս մէջ կը վերլուծեմ բոլոր դէպքերն ու գրութիւնները, ականայ կանգ կ'առնում Ռիպօի¹²³ սա խօսքին վրայ. «Ժողովուրդի մը կառավարութիւնը, իր պատմութեան ինչ ինչ վայրկեաններուն, կը գտնուի կէս յիմարներու ձեռք»: Այլ եւս եկած էր ժամանակը, որ մերիկները որոշապէս ըմբռնէին թէ յեղափոխական ըլլալ չնշանակէր արկածախնդիր ըլլալ: Յեղափոխականը անխոհեմին հետ շփոթել հակառակ է դատողութեան:

դիկն ու իրերը իր բաղձանքներուն համեմատ դատելով, եւ զանոնք ամենէն հսկայական խոյանքներուն ընդունակ ու պատրաստ նկատելով՝ երբ անոնք փարսախսներով հեռու են իտէալէն...» («Եգիպտահայ Դիմաստուներն. Միհրան Տամատեան», *Եգիպտահայ Տարեցոյցը*, 108): Հետագային գէթունցի մը մինչեւ անգամ Տամատեանի պիտի ձօնէր իր գիրքը որպէս «կորովի եւ իմաստուն» անձնաւորութեան մը, որ իր «լաւագոյն ծառայութիւնները» մատուցած էր Կիլիկիոյ արդար դատին: Իր շնորհակալական պատասխանին մէջ Տամատեան դառն շեշտով պիտի գրէր. «... կեանքիս յեղափոխական շրջանին ... Կիլիկիոյ մասին երկնած խորհուրդներս ու ծրագրած ձեռնարկներս...» իրականութեան չեն վերածուած, եւ աւելցնէր՝ «... ազգի մը համար իր անցեալ փառքը, իր տարեգրութեանց հերոսական դրուագները եւ դժբախտութեան մէջ իր մեծութիւնը շատ աւելի հաստատուն երաշխիքներ են իր ապագայ վերածնութեան եւ փայլուն յաջողութիւններուն համար քան խարդաւանանքով եւ ստրկահոգի նենգամտութեամբ ձեռք բերուած անստոյգ, խախտուտ, անփառունակ եւ ստորնաքարշ գոյալիճակներ» (Նազարէթ Ղ. Չէթունցեան, *Չէթունի Վերջին Դէպքերը* (1919–1921), տպ. Ա. Գասպարեան, Ադըքսանդրիա, 1922, Ա-Բ)- Վ.Ղ.):

¹²³ Ֆրանսայի հիւսիսամերիկեան գաղթարարական ծրագիրներու իրագործման ծառայած ծովային սպայ Jean Ribault ապրած է 16-րդ դարուն- Վ.Ղ.):

Յստակացումներ երկու այլ աղբիւրներու մասին

Գաղթահայերու պատմութիւնն իր ուսումնասիրութիւններուն առարկայ դարձուցած Յովհաննէս Թոփուզեան Ազգային Պաշտպանութեան Կոմիտէի մասին կ'ըսէ թէ պալլքանեան պատերազմներու ժամանակ Վերակազմեալ Հնչակեան եւ Սահմանադրական Ռամկավար կուսակցութիւններու ազատական ուղղութենէն դժգոհ տարրեր Տամատեանի նախաձեռնութեամբ կազմակերպեցին «Ազգային ինքնապաշտպանութեան կոմիտէն», որ կը պաշտպանէր Կիլիկիոյ մէջ զինեալ ապստամբութիւն բարձրացնելու ծրագիրը, եւ անմիջապէս կոմիտէին կազմութեան «յանդուգն գաղափար»ին ծագումը կը կապէ «Զէյթունի աղաներէն մէկուն» զէյթունցիներու ծրագրած ապստամբութեան օգտին դրամահաւաքի նպատակով Եգիպտոս ժամանման հետ, նկատի ունենալով Գէորգ Ե.ի ուղղուած Լեւոն Մկրտիչեանի 3 Մարտ 1913 թուակիրը, զոր ներկայացուցած եւ ծանօթագրած ենք նախապէս:¹²⁴

Նախ, կը դժուարանանք հասկնալ թէ հեղինակն ստուգիւ ի՞նչ բան ունի ի մտի «ազատական [իր բառով՝ լիբերալ- Վ.Ղ.] ուղղութիւն» ըսելով: Ապա՛, փորձանաւոր է «յանդուգն գաղափար»ին ծագման առնչումը զէյթունցի աղայի մը այցելութեան: Մկրտիչեանի նամակը անառարկելի հիմնաւորում մը չ'ընծայեր Տամատեանի եւ համախոհներու անկախաբար յղացած գաղափարին վերաբերեալ նման հաստատումի համար:

Թոփուզեան նաեւ կը գրէ թէ յոյն արտաքին գործոց նախարար «Կարոմիլիսից օգնութեան հաւաստիք ստանալով», կոմիտէն ձեռնամուխ եղաւ ապստամբութեան նախապատրաստութեան: Ապա կը նշէ թէ նախապատրաստական աշխատանքներն աւարտելով կոմիտէն Մուշեղ Սերոբեանն ուղարկեց Աթէնք՝ յոյներէն խոստացուած օգնութիւնն ստանալու, եւ թէ «Կարոմիլիսը հրաժարուել է իր խոստումից, «առարկելով, թէ ուշ է»» եւայլն:

Քիչ անդին, Թոփուզեան նաեւ ձախող ցամաքահանման անդրադառնալով կը գրէ. «... կոմիտէն զէնքերն առագաստանաւով ուղարկել է Զորք-Մարգուան»:

Մեր ցարդ ներկայացուցած տեղեկութիւններէն կը հետեւի թէ Թոփուզեանի աշխատութեան մէջ ուղղելի են ժամանակագրական հերթականութեան հետ կապուած եւ այլ տուեալներ:

Կոմիտէն ապստամբութեան նախապատրաստութեան ձեռնարկած էր յոյն նախարարին հետ տեսնուելէ առաջ եւ անոր հետ տեսակցութիւնը մաս կը կազմէր ընթացող պատրաստութիւններուն: Նախարարը «ուշ մնացած ըլլալու» ակնարկութիւնն ըրած էր Տամատեանի՝ նախարարութեան հետ սկզբնական յարաբերութեան առիթով: Կոմիտէն Բարսեղ Օհանեանը դրկած էր Աթէնք՝ խոստացուածը ստանալու համար. Սերոբեան Օհանեանի ընկերակցութեամբ Աթէնքէն անցած էր այլ առաքելութեամբ, թէւ, ինչպէս Ինքնակենսագրութեան մէջ կը գրէ, անհատական նախաձեռնութիւն մը կատարած էր նախարարատան մէջ: Զէնքերու Զորք-Մարգուան փոխադրութեան

¹²⁴ Թոփուզան, 169:

համար յատկացուած միջոցը առազաստանաւ չէր, այլ՝ շոգենաւ:

Նորութիւնը՝ Թոփուզեանի աշխատութեան մէջ, Մերսինի առջեւ խարսխած գերմանական զրահանաւի հրամանատարին հետ 24 Ապրիլ 1913-ին «Կիլիկիոյ կաթողիկոսի ներկայացուցիչ Գ.վ.Պ.-ի» գաղտնի հարցազրոյցն է: Հրամանատարը կ'ուզէ ստուգել թէ իրօք Եգիպտոսէն քանի մը յեղափոխական հայեր անցած են Կիլիկիա՝ ապստամբութիւն ծագեցնելու համար եւ գէնքերով լի շոգենաւ մը Ալեքսանտրէթ հասած բայց չէ համարձակած ցամաքահանում կատարել, եւ թէ կաթողիկոսը համամի՞տ է նման վտանգաւոր շարժումի մը: Ներկայացուցիչը կը պատասխանէ թէ փորձը եղած է մի քանի «տաք հայրենասէրներու կողմէ», բայց յեղափոխական ծանօթ քաղաքական կուսակցութիւնները հակառակած են եւ կաթողիկոս ու պատրիարքարան ձեռք առած են ամէն կարելի միջոց «այդպիսի վտանգաւոր շարժումի մը ուղին առնելու համար»¹²⁵:

Գ.վ.Պ.ն Գրիգորիս վարդապետ Պալաքեանն էր, որ Արշարունի պատրիարքին կողմէ դրկուած էր Սահակ Բ.-ի մօտ, կասեցնել ջանալու ապստամբական շարժումը:

* * *

Պատմաբան Հրաչիկ Սիմոնեան «Ապստամբութեան Փորձ Կիլիկիայում...» բաժնին մէջ, իր հաստդութեան ներքեւ ունեցած չլլալով հանդերձ Մերոքեանի անտիպ Ինքնակենսագրութիւնը, արձանագրած է թէ ան «իր վտանգաւոր գործողութիւնները արդարացնելու համար» տարիներ ետք արտայայտուած է իր վերապահութեան մասին¹²⁶: Իրաւունք ունի Սիմոնեան: Մերոքեան, իր ինքնասիրութիւնը շոյուած զգալով թէւ անմիջապէս խանդավառութեամբ փարած է ծրագրին՝ Ամերիկայէն մեկնելով «երեսի վրայ ձգած» ամէն բան, բայց նաեւ, ինքզինք հակասելու գնով նշած է. «Անշուշտ չէի կրնար կուրօրէն նետուիլ ... արկածախնդրութեան մը մէջ»: Առաջարկի մը նկատմամբ կասկածներ ունենալով զայն կուրօրէն ստանձնել չփափաքողի մը համար աւելի տրամաբանական պիտի ըլլար իր կասկածները ջրելէ ետք ճամբայ իյնալ դէպի գործողութեան դաշտ եւ ո՛չ թէ ճամբայ ելլելէ ետք աւելի յստակ պատկերացում կազմելու համար հարցարան-նամակներ որկել աստ ու անդ Եւրոպայէն, հոն տեղի ունեցած հանդիպումները վերապահութիւն եւ կասկածներ յառաջացուցած ըլլալէ ետք:

¹²⁵ Անդ, 170–171:

¹²⁶ Սիմոնեան, 305: Ինքնարդարացման փորձի մը ստուերը կը թուի տեսանելի ըլլալ Ինքնակենսագրութեան հետեւեալ պարբերութեան մէջ. «Յետոյ ես չէի կրնար Քոմիթէի անպատասխանատու անդամներու ստանձնել փորձած պատասխանատուութիւնը ստանձնել առանց ժողովրդական կեանքին ապահովութեան երաշխիք մը ունենալու ձեռքիս մէջ. իմ դիրքս զիս կը դնէր աւելի ծանր պատասխանատուութեան մը տակ. իբր եկեղեցական կախումներ ունէի հոգեւոր վերին իշխանութենէն, որ հակառակ էր շարժումին եւ անձքով զիս կը հարկադրէր խափանել շարժումը: Իբր հանրային գործիչ կախումն ունէի Ազգ. Պատգամաւորութենէն, որ դիւանագիտական ճամբով կ'աշխատէր Հայկական Հարցին լուծման, եւ Պատգամաւորութեան նախագահը՝ Պօղոս փաշա Նուպար, թէ նամակով եւ թէ բերանացի կը փափաքէր, որ ամէն գնով այդ շարժումը կասեցնէի»:

Դիտելի է Տեփոյեանի նախապէս ներկայացուած հատուածներուն մէջ հետեւեալ նախադասութիւնը. «Մուշեղ Սերոբեան երբ Աղեքսանդրիա հասաւ, ձեռնարկին հանդէպ տակաւին խանդավառուած էր, բայց պէտք զգաց Կիլիկիոյ Սահակ Կաթողիկոսին կարծիքը հարցնելու...»: Իր «Դիտումներ...»ուն մէջ Սերոբեան ինք իսկ հաստատած էր թէ իր Աղեքսանդրիա ժամանումէն ետք գնահատումով տեսած էր ապստամբական ծրագրի հեղինակներու խանդավառութիւնը, բայց իր խանդավառութիւնը երկար չէր տևած իր հարցարան-նամակներու պատասխաններուն ժամանումով: Սակայն Սահակ Բ.ի եւ այլոց կարծիքներն ունենալու պէտքը Սերոբեան յստակօրէն զգացած էր,- դարձեալ իր «Դիտումներ...»ուն համաձայն,- Եգիպտոս ժամանելէ առաջ:

Միմոնեան գտնուած է այն ենթադրութեան ներքեւ, թէ Սերոբեան իր ճամբորդութիւններու ընթացքի, Պոլսէն մինչեւ Երեւան ու անդին, ստացած է իրեն ուղղուած նամակները, մինչդէռ Ինքնակենսագրութիւնը կը պարզէ թէ իր շրջագայութիւններու ընթացքին նամակները ի պահ կը դրուէին Աղեքսանդրիա, Տամատեանի մօտ, եւ Կովկասի ու Ռուսաստանի հրաժեշտ տալէ ետք զանոնք հաւաքաբար ստացած է Փարիզ մէջ, ուր դրկուած էին Յակոբ Փափագեանի կողմէ: Սերոբեան հասու եղած էր իրեն ուղղուած նամակներուն միայն մէկ մասին. անո՛նց, որոնք իրեն հասած էին իր Եգիպտոս գտնուած շրջանին¹²⁷:

Յստակացման կարօտ կէտ մըն է շփոթը, որուն առիթ կու տայ այն պարբերութիւնը, ուր, Ադաթօնի եւ Չօպանեանի նամակներու բովանդակութեան նշումէն ետք, Միմոնեան կ'արտայայտուի Սերոբեանի լրջմիտ եզրակացութեան մասին՝ թէ նախ հարկ է զինել ժողովուրդը, ինչ որ միայն դրամահաւաքով կարելի պիտի ըլլար. ուստի ան կը մեկնի արտասահման եւ կը հանդիպի Աւետիս Ահարոնեանի: Նոյն պարբերութեան մէջ նաեւ կը նշուի Ահարոնեանի խորհուրդին համաձայն Պոլսոյ մէջ Սերոբեանի հանդիպումը Միմոն Չաւարեանի հետ 2 Փետրուար 1913-ին¹²⁸:

Մոռնանք անտիպ Ինքնակենսագրութիւնը: «Դիտումներ...»ը արդէն ցոյց կու տայ թէ Սերոբեան Ահարոնեանի հետ հանդիպած էր Միացեալ Նահանգներէն մեկնելէ եւ Աղեքսանդրիա հասնելէ առաջ, իսկ Չաւարեանի հետ հանդիպելու նպատակով ծածկաբար Պոլիս մտած էր Եգիպտոսէն մեկնելէ ետք: Սերոբեան յստակօրէն կ'ըսէ. «Դեռ Եգիպտոս չհասած, Չուիցերիա կը հանդիպիմ Պ. Ահարոնեանի...», ապա կ'արտայայտուի իր Պոլիս մեկնումով Չաւարեանի հետ հանդիպման մասին, բայց ընդհանուր շարադրանքէն դժուար չ'ըլլար հետեւեցնել թէ երկու հանդիպումներուն միջեւ կար ժամանակատարածքային անջրպետ մը:

Անտեղի նկատելով կրկնել ճշդումը, զոր կատարած ենք էջատակի ծանօթագրութեամբ մը Տամատեանի եւ Բարսեղ Օհանեանի անուններուն վերաբերեալ, նշելի է թէ Միմոնեան Սերոբեանի շփոթեցուցիչ տեղեկութեան պատճառով գրած է. «... Սերոբեանի դեռ Կ. Պոլսում եղած ժամանակ՝ 1913թ. Փետրուարի 8-ին, Միհրան Տամադեանը եւ նրա զինակից Բարսիլ Օհանեանը ... մի շրջաբերականով դիմում էին յղել

¹²⁷ Սերոբեան գրած է. «... նամակներուն մէկ մասը դեռ ձեռքս չը հասած...» (Դիտումներ..., 80):

¹²⁸ Միմոնյան, 307–308:

ռամկավար կուսակցության ակումբներին ...: Դա նշանակում էր, որ կոմիտեի ու յատկապես նրա ղեկավարի համար ոչ մի նշանակություն չէին ունեցել ամեն կողմից եկող սթափության կոչերը, եւ նրանք շարունակում էին նախապատրաստուել ապստամբության»¹²⁹: Պարագան կը մնայ քննելի, ինչպես նշած ենք նախապես: Բայց ուղղելին այն է թէ Սերոբեան Պոլիս չէր գտնուեր Փետրուար 8-ին: «Դիտումներ...»ուն մէջ ընդգրկուած օրագրային գրառումներէն մին յստակօրէն ցոյց կու տայ թէ Սերոբեան Օտեսա էր 5 Փետրուարին¹³⁰:

Ճշդման կարօտ քանի մը կէտ ալ կը վերաբերի այն պարբերութիւններուն, ուր կ'ըսուի թէ Ռուսաստանէն ետք Սերոբեանի յաջորդ հանգրուանն եղած է Յունաստանը. թէ՛ ան հոն ստացած է Տամատեանի 4 Մարտ թուակիրը. թէ՛ ռազմական նախարարութեան ղեկավարութեան ներկայացուցած է ծրագիր մը. թէ՛ նախարարութեան մէջ «... հրաժարում են, թէ Տամադեան ազգանունով մէկին երեք ամիս առաջ որեւէ խոստում են տուել...», եւ թէ՛ Սերոբեան Աթենքէն ձեռնունայն ճամբան շարունակելով ժամանած է Փարիզ¹³¹: Ինքնակենսագրութիւնը կը ճշդէ թէ Սերոբեան Կովկաս եւ Ռուսաստան ուղղուելէ առաջ գտնուած էր Աթենք, եւ թէ Ռուսաստանէն շոգեկառքով պիտի մեկնէր Փարիզ՝ անցնելով Պերլինէն: Ինչ կը վերաբերի Յունաստանի ռազմական նախարարութեան մէջ Տամատեանի տրուած խոստում մը հերքուած ըլլալուն, նման տեղեկութեան չենք հանդիպած Սերոբեանի «Մեր Պայքարը...» հատորին մէջ, գոր Սիմոնյան նշած է իբրեւ ներկայացուող տեղեկութեան աղբիւր:

Յարակցաբար նշենք թէ Սերոբեանի Ինքնակենսագրութիւնը հնարաւոր կը դարձնէ ճշդել այլուր եւս Սերոբեանի Փարիզ վերադարձին առնչութեամբ տեղ գտած սխալ մը: Տեփոյեան գրած է. «Մուշեղ Սերոբեան Կովկասէն վերադարձին փոխանակ Եգիպտոս գալու եւ անկէ Կիլիկիա անցնելու, ինչպէս նախապէս խոստացած էր, ամէն կողմէ յարուցուած հակառակութիւններէն ու դժուարութիւններէն յուսալքուած Պոլսէն կ'անցնի ուղղակի Փարիզ եւ կը վերադառնայ Ամերիկա»¹³²: Ինչպէս արդէն պարզած եղանք, Սերոբեան Թիֆլիսէն ուղղուած էր Ռուսաստան եւ հոնկէ՝ շոգեկառքով վերադարձած Փարիզ:

Ապստամբութեան փորձին ձախողանքէն ետք

Կիլիկիոյ հայոց ինքնապաշտպանութեան անհրաժեշտութիւնն իր հրատապութիւնը կորսնցուցած չլլալով, եգիպտահայ գաղութը շարունակած է շարժիլ նիւթապէս թէ գործնապէս ինքնապաշտպանութեան սատար կանգնելու ուղղութեամբ՝ այս

¹²⁹ Նոյն, 309–310:

¹³⁰ Սերոբեան, *Դիտումներ...*, 73:

¹³¹ Սիմոնյան, 311-313:

¹³² Տեփոյեան, *Տամատեան*, 132:

անգամ վերակազմեալ հնչակեաններու բացակայութեամբ չորսի փոխարէն երեք կուսակցութիւններ ունենալով իբրեւ մոլիշ ուժ, բայց աւելի լայն տեղ տալով անկուսակցականներու, ինչպէս կը պարզուի եգիպտահայ գաղութին ուղղուած եւ «Ինքնապաշտպանութեան Միջկուսակցական Խառն Մարմին Եգիպտոսի» ստորագրութիւնը կրող Մայիս 1913 թուակիր յայտարարութենէն¹³³ եւ ներկայացուող այլ նիւթերէ:

Դոկտ. Աւետիս Եսփոմեան Կիլիկիոյ նուիրուած իր երկհատոր ծաւալուն աշխատութեան «Ապստամբութեան Ծրագիր Մը» խորագրեալ բաժնին մէջ վերը ներկայացուած ապստամբական ծրագիրը քննութեան նիւթ դարձուցած չլլալով հանդերձ, ուշադրութիւնը սեւեռած է Կիլիկիայէն Եգիպտոսի ՀՍՌԿ-ի պատասխանատու մարմնին ուղարկուած տեղեկագրերու վրայ, գրելով. «... արդէն ծրագրուած էր Կիլիկիոյ մէջ ապստամբութիւն մը կազմակերպել, սակայն յարմար առիթն ու ժամանակը պէտք էր նկատի ունենալ»: Եւ շարունակած է նշելով թէ ծրագիրը իրագործելու անհրաժեշտութիւն ստեղծուեցաւ, երբ իթթիհատական կառավարութիւնը Կիլիկիան իր հայ ազգաբնակչութենէն դատարկելու նպատակով սաստկացուց իր հալածանքները հայոց դէմ, միաժամանակ հոն տեղաւորելով թուրք գաղթականներ: Ապա աւելցուցած է. «Առ այդ, Եգիպտոսի մէջ կազմուեցան «Ինքնապաշտպանութեան Եգիպտոսի եւ Կիլիկիոյ խառն մարմիններ», որոնց «հիմնական կանոնագրին» մէկ պատճէնը ունինք մեր ձեռքին տակ, անստորագիր եւ անթուական սակայն»¹³⁴:

Եսփոմեանի ակնարկած կանոնագիրը ամբողջութեամբ պիտի ներկայացնենք աւելի ուշ: Մինչ այդ, սակայն, պարզապէս ըսենք թէ, ըստ երեւոյթին, կանոնագրին անթուակիր ըլլալուն պատճառով, Եսփոմեան նախադէպ իրադարձութիւններ ներկայացուցած է իբրեւ յետադէպ իրողութիւններ եւ մէջբերումներ կատարելով երեք աղբիւրէ¹³⁵, բաժնի աւարտին ձեռնարկին ձախողութեան իբրեւ գլխաւոր պատճառ

¹³³ Համերաշխական եւ համագործակցական քայլը առած են Դաշնակցութեան ենթակոմիտէներու, Հնչակեան մասնաճիւղերու եւ Սահմանադրական-Ռամկավար ակումբներու ներկայացուցիչները՝ հայ ժողովուրդին ինքնապաշտպանութեան իրաւունքը նկատելով «խորապէս սահմանադրական» եւ «օրուան մեծագոյն խնդիր» (Փամպուքեան, 119-120):

¹³⁴ Եսփոմեան, 89: 1913-ի Մարտ-Մայիս ամիսներուն Կիլիկիոյ մէջ տիրած ընդհանուր մթնոլորտն ու հոն ծաւալած զարգացումները նկարագրող տեղեկութիւնները ներկայացուած են 64–89-րդ էջերով:

¹³⁵ Բաբազեան, 29-30 եւ 35, Սերոբեան, *Դիտումներ*, 76-84 եւ Մալեզեան, *Ճամբու ծայրը*, 49-50: Այս երեք աղբիւրներով տեղեկացրուած իրողութիւններու կողքին, չակերտեալ մէջբերումները արեւելահայերէնէ արեւմտահայերէնի վերածելով եւ առանց տեղեկագրեալ նիւթին կարգ մը տուեալներու ստուգութիւնը քննելու, հարկ կը համարենք նշել թէ 13 Մայիս 1913-ին Իտալիոյ դեսպան Կարրոնի Պոլսէն իր վերադաս նախարարին փոխանցած է «վստահելի աղբիւր»ի մը տեղեկագիրը, ուր այդ աղբիւրը Օրմանեան արքեպիսկոպոսէն իմացած է թէ բարենորոգումներու խնդրով հայերը բաժնուած ըլլալով երկու խումբի, խումբերէն մին կ'ուզէ տեղական հայկական կոմիտէներու միջոցով «սաղորանքներ եւ խռովութիւններ իրականացնել»: Հոն կը նշուի նաեւ թէ տուեալ պահուն կային երկու ապստամբական կեդրոններ, որոնցմէ մին՝ Չէշթուն, սերտ կապ ունէր յունական կառավարութեան հետ եւ ենթակայ էր անոր ազդեցութեան: Նոյն «վստահելի» անձը, Օրմանեանէն ու «հայկական այլ աղբիւրներէ» ստացուած տեղեկութիւններու հիմամբ, նաեւ

նշած է զայն կազմակերպողներուն անգաղտնապահությունը, ապա նաեւ աստով բացատրած՝ ապստամբության իրականացման համար գործնական քայլեր առնուած այդ շրջանին շաբաթներով գերմանական յաժանաւերու շրջագայությունը կիլիկեան ջուրերուն մէջ¹³⁶:

* * *

Սուրեն Պարթեւեան իր հրատարակած «Եգիպտահայ Տարեցոյցը»ին մէջ 1913 տարուան «ամենէն պայծառ, սրտապնդող ու յուսադրիչ երեւոյթը» կը նկատէր Եգիպտոսի մէջ «Միջկուսակցական եւ Ազգային Համերաշխութեան» իրագործումը, այդ առիթով կարեւոր դեր մը վերապահելով «Յուսաբեր» թերթի սեփականատէր Արմենակ Մէօթեմէտեանի եւ Եգիպտոս ժամանած դաշնակցական գործիչ Ակնունիի¹³⁷,

յայտնած է հետեւեալը. «Հայկական շարժման կեդրոնը Եգիպտոս կը գտնուի: Անոր ղեկավարը յայտնի յեղափոխական Տամատեանն է: Հայկական կոմիտէները աջակցութիւն կը ստանան Յունաստանէն եւ կը թուի թէ հոնկէ գէնք եւ զինամթերք կը ներկրեն: ... Հայերու աւելի խոհեմ մասը կը քննադատէ այդ շարժումը: Հայոց Կայտողիկոսը կը փորձէ սանձել հայկական բոլոր կուսակցութիւններու ծայրայեղական թելերու գործողութիւնները: Կոստանդնուպոլսոյ Հայոց պատրիարքը Եգիպտոս դրկեր է Օսմանեան դրամատան աշխատակից պարոն Փափագեանը եւ վստահելի այլ անձնաւորութիւն մը՝ Տամատեանը սաստելու համար: ... Տամատեանը Պաքանեան պատերազմի ընթացքին իր յոյն ընկերներուն միջոցով բանակցութիւններ վարեր է Վենիզելոսի հետ՝ Յունաստանի աջակցութիւնն ստանալու համար: Վենիզելոս մերժեր է, բայց հասկցուցեր է թէ Յունաստանի կառավարութիւնը չի կրնար պաշտօնապէս հայերու շարժման աջակցիլ եւ խորհուրդ տուեր է համագործակցիլ հելլէն գաղտնի կազմակերպութեան հետ, որուն միջոցով պիտի կարենան գէնք եւ զինամթերք ձեռք բերել...» (Արամայիս Բալոյան, *Խոտայիսի Արտաքին Գործերի Նախարարության Պատմական Դիվանագիտական Արխիւի Վավերագրերը Հայկական Հարցի Մասին 1913–1923 թթ.*, հատոր Ա., Հայաստանի Հանրապետութեան Գիտութիւններու Ակադեմիա, հրտ.՝ Հայոց Ցեղասպանութեան Թանգարան-Ինստիտուտի, Երեւան, 2008, 29–31):

¹³⁶ Եսփունճեան, 95: Ինչպէս պիտի պարզուի աւելի ուշ, խնդրոյ առարկայ կանոնագիրը մշակուած էր 1913-ի Յունիսին, երբ արդէն վիժած էին ապստամբութեան եւ գէնքերու ցամաքահանման փորձերը:

¹³⁷ ՀՅԴ Պոլսոյ Ինքնապաշտպանութեան Բիւրոյին 28 Յունիս 1913 թուակիր նամակը՝ ուղղուած Աղեքսանդրիոյ Ենթակոմիտէի անդամներուն, կը յուշէ թէ գէթ այդ Բիւրօն վերապահութեամբ կը մօտենար «դրսի միթինկներուն եւ համերաշխութիւններուն», մինչեւ իսկ կը մտահոգուէր թէ անոնք կրնան վնասակար արդիւնք ունենալ, զգուշացնելով. «Տեղիդ Ինքնապաշտպանութեան» մարմնի գործունէութիւնը անյաշողութեան մատնուելու է, եթէ ներսը [իմա՝ Կիլիկիա, այս պարագային՝ Վ.Դ.] լուրջ կազմակերպութիւններ գոյութիւն չունենան»: Ապա ակնարկելէ ետք Ակնունիի այցելութեան եւ նկատի ունենալով որ Ինքնապաշտպանութեան Խառն Մարմնին կողմէ պահանջագիր մը ներկայացուած էր պետութիւններու, կը յորդորէր. «Միանգամընդմիջտ գիտնալու էք որ ազգերու ազատագրումը հիմնուելու է ոչ այնքան դիմումներու, որքան սեփական ուժի վրայ: «Մեր այն ընկերները, որ կը մտնեն տեղիդ ինքնապաշտպանութեան» մէջ, անշուշտ կը

ապա նաեւ հրապարակելով Ճիգմեճեանի նախապէս ակնարկուած եռակողմ յայտարարութիւնը, ուր Դաշնակցական Ենթակոմիտէները, Հնչակեան Մասնաճիւղերն ու Սահմանադրական-Ռամկավար Ակումբները կը ծանուցէին իրենց ուժերու շաղկապումը՝ «յանուն Երկրի հայ ժողովուրդին *ինքնապաշտպանութեան*», նաեւ յայտնելով. «Քաղաքական այս շաղկապումին գործնական կերպարանք տալու համար, երեք Կուսակցութիւններու տեղական մարմինները, անվերապահօրէն համամիտ ինքնապաշտպանութեան գաղափարին շուրջ, որոշեցին կազմել Միջկուսակցական Խառն Մարմիններ՝ Ադեքսանդրիա եւ Գահիրէ, նպատակ ունենալով գործնականապէս եւ նիւթապէս նպաստել Երկրի ժողովուրդին սահմանադրական իրաւունքներուն պաշտպանութեանը, անոր քաղաքացիական եւ ազգային ապահովութեանը, ինչպէս նաեւ գալիք վտանգներուն դիմագրաւելու ուժին»:

Յայտարարութիւնը նաեւ կը տեղեկացնէր թէ Մարմինն արդէն միասնաբար մշակած է ներքին կանոնագիր մը, որ արժանցած է երեք կուսակցութիւններու հաւանութեան¹³⁸:

ՀՄՌԿ-ի Գահիրէի Ակումբի 10 Մայիս 1913-ի Ի. Ընդհանուր ժողովի ատենագրութեան մէջ կը կարդանք.

Ընկեր Յ[ակոբ] Փափագեան յայտնեց թէ Դաշնակցութեան ներկայացուցիչ ընկեր Ակնունի մէկ երկու շաբաթէ ի վեր Ադեքսանդրիա հասած է եւ երեք կուսակցութեանց տեղական մարմիններու հետ բանակցելով յաջողած է Ազգ. Պաշտպանութեան Գօմիթէին ձեռնարկած ինքնապաշտպանութեան գործին շուրջ համախմբել բոլոր կուսակցութիւնները, գալ որոշ եզրակացութեան, մշակել յստակ ծրագիր եւ նկատելով հայրենիքի ազգակիցներուն անցուցած եւ անցունելիք ահաւոր եւ անստոյգ կացութիւնը, փափաք յայտնեց որ երբ ընկեր Ակնունի մօտ օրերէն Գահիրէ հասնի, Գահիրէին Ակումբն ալ իր աշակցութիւնը տայ եւ հոս ալ հիմնուի Միջկուսակցային համերաշխ մարմին մը նման անոր որ արդէն գործելու վրայ է Ադեքսանդրիա, եւ կարդաց հոն մշակուած ծրագիրը:

Նախագահը ի դիմաց ժողովին յայտարարելով թէ Գահիրէի Ակումբը հաճոյքով կը լսէ եղած իրողութիւնը եւ բացատրելով թէ հոս արդէն ամէն կերպ աշխատութիւն եղած է այդպիսի եղբայրական համերաշխութեան մը ընդ առաջ երթալու, շնիորհակալութիւն յայտնեց ընկեր Յակոբ Փափագեանի տուած տեղեկութիւններուն համար եւ ժողովը միաձայնութեամբ հաւանութիւն տուաւ այդ ուղղութեամբ գործելու:

Իսկ 27 Յունիս 1913-ի նիստն ատենագրողը կ'արձանագրէ.

Ինքնապաշտպանութեան միջկուսակցական մարմնոյն կազմին մասին տեղեկութիւններ: Նախագահը բացատրեց թէ դիւանը երկու պաշտօնական

դէկլարաւորին մեր ծրագրով, մեր կեդր. մարմիններու մշակած առաջադրութիւններով: Դժբախտաբար պետութիւններուն ներկայացուած այդ մարմնի ծրագիրը մէկ քանի կէտերու մէջ խոշոր կերպով կը տարբերի մեր պահանջներէն: Այդպիսի հակասական քայլերէ պէտք է խոյս տալ» (Փամպուքեան, 397):

¹³⁸ «Եգիպտահայ Տարեցոյցը», 1914, 44–47:

հանգամանք կը կրէ: Ա. Իրրեւ Ռ[ամկավար] կ[ուսակցութեան] դիւան եւ երկրորդ՝ Իրրեւ Ազգ. Պաշտպանութեան Գօմիթէ, թէւ ոչ այնքան օրինաւոր՝ բայց գործի ստիպողականութիւնը մղած է այս կերպ ընել: Վերջին հանգամանքով դիւանը երեք ընկերներ ներկայացուցած է Միջկուսակցական Խառն Մարմինին որոնք լիովին կը շարունակեն կատարել իրենց յանձնուած պաշտօնները: Յետոյ հաւաստեց թէ Միջկուսակցական Մարմինը գրեթէ յաջող[եցուց]ած է միանգամայն ոչ- կուսակցական մարմինի ընտրութիւնը գահիրէարնակ ընտրեալ դասակարգին պատկանող անձնաւորութիւններէ որոնք Աղեքսանդրիոյ ոչ-կուսակցական մարմնոյն հետ գործակցաբար պիտի վարեն երկրի ֆօնտի մարմնոյն հետ ինքնապաշտպանութեան գործը Լեռնավայրի շրջանին մէջ¹³⁹:

* * *

Կանոնագրերէն մին՝ Եափունճեանի աշխատութեան մէջ հրատարակուած, պայմանականօրէն կոչած ենք *Անթուակիր Կանոնագիր*, իսկ միւսը՝ *Հիմնական Կանոնագիր*, հետեւելով բնագրին վերտառութեան:

Միջկուսակցական մարմինն վերաբերող նիստերու ատենագրութիւններուն եւ Հիմնական Կանոնագրին այստեղ ներկայացուող վաւերագրերուն բնօրինակները մաս կազմած են Վահան Մալեգեանի անձնական արխիւին¹⁴⁰: Անոնք կը լրացնեն «Եգիպտահայ Տարեցոյց»ի 1914-ի համարով եւ քանի մը այլ աղբիւրներով այս նիւթին վերաբերող տեղեկատուութիւնները եւ անոնցմէ առաջինը, *խորհրդապահական* մակագրութեամբ, կը թուի գրառուած ըլլալ Մալեգեանի կողմէ: Երկրորդ ատենագրութիւնը մեքենագրուած է եւ անոր ճակատին նոյն ձեռագրով արձանագրուած է «Յունիս 1913»: Կանոնագիրը եւս մեքենագրուած է, բայց տեղ-տեղ ունի ձեռագիր յաւելումներ, որոնք եւս կը յիշեցնեն Մալեգեանի ձեռագիրը:

Նպատակայարմար գտանք կանոնագրերը ներկայացնել երկսիւնակ աղիւսակի մը տեսքով՝ դիւրացնելու անոնց բաղդատութիւնը:

Մեզի կը թուի թէ երկրորդ սիւնակով հրապարակուող Հիմնական Կանոնագիրը յաջորդած է Անթուակիր Կանոնագրին:

Ինքնապաշտպանութեան այս խառն մարմիններու գործունէութեան քննարկումը դուրս կը մնայ մեր ներկայ նպատակէն:

¹³⁹ ՌԱԿ Կեդրոնական Արխիւ, «Տումար Ատենագրութեան Հայ Սահմանադրական Ռամկավար Կուսակցութեան Գահիրէի Ակումբին Ընդհանուր Ժողովոյց»:

¹⁴⁰ 1990-ին մեզի փոխանցուած ՀԲԸՄի Փարիզի գրասենեակի վարիչ Արթօ Համբարձումեանի կողմէ հինգ այլ վաւերագրերու հետ:

ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ
ԱԶԳ. ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ԳԱՀԻՐԷԻ ԱՐՏԱԿՈՒՍԱԿՑԱՅԻՆ
ԱՌԺԱՄԵԱՅ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԻՆ

Գահիրեի Միջկուսակցային Մարմնին հրաւերով Մայիս 29-ին Ազգային Սրահին մէջ գումարուած Մտաւորականներու Ժողովը, ընդունելով ինքնապաշտպանութեան ազգային պետքը եւ ընդունելով որ արտակուսակցականներն ալ պետք է մասնակցին այդ գործին, հարկ տեսած էր սակայն աւելի լայն սահմաններու մէջ քննելու համար գործը՝ նոր ժողով մը գումարել, մասնակցութեամբ Գահիրեի ամէն շրջաններէն եւ խաւերէն ներկայացուցիչներու, եւ այդ մասին պաշտօն յանձնած էր Տեսարք Պետրոս Յովսէփեանի եւ Արտաւազդ Հանրմեանի: Այդ նպատակով Յունիս 4ի Չորեքշաբթի գիշեր, Գահիրեի Ազգ. Սրահին մէջ գումարուած հայ հասարակութեան ներկայացուցիչներու ժողովը, համերաշխութեան եւ ինքնապաշտպանութեան հարցերու նկատմամբ խորհրդակցելէ վերջ, միաձայնութեամբ հետեւեալ բանաձեւը քուէարկեց:

«Գահիրեի հայ հասարակութեան ամէն խաւերն ու շրջանակներն առանց խտրութեան ներկայացնող մօտ 60 հոգիներ, Յունիս 4ի Չորեքշաբթի օրը, Ազգային Սրահին մէջ հաւաքուած՝ խորհրդակցելու համար համերաշխութեան եւ ինքնապաշտպանութեան հարցերուն վրայ,

Լսելէ յետոյ օրուան բանախօսները եւ կարծիքներու լուրջ փոխանակութիւն մը կատարելէ յետոյ,

1.- Միաձայնութեամբ կ'որոշեն որ քաղաքական ներկայ պայմաններուն մէջ հայ ժողովուրդին բոլոր խաւերը պետք է համերաշխին, հայկական դատին պաշտպանութեան համար,

2.- Միաձայնութեամբ կ'ընդունին թէ ինքնապաշտպանութեան կազմակերպումը ազգին ներկայ պայմաններուն մէջ անյետաձգելի պետք մըն է,

3.- Ոչ-կուսակցական հասարակութեան մասնակցութեան լաւագոյն պայմանները ճշդելու համար կ'որոշեն ընտրել Գահիրեի հայ գաղութին մէջէն Յանձնախումբ մը, բաղկացած ինը անդամներէ, որ բանակցի Միջկուսակցային Խառն Մարմնին հետ, եւ ուսումնասիրելով համագործակցութեան եւ ինքնապաշտպանութեան հարցը՝ վերջնական եզրակացութեան եւ համաձայնութեան մը գայ»:

Յիշեալ Յանձնախումբը կը կազմեն՝ Տեսարք Մ. Անդրանիկեան, Յ. Ասատուրեան, Հ. Ինայէթեան, Մ. Ղազարոսեան, Վ. Մալեգեան, Պ. Յովսէփեան, Մ. Սոսոյեան, Յ. Տիրատուր եւ Տ. Փիլիպպոսեան:

Յանձնախումբը ընդունելով իրեն վստահուած մասնաւոր եւ առժամեայ պաշտօնը, ի բացակայութեան Տ. Տ. Փիլիպպոսեանի որ Աղեքսանդրիա կը գտնուէր, հինգ նիստի մէջ, Յունիս 7, 9, 11, 15, եւ 17ին գումարուած, ձեռնարկեց խնդրոյն ուսումնասիրութեան,

Եւ կարդալէ վերջ Միջկուսակցային Մարմնոյն Կանոնագիրը, լսելէ վերջ Տ. Ակնունիի լուսաբանութիւնները, եւ Միջկուսակցային Մարմնոյն կողմէ նշանակուած ներկայացուցիչներուն Տեսարք Ա. Հանրմեանի, Ապահ Պետրոսեանի եւ Պերն Օհանեանի հետ վերջին երկու նիստերուն մէջ խորհրդակցութիւններ կատարելէ վերջ,

ինքնապաշտպանության եւ համագործակցության մասին որոշ եզրակացութեանց յանգեցաւ, եւ այդ եզրակացութեանց հիման վրայ ընդունեց փոխադարձ համաձայնութեամբ պատրաստուած Ինքնապաշտպանութեան Եզիպտոսի Խառն (այսինքն Միջկուսակցային ու Արտակուսակցային) Մարմնոյն Հիմնական Կանոնագիրը, որուն խմբագրութիւնը յանձնուեցաւ Տեարք Վ. Մալեզեանի եւ Ա. Հանըմեանի, եւ որուն վաւերացեալ Պատճէնը ներկայ ատենագրութեան կցուած է:

Յանձնախումբը, միեւնոյն ժամանակ, որոշեց յառաջիկայ Հինգշաբթի 19 Յունիսի գիշեր Ազգ. Սրահի մէջ ոչ-հրապարակային ժողովի հրաւիրել Գահիրէի գաղութին Արտակուսակցային ներկայացուցիչները, լսելու կայացած համաձայնութեան պայմանները եւ ընտրելու համար Փօստի Տեղական Մարմինը:

Վերջապէս որոշեց ընդունուած Հիմնական Կանոնագիրը ներկայացնել Աղեքսանդրիոյ Արտակուսակցային ներկայացուցիչներուն եւս վաւերացմանը, ըստ այնմ այդ շրջանակին մէջ ալ գործադրութեան ձեռնարկելու համար:

Գահիրէ, 17 Յունիս 1913

* * *

ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Ազգ. Ինքնապաշտպանութեան Գահիրէի Ոչ-Կուսակցական Յանձնախումբի

1913 Յունիս 4-ի Չորեքշաբթի գիշեր, Գահիրէի Ազգ. Սրահին մէջ գումարուած Հայ հասարակութեան ներկայացուցիչներու ժողովը, համերաշխութեան եւ ինքնապաշտպանութեան հարցերու մասին խորհրդակցելէ վերջ, Գահիրէի ոչ-կուսակցական հասարակութեան մասնակցութեան լաւագոյն պայմանները ճշդելու համար՝ միաձայնութեամբ ընտրեց ոչ-կուսակցական Յանձնախումբ մը, 9 հոգիէ բաղկացեալ, պաշտօն տալով անոր՝ բանակցիլ Միջկուսակցական Խառն Մարմնին հետ, եւ ուսումնասիրելով Համագործակցութեան եւ ինքնապաշտպանութեան հարցը, վերջնական եզրակացութեան եւ համաձայնութեան մը գալ:

Յանձնախումբը, ընդունելով իրեն յանձնուած առժամեայ մասնաւոր պաշտօնը, երեք նիստի մէջ ուսումնասիրեց խնդիրը, եւ լսելէ վերջ Տ. Ակնունիի լուսաբանութիւնները, եւ կարողալէ վերջ Միջկուսակցական Խառն Մարմնին Կանոնագիրը, լայն գիծերուն մէջ յետագայ եզրակացութեանց յանգեցաւ եւ որոշեց ատոնք ներկայացնել յիշեալ Խառն Մարմնին համախոհութեան:

Յանձնախումբը կ'ընդունի որ ազգային ինքնապաշտպանութիւնը, ոչ-դաւադրական ձեռնարկ, լեկալ գործ մըն է, եւ կը կայանայ Հայրենիքի ժողովուրդը զենքով եւ ամէն կերպով պաշտպանողական դիրքի վրայ պահելուն մէջ: Կ'ընդունի նաեւ որ Եզիպտոսի Հայ Հասարակութեան ինքնապաշտպանութեան ձեռնարկը յատուկ է միայն եւ անխտիր Կիլիկիոյ:

Կը նկատէ որ աւելի նպատակայարմար պիտի ըլլար Եզիպտոսի Միջ-կուսակցային Խառն Մարմինը յորջորջել Եզիպտոսի Միջկուսակց. Կեդր. Մարմին, ինչպէս եւ վերոգրեալ Կանոնագրին մէջ նախատեսուած Փօստի Մարմինը անուանել Եզիպտոսի Ոչ-Կուսակց. Կեդր. Մարմին:

Կ'ըմբռնէ որ Եգիպտոսի Ոչ-Կուսակց. Կեդր. Մարմինը, ընտրուած եւ բաղկացած ոչ-կուսակցականներէ, մասնաւորապէս պաշտօն ունի դրամ հայթայթելու, եւ ընդհանրապէս՝ ինքնապաշտպանութեան գործը վարելու Եգիպտոսի Միջկուսակց. Կեդր. Մարմնոյն հետ փոխադարձ համաձայնութեամբ:

Կ'ըմբռնէ նաեւ որ ինքնապաշտպանութեան գործին վերաբերեալ բոլոր նպաստները պէտք է ուղղուին Եգիպտոսի Ոչ-Կուսակց. Մարմնին:

Ոչ-Կուսակց. Կեդր. Մարմինը կը բաղկանայ 7 անդամէ, որուն 4ը Գահիրէէն եւ 3ը Աղեքսանդրիայէն: Անդամները կ'ընտրուին տեղւոյն վրայ ոչ-կուսակցական ներկայացուցիչներու ոչ-հրապարակային ժողովի մը մէջ: Կեդրոնն է Գահիրէ՝ ուր տեղի կ'ունենան ժողովները: Աղեքսանդրիոյ անդամները կրնան գրաւորապէս եւ փոխանորդաբար իրենց ձայնը տալ իրենց ընկերներէն մէկուն: Գահիրէի եւ Աղեքսանդրիոյ անդամները, զատ զատ, իբրեւ ոչ-կուսակց. Տեղական Մարմին կ'ունենան իրենց ուրոյն կազմակերպութիւնը եւ ժողովները: Ոչ-Կուսակցական Կեդր. Մարմինը, ինչպէս եւ Միջկուսակցական Կեդր. Մարմինը, անդամներու ընտրութեան մասին փոխադարձաբար վէթօյի իրաւունք չունին: Ոչ-Կուսակց. Կեդր. Մարմինը կ'ունենայ իր դիւանը (Ատենապետ, Ատենադպիր եւ Գանձապետ): Դրամները դրամատան մէջ կը պահուին՝ Ատենապետին եւ Գանձապետին անունով, եւ ինքնապաշտպանութեան կանխորոշ նպատակէն տարբեր գործի համար չեն կրնար տրամադրուիլ:

Եգիպտոսի Միջկուսակց. Կեդր. Մարմինը եւ Եգիպտոսի Ոչ-Կուսակց. Կեդր. Մարմինը միանալով՝ կը կազմեն Ազգ. Ինքնապաշտպանութեան Եգիպտոսի Կեդր. Խառն Մարմինը կամ Գօմիթէն: Այս մարմինը կը բաղկանայ՝ Միջ-Կուսակց. եւ Ոչ-Կուսակց. Կեդր. Մարմիններուն կողմէ նշանակուած երեքական պատուիրակներէ: Անիկա ինքնապաշտպանութեան գործին վարչական ղեկավար եւ գերակշիռ մարմինն է. իր որոշումները միայն վճռական են եւ գործադրելի:

Յանձնախումբը կ'ըմբռնէ որ Կիլիկիոյ մէջ եւս Գործադիր Մարմինը այնպէս պէտք է կազմուի, ինչպէս Եգիպտոսի Կեդր. Խառն Մարմինը, այսինքն Միջկուսակցական Մարմնոյն առընթեր կը կազմուի նաեւ Ոչ-Կուսակցական Մարմին մը, եւ այդ երկուքը միանալով՝ իբրեւ Գործադիր Խառն Մարմին՝ կը գործեն երկրին մէջ, Եգիպտոսի Կեդր. Խառն Մարմնոյն հետ համախոհաբար: Երկրին Ոչ-Կուսակց. Գործադիր Մարմինը կ'ընտրուի ոչ-կուսակցական հասարակութեան ներկայացուցիչներուն եւ հոգեւոր պետերուն համախոհութեամբ: Երկրին Գործադիր Խառն Մարմնոյն տրամադրութեան տակ պիտի դրուին հարկ տեսնուած նիւթական միջոցները, որոնց գործածութեան մասին համարատու է [ան] Եգիպտոսի Կեդր. Խառն Մարմնոյն հանդէպ:

Յանձնախումբը կ'ընդունի որ երկրին Գործադիր Խառն Մարմնոյն կողմէ՝ նախապէս տրուած որոշումներու գործադրութեան առթիւ ներկայացուած օրինաւոր առաջարկները պէտք է անպայման յարգուին Եգիպտոսի Կեդր. Խառն Մարմինէն. իսկ ներկայացուած ոեւէ նոր առաջարկ լրջօրէն նկատողութեան պիտի առնուի Եգիպտոսի Կեդր. Խառն Մարմնին կողմէ եւ այդ մասին ստիպողաբար որոշում պիտի տրուի: Կ'ըմբռնէ միեւնոյն ժամանակ որ Եգիպտոսի Կեդր. Խառն Մարմինը, ինքնապաշտպանութեան մասին ոեւէ նոր որոշում տալէ առաջ, պարտաւոր է լսել երկրին Գործադիր Խառն Մարմնոյն կարծիքը:

Ատեն[ը] անգամ մը Եգիպտոսի եւ Կիլիկիոյ մարմինները Համաժողով կը գումարեն Եգիպտոսի մէջ՝ երկրին ինքնապաշտպանութեան գործին ընդհանուր գիծերը որոշելու համար:

Յանձնախումբը առայժմ կը գոհանայ ուրուագծելով իր ըմբռնումները, եւ տակաւին չի մտնել ձեւական մանրամասնութիւններու մէջ, որ արդէն ըստ բաւականի նախատեսուած են Միջկուս. Խառն Մարմնոյն Կանոնագրին մէջ:

* * *

ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԳԻՐ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ԵԳԻՊՏՈՍԻ ԿԵՂՐ. ԽԱՌՆ ՄԱՐՄՆԻ

1.- ՆՊԱՏԱԿ.-

Ա.- Ինքնապաշտպանութեան խառն մարմիններուն նպատակն է՝ նիւթապէս եւ գործնական միջոցներով օգնել Կիլիկիոյ ինքնապաշտպանութեան գործին Եգիպտոսի հայ գաղութին աջակցութեամբը:

Ծանօթ.- Նպաստներ կ'ընդունուին արտասահմանէն եւս:

Բ.- Այդ նպատակին ծառայելու համար կը կազմուին՝

1.- Միջկուսակցային Մարմիններ (Եգիպտոսի մէջ)

2.- Ֆոնտի Մարմիններ (Եգիպտոսի մէջ)

3.- Գործօն Մարմիններ (Կիլիկիոյ մէջ)

ՆՊԱՏԱԿ.- Նիւթապէս եւ գործնական միջոցներով օգնել Կիլիկիոյ ինքնապաշտպանութեան գործին:

Ծանօթ.- Նպաստներ կ'ընդունուին նաեւ արտասահման[ի] գաղութներէն:

2.- ԿԱԶՄՈՒԹԻՒՆ ԵՒ ԻՐԱՎԱՍՈՒԹԻՒՆ ՄԻՋԿՈՒՄԱԿՑԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒ.-

Ա.- Ամէն մէկ կուսակցութեան Եգիպտոսի Տեղական Մարմինը կը նշանակէ երեքական պատգամաւորներ՝ որոնք կը կազմեն Միջկուսակցային Տեղական Մարմինը:

Բ.- Բոլոր Տեղական Միջկուսակցային Մարմինները միացած կը կազմեն ինքնապաշտպանութեան Եգիպտոսի Միջկուսակցային Մարմինը:

Գ.- Պատգամաւորները կ'ընտրուին մէկ տարուան համար, վերընտրելի են, եւ իրենց փոփոխումը կը պատկանի միայն իրենց պատկանեալ Կուսակցութեան:

Դ.- Միջկուսակցային Մարմինները իրենց

1.- ՄԻՋԿՈՒՄԱԿՑԱՅԻՆ ՄԱՐՄԻՆ.-

Ա.- Երեք Կուսակցութեանց Եգիպտոսի տեղական մարմինները կը նշանակեն երեքական պատգամաւորներ որոնք կը կազմեն Միջկուսակցային տեղական Մարմինը: Գահիրէի եւ Ադեքսանդրիոյ Միջկուսակցային տեղական Մարմինները միացեալ կը կազմեն ինքնապաշտպանութեան Եգիպտոսի Միջկուսակցային Կեդր. Մարմինը:

Բ.- Պատգամաւորները կ'ընտրուին մէկ տարուան համար, վերընտրելի են եւ իրենց փոփոխումը կը պատկանի միայն իրենց պատկանեալ Կուսակցութեան:

Գ.- Միջկուսակցային Կեդր. Մարմինը իր

գլխաւոր նպատակէն դուրս ուրիշ գործերով չեն կրնար զբաղուիլ:

Ե.- Ինքնապաշտպանութեան գործին չվնասելու համար՝ Միջկուսակցային Մարմնի անդամները պէտք չէ մասնակցին ազգային վարչական մարմիններու:

Չ.- Միջկուսակցային մարմիններու դիւանը կը կազմուի նախագահէ մը, քարտուղարէ մը եւ գանձապահէ մը, առնուած, եթէ կարելի է, Մարմինը բաղկացնող իւրաքանչիւր Կուսակցութենէն:

Է.- Միջկուսակցային Մարմինը իր դիւանին քով կը պահէ առաւելն տասը ոսկի, ընթացիկ ծախքերու համար, հայթայթուած նուէրներէ, հանդէսներէ եւն: Մնացած ամէն գումար պէտք է յանձնուի Ֆոնտի Կեդր. Մարմնին:

Ը.- Տեղական Միջկուսակցային Մարմինները ինքնավար են իրենց շրջանակի գործունէութեան մէջ, կարելոր հարցերը քննելու համար՝ իրենց դիւաններէն ընտրուած պատուիրակութիւն մը պարբերաբար գումարումներ կ'ունենայ առնուազն երկու ամիսը անգամ մը:

գլխաւոր նպատակէն դուրս ուրիշ գործերով չի կրնար զբաղիլ: Կուսակցական մարմինները սակայն ազատ են իրենց սեփական գործունէութեան մէջ:

Դ.- Ինքնապաշտպանութեան գործին չի վնասելու համար Խառն Մարմնի անդամները պէտք չէ մասնակցին ազգային վարչական մարմիններու:

Ծան[օթ].- Ի պահանջել հարկին այդ արտօնութիւնը կրնայ տալ ինքը Միջկուսակցային Կեդր. Մարմինը:

Ե.- Դարձեալ ի շահ ինքնապաշտպանութեան, Կուսակցական մարմինները պէտք չէ մասնակցին իրենց պատասխանատու անդամներով Ազգային վարչական մարմիններու, միւսները կրնան մասնակցիլ անհատական հանգամանքով:

Ծան[օթ].- Անհրաժեշտութեան պարագային պատասխանատու անդամներու մասնակցութիւնը կրնայ տեղի ունենալ Կուսակցական տեղական մարմիններու փոխադարձ համաձայնութեամբ:

Չ.- Միջկուսակցային մարմիններու Դիւանը կը կազմուի Նախագահէ մը, Քարտուղարէ մը եւ Գանձապահէ մը առնուած, եթէ կարելի է, Խառն Մարմինը բաղկացնող իւրաքանչիւր Կուսակցութենէ:

Է.- Խառն Մարմինը իր Դիւանին քով կը պահէ առ առաւելն 10 ոսկի ընթացիկ ծախքերու համար. մնացած ամէն գումար պէտք է յանձնուի Ֆոնտի Մարմնին:

Ը.- Միջկուսակցային տեղական մարմինները ինքնավար են իրենց շրջանակի գործունէութեան մէջ, կարելոր հարցերը քննելու համար. իրենց դիւաններէն ընտրուած պատուիրակութիւն մը պարբերաբար գումարումներ կ'ունենայ առնուազն երկու ամիս[ը] մէկ անգամ:

3.- ԿԱԶՄՈՒԹԻՒՆ ԵՒ ԻՐԱԲԱՍՈՒԹԻՒՆ ՓՈՆՏԻ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒ.-

Ա.- Կիլիկիոյ ժողովուրդին ինքնապաշտպանութեան համար իբրեւ ոչ-դաւադրական, լեկալ ձեռնարկի, Եգիպտոսի մէջ Միջկուսակցային Մարմինն առընթեր կը կազմուի Փոնտի Մարմին մը, որ պաշտօն ունի նիւթական միջոցներ հայթայթել Կիլիկիոյ ժողովուրդը զենքով եւ ամէն կերպով պաշտպանողական դիրքի մէջ դնելու համար:

Բ.- Փոնտի Մարմինը կը բաղկանայ հասարակութեան վստահութիւնը վայելող 7 անդամներէ, 4ը Գահիրէէն եւ 3ը Ադէքսանդրիայէն, ընտրուած արտակուսակցական հասարակութենէն ոչ-հրապարակային ժողովի մէջ, մէկ տարուան պայմանաժամով եւ վերընտրելիութեան իրաւունքով:

Ծանօթ.- Միջկուսակցական եւ Արտակուսակցական մարմինները իրենց անդամներու ընտրութեան գործին մէջ փոխադարձաբար վերոյի իրաւունք չունին:

Գ.- Գահիրէի եւ Ադէքսանդրիոյ խումբերը առանձին առանձին կը կազմեն Փոնտի տեղական Մարմինները, եւ երկուքը մէկ կը կազմեն Փոնտի Կեդր. Մարմինը: Գահիրէն նկատուելով Կեդրոն, Ադէքսանդրիոյ Մարմինը կը մասնակցի անոր ժողովներուն՝ իր մէկ կամ աւելի ներկայացուցիչներուն միջոցաւ:

Դ.- Փոնտի Կեդր. Մարմինը, որուն մօտ կը կեդրոնանան Կիլիկիոյ ինքնապաշտպանութեան յատկացուած բոլոր նպաստները, ունի իր դիւանը (Ատենապետ, Ատենադպիր եւ Գանձապետ): Դրամները կը պահուին դրամատան մը մէջ՝ Ատենապետին եւ Գանձապետին անունով, եւ ինքնապաշտպանութեան նպատակէն դուրս ռելէ ուրիշ գործի համար չեն կրնար տրամադրուիլ:

Ծանօթ.- Այդ երկու մարմինները՝ Միջկուսակցային եւ Փոնտ, որոնք նոյն ձեռնարկի ճիւղերն են՝ շաղկապուած են իրենց նպատակով, պետք է վարեն գործը՝ փոխադարձ

3.- ՓՈՆՏԻ ԿԵԴՐ. ՄԱՐՄԻՆ.-

Ա.- Կիլիկիոյ ժողովուրդին ինքնապաշտպանութեան համար որ կը նկատուի ոչ դաւադրական, լեկալ ձեռնարկ, Եգիպտոսի մէջ, Միջկուսակցային մարմինն առընթեր կը կազմուի Փոնտի Կեդր. Մարմին մը, որ պաշտօն ունի նիւթական միջոցներ հայթայթել, Կիլիկիոյ ժողովուրդը զենքով եւ ամէն կերպով պաշտպանողական դիրքի վրայ պահելու համար:

Բ.- Փոնտի Մարմինը կը բաղկանայ հասարակութեան վստահութիւնը վայելող եօթն անդամներէ, ընտրուած արտակուսակցական հասարակութենէն ոչ-հրապարակային ժողովի մէջ, մէկ տարուայ պայմանաժամով, որոնց չորսը Գահիրէէն եւ երեքը Ադէքսանդրիայէն: Անդամները վերընտրելի են:

Ծանօթ.- Կուսակցական եւ Արտակուսակցական մարմինները, այս անդամներու ընտրութեան գործին մէջ փոխադարձաբար վերոյի իրաւունք չունին:

Գ.- Գահիրէի եւ Ադէքսանդրիոյ անդամները առանձին առանձին կը կազմեն Փոնտի տեղական մարմինները. երկուքը միասին կը կազմեն Փոնտի Կեդր. Մարմինը: Գահիրէն նկատուելով Կեդրոն Ադէքսանդրիոյ Մարմինը կը մասնակցի անոր ժողովներուն իր մէկ կամ աւելի ներկայացուցիչներուն միջոցաւ:

Դ.- Փոնտի Կեդր. Մարմինը, որուն մօտ կը կեդրոնանան ինքնապաշտպանութեան գործին վերաբերեալ բոլոր նպաստները, ունի իր Դիւանը [(Ատենապետ, Ատենադպիր եւ Գանձապետ)]: Դրամները կը պահուին դրամատան մը մէջ, Ատենապետին եւ Գանձապետին անունով, եւ ինքնապաշտպանութեան նպատակէն դուրս ռելէ ուրիշ գործի համար չեն կրնար տրամադրուիլ:

համաձայնությամբ:

4.- ԻՆՔՆԱԳԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ԵԳԻՊՏՈՍԻ ԽԱՈՆ ՄԱՐՄԻՆ.-

Եգիպտոսի Միջկուսակցային Մարմինը եւ Ֆոնտի Կեդր. Մարմինը միանալով կը կազմեն Ինքնապաշտպանութեան Եգիպտոսի Խառն Մարմինը, բաղկացած երկու մարմիններու կողմէ նշանակուած երեքական պատուիրակներէ, որ Կիլիկիոյ ինքնապաշտպանութեան վարչական բարձր մարմինն է եւ կը վարէ գործը, փոխադարձ համաձայնությամբ: Ծանօթ.- Խառն Մարմինն ժողովները պետք է տեղի ունենան առ նուազն ամիսը անգամ մը:

5.- ԿԱԶՄՈՒԹԻՒՆ ԵՒ ԻՐԱԲԱՍՈՒԹԻՒՆ ԳՈՐԾՕՆ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒ.-

Ա.- Կիլիկիոյ մէջ պիտի կազմուի Միջկուսակցային Գործօն Մարմին մը՝ տեղին վրայ գործող կուսակցութիւններէ:

Բ.- Կիլիկիոյ Միջկուսակցային Գործօն Մարմինն առընթեր կը կազմուի Արտակուսակցային Մարմին մը՝ ընտրուած ժողովուրդին ոչ-կուսակցական մասէն, վստահութիւն վայելող անձերէ, խորհրդակցութեամբ կարելորդ* պետերու: Այդ Մարմինը՝ Միջկուսակցային Գործօն Մարմինն հետ միասին՝ կը կազմէ Կիլիկիոյ Գործօն Խառն Մարմինը,

4.- ԻՆՔՆԱԳԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ԵԳԻՊՏՈՍԻ ԽԱՈՆ ՄԱՐՄԻՆ.-

Ա.- Եգիպտոսի Միջկուսակցային Մարմինը եւ Ֆոնտի Կեդր. Մարմինը միանալով կը կազմեն Ինքնապաշտպանութեան Եգիպտոսի Կեդր. Խառն Մարմինը, բաղկացած երկու մարմիններու կողմէ նշանակուած երեքական պատուիրակներէ, որ Կիլիկիոյ ինքնապաշտպանութեան վարչական բարձր մարմինն է եւ կը վարէ գործը, փոխադարձ համաձայնությամբ:

Ծան[օթ].- Խառն Մարմնի ժողովները պետք է տեղի ունենան առնուազն ամիս[ը] անգամ մը:

5.- ԳՈՐԾՕՆ ՄԱՐՄԻՆ ԿԻԼԻԿԻՈՅ ՄԷՋ.-

Ա.- Կիլիկիոյ Միջկուսակցային գործօն Մարմինն առընթեր կը կազմուի արտակուսակցային մարմին մը, ընտրուած ժողովուրդին վստահութիւնը վայելող անձերէ, խորհրդակցութեամբ հոգեւոր պետերու: Այդ Մարմինը, Միջկուսակցային գործօն մարմինն հետ միասին կը կազմէ Երկրի գործօն Խառն Մարմինը որուն տրամադրութեան տակ կը դրուին որոշուած նիւթական միջոցները եւ որոնց գործածութեան մասին համար կուտայ [ան] Եգիպտոսի Կեդր. Խառն Մարմնոյն: Ծան[օթ].- Երկրին Գործօն Խառն Մարմինը, ինչպէս եւ միւս Մարմինները, կը պատրաստէ իր Ներքին Կանոնագիրը, առանց շեղելու ներկայ Հիմնական Կանոնագրին գծած ընդհանուր սահմաններէն:

Բ.- Գործօն Խառն Մարմինն բոլոր առաջարկները ինքնապաշտպանութեան համար, նախապէս տրուած որոշումներու սահմաններուն մէջ, անպայման պետք է յարգուին Եգիպտոսի Կեդր. Խառն Մարմինն կողմէն եւ այդ մասին ստիպողաբար որոշում պետք է տրուի: Եգիպտոսի Կեդր. Խառն Մարմինն ալ ինքնապաշտպանութեան մասին նոր որոշում

* Արդեօ՞ք *հոգեւոր*՝ ինչպէս է՝ 5-րդ յօդուածի Ա. պարբերութեան մէջ- Վ.Դ.:

որուն տրամադրության տակ կը դրուին որոշուած նիւթական միջոցները եւ որոնց գործածութեան մասին համար կուտայ [ան] Եգիպտոսի Խառն Մարմնին:

Գ.- Գործօն Խառն Մարմնին բոլոր առաջարկները՝ ինքնապաշտպանութեան համար՝ նախապէս տրուած որոշումներու սահմաններուն մէջ, անպայման պետք է յարգուին Եգիպտոսի Խառն Մարմնին կողմէն: Իսկ ներկայացուած ռելէ նոր առաջարկ յօջօրէն նկատողութեան պետք է առնուի Եգիպտոսի Խառն Մարմնին կողմէն եւ այդ մասին ստիպողաբար որոշում պետք է տրուի: Եգիպտոսի Խառն Մարմնին ալ ինքնապաշտպանութեան մասին նոր ռելէ որոշում տալէ առաջ՝ պարտաւոր է լսել եւ հաշուի առնել Կիլիկիոյ Գործօն Խառն Մարմնին կարծիքը:

Ծանօթ.- Կիլիկիոյ մէջ այս մարմիններէն մէկին կամ միւսին չկազմուիլը պետք չէ արգելք ըլլայ ինքնապաշտպանութեան ձեռնարկին: Այդ պարագային, եթէ Արտակուսակցական Գործօն Մարմինը չէ կազմուած, Ֆոնտի Կեդր. Մարմինը իրաւունք կ'ունենայ Կիլիկիոյ մէջ նշանակել երեք Արտակուսակցական պատուիրակներ Միջկուսակցային Գործօն Մարմնոյն մօտ, եւ փոխադարձաբար՝ եթէ Միջկուսակցային Գործօն Մարմինը չէ կազմուած Երկրին մէջ[,] Եգիպտոսի Միջկուսակցային Մարմինը իրաւունք կ'ունենայ երեք կուսակցական պատուիրակներ նշանակել Արտակուսակցային Մարմնին մօտ:

6.- ՀԱՄԱԺՈՂՈՎ.-

Ա.- Տարին անգամ մը Կիլիկիոյ եւ Եգիպտոսի երեք Մարմինները (Գործօն (խառն), Ֆոնտի եւ Միջկուսակցային) ժողով կը գումարեն Եգիպտոս կամ այլուր ինքնապաշտպանութեան առաջիկայ գործունէութեան վերաբերմամբ որոշումներ կայացնելու՝ ընդհանուր գծերով:

Բ.- Եգիպտոսի Մարմինները Համաժողովին կը մասնակցին երեքական պատգամաւորով,

տալէ առաջ պարտաւոր է լսել եւ հաշուի առնել Երկրի Գործօն Խառն Մարմնին կարծիքը:

Ծանօթ.- Երկրին մէջ այս մարմիններէն մէկին կամ միւսին չկազմուիլը պետք չէ արգելք ըլլայ ինքնապաշտպանութեան ձեռնարկին: Եւ այդ պարագային, եթէ արտակուսակցական Գործօն Մարմինը չի կազմուի, Եգիպտոսի Ֆոնտի Կեդր. Մարմինը իրաւունք կ'ունենայ Երկրին մէջ նշանակել երեք արտակուսակցական պատուիրակ Երկրին Միջկուսակցային Գործօն Մարմնոյն մօտ, եւ փոխադարձաբար եթէ Միջկուսակցային Գործօն Մարմինը չի կազմուի Երկրին մէջ[,] Եգիպտոսի Միջկուսակցային Մարմինը իրաւունք կ'ունենայ նոյնպէս երեք կուսակցական պատուիրակներ նշանակել Երկրի Արտակուսակցային Մարմնին մօտ:

6.- ՀԱՄԱԺՈՂՈՎ.-

Ա.- Տարին անգամ մը Կիլիկիոյ եւ Եգիպտոսի երեք մարմինները (Գործօն, Ֆոնտի եւ Միջկուսակցային) համագումար ժողով կը գումարեն Եգիպտոս կամ այլուր ինքնապաշտպանութեան առաջիկայ գործունէութեան վերաբերմամբ որոշումներ կայացնելու համար ընդհանուր գծերով:

Բ.- Եգիպտոսի մարմինները Համաժողովին կը մասնակցին երեքական պատգամաւոր-

իսկ Կիլիկիոյ Գործոն Խառն Մարմինը՝ վեց պատգամաւորով:

Գ.- Կիլիկիոյ եւ Եգիպտոսի Խառն Մարմինները համարատու են Համաժողովին առջեւ:

7.- ՆԵՐՔԻՆ ԿԱՆՈՆԱԳԻՐ.-

Կիլիկիոյ Գործոն Խառն Մարմինը, ինչպէս նաեւ միւս Մարմինները, կը կազմեն իրենց Կանոնագիրը՝ առանց շեղելու ներկայ Հիմնական Կանոնագրին գծած ընդհանուր սահմաններէն:

8.- ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԷՏԵՐ

Ա.- Խստօրէն կ'արգիլուի որոշումներու եւ ձեռնարկներու մասին գաղտնիքներ դուրս հանել, եւ առհասարակ բոլոր Մարմինները պէտք է խիստ գաղտնապահութեամբ վերաբերուին գործին շուրջ: Դրժողները կ'ենթարկուին ծանր պատասխանատւութեան:

Բ.- Բոլոր մարմինները եւ գործակիցները քարոյական պարտաւորութիւն ունին սպասաւորել համերաշխական այն** ձեռնարկին ազնուօրէն եւ քաղաքացիական ուղղամտութեամբ:

ԱՐՏԱԿՈՒՄԱԿՑԱՅԻՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ
ՄԻՋԿՈՒՄԱԿՑԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐ

ներով, իսկ Երկրի Գործոն Խառն Մարմինը վեց պատգամաւորներով:

Գ.- Երկրի եւ Եգիպտոսի Խառն Մարմինները համարատու են Համաժողովին առջեւ:

7.-

Ա.- Խստօրէն կ'արգիլուի որոշումներու եւ ձեռնարկներու մասին գաղտնիքներ դուրս հանել, եւ առհասարակ բոլոր մարմինները պէտք է խիստ գաղտնապահութեամբ վերաբերուին գործին շուրջ: Դրժողները կ'ենթարկուին ծանր պատասխանատւութեան:

Բ.- Բոլոր մարմինները եւ գործակիցները քարոյական պարտականութիւն ունին սպասաւորել համերաշխական այն** ձեռնարկին ազնուօրէն եւ քաղաքացիական ուղղամտութեամբ:

** Աւելի յարմար պիտի ըլլար այս կամ այն ցուցականին գործածութիւնը- Վ.Դ.:

Եզրակացնելու համար

Ամփոփելով վերոշարադրեալը, կրնանք հաստատապես ըսել հետևեալը.-

Եզրկատահայ գաղութին մէջ բացառապէս Կիլիկիոյ վրայ կեդրոնացած ինքնապաշտպանութիւն կազմակերպելու աշխատանքները յանգեցուցած են կազմութեանը *Ազգային Պաշտպանութեան Քօմիթէ* անուամբ անկուսակցական մարմնի մը, որուն վերաբերող աղբիւրներն անոր կապակցած են առաւելաբար սահմանադրական-ճամկավար դէմքեր:

Նախաձեռնողները իրենց քայլը հիմնաւորած են Կիլիկիոյ տեղական պայմաններուն վատթարացումով, ինչպէս նաեւ Պալքանեան Պատերազմով ստեղծուած միջազգային կացութեամբ, միաժամանակ նկատի առնելով Կիլիկիոյ ընդգրկուած չլլալը հայկական բարենորոգումներու բանակցութիւններու ծիրին մէջ:

Ազգային Պաշտպանութեան Քօմիթէն սկիզբէն իսկ նպատակադրած է ապստամբութեան միջոցով հասնիլ իր նպատակին, բայց թաքուն պահած է այդ դիտաւորութիւնը, որպէսզի աւելի հեզասահ կերպով հնարաւոր ըլլայ անոր իրագործումը՝ մէկէ աւելի գործնական նկատումներով:

Ներկայացուած աղբիւրներուն մէջ յիշատակուած Ազգային Պաշտպանութեան Քօմիթէն եւ Ազգային Ինքնապաշտպանութեան Քօմիթէն շատ հաւանաբար եղած են նոյն մարմինը, որ պարագաներու համաձայն ենթարկուած է կազմական փոփոխութիւններու, շարունակելով իր աշխատանքները սահմանափակել Կիլիկիայով¹⁴¹:

Կիլիկիոյ մէջ սաստկացած հայավնաս զարգացումները պատճառ դարձած են որ կազմակերպիչները փորձեն հապճեպով գործադրել ապստամբութեան ծրագիրը՝ Յունաստանէն ապահովելի զինամթերքի եւ կամաւորներու Կիլիկիա ցամաքահանումով:

Անկախաբար Ազգային Պաշտպանութեան Քօմիթէէն, գէյթունցիներ ալ փայփայած են ապստամբական ծրագիր մը, որ իբրեւ ծիր նկատի ունեցած է միայն Չէյթունն ու շրջակայքը:

Երկու ծրագրերուն բանիւ եւ գործով հակառակած են Ամենայն Հայոց Կաթողիկոսը, Հայ Ազգային Պատուիրակութիւնը, Պոլսոյ պատրիարքարանն ու Տանն Կիլիկիոյ

¹⁴¹ 20 Յուլիս 1915-ին, Գահիրէ, Ազգային Պաշտպանութեան Քօմիթէի անունով ծանուցագիր մը կը ներկայացուէր բրիտանական զինեալ ուժերու վերին հրամանատար Չօրավար Մաքսուէի (*Ազգային Պատուիրակութեան Գործունէութիւնը 1915-1916 (Վաւերագրեր)*), խմբ. Դոկտ. Վաչէ Ղազարեան, հրտ.՝ ՀԲԸ Միութեան Վահրամ Ապտալեան Մշակութային Հիմնադրամի, տպ. Ծիրակ, Պէյրութ, 2017, 171-172): Նոյն ծանուցագրին եւ անոր շարունակութիւնը կազմող երկրորդ՝ 24 Յուլիս 1915 թուակիր ծանուցագրի մը (նոյն, 187-189) պատճենները Վ. Մալեզեան Ազգային Պաշտպանութեան Քօմիթէի գլխաւոր քարտուղարի հանգամանքով 29 Սեպտեմբեր 1915-ին պիտի յանձնէր Եզրկատոսի մէջ Փրանսայի դեսպան Տրֆրանսի (Արթուր Պէյլերյան, *Մեծ Տերությունները, Օսմանյան Կայսրությունը Եւ Հայերը Փրանսիական Արխիվներում (1914-1918)*, Ա. հատոր, ՀՀ Գիտություններու Ազգային Ակադեմիայի Պատմութեան Ինստիտուտ, «Հայաստան» հրտ., Երեւան, 2005, 187):

Կաթողիկոսը, մինչ հայ քաղաքական կուսակցություններու գերագոյն մարմինները մնացած են ձեռնպահ, բոլորն ալ այն համոզումով թէ՝ խռովարարական շարժում մը ո՛չ միայն կը վնասէ Արեւմտահայաստանի մէջ եւրոպական մեծ տէրութիւններու հակա-կշռին ներքեւ բարենորոգումներ ապահովելու ճիգերուն, այլեւ նոր կոտորածներու կրնայ ենթարկել Կիլիկիոյ հայութիւնը, հակառակ անոր որ հայ բանագնացները հայոց պահանջները առանց ձգձգումի թուրքերուն ընդունիլ տալու համար զանազան առիթ-ներով այդ տէրութիւններու ներկայացուցիչներուն մօտ գործածած են հաւանական խռովութիւններու ծագման խաղաթուղթը:

Կը թուի թէ գործնական արգելակիչ քայլերով դրսեւորուած այդ հակառակութիւնը յիշեալներուն մօտ որպէս հասարակաց յայտարար ունեցած է խոհեմաբար շարժելու եւ խռովարարական քայլերէ խուսափելու յորդորները թէ՛ Երրեակ Համաձայնութեան պետական դէմքերուն, թէ՛ Երրեակ Զինակցութիւնը գլխաւորող Գերմանիոյ, բոլորն ալ հասկցնելով նաեւ թէ ո՛չ մէկ պետութիւն պիտի ուզէր ճնշել օսմանեան Թուրքիոյ վրայ՝ խռովութիւն մը ծագելու պարագային թրքական արիւնալի հակազդեցութիւնը չէզոքացնելու համար¹⁴²:

Սահակ Բ.ի եւ Նուպարի հակառակութիւնը չէ ունեցած առ հասարակ ապստամբական շարժումներու դէմ սկզբունքային բնոյթ եւ սահմանափակուած է տուեալ պահուն տուեալ ծրագրերով: Այլապէս, իր շեշտ հակառուսականութեամբ եւ թուրքերու հետ բանակցելով հարցեր լուծելու նախասիրութեամբ բնորոշուող Սահակ Բ. դէմ չէ եղած դրական արդիւնքի երաշխիքով ուղեկցող ուժի գործածութեան, ինչպէս որ ռուսական արեւելումի հետեւող Նուպար դէմ չէ եղած մեծ տէրութիւններու մօտ կատարուող դիւանագիտական ջանքերը զօրացնող ապստամբութեան¹⁴³:

¹⁴² Մէկէ աւելի առիթներով կատարուած յորդորներ եւ զգուշացումներ վաւերագրող նիւթեր ընդգրկուած են մեր *Հայկական Բարենորոգումներուն Առնչուող Նիւթեր* (1912–1914) աշխատութեան մէջ: Ռուս արտաքին գործերու նախարար Սազոնովն ու Պոլսոյ դեսպան տը Կիրսը, օրինակ, թելադրած էին հայերն անհրաժեշտաբար Եւրոպայի ներկայացնել որպէս զոհեր եւ ո՛չ թէ ըմբոստ յեղափոխականներ (Փափագեան, 187):

¹⁴³ Սահակ Բ.ի մօտեցումն արդէն ներկայացուցած ենք նախապէս: Նուպարի դիրքն առարկայականօրէն հասկնալու համար հարկ է նկատի ունենալ անոր Սահակ Բ.ի ուղղած 30 Ապրիլ 1915 թուակիրը՝ Կիլիկիոյ մէջ ապստամբութեան դիմելու գաղափարը Համաձայնականներուն ներկայացնելէ ետք: Նուպար կ'ըսէ. «... անցեալին մէջ ... հակառակ էի իմ հայրենակիցներուս ամէն յեղափոխական եւ ապստամբական շարժմանց, որոնք իբր թէ կը ձգտէին Օսմանեան Կայսրութեան Հայոց վիճակը բարելաւելու: Որովհետեւ վստահ էի թէ մենք, մեր սեփական ոյժերով, չէինք կրնար մեր ազգային կամքը պարտադրել Թուրքիոյ, եւ աւելի նուազ եւս Եւրոպայի. թէ այս վերջինը ... մեզ մինակ պիտի թողուր մեր հարստահարիչներուն հետ: Այսպէս, մեր կողմէ ամէն անմտած գործողութիւն ո՛չ միայն չպիտի բարելաւէր մեր վիճակը, այլ ընդհակառակը աւելի պիտի վատթարացնէր զայն:

«Այս պատճառաւ էր որ երկու տարի առաջ ամբողջ կրցածս ըրի կասեցնելու համար ապստամբութեան այն փորձը զոր քանի մը անխորհուրդ հայրենասէրներ ընելու վրայ էին Կիլիկիոյ մէջ: ...

«Եւ սակայն, պէտք չունիմ անշուշտ դիտել տալու ... թէ ամէն ժողովուրդ, իր ազատագրու-թեան արժանի դառնալու համար, պէտք է իր կողմէն կատարէ կարգ մը պարտականու-

Թէեւ ապստամբութիւնը ծրագրած Քոմիթէին բանակցութիւնները յունական կառավարութեան հետ եղած են արդիւնաւէտ, բայց խափանիչ միջամտութիւններու եւ այլ անբարենպաստ պայմաններու բերումով զինամթերքի ցամաքահանումն ու ընդհանրապէս ապստամբութեան ծրագիրը 1913-ի Մարտին աւարտած են ձախողութեամբ¹⁴⁴:

Այդ ձախողութեան մէջ դեր մը ունեցած կը թուի ըլլալ նաեւ անգաղտնապահութեան հետեւանքով ծրագրին բացայայտուած ըլլալը թուրքերուն եւ այլ պետութիւններու, թէեւ կազմակերպիչները ցամաքահանումը փրկելու նպատակով վերջին պահուն դիմած էին ապատեղեկատուական փորձի:

Հակառակ ձախող վախճանին, Կիլիկիոյ ապահովական ընդհանուր կացութեան վատթարացումն ու հայերու գոյապահպանութեան սպառնացող վտանգին ահագնացումը նոր մղում տուած են ինքնապաշտպանութեան գաղափարին՝ յանգեցնելով այս անգամ միջկուսակցական խառն մարմնի մը կազմութեան՝ դարձեալ Եգիպտոսի մէջ:

* * *

Ինչպէս ներկայացուած նիւթերը կը պարզեն, տուեալ շրջանին, թրքական իշխանութիւններէն հայկական նահանգներուն մէջ, առանց Կիլիկիոյ ընդգրկման, օսմանահպատակ հայոց համար կեանքի, ինչքի եւ պատիւի ապահովութիւն ձեռք բերելու նպատակով հայոց պաշտօնական մարմինները որդեգրած էին բացառապէս դիւանագիտական աշխատանքի յենող ռազմավարութիւն մը:

Բայց ինչո՞ւ բացառապէս դիւանագիտական աշխատանք:

Ինչո՞ւ անտեսումը դիւանագիտական աշխատանքին զուգընթաց ուժային գործունէութեան կամ ապստամբութեան, զոր Նուպար աւելի ուշ ճարտարօրէն բանաձեւած էր որպէս դիւանագիտական ջանքերուն դրական եղանակով մը օգնելու միջոց:

թիւներ, առանց որոնց՝ դիւանագիտական ջանքերը իրենց դրականութեան մէջ տկարանալու վտանգին կրնան ենթարկուիլ: ...

«... Կիլիկիոյ Հայոց պարտականութիւնն է իրենց միջոցներուն ներած չափով օգնել Դաշնակիցներուն, երբ արշաւախումբերը ցամաք հանուին:

«Ակնարկած օգնութիւնս պէտք չէ արտայայտուի լոկ խանդավառ ընդունելութեամբ ... այլ դրական եղանակով մը, այսինքն՝ Հայոց համախումբ ապստամբութեամբ թրքական իշխանութեանց դէմ, այն շրջանակներուն մէջ ուր այդ բանը կարելի է» (Ղազարեան, *Ազգային Պատմիկականութեան...*, 431–433):

¹⁴⁴ Միքայէլ Նաթանեանի հրատարակած նիւթերէն կարելի է հետեւցնել թէ յունական իշխանութիւններէն զինամթերք ապահովելու եւ Կիլիկիա ցամաքահանելու ծրագրին մասնակիցները իրենց ձեռք բերած փորձառութիւնը գործի դրած են 1920-ի երկրորդ կիսուն, երբ Կիլիկիոյ մէջ ինքնապաշտպանութիւնը անհրաժեշտ դարձած էր՝ ֆրանսական գրաւման ուժերու թոյլատու ընթացքէն քաջալերուած թուրք ազգայնականներու հայաչինջ գործողութիւններուն դէմ դնելու համար: Նաթանեան կը գրէ. «Որքան կը յիշեմ, զէնք փոխադրող նաւը Տէօրթը Եօյ հանդիպեցաւ եւ հոն է որ պարպուեցաւ եկածներէն մաս մը...» («Կիլիկեան Յուշեր Եւ Նօթեր. Համակուսակցական Գործունէութիւններու Քանի Մը Շահեկան Վաւերագիրներ», *Պայքար օրաթերթ*, ԻԷ. տարի թիւ 303, 30 Դեկտեմբեր 1949, Ա. էջ):

Ինչպես մեր նախորդ¹⁴⁵, այնպես ալ ներկայ աշխատության համար նիւթերու պեղման ընթացքին մեզ շարունակ տագնապեցուցած այս հարցադրումներուն պատասխանը կը կարօտի անկախ լուրջ ուսումնասիրության մը, որ յարակցաբար վճռէ թէ՝

– Կարելի՞ է հաստատապէս *արկածախնդրութիւն* կոչել կամ դատապարտելի գտնել ծրագիր մը, որուն հեղինակները աչքի առջեւ ունենալով մօտիկ անցեալի քանի մը յաջող դրուագ եւ յոյս դնելով շահագրգիռ պետության մը կամ պետութիւններու հաւանական միջամտութեան վրայ, փորձած էին Կիլիկիոյ հայութեան համար ապահովել այն, ինչ քացառապէս խաղաղ բանակցութիւններու եղանակը որդեգրած պատասխանատուներ կը ձգտէին ապահովել նոյնպէս շահագրգիռ պետութիւններու միջամտութեամբ, երբ նախընթաց նման փորձեր, – ստորագրուած անգործադրելի թուղթի կտորներ ձեռք բերուած ըլլալով հանդերձ 1878-ին եւ 1895-ին, – յանգեցուցած էին ժողովրդագրական անշրջելի փոփոխութիւններու՝ նոր սահմանագծումներու, բնակչային տեղաշարժերու եւ կոտորածներու միջոցով:

¹⁴⁵ Հայկական Բարենորոգումներուն Առնչուող Նիւթեր (1912–1914), Փորթսմութ-Ռոտ Այլընտ, 2024:

